



次仁罗布 放生羊

Tsering Norbu

## THE RELEASED SHEEP

Translation from English into Armenian -  
Vardan Fereshetyan

Stepanakert 2020

ՑԵՐԻՆԳ ՆՈՐԲՈՒ

## ՓՐԿՎԱԾ ԳԱՌԸ

Պատմվածքներ

Թարգմանությունն անգլերենից՝  
Վարդան ՖԵՐԵՇԵԹՅԱՆԻ

Ստեփանակերտ 2020

ՀՏԳ 821.584.6-32 Նորբու  
ԳՄԴ 84(5)-44  
Ն 930

«Գեդարմ» հանդեսի մատենաշար

**Նորբու Յերինգ**

Ն 930 Փրկված գառը/ Յերինգ Նորբու.-  
Թարգմ. անգլերենից՝ Վարդան Ֆերեշեթյանի.-  
Ստեփանակերտ, «Ոգի-Նաիրի» հրատ., 2020, 312 էջ:

Յերինգ Նորբուն տիրեթյան նոր շրջանի գրականության երեւելի դեմքերից է: Նրա «Փրկված գառը» ժողովածուում տեղ գտած պատմվածքներն առանձնանում են տիրեթցիներին բնորոշ ներհայեցման, ազգային տարրերի, բնության եւ մարդու ներքին ապրումների, ինչպես նաեւ կենցաղի ու կրոնական թեմաների նրբին միահյուսմամբ /երբեմն՝ կենցաղագրական փոքր-ինչ երկարաբան մանրամասներով ու նատուրալիստական հատվածներով/: Նորբուի հերոսների համար բնութագրական են դիցաբանական անցյալի ներհյուսումները ժամանակակից կյանքի նկարագրություններին:

Առաջին անգամ հայ ընթերցողներին լավ հնարավորություն է տրված՝ ծանոթանալու տիրեթյան միֆական ու դժվարամատչելի համարվող աշխարհի ներքին պատկերին:

ISBN 978-9939-1-1115-5

ՀՏԳ 821.584.6-32 Նորբու  
ԳՄԴ 84(5)-44



© Tsering Norbu  
© China Translation and Publishing House

© «Ոգի-Նաիրի» (թարգմանության համար), 2020

## ՑՈՒՆ ԱՄԵՐԻԿԱՅԻՑ

Հաշվետվությունը ստանալով՝ ես արագ իմ ջիփը քշեցի Ռանդոլփ, որ տեղի էր ունեցել դեպքը: Իմ ջիպն օրորում էր ինձ անհարթ ճանապարհի վրա, տարուբերելով մարմնիս բոլոր մասերը: Մի՞թե իմ ջիփը կեսճամփին ջարդուփշուր կլինի: Եթե այդպես է, ապա ես մինչև գյուղ ստիպված կլինեմ ոտքով գնալ:

Անկեղծ ասած՝ սա չի կարող դիտարկվել որպես կարելուր դիպված: Ցույը, որ պահում էին, սատկել էր: Նրա տերը կարծում էր, որ նրան ինչ-որ մեկը թունավորել էր: Ռանդոլփի գյուղացի սպան պնդեց, որ ես այդ գործը գլուխ բերեմ: Նա ասաց, որ տեղի բնակիչները միշտ հաստատակամ վստահություն են ունեցել ոստիկանական գրասենյակի հանդեպ, եւ նրանք ոստիկանի որոշումներից դժգոհ չեն լինի: Անհեթեթություն: Բայց ես ստիպված եղա ավելի շատ դեսուդեն ընկնել միայն այդ անհեթեթության համար:

Առջեւում փռված ճանապարհին՝ փշարմավների ծովն սպասում է ինձ, որպեսզի անցնեմ այդ մզագորշ ոստերի շղթան: Ես կգերադասեի զարնանն անցնել անտառով: Դեղին ծաղիկները փշարմավների տերեւների ծովում նման էին արեւի տակ շողողացող ոսկու: Այդուհանդերձ, այդ վաղ ձմռանը բոլոր տերեւները թափվել էին՝ ինձ դժբախտ եւ անհաղորդ թողնելով: Այդ կայուն ճոճքն ինձ հիվանդացրել էր: Ես կանգնեցրի ջիփը, որպեսզի միգեմ: Հետո ես միզեցի գետնին, տարբեր չափերի պայթող պղպջակների վրա: Երբ ես շղթաս վեր քաշեցի, խոշոր եղջերավոր անասունի շյունի ձայն լսեցի: Ակնթաթ անց կովի հետ մի գեղջկուհի ելավ: Նրա մեջքին կովի թրիքով լի մի զամբյուղ էր:

Կնճռոտ դեմքով տարեց գեղջկուհին հեգնական ժպտաց ինձ վանդակավոր գլխաշորի տակից:

-Ինչ բերքահավաք է: Դուք մի ամբողջ զամբյուղ կովի թրիք ունեք,- ասացի ես:

-Այս կովը պարզապես զուգավորվել էր եւ ասում են, թե ցույը օտար երկրից էր բերվել, եւ որ բավական թանկ էր,- ասաց նա:

Կինը դադարեց խոսել եւ գրպանից հանեց քթածխախոտատուփը,

## Ցերինգ Նորբու

մինչդեռ ճերմակ եւ սեւ պուտերով կովն իր բարալիկ պոչը ետուառաջ էր տարուբերում:

-Մի անգամ զուգավորվելն ի՞նչ արժի,- ասացի ես՝ անտարբեր ևս-  
յելով կովի այլանդակ հետույքին:

-Դե դա շատ թանկ է,- չար քմծիծաղով պատասխանեց ևս:

-Շատ լավ,- ես կտրուկ գլուխս շրջեցի:

-Դուք շրջանից եք եկել, այդպես չի՞:

-Հա, ես գնում եմ Ռանդուի: Տույր սատկած է,- պատասխանեցի ես:

-Լավ, ինչ պիտի անեն:

-Ահ, հա: Դա Գոնպոի ցուլն է: Այդ ցուլը մեր գյուղից շատ ավելի  
թանկ է: Գոնպոի վրա ցուլ առնելը թանկ ևստեց: Լուրեր են շրջում, որ  
եթե այդ ցլի հետ զուգավորվեն, հորթի կաթնատվությունը մի քանի  
անգամ կբարձրանա, ավելի շատ, քան մեզ մոտ է: Բացի դա, այդ ցուլն  
ավելի ուժեղ եւ խոշոր է, եւ ավելի շատ միս է տալիս, քան մեր ունեցած-  
ները: Եվ դրանք այս ընթացքում ինչ-որ բան արել էին:

Վերջում այդ խոսքերն ասելիս ես գիտակցեցի իրավիճակի ողջ լր-  
ջությունը:

Ինձ պետք էր շտապ հասնել Ռանդուի գյուղը, քանի որ ես իմ դիմաց  
զգացի մոլեգնած գյուղացուն:

-Ես պիտի գնամ:

-Օգնեք նրանց մանրակրկիտ հետաքննությամբ: Այդ ցուլը ամենա-  
թանկ բանն է, որ նրանք ունեն:

Ես փութանակի փախա:

Ես պիտի, անկախ ճոճքից, հնարավորինս արագ գնայի:

Շատ գորշ ու անշուք գյուղերի մոտով անցնելով, ես վերջապես տե-  
սա դեպ Ռանդուի գյուղը տանող լեռնային ճանապարհը: Ձորով կարճ  
ընթացք գնալուց հետո մի ևեղլիկ շրջակա արահետ կար: Ճանապար-  
հից ձախ լերկ քարեր եւ չոր խոտեր էին. աջ կողմում խոր խանդակ էր,  
լեռան ստորոտին ցաքուցրիվ տներ էին սփռված: Չառիթափ դաշտի  
վրա, ստորոտն ի վար հավասարաչափ տարածություններով գատված  
դարավանդավոր դաշտեր էին: Գյուղի սկզբնամասում եւ վերջում, մի  
քանի վիթխարի բարդիներ կային: Դեղնած տերեւները հեռվում շողում  
էի արեւի տակ: Խուլ եւ լուռ տեղ էր:

Իմ ջիփը դանդաղ ընթանում էր այդ զառիթափ լեռնային ճանապար-

հով, կեռագծվելով բազում շրջադարձերի միջով: Առջեւում դեռ մի անկյուն էլ կար: Դա այդպես էր, երբ ես շրջվում էի, երբ ես տեսա Փանջիանգին՝ գյուղական կոմիտեի տնօրենին՝ կանգնած ճանապարհի եզրին:

-Հիմար,- հայհոյեցի ես նրան: Ինչպե՞ս ես կարող էի կանգ առնել այդպիսի զառիթափ ճանապարհի վրա: Հին ջիփը կզլորվեր հենց ուղիղ դեպի լեռան ստորոտը, եթե ես նրա ասածի պես անեի: Անտեսելով նրան՝ ես առաջ անցա: Ետևամասից նայելով ես տեսա Փանջիանգ տնօրենին, որ վազում էր փոշու ամպի մեջ, գոռում ու ձեռքերն էր թափահարում, բայց ամենը, ինչ ես կարող էի անել՝ պարզապես առաջ ընթանալն էր: Ես կանգնեցրի ջիփը բարդու տակ՝ գյուղի մուտքի մոտ: Որոշ ժամանակ անց եկավ տնօրենը՝ սրտնեղած ու ուժասպառված: Ես ինձ նրա առաջ մեղավոր էի զգում:

-Ինչ զառիթափ ճանապարհ է: Ես վախենում էի կանգ առնել վատ արգելակների պատճառով,- բացատրեցի ես:

-Բայց դուք արեցիք այդ, դա ամենակարեւորն է,- ասաց նա, ծանր շնչելով ու հակվելով, ձեռքերը ձևկներին դնելով, նա գլուխը տարուբերեց: Ես նրան ծխախոտ տվեցի, բայց նա, դեռես կռակալով, այն ականջի ետեւը դրեց:

Ես ծխախոտը կպցրեցի ու սկսեցի ծխել:

-Խնդրում եմ առաջին հերթին իմ տուն գնանք,- ասաց տնօրենը:

-Չէ, շնորհակալություն: Երբ դուք բավականաչափ հանգստանաք, պատմեք ինձ, թե ինչ է կատարվել:

Ես հուսով էի գլուխ բերել այդ գործը եւ հնարավորինս արագ շրջան վերադառնալ:

Առավոտյան Գոնպոն կապեց իր ցուլը գյուղի ետեւի բարդուց, եւ վերադարձի ճանապարհին հանդիպեց Կարմա Դորջին: Մի ժամից, երբ Գոնպոն գնաց իր ցլին փնտրելու, այն արդեն չկար: Նա բարձրացավ լեռան ստորոտն ու գտավ իր ցլին մացառուտում, քարի ետեւում, փրփուրը բերանին, մահացած:

Գոնպոն համարում էր, որ դա Կարմա Դորջեն է արել, ով դուրս էր բերել ցլին ու թունավորել էր նրան: Այդուհանդերձ, Կարմա Դորջեն չխոստովանեց այդ, ենթադրելով, որ ինքը երբեք նմանատիպ ամոթալի բան չի անի: Նա ասաց, որ ողջ ժամանակ Լոբսանգի հետ սարի վրա է եղել, եւ որ Լոբսանգը կարող է դա հաստատել:

## Ցերինգ Նորբու

-Ահա եւ ամենը,- հոգոց հանեց տնօրենը:

-Տիկն ե՞տ վերցրին,- հարցրեցի ես:

-Այո, դա արեցին այսօր առավոտյան:

-Խնդրում եմ, ինձ շտապ տարեք Գոնպոի տան մոտ: - Դուք կարող եք մեքենան ուղիղ այնտեղ քշել:

-Լավ: Նստեք:

Մենք գյուղ գնացինք: Ճանապարհի եզրին կտցող հավերը խորհրդավոր տեսք ունեին եւ թռան դեպի քարե պատը: Կեղտոտ մազերով մի քանի թխացած երեխաներ վազեցին ջիփի ետեւից:

Հետեւելով տնօրենի մատնանշած ուղուն, ես ձախ դեպի նրբանցք շրջվեցի, կանգ առնելով տան շեմին:

Մինչեւ իմ դուրս գալը, մի վտիտ ու բարձրահասակ գյուղացի ելավ տնից: Նա նայեց պատուհանին, եւ թվում էր թե, կասկածում էր. թե այնտեղ միայն տնօրենն է ու ես՝ մեքենայի մեջ: Նա ծայրահեղ հիասթափված էր, երբ տեսավ, որ մեքենայի մեջ այլ մարդիկ չկան: Զթները լիքը երեխաները աղմուկով վրա հասան, բայց, տեսնելով այդ հիասթափված գյուղացուն, տեղնուտեղը փախան:

-Սա սպա է շրջանի հասարակական անվտանգության Բյուրոյից:

Գոնպոն նրան ներս հրավիրեց:

Երկու կին եւ մի տղամարդ մոտեցան տան դարպասներին:

Գոնպոն, թալկացած եւ հուսահատ շրջվեց:

Նա անցավ ցածրիկ մուտքով, ինձ թողնելով իր վտիտ ու բարձր մեջքը:

-Խնդրեմ, ներս անցեք: Սոչու, գնա եւ յուղով թեյ բեր,- ասաց միջահասակ տարեց մի կնոջ, որ տերոդորմյան ձեռքին կողմ կանգնած էր:

-Շնորհակալություն,- ասացի ես:

-Այսպիսի երկար ճամփորդությունից հետո դուք պիտի որ ծարավ լինեք: Ինչ կասեք, եթե մինչեւ գործը սկսելը մի բաժակ թեյ ըմպենք,- ասաց տնօրենը:

Ես շեմից ներս անցա եւ նախ տեսա բակում պառկած ցլին: Ինչ վիթխարի ցուլ է: Ես նույնիսկ աչքերիս չէի հավատում: Այն լիովին գրավել էր բակի մի անկյունը: Նրա կաշին շողում էր միջօրյա արեւի տակ: Ես քայլեցի ցլի շուրջը: Նրա առջեւ, սմբակների առաջ մորթուց պարան էր կախված: Այդ կողմի վրա սպի չկար:



-Խնդրում եմ, օգնեք ինձ շոջել:

Մենք չորսով ուժերս լարեցինք ցլին շոջելու համար, բայց մյուս կողմի վրա էլ սպի չկար: Ես սկսեցի կենտրոնանալ նրա բերանի շուրջ եղած փրփուրի վրա: Ողջ ուժերս լարեցի եւ ստիպեցի որ բերանը բացվի, որ լի էր փսիկներով ու ծամած խոտով:

-Խնդրում եմ՝ վազեք ձեր ձեռքերը,- ասաց տնօրենը:

Սոչու անունով կինը մետաղյա շերտփով լի ջուր վերցրեց եւ դանդաղ ձեռքերիս վրա լցրեց: Իմ կողքին Գոնպոն դրեց իր ձեռքերը իր թելքերի միջից, ջախջախված եւ հուսախաբված: Այդ ընթացքում բակում հայտնվեցին մի քանի արեւկեզ դեմքեր, որոնք մեկուսի եւ անընդհատ խոսում էին:

Տնօրենը դարպասները փակելով հանդիմանում էր նրանց:

-Գոնպո, խնդրում եմ մեկ անգամ ես կրկնեք ձեր ասածները,- ասացի ես, ձեռքերս հանգամանորեն չորացնելով:

-Էլ ասելու բան չունեմ: Ի՞նչ կասեք, եթե գնանք ու բռնենք Կարմա Դորջեին, եւ ստիպենք, որ նա վճարի իր արածի համար,- ասաց Գոնպոն փոքր-ինչ բարձր ձայնով, բռնելով վզից:

-Պա ճիշտ չէ: Ամեն մի դեպք մանրակրկիտ քննություն է պահանջում, եւ միայն այդպես դուք կարող եք բռնել հանցագործին: Հիմա, եկեք գնանք վերեւ եւ խոսենք այդ գործի մասին հասարակական անվտանգության սպայի հետ, ավելի մանրամասն:

Այն, ինչ ասաց տնօրենը փոքր-ինչ հանգստացրեց Գոնպոին, նրա վիզը հակվեց, երբ նա վեր ելավ:

-Խնդրում եմ այս բնակիչներին բակ ելնել, եւ որ այս վայրում լռություն լինի: Ես Գոնպոին առանձին տալու մի քանի հարց ունեմ,- ասացի տնօրենի ետքից՝ աստիճանների վրա:

Ես նստել էի Գոնպոի դիմաց եւ գրպանիցս հանել էի նոթատետրս:

-Խնդրում եմ ինձ ճիշտն ասեք այդ դեպքի մասին: Մենք չենք ուզում որեւէ մեկին նեղացնել:

-Դուք կարող եք որսալ ձիուն, որը վայրի է դառնում, բայց բանավոր խոսքը չի կարող կուլ գնալ: Ինչպե՞ս ես կարող եմ ստել:

-Լավ: Հիմա մեկ անգամ ես ինձ պատմիր, թե ինչ է եղել առավոտյան:

*Դատական մեղադրանքի թերթիկ /1/*

Ցերինգ Նորբու

*ժամանակը՝ 13:20, հոկտեմբերի 25, 2006*

*Վայր՝ Ռանդոլֆ գյուղ*

*Չեկուցող՝ Գոնպո, տղամարդ, քառասուն վեց տարեկան, Ռանդոլֆ գյուղի անգրագետ բնակիչ.*

«Այս առավոտ արեւածագից հետո ես իմ ջուրն պայուսակի մեջ խոտ լցրեցի եւ իմ ցլին տարա գյուղի ետեւի բարդու մոտ: Նախկինի պես ես իմ ցլին կապեցի բարդուց եւ խոտը փռեցի նրա առաջ: Իմ ցուլը սկսեց խոտ որոճալ, եւ նրա կաշին շողում էր արեւի տակ: Ես այնքան երջանիկ էի, որ չէի կարող նրա գավակը չգրկել: Ես ծրագրել էի թույլատրել նրան երբեմն զուգավորվել իմ երկու կովերի հետ: Ես համարում էի, որ նորածին հորթերը մեր գյուղում ամենաուժեղը կլինեն: Ես երկար ու երջանիկ կանգնել էի իմ ցլի կողքին: Խոտ որոճալուց հետո, նա մեջքը շփեց բարդու վրա, որպեսզի քորն անցկացնի: Ես ձեռքերով օգնեցի նրան, ու նա գլուխը ծռեց ու հեզորեն պոչը թափահարեց: Այնուհետեւ արելը ելավ լեռան գլխին, եւ արելը ողողեց ողջ գյուղը: Ես տեսնում էի, թե ինչպես որոշ կանայք դուլերով ջուր էին հավաքում: Ես շատ երկար մնացի այնտեղ, եւ հետո ստիպված եղա վերադառնալ տուն, այդ պատճառով վերցրի ջուրն պայուսակս գետնից ու վերադարձա:

Գյուղ մտնելիս ես հանդիպեցի Կարմա Դորջին: Աջ ձեռքին նա կացին էր բռնել, իսկ ձախ ձեռքին՝ պարանի կտոր: Ես չողջունեցի նրան: Ես կարծում եմ, նա վատ մարդ է, որ չի կարող ճիշտը ստից գանազանել: Նա նույնիսկ շնից էլ վատն է, այդպես չէ՞: Այն օրից, ինչ ես գնել էի իմ ցուլը, բոլորը մեր գյուղում նախանձում էին, բայց այդ ժամանակվանից միայն նա վատ ծրագիր ուներ:

Ամռան վերջին, ես 5000 յուան վարկ վերցրեցի բանկից, եւ մի երեք հազար յուան էլ պարտք վերցրեցի իմ ընկերներից ու բարեկամներից, ի հավելումն իմ տնտեսումների, ես 10 000 յուան ունեի: Ես օգտագործեցի 10 000 յուանը Լհասայից ցուլ առնելու համար: Ես նրան բեռնատարով ամառանոց տարա, իսկ այնուհետեւ տրակտորով մեր գյուղ: Ես եկա գյուղ, կեսօրին բոլորը մեր գյուղում եկան, որպեսզի տեսնեն ցլին: Նրանք նախանձում էին, նախանձում էին, բայց տրակտորի աղմուկը խլացնում էր նրանց ձայները: Ես ստիպեցի ցլին իջնել տրակտորից եւ ծրագրել էի նրան տուն քարշ տալ: Այդ ժամանակ եկավ Կարմա Դոր-

ջեն եւ թփթփացրեց իմ ցլի մեջքին: Ես ինձ դժբախտ էի զգում եւ գոռում էի նրա վրա, «Դա քո ցուլը չի, ինչպես ես համարձակվում այրքան ուժեղ նրան շոյել»: Նա ծիծաղեց, «Լավ, դու չես կարող ծուխը գոլորշուց տարբերել, եթե ինքդ այդ չես տեսնում: Ինչ գեղեցիկ ցուլ է»: Լսելով այդ, իմ բարկությունը մեղմացավ: Ողջ գյուղը հետեւում էր ցլին մինչեւ իմ դարպասները: Ոմանք նույնիսկ մտան ներս: Միակ բանը, որ ես լսում էի՝ նրանց զարմանքն ու հիացմունքն էր: Ես ինձ երջանիկ էի զգում եւ հավատում էի, որ ճիշտ որոշում եմ կայացրել: Այդ օրը գյուղի բնակիչները եկան իմ տուն եւ անվերջ ինձ հարցեր էին տալիս: Ես նրանց ասացի, որ ցուլն Ամերիկայից է եկել: Երեք օր տեսեց մինչեւ էստեղ հասավ: Տեխնիկն ասաց, որ կաթի արտադրողականությունը երկու անգամ ավելի շատ կլինի, քան մյուս կովերի մոտ, իսկ ես պիտի պարզապես նրան խոտով կերակրեմ, կամ այլ նորմալ ուտելիքով: Տեխնիկը նաեւ ասաց, որ ես առաջինն էի մեր գյուղում, ով ցլով հարստացել էի: Երեկոն վրա հասավ, բայց գյուղացիները դեռեւս չէին պատրաստվում գնալ: Ես այնքան հոգնած ու քաղցած էի, որ բոլորին խնդրեցի հեռանալ, եւ նրանք մեկը մեկի ետքից գնացին: Մայրս եկավ ու ինձ ասաց, որ իրադարձությունները հակառակ ուղղությամբ կզարգանան, եթե դրանք արտակարգ դառնան: Նա ինձ ասաց, որ ես ավելի բարի լինեմ բնակիչների հանդեպ, եւ այդպես ես ավելի քիչ մարդկանց կնեղացնեմ: Այնուհետեւ նա սկսեց իր տերոդորմյան քաշել: Ես անտեսեցի նրան, քանի որ ես գիտեի ինչպես վարվել մյուսների հետ: Ես ինձ շատ հոգնած էի զգում եւ ուզում էի հնարավորինս շուտ ննջել: Ես խնդրեցի կնոջս ինձ խմելու բան բերել: Նա ինձ փոքր-ինչ լեռնային գարու գինի տվեց: Ես գինին խառնեցի ցամփայի հետ ու կերա այն: Ճաշից հետո ես խնդրեցի փոքր եղբորս ինչ-որ բանով ցլին կերակրել, եւ որպեսզի մյուս կովերից հեռու պահի: Դրանից հետո ես գնացի քնելու: Օհ, ինչ արտառոց զաղափար է: Ավելի քան քառասուն կով մեր գյուղում ուզում էր զուգավորվել իմ ցլի հետ: Ինչ ծանր «աշխատանք» նրա համար: Ես տեղնուտեղը օգտվեցի տեխնիկի հեղինակությունից, որպեսզի մերժեմ նրանց: Ես ասացի «տեխնիկն ասեց, որ ցուլը նոր է եկել էստեղ: Մենք պիտի թույլ չտանք, որ նա զուգավորվի կովերի հետ, մինչեւ որ նա վարժվի մեր գյուղին»: Ես փող եմ պարտք արել, որ ցուլ գնեմ, եւ չպիտի ռիսկի դիմեմ: Գյուղացիներն ասելու բան չունեին, եւ

## Ցերինգ Նորբու

զնալուց բացի այլ ընտրություն չունեին, բայց զնալուց առաջ նրանք խնդրեցին, որպեսզի ես իմ խոստումը կատարեմ: Խոստում: Ես նրանց ոչ մի խոստում էլ չեմ տվել: Նրանց խոսքերն ինձ լարվածության մեջ գցեցին: Ես մտածում էի, այնքան կովեր կային, որ զուգավորման էին սպասում, բայց զուգավորումը ուտել չի: Ո՞վ կարող էր դա օրը երեք անգամ անել: Ես նստած էի իմ պատշգամբում, լուռ ջերմանալով, երբ հանկարծ դռան զանգը հնչեց: Ես տեսա՝ Կարմա Դորջեի կեղտոտ ձեռքը եւ կլոր գլուխը մտավ իմ բակ: Դեմքս մշուշվեց: Կարմա Դորջեն կանգնել բակում եւ ինձ ժպտում էր: Ի՞նչ, դուք կարծում եք ածուխի կտորը կարելի է փայլեցնել ու սպիտակ դարձնել: Վատ մարդը միշտ էլ վատ մարդ է: Նա ելավ վեր ու նստեց իմ կողքին: «Քո տուն շատ մարդ է գալիս, ճի՞շտ է»: Նա ինձ ծխախոտ տվեց: «Մի քանիսը», - պատասխանեցի ես: Եկել էր համարյա թե գյուղի կեսը, իսկ մյուսները պարզապես տարակուսում էին: Ես ազնիվ մարդ եմ: «Լավ, ինչպիսին է մեկ անգամ զուգավորվելու գինը», - հարցրեց Կարմա Դորջեն: Ես նորից տեխնիկին վկայաբերեցի, որպեսզի հրաժարվեմ: Ի՞ գարմանս ինձ նա ասաց, որ դա սուտ է: «Ինչպես մենք գիտենք, ամերիկացիները շատ ուժեղ են: Ես լսել եմ դա, հենց նրանք մոտեցել էին Էվերեստ լեռանը, տղամարդիկ եւ կանայք միասին էին քնում: Կանայք ճչում էին, երբ զրգովում էին, մոտակա գյուղերում ապրողները կարծում էին գայլ է եկել: Երբ նրանք պատրաստվում էին քշել այդ գայլին՝ լապտերներով եւ փայտերով, թարգմանիչը փութով ելավ վրանից: Նա կանգնեցրեց գյուղացիներին, եւ ասաց, որ ամերիկացիները սեր են անում: Բայց գյուղի բնակիչները կասկածում էին դրանում, եւ հարցրեցին, թե ինչու էին նրանք գայլի պես ոռնում, երբ սեր էին անում: Թարգմանիչն ասելու բան չունեւ: Այդ մասին եմ մտորում: Էդ ամերիկացիք այնքան ուժեղ են, էլ չասած նրանց ցլերի մասին: Ես պապանձվեցի, եւ միայն ասացի. «Դու սուտասան ես»: Իմ ցուլը սկզբում պիտի զուգավորվեր իմ կովերի հետ, հետո միայն մյուս կովերը կարող են նկատի առնվել: Կարմա Դորջեն մերկացրեց իմ սուտն ու քմծիծաղում էր ինձ վրա: Նա ինձ մի ծխախոտ եւս առաջարկեց, բայց ես չվերցրի: «Խնդրում եմ մտածիր իմ ասածների մասին: Գինը դու ես որոշում», նա ելավ եւ իմ պատասխանին չսպասելով, իջավ աստիճաններով ու հեռացավ:

Ամեն ինչ երկու կողմ ունի: Սկզբում ես հուսով էի, որ գյուղի բնակիչ-

ները կսկսեն ինձ հարգել այդ ցույն առնելուց հետո, բայց անսպասելի նրանք սկսել էին ինձ ատել: Նրանք դիտավորյալ օտարեցին մեզ, ինչ-որ անպատասխանատու ու հեզնական խոսքեր ասելով: Ես կարող էի նրանց հասկանալ: Ես կարծում եմ, որ մարդիկ սովորաբար չեն կարողանում ընդունել մարդու, ով անակնկալ է: Ողջախոհության իմաստով, երբ բոլորը քեզ ուշք են դարձնում, կարող է ինչ-որ անհաջող բան պատահել: Ես ջանում էի խուսափել դրանից: Ես մոմերով, կաթով եւ քսան յուանով գաղտուկ երկրպագություններ արեցի: Հետո ես հատեցի լեռն ու վաղ առավոտյան ուղեորվեցի Չիլվու տաճարը: Ես խնդրեցի վանականներին Սուրբ Գրեթից կարդալ տողեր, որոնք կօգնեին ինձ վերացնել դժբախտությունը: Դրանից հետո ես այլևս որեւէ ճնշում չէի զգում եւ հավատում էի, որ Բուդդան ընդմիշտ կպահպանի ինձ: Ես նորից գլուխս բարձրացրի եւ չէի վախենում գյուղի այլ բնակիչների շշուկներից: Ես սովորաբար իմ ցլին գյուղ էի տանում: Թեեւ գյուղի բնակիչները ձեռացնում էին, թե ինձ չեն տեսնում, ես հայտնաբերեցի, որ նրանք դեռեւս զննում են իմ ցլին: Այդ սառը պատերազմը տեւեց համարյա տասը օր եւ գյուղի մյուս բնակիչների համար անհաջողությամբ պսակվեց: Նրանց վերաբերմունքն իմ հանդեպ փոխվեց եւ նախկինի պես դարձավ: Երբ ես իմ ցլի հետ անցնում էի նրանց կողքով, նրանք սովորաբար ողջունում էին ինձ եւ ինձ ծխախոտ կամ մի փոքր բռնոթի էին տալիս, բայց բնականաբար նրանց թեման զուգավորումն էր: Դեմքս կորցնելու վախից, ես ստիպված էի աղոտ նրանց ինչ-որ բաներ խոստանալ: Մենք նորից ընկերակցության մեջ էինք, եւ մորս կշտամբանքներն ու բողոքներն ավելի ու ավելի քչանում էին: Հակառակ դեպքում, նա կքննադատեր ինձ այն բանի համար, որ ես ստիպեցի, որ ողջ գյուղը նյարդայնանա: «Դու մեկուսացրեցիր մեր ընտանիքը: Մենք երջանիկ կլինեինք նույնիսկ առանց այդ ցլի...»: Նրա տրտունջը վշտացրեց ինձ: Ես հավատում էի, որ ամեն ինչ լավ կլինի, եւ գյուղի բնակիչները կընդունեն իմ ցլին: Փոփ: Կարմա Դորջեն կրկին ինձ դժբախտության մեջ գցեց, ինչպես հին ասացվածքն է վկայում. «Լավ մարդիկ երջանկություն չունեն առանց վատերի պատժի»: Այդ կեսօրին ցույն իմ կապված էր գյուղի ետեւի բարդուն: Կարմա Դորջեն այնտեղ բերեց իր կովն ու ստիպեց իմ ցլին զուգավորվել: Ինչպե՞ս կարող էր իմ ուժեղ ցույր հավանել այդ վտիտ կովին: Կարմա Դորջեն քաշեց իմ ցլին, որ

## Ցերինգ Նորբու

զուգավորի իր կովի հետ: Հենց որ իմ ցուլն իր սմբակը դրեց կովի վրա, կովն այդ ընկավ: Էդ վատ մարդը Էդպես էլ չփոխեց իր վարքն ու շարունակում էր հրահրել ցլի ցանկությունը: Ի վերջո, ցուլն իմ չկարողացավ իրեն տիրապետել: Վախենալով, որ իր կովը կարող է չդիմանալ ցլին, Կարմա Դորջեն փորատակից օգնեց իր կովին: Այն ժամանակ ես իմ գյուղատնտեսական գործիքներն էի նորոգում, եւ հանկարծ զգացի դժբախտությունը: Ես թողեցի իմ գործն ու վազեցի ցլիս մոտ: Երբ ես եկա, Կարմա Դորջեն դեռեւս փորատակին էր, եւ նրա ընկեր Չոֆելը օգնում էր նրան: Չոֆելը ուղղորդում էր ցլիս իր ընկերակցին: Ես բարկացա, հենց որ տեսա, թե ինչ էր կատարվում: Ես խփեցի Չոֆելի հետույքին ու նրան վար գցեցի: Իմ գալը չիմանալով, Կարմա Դորջեն գոչեց. «Օգնիր նրան ելնել»: Ես ուժեղ խփեցի կովի մեջքին, ստիպելով Կարմա Դորջեին ու կովին զետիկ տապալվել: Տեսնելով, որ ես շատ չարացած եմ, ներողություն խնդրելու փոխարեն, Կարմա Դորջեն պնդում էր. «Մենք պայման ենք կապել, Գոնպո: Ես քեզ կվարձատրեի ես զուգավորման համար, բայց այն դեռ չի ավարտվել: Հիմա արի ինձ մոտ, ձեռքդ տուր»: Ես շուրջբոլորս նայեցի, բայց չկարողացա քար կամ փայտ գտնել: Ես ուժեղ խփեցի ուղիղ նրա դեմքին, տապալելով գետնին: Ես հարձակվեցի նրա վրա ու մազերից քաշեցի: Եկավ Չոֆելը ու փորձեց ձեռքս մի կողմ քաշել, ինչը որ ինձ ավելի զայրացրեց: Ես դարեցրի քաշել Կարմա Դորջեի մազերից, եւ ելա, որ Չոֆելին խփեմ: Վախեցած, Չոֆելը վազեց դեպի գյուղը: Ես գոռում էի նրա ետքից, քարեր նետելով, որոնք գրավեցին եւ գյուղի մյուս բնակիչների ուշադրությունը, նրանք ինձ կանգնեցրին եւ հորդորեցին հանգստանալ: Գյուղացիների առաջ ես երդվեցի Թրիաթնային, որ անպայման կսպանեմ Կարմա Դորջեին ու Չոֆելին: Իմ երդումը վախեցրեց գյուղի մյուս բնակիչներին: Փաշիանգին եւ գյուղի քարտուղարին խնդրեցին մեր միջեւ միջնորդ լինել, ինչն ինձ վշտացրեց: Ես Կարմա Դորջեից զուգավորման համար վարձ ուզեցի, Փաշիանգը չհամաձայնվեց՝ անհաջող զուգավորման պատճառով: Նրանք սաստիկ պախարակում էին Կարմա Դորջեին եւ խնդրում էին նրան ինձնից ներողություն խնդրել: Կարմա Դորջեն արեց այդ, բայց ես փոխհատուցում էի պահանջում: Գյուղի որոշ բնակիչներ սկսեցին փոխել իմ նկատմամբ իրենց վերաբերմունքը՝ կարեկցանքից մինչեւ հակակրակը:

-Դու փողի պատճառով խելքդ թոցրել ես: Ոչ մի սարսափելի բան չի պատահել: Կարիք չկա նույն գյուղի բնակչին ստիպել...

Այդ քննարկումներն ավելի դառնացրին ինձ:

Ես մտածում էի. «Ես ցույն առել եմ փոխառնված փողերով, բայց նեղացրել եմ գյուղի բոլոր բնակիչներին: Ինչո՞ւ նրանք տանել չեն կարողանում այդ ցլին»: Ես չարացած ու նեղացած էի: Այդ ժամանակ մայրս հայտնվեց ամբոխի մեջ ու խնդրեց ինձ տուն վերադառնալ: Ես ասացի. «Մենք այս հարցն արդարացի չունենցինք»: Նա ասաց. «Դա որոշել են Փաշինյանը եւ գյուղի քարտուղարը: Ինչե՞ն էս դու մինչեւ հիմա դժգոհ»: Ես դեռ բարկացած էի, բայց չէի ուզում մորս սիրտը կոտրել: Ամեն դեպքում, նա արդեն յոթանասունն անց էր: Ես պիտի ենթարկվեի մորս, եւ նզովելով լքեցի ամբոխը: Այդ ժամանակից ի վեր ես շատ զգույշ դարձա: Տասներկու օրից ավելի անց, ցույս ավելի ու ավելի ուժեղանում էր: Ես կարծում էի, որ արդեն ժամանակն էր, որ ցույս զուգավորվեր իմ կուրերի հետ: Երբ ես առավոտյան հանդիպեցի Կարմա Դորջեին, ես ինձ փոքր-ինչ անհանգիստ էի զգում, այդ պատճառով որոշեցի հետեւել նրան: Կարմա Դորջեն գտավ ինձ: Նա անցավ ցլի կողքով, իջավ լանջով, որ ձգվում էր լեռան զառիվայրից, իսկ այնուհետեւ սկսեց լեռ բարձրանալ: Ոչ մի տարօրինակ բան չտեսնելով, ես տուն վերադարձա: Առաջին հերթին ես մտածեցի, թե որտեղ էր ցույլը: Ես վազեցի ներքեւ եւ ուղիղ բարդու մոտ: Ի գարմանս ինձ, ցույն արդեն չկար, եւ ծառից կախված էր պարանի կտորը: «Սա երեւի թե Կարմա Դորջեի արածն է», - մտածեցի ես: Ես վշտացած սկսեցի ցլին փնտրել, եւ գտա նրան մացառուտում, փրփուրը բերանին, մեռնելիս: Ես վազեցի տուն եւ սարիրայի մի քանի դեղահաբ զցեցի շշի մեջ: Ես խնդրեցի եղբորս եւ գյուղի երեք բնակիչների, որոնց ես հանդիպեցի նրբանցքում, օգնեն ինձ: Ես այդ դեղով հեղուկը լցրեցի ցլի բերանի մեջ, բայց նա արդեն մահացած էր, եւ նրա մարմինը հետհետե պաղել էր: Գյուղի բնակիչներն ինձ հիշեցրին, որ Պաշինյանին կանչեմ, եւ հիվանդության պատմությունը շրջան ուղարկեմ: Ես խնդրեցի եղբորս անել այդ, եւ ես թողեցի որոշ գյուղացիների օգնել ինձ ցլին տուն տանել: Դա էր ողջ պատմությունը: Եվ ես երդվում եմ Թրիարթնայով, որ ասացի, եւ, որ դա է ողջ ճշմարտությունը: Չոհը՝ Գոնպոն, եւ հիշեցրի Գոնպոյին իր հայտարարության մասին: Համոզվելով, որ սխալվեք չկան, ես խնդրե-

## Ցերինգ Նորբու

ցի նրան թղթի վրա դնել մատնահետքը: «Հիմա դու կարո՞ղ ես այս գործը գլուխ բերել», - հարցրեց նա: Ես պիտի կասկածյալին մի քանի հարց տամ: «Ոչ հիմա», - ասացի ես:

«Բացի այդ, ես քեզ խնդրում եմ ինձ տար գյուղի ետեվի այն ծառի մոտ, այնտեղ, որտեղ դու գտար ցլին»:

Ես զննեցի պարանի այն կտորը, որը բարդուց կախված էր եւ փորձեցի հանցանշաններ գտել այնտեղ, որտեղ Գոնպոն գտել էր իր ցլին: Այնուհետեւ Պաչիանգի գլխավորությամբ եկա Կարմա Դորջեի տուն:

*Մեղադրական փաստաթուղթ /2/*

*Ժամանակ՝ 15:00, 25, 2006, հոկտեմբեր*

*Վայր՝ Ռանդուի գյուղ*

*Կասկածյալ՝ Կարմա Դորջե, տղամարդ՝ քսաներկու տարեկան, կրտսեր միջնակարգ դպրոցական կրթություն, Ռանդուի գյուղի բնակիչ:*

«Ես այնքան դժբախտ եմ այսօր: Գոնպոյի ցուր մեռած էր, բայց մեղքը դրված էր ինձ վրա: Ես նեղացած էի: Այս առավոտ հայրս խնդրեց ինձ գնալ գյուղ ավելի վաղ, որպեսզի վաճառեի քարե հեծաններով հեծանիվները: Ես ասացի. «Մի շտապիր: Ես վաղն այնտեղ կգնամ»: Ես ստիպված եղա ցախ կոտրել, որպեսզի թեթեացների ձնողներիս աշխատանքը, երբ ես այնտեղ չէի լինի: Եթե ես գյուղ ավելի շուտ գնայի, ես կխուսափեի այս տխուր բանից: Լուսաբացին ես հանեցի կացինն ու պարանները, պատրաստվելով ցախ ջարդել: Ճանապարհին ես հանդիպեցի Գոնպոին: Սկզբում նա ուզում էր տուն գնալ, բայց մտափոխվեց, որպեսզի հետեւեր ինձ, հենց որ տեսավ, որ ես գնում եմ գյուղի ծայրը: Ես ինձ վիրավորված էի զգում նրա մանրապճեղ վարքից եւ շարունակում էի առաջ շարժվել, նրա վրա ուշք չդարձնելով: Ես հանդիպեցի Լոբսանգին, համագյուղացուս, սարալանջին: Մենք միասին գնացինք ցախ կոտրելու: Ես կատակեցի Լոբսանգի հետ, թե Գոնպոն ինձ ուղեկցում է այստեղ: Լոբսանգն ասաց. «Մենք կատակում էինք միմյանց հետ, ցախ էինք կոտրում /ես ճշգրիտ ժամը մոռացա/: Արեւն ընկել էր սարալանջի վրայի սպիտակ աշտարակի վրա: Քանի դեռ մենք ցախ էինք հավաքում, հայրս շնչահատվում էր: Նա ականջս ձգեց ու ասաց, թե ինչեւ ես այդպիսի ամոթալի բան արեցի: «Ինչո՞ւ դու թունավորեցիր Գոնպոի ցլին: Մենք մեզ չենք կարող փոխհատուցում թույլ տալ: Ինքդ էլ բանտ գնա»: Նա այդ ասելուց հետո արտասվում էր: «Ցու-



լը թունավորվա՞ծ է,- ասացի ես»։ Արդեն մեռած է, եւ Գոնպոն ասել է, որ դու ես թունավորել սրա ցլին։ Նա գանգել է շրջանի հասարակական անվտանգության բյուրո»։ Ասաց հայրս, անդադար արցունք թափելով։ «Անհերթություն։ Ես անընդհատ Լոբսանգի հետ եմ եղել։ Ո՞վ կարող է ապացուցել, թե ես եմ ցլին թունավորել», - ասացի ես ողջախոհ եւ վստահաբար։ Հայրս դադարեց լալ եւ հարցրեց Լոբսանգին, թե արդյոք դա ճիշտ է։ Լոբսանգն ասաց. «Մենք անընդհատ միասին ենք եղել։ Գուցե թե ինչ-որ ուրիշ մեկը, որ չի սիրում Գոնպոյին, թունավորել է ցլին»։ Հայրս որոշ ժամանակ մտածում էր, եւ մեկից մեզ կոչ արեց սարից իջնել։ Ճանապարհին մենք հանդիպեցինք մի քանի գյուղացիների, որոնք լուրջ տեսք ունեին։ Գյուղի քարտուղարն ինձ հաղորդեց, որ ես պիտի գնամ անհայտ մի տեղ եւ սպասեմ տան անվտանգության ծառայության աշխատակիցներին։ Մոլեզնած ես բացատրություն պահանջեցի։ «Ես կուզենայի գնալ, ուր որ կամենայի, եւ դա իմ ազատությունն է»։ Քարտուղարն ասաց. «Ազատությունից կխոսես, երբ հասարակական անվտանգության աշխատակիցները հասնեն էստեղ»։ Ես ուզում էի եւս ինչ-որ բան ասել, բայց հայրս կանգեցրեց ինձ։ Մենք վերադարձանք տուն, որպեսզի սպասենք հասարակական անվտանգության աշխատակիցներին։ /«Ես լսել եմ, որ դու եղել ես Գոնպոյի տանը, զուգավորման մասին խոսելու համար։ Իրականում ի՞նչ էր պատրաստվում անել»/։ Այո։ Ես հենց նոր վերադարձել էի Լհասայից, որտեղ ես աշխատում էի որպես թափառիկ աշխատավոր, եւ մի քանի հազար յուան էի աշխատել։ Գոնպոյի ցուլը ձգելը դժվար էր։ Ես տեսել եմ դա հեռուստացույցով շատ անգամ, բայց առաջին անգամ իմ աչքով տեսա այս փոքրիկ գյուղում։ Ես կուզենայի եղպիսի ցուլ ունենալ, կամ հորթ, որը կզուգավորվեր այդ ցլի հետ։ Երկրորդ օրը, այն բանից հետո, որ ցուլը հայտնվեց, ես թափառում էի գյուղում, լսելով, որ գյուղի կեսը Գոնպոյի տանն էր եւ թույլտվություն խնդրեց, որ իր կովը զուգավորվի այդ ցլի հետ։ Այդուհանդերձ, Գոնպոն ասաց, որ ցուլը դեռ պիտի վարժվի այս տեղին։ Գյուղի բնակիչները հավատացին նրան, բայց հիասթափվել էի այն բանից, որ ստիպված կլինեմ այդքան երկար սպասել։ Ես պարբերաբար տեսնում էի կովերի զուգավորումը Լհասայից բերված ցլերի հետ, եւ հարմարվելու մասին որեւէ հայտարարություն չկար։ Քանի դեռ կովատերերը դրա կարիքն ունեն եւ կարող են իրենց թույլ

## Ցերինգ Նորբու

տալ դրա համար վճարել, ցլերը պիտի զուգավորվեն իրենց լավագույն դրսետրումներով: Այն ժամանակ ես խղճում էի այդ ցլերին: Դրանք պիտի զուգավորվեին, անկախ այն բանից, թե դա նրանց դուր էր գալիս, թե ոչ, եւ հաճախ զուգավորումից հետո հյուժված էին լինում: Ես աղոթում էի Բուդդային այն ժամանակ, որ ինձ չլքեր վերամարմնավորման ժամանակ, ինչպես եւ ցլին, որպեսզի մահու չափ հոգնած չլինի: Ես գիտեի, որ Գոնպոն չէր ուզում թույլ տալ իր ցլին այդ գյուղի կովերի հետ զուգավորվել, որովհետեւ գյուղի բնակիչները չէին կամենում զուգավորման համար վճարել: Նրանք ուզում էին որքան հնարավոր է ցածր գին վճարել, կամ նույնիսկ անվճար զուգավորման հասնել համագյուղացիների համար, բայց Գոնպոն չէր ուզում: Նրա փոխարեն, ես էլ չէի ուզենա: Ես գիտեի իմ առավելությունների մասին, որովհետեւ կարող էի վճարել զուգավորման համար եւ նրան ոչ մի կոպեկ պարտք չէի:

Գերազանցության զգացումով ես գնացի նրան այցելելու, եւ ասացի նրան իմ մտածածը, սակայն նա չհամաձայնվեց: Ես ասացի, որ կարող եմ սպասել: Մի քանի օր անց, գյուղի մյուս բնակիչները համբերությունը կորցրին: Երբ նրանք տեսան ցլին, նրանց մեջ խանդի եւ նեղացածության զգացում ծնվեց: Գաղտնաբար գյուղի մյուս բնակիչները միավորվեցին, որպեսզի Գոնպոն մեկուսացնեին այնքան, որքան իրենք կարող էին, Գոնպոն ետքից անընդհատ խոսելով: Գոնպոյի ընտանիքի հուզմունքը հանկարծ անհետացավ, Գոնպոյի հետ, որ գալիս ու գնում էր, տաղտկալի ու տաղտկալի: Ես գիտեմ, որ Գոնպոն դուր չեմ գալիս: Մեր գյուղի տարեց մարդկանց մեծ մասին ես դուր չեմ գալիս, որովհետեւ ինձ չընդունեցին միջնակարգ դպրոցի բարձր դասարաններ՝ կրտսեր միջնակարգից հետո եւ ես Ռանդուի վերադարձա: Դուք գիտեք, ինչպե՞ս կարող է մարդ մի քանի տարի անց աշխատել ֆերմայում: Ես կուզենայի՞ դա անել: Գյուղի բնակիչները չտարան իմ ծուկությունը եւ միշտ խոսում էին իմ մասին, որպես բացասական օրինակի: Ես գիտեմ, որ բոլոր այս գյուղաբնակները՝ սահմանափակ հնարավորություններով մարդիկ են եւ ես չեմ ուզում մնալ այս հետամնաց վայրում: Ես գիտեմ Պեկինն ու Նյու-Յորքը. ես գիտեմ գինու բարերն ու սառունները, բայց ի՞նչ գիտեն նրանք: Բացի այդ, ամեն չորեքշաբթի նրանք ուղեւորվում են գյուղում սպիտակ ամրոցի դիմաց խնկարկելու, աղոթելու խաղաղության եւ հավասարության համար ողջ աշխարհում, բայց իրա-

կան կյանքում նրանք լրիվ հակառակն են անում: Նրանք ամեն չնչին բանի համար առեւտուր են անում, նախանձում եւ պարսավում են իրար, ինչը պարզապես սողկալի է: Ես կդառնամ նույնպիսինը, ինչպիսին նրանք են, եթե ես այստեղ չափազանց երկար մնամ: Այդ պատճառով ես որոշեցի գնալ Լհասա, մյուս գյուղերի որոշ ձախորդների հետ: Կես տարվա աշխատանքից հետո ես կարողացա մի քանի հազար յուան վաստակել: Գյուղ վերադառնալուց հետո գյուղի մյուս բնակիչները նախանձում էին ինձ այն փողերի համար, որ ինձ շատ անհարմար մեկն էին դարձրել:

/«Դու չպիտի նեղվես այդ անձից: Ի՞նչ պատահեց հետո/։ Դրանից հետո Գոնպոն ինձ պատասխան չտվեց: Դա երեւի թե լավագույն հնարավորությունն էր, երբ ես տեսա այդ իրավիճակը գյուղում: Երկօրյա զննումից հետո ես հայտնաբերեցի, որ ցուլը կեսօրին հանգստանում է բարդու տակ: Ընտրելով կեսօրը ես իմ կովը բերեցի գյուղի ետեւում զուգավորվելու, բայց իմ կովն այնքան թույլ էր, որ ուզածը ծանր բեռ նրան ստիպում էր ծնկի գալ: Ես խնդրեցի Չոֆեյին օգնելու համար եւ մի տուփ ծխախոտով վարձահատույց եղա նրան: Հետո եկավ Գոնպոն ու ծեծեց ինձ: Ես գիտեի, որ սխալ եմ, այդ պատճառով չէի դիմադրում: Այնուհանդերձ, Գոնպոն այնքան ազահ է, որ զուգավորման համար նույնիսկ վարձ պահանջեց: Գյուղխորհրդի տնօրենն ու քարտուղարը զործը հասկացան եւ եկան այն եզրակացության, որ իրականում վճարելու անհրաժեշտություն չկա: Սակայն Գոնպոն ասեց, որ դա անարդար է, եւ նոր որոշում պահանջեց: Բարեբախտաբար, Գոնպոն մայրը, որ անկեղծ հավատում է Բուդդային, շատ սիրալիք գտնվեց: Նա ինձ չփոթեցրեց եւ տղային համոզեց տուն վերադառնալ: Ես կարծում եմ, որ զուգավորումը լրիվ անհույս բան էր: Դրա փոխարեն ես որոշեցի աշխատել իմ գյուղացի ընկեր Կիմիի հետ: Մենք ծրագրել էինք միասի շահագործել քարե հեծանները: Գոնպոն ասաց, որ կասկածյալ եմ, որ սպանել եմ ցլին: Ո՞ր ես ապացույցները: Ես Լհասայում իմացա, որ վիրավորանքները լուծված չեն, եւ յուրաքանչյուր մեղադրանք ապացույց է պահանջում:

/«Ապացույցների մասին մի անհանգստացիր: Դա իմ աշխատանքն է: Միակ բանը, որ դու պիտի անես՝ ինձ հստակ եւ անկեղծ ճշմարտությունն ասելն է»/: Էլ ի՞նչ կարող եմ ես ասել: /«Դա ճիշտ է, որ դու չես

## Ցերինգ Նորբու

մտտեցել այդ ցլին: Արդյոք չե՞ս թունավորել: Դու կարող ես երդվել»/: Ես իրոք Գոնադի ցլին չեմ թունավորել, եւ նայում էր, թե ես ինչպես էի լեռ բարձրանում: Ավելին, ես երբեք կենդանի էակի չեմ թունավորել, որովհետեւ ես չափից շատ եմ վախենում Բուդդայի պատժից, որպեսզի ինչ-որ մեկի կյանքը խլեմ: Դուք կարող եք ինձ անմիջապես ձերբակալել, եթե ես ստում եմ: /«Էլի ինչ-որ բան»/: Ահա եւ ամենը, ես այլեւս ասելու բան չունեի:

*Կասկածյալ՝ Կարմա Դորջե*

*Քաղվածք /3/*

*Ճամանակ՝ 15:50, 25, 2006, հոկտեմբեր*

*Տեղ՝ Ռանդուի*

*Վկա՝ Լոբսանդ, քառասունչորս տարեկան, տարրական դպրոցական կրթությամբ, գյուղաբնակ Ռանդուիից.* Ես սարալանջին կանգ առա: Վար նայելով, ես մազլցող մի մարդու տեսա այնժամ, երբ այլ մեկը կանգնած էր բարդու տակ: Կուրացուցիչ արեւի պատճառով ես չէի կարողանում իմանալ, թե ովքեր են նրանք: Բոնոթի քաշելուց հետո, ես քայլեցի դեպի լեռան ձախ կողմը, այնտեղ, ուր դեռ փշեր կան: Մի քանի ճյուղեր պոկելուց հետո, ես տեսա իմ առջեւ կանգնած Կարմա Դորջեին: Կարմա Դորջեն՝ խելացի տղա է, ով սիրում է հավաքել մյուս բնակիչներին գյուղի մուտքի մոտ, որպեսզի գրուցի քաղաքի հետաքրքիր բաների մասին: Իրեն շրջապատող մարդկանց հետ, որպեսզի հարցեր տան, նա կարող էր ողջ օրն անցկացնել, խոսելով ու խոսելով: Այդ պատճառով, կինս միշտ ինձ հիշեցնում էր, որ այնտեղ չգնամ, ասելով, որ Կարմա Դորջեն մարդկանց վատ ուղղությամբ տանելու ունակություն ունի: Ես մի քանի անգամ լսել եմ նրա խոսակցությունները, եւ ամենավատն այն է, որ դուք կարող եք քնել կանանց հետ քաղաքում փող վճարելով: Դա նորմալ է, որովհետեւ մենք կարող ենք քնել կանանց հետ, առանց փող վճարելու: Դրանից հետո ես այլեւս չէի գնում նրա «թոք-շոուին»: Կարմա Դորջեն եւ ես, քանի դեռ ցախ էինք կտրում, գրուցում էինք: Մոտավորապես ցերեկվա տասնմեկի մոտ, Կարմա Դորջեի հայրը եկավ էստեղ: Նա հենց տեսավ Կարմա Դորջեին, նրա ականջից քաշեց ու գոռաց նրա վրա: Ես գիտեի, որ Գոնադի գեղեցիկ ցուլը մեռած էր: Դրադուրի առաջ, Կարմա Դորջեն երդվում էր, որ ցլին չէր թունավորել: Ես մեջ ընկա ու ասացի Կարմա Դորջեն ամբողջ

ժամանակն ինձ հետ է անցկացրել: /«Դու կարող էիր ասել այն, որ նա երբեք ընդ այդ պատասխանատու շրջանում չէր լքում»/:

Դարդուը մեզ խնդրեց անհապաղ իջնել ու ասաց, որ գալու են անվտանգության ծառայության աշխատակիցները: Մենք գնացինք սարատակ, ուսերից կապկպած ցախը դնելով: Գյուղ մտնելուց հետո մենք հանդիպեցինք գյուղի քարտուղարին, ում հետ Կարմա Դորջեն վիճեց: Դրադուը հրեց Կարմա Դորջեին ու տուն վերադարձավ: Այդ ժամանակվանից ես նրան չեմ տեսել: /«Ի՞նչ է ձեր կարծիքը Գոնպոյի ցլի մասին»/:

«Ասել ամեն ինչ, որ ուզում ես ասել: Գլխներիդ զոռ չտալ»: Բայց Գոնպոն պատրաստ է:

«/Ասել ամեն ինչ, ինչ ուզում ես: Գլխին զոռ չտալ»/:

Ես գյուղացի եմ եւ ֆերմայի աշխատանքից կախված, ես ի՞նչ կարծիք կարող եմ ունենալ: Ո՞վ կարող էր այսպիսի անհաջող բան սպասել: Ես կարծում եմ, որ ամեն ինչ կանխորոշված է, դու կարո՞ղ ես քո ճակատագիրը փոխել:

Գոնպոյի կյանքը գյուղում միջին մակարդակի վրա էր: Նա կարող է երջանիկ կյանքով ապրել նույնիսկ առանց ցլի: Նա բարեկամ ուներ, որ քաղաքում ինչ-որ պաշտոնյա էր, եւ Գոնպոն որոշեց ցուլ գնել նրա պնդումով: Այդպես պատահեց, որ հենց այդ բարեկամը օգնեց նրան փոխառության հարցում: Նա գյուղում ոչ մեկին չասաց եւ մենակ գնաց ցուլը գնելու: Երբ նա վերադարձավ, նա կանգնած էր տրակտորի վրա եւ նրա ինքնագոհությունը ստիպեց գյուղի շատ բնակիչների իրենց ավելի վատ զգալ: Այդ ցուլը ճշմարիտ էր, բայց գինը իրոք ստիպեց կորցնել խոսելու ունակությունը եւ շունչը պահել: Գոյություն ունի մի ասացվածք. «Թագավորը քաղց է զգում, եթե նույնիսկ նա ոսկե բլուր ունի, իսկ աղքատը լիագոհ է, եթե նա ցամփայի մի պատռո ունի»: Տուլ ունենալուց հետո Գոնպոն դժբախտության մեջ ընկավ: Գյուղի բնակիչներն անընդհատ գնում էին խնդրելու, որ ցուլն իրենց կովերի հետ զուգավորվի եւ ստիպված եղան վիճելու Կարմա Դորջեի հետ, որ ամենեւին էլ օրինահպատակ չի, ինչը որ ընդհարումը նրա եւ գյուղի մյուս բնակիչների միջեւ ավելի ու ավելի լուրջ դարձրեց: Գոնպոն նույնպես երկընտրանքի առաջ կանգնեց: Եթե ցուլը զուգավորվում է տնային տնտեսության կովի հետ, ապա մյուս տնային տնտեսությունները դժ-

## Ցերինգ Նորբու

բախտ կլինեն: Եթե նույնիսկ հաջորդականություն կա, մարդիկ վերջում կպախարակեին նրան: Գոնպոն այնքան էլ օրինավոր չի, ինչպես երեւում է: Այլապես նա ինչպե՞ս կհամարձակվեր այդքան թանկ ամերիկյան ցուլ գնել: Գոնպոյի ցուլը խախտեց ողջ գյուղի անդորրը, ինչպես այն ժամանակ, երբ Կարմա Դորջեն եկել էր արտասահմանից ու մի քանի հազար յուան էր վաստակել: Ռա էր նրանց միջեւ եղած տարբերությունը՝ Գոնպոն փող էր պարտք վերցրել, որպեսզի գներ այն հուզմունքը, որն ավարտվեց նրա սեփականության կորստյամբ: Կարմա Դորջեն ջանադրաբար բանում էր, որպեսզի փող վաստակեր, եւ բոլոր խորամանկ բաները քաղաքից իմացավ, եւ ոչ մեկը գյուղում չէր ուզում նրա ընկերը լինել...

Ես կարծում եմ, թե գիտեմ, թե Գոնպոն ինչ կանի հիմա: /Էլ ի՞նչ ասես/ Ոչ: Բայց ես վստահ եմ, որ Կարմա Դորջեն չի թունավորել ցլին: Վկան՝ Լոբսանգն է, այնուհետեւ ես այցելեցի մի քանի ընտանիք, նրանք բոլորն այն ժամանակ ապրում էին իրենց տներում: Գյուղի բնակիչները հայտարարեցին, որ բոլորը գյուղում օրինապահ էին, եւ որ ոչ մեկը բացի Կարմա Դորջեից չէր կարող այդպիսի ամոթալի բան անել: Իմ հետաքննությունն ավարտված է: Երբ ես Փաշհանգի հետ անցնում էի գյուղով, նա ասաց. «Այս գյուղի բնակիչները հավատում են Բուդդային: Նրանք երբեք ոչ մի վնասակար բան չեն անի: Ես համարյա համոզված եմ դրանում: Մեր գյուղի բարքերը ավելի ու ավելի են վատանում, այն մարդկանց պատճառով, որոնք համալսարան չեն ընդունվում եւ փոքր-ինչ արտաքին տեղեկատվություն չունեն: Նրանք ավելի ու ավելի խորամանկ են դառնում, եւ ի գարմանս մեզ ինչ-որ բաներ են անում»: Ես գիտեմ, որ գյուղական տեղանքում տարածված է այս ասույթը. «Վերադարձիր մորդ գիրկը կրտսեր միջնակարգ դպրոցից հետո», դա նկարագրում է այս իրավիճակը: Երբ ես Փաշհանգի հետ գյուղ մտա, գյուղի բնակիչները, իրենց սպիտակ ատամաշաքարով, փոքր-ինչ հակվեցին դեպի մեզ: Ես ժպտացի: Մի քանի րոպե անց մենք հասանք գյուղական կոմիտեի մուտքի մոտ:

-Արդյոք պե՞տք է Կարմա Դորջեին ձերբակալել,- հարցրեց ինձ քարտուղարը:

-Ինչո՞ւ,- հարցրեցի ես:

-Նա կասկածյալ է:

-Պա այդքան պա՞րզ է: Ինչ-որ մեկը ապացուցել է իր ալիքին, եւ նա հանցագործության ժամանակ չունի,- ասացի ես:

Ես նստած եմ գյուղական կոմիտեի շենին եւ շտկում եմ մեղադրանքների բոլոր ցուցակները սկզբից մինչեւ վերջ. վերջապես ինչ-որ արդյունք կար:

-Պնա եւ այստեղ բեր գյուղի բոլոր բնակիչներին: Ես հայտարարելու եմ հետաքննության արդյունքը,- ասացի ես:

-Արա այդ: Անմիջապես հավաքիր բոլորին,- ասաց Փաչհանգը քարտուղարին:

Մի ակնթարթ անց ջուրե պայուսակներով եւ բարձր լեռնային գարու գինով գյուղաբնակները մեկը մյուսի ետքից մտան գյուղական կոմիտեի բակ: Նրանք նստել էին հատակին: Ինչ-որ մեկը բուրդ էր վերցրել, ինչ-որ մեկը խոսում էր, իսկ ինչ-որ մեկն էլ կոշիկի համար ներբան էր սարքում: Գունպոն նստեց, օգնելով մորը ծածկի տակ նստել, իսկ Կարմա Դորջեի ընտանիքը մուտքի մոտ ձնկաչոք նստել էր: Փաչհանգը համառոտ ներկայացրեց գյուղացիներին, թե բանն ինչ է, եւ թույլ տվեց ինձ ասել հետաքննության արդյունքը: Ես համառոտ շարադրեցի հետաքննության ընթացքը եւ հայտարարեցի, որ մեկը ցլի համար վնասակար երբեւէ բան չի արել, ավելի շուտ ցուլն ինքն է փախել: Ես բարձրաձայն ասացի. «պարանի կտրվելու պատճառով ցուլը փախել էր հենց բարդու մոտից եւ վազել էր դեպի քարի ետեւի մացառուտը»: Ես մի պահ դադար տվեցի, եւ գյուղի բնակիչներին ցույց տվեցի պարանի կտորը, որ մնացել էր բարդու բնի վրա եւ կտրվածքը ցլի վզի վրա: Հետո ես բացատրեցի. «Մի քանի թելեր կան պարանի կտրվածքից, եւ ուրեմն, այն կտրվել է ուժեղ քաշելուց: Եթե այն արհեստակաւորեն կտրված լիներ, թել չէր լինի: Ավելին, մինչեւ այդ նոր ջարդվածքը, այն արդեն մաշվել էր: Նայեք, այն հին կտրվածքները հիմա անպարզ են, պարանի կտրատվածքների վնասվածքները»:

Գյուղի բնակիչները հավատացին: Ես շարունակեցի. «Ինչ վերաբերում է ցլի մահվան պատճառին, հետաքննության միջոցով ես հայտնաբերեցի, որ ոչ մեկը ցլին չի թունավորել: Ցուլը թունավոր խոտ է կերել, ինչից էլ որ մահացել է»: Ես գրպանիցս հանեցի պլաստիկ փաթեթը եւ ցույց տվեցի գյուղացիներին: Ցլի ծածկած լեզվի վրա երեւում էին ծամած խոտն ու լորձուկները, եւ տեղնուտեղը խոտը եւ վերցրի քարի

## Ցերինգ Նորբու

վրայից: Ես ասացի. «Վերջնական արդյունքը նոր թեսթավորում է պահանջում: Ես կրկին այստեղ կգամ թեսթից հետո»: Գոնպոն արցունքների անձրեւ թափեց, իսկ մնացած գյուղացիները, ոչինչ չասելով, սեւեռվել էին նրա վրա: Գոնպոն գլուխը դողացող ուսերով, խրել էր մոր գիրկը: Ողջ գյուղական կոմիտեն լուռ էր: Գոնպոն ճիչը վշտացրեց ինձ, չուրախացնելով գործի գլուխ բերման հաջող որոշումից: Ես ի՞նչ կարող էի ասել: Նրա հույսը խորտակվել էր անողորմ փաստերից: Ես ինձ մեղավոր էի զգում ու խղճում էի նրան, այն ամենի համար, որ նրան նետել էր տառապանքների անդունդը: Ես հուսով էի, թե Փաշհանգը փակուղուց ելք կգտնի, բայց նա պարզապես, ոչ մեկի վրա չնայելով, ձեռքերը դրել էր ոտքերի վրա: Ճիչը խղճուկ եւ կտրուկ էր: Ես տեսա, որ Գոնպոն մայրը նույնպես լալիս էր: Ես անհարմար էի զգում եւ ես չգիտեի, ինչ անեի, այստեղ բեմի վրա բուֆ կանգնելուց բացի: Ես չէի կարող ինքս ինձ չմտածել, թե արդյոք ես արդարացի էի դատում, թե ոչ: Իմ համակրանքն անցավ Գոնպոն:

«Ես ուզում եմ երեսուն կիլոգրամ ցլի միս գնել»: Այդ ձայնը բարձր չէր, բայց վստահությամբ լի էր: Ես շուրջս նայեցի եւ հայտնաբերեցի, որ Կարմա Դորջեն կանգնած է մուտքի մոտ եւ գոչում է բեմի կողմը:

-Տլի մի՞ս առնել,- կամացուկ ասաց Փաշհանգը:

-Ես էլ եմ ուզում տասը կիլոգրամ գնել:

...

Այդ ճիչերը հաջորդեցին իրար, կլլելով լացի ձայնը: Տուօրենը հանկարծ ուրախացավ եւ աշխատավորական անձնակազմ կազմակերպեց գյուղական կոմիտեում, որպեսզի այստեղ ցլին վերցնեին: Տաքացումից հետո քարտուղարը գրանցեց, ով ինչքան միս առավ եւ գինը:

Մարդիկ, որ բավականաչափ փող չունեին, կվճարեին համարժեք լեռնային գարիով եւ ձվերով:

-Այս պտուղը թունավոր է, մենք չենք կարող այն ուտել,- ասացի ես:

«-Մենք փորոտիք չենք ուտում, եւ այս պտուղը թունավոր չի,-ասաց քարտուղարը, միաժամանակ փողերը հավաքելով:

Գյուղական կոմիտեի բակն աշխույժ էր: Ողջ գյուղը շրջապատել էր ցլին, առնելով մի կտոր, ետևամասից, կրծքամասից...

Երբ արեն արդեն մայր էր մտում, մնացին միայն գլուխը, փորոտիքն ու կաշին: Հողը կարմիր արյունով լեցուն էր, արյան հոտով, ներք-



նաբակը գրավող, եւ որոշ ճանճեր էին թռչում:

-Ինչ արժի այս եղածը,- ասացի ես:

-3260 յուան եւ փոքր-ինչ հացահատիկ ու ձու: Ընդհանուր գինը կարող է 5000 յուանից ավելի լինել:

Ես փոքր-ինչ թեթեւություն զգացի:

Ես 500 յուան հանեցի իմ քսակից եւ տվեցի Փաշհանգին: Նա պնդեց, որ չվերցնեն այդ:

-Ինձ փոքր-ինչ միս տուր,- պիտի ասեի ես:

-Բայց միս չկա: Ի՞նչ կասեիք, գուցե վերցնեիք իմ մի քանի կիլոգրամը:

-Լավ, սըր, մեզ մոտ դեռ գլուխը մնացել է: Եկեք գլուխը դնենք ուստիկանական մեքենայի մեջ,- գոչեց քարտուղարը:

Գյուղի մի քանի բնակիչներ բացեցին դուռը, տուփը դրեցին ետեւի նստատեղի վրա եւ ցլի գլուխը դրեցին դրա մեջ:

-Ոչ, շնորհակալություն,- ասացի ես:

-Ուրեմն դուք ձեր փողը ետ կվերցնեք,- ասաց Փաշհանգը:

-Լավ:

Գյուղի բնակիչներն ինձ հայտնեցին իրենց երախտապարտությունը եւ հրավիրեցին ինձ մի տասը գավաթ լեռնային գարու գինի խմելու, գլուխս փոքր-ինչ պտտվեց: Ես հաջողություն ասացի գյուղի բնակիչներին եւ իջա փոշոտ լանջով: Ռանդուին ավելի ու ավելի հեռու էր մնում: Ես սաստիկ զգում էի, որ Ռանդուին դեռեւս լուրջան եւ հանդարտության մեջ է: Ձորն անցնելուց հետո, ես այլեւս չէի կարող Ռանդուի տեսնել: Ես նայեցի ցլի գլխին: Նրա աչքերը դեռ բաց էին, ասես մահանալով վերջին փսոսանքով: Ինձ հետաքրքիր էր, արդյոք ես այդ գործով ծառայել էի արդարադատությանը: Ես քննում էի այդ հարցը պեկինյան ջիփի առջեւ նստատեղի վրա եւ սխալ չգտա: Ես շրջվեցի, որպեսզի հարցնեմ ետեւի նստատեղի ցլի գլխին. «Արդյոք ես միայն այդ գործի մե՞ջ էի եղել, թե ոչ»:

Պատասխան չկար: Ես կրկին շրջվեցի: Ցլի աչքերը փակվեցին, խաղաղ եւ հանդարտ:

Ես կարծում եմ, ես ոչ մեկի հանդեպ անարդարացի չգտնվեցի եւ սկսեցի ինձ ավելի լավ զգալ:

Առաջ ուղղված հայացքս շաղվեց: Ես միացրի ջիփիս մոտակա լույսը, վախենալով սխալ ճանապարհով գնալ:

## ՄԱԿԱՑՈՒ ՕՂԱԿ

1

Ամառային անձրեւը միշտ կեսօրին մոտ վաղանցուկ եւ փութանակի է: Ամպրոպի պահին անձրեւի կաթիլները վարընկեց տկտկում են եւ ընկնող պղտոր ջուրն առվից ջրվեժի պես թավալգլոր է տալիս, խլացնելով ցանկացած աղմուկ էներգիայով եւ կենսաուժով: Որոշ ժամանակ անց անձրեւը կտրվում է, միայն ջրի կաթիլների հետ ընկնելով ջրհորդանից, կաթում է միապաղաղ տոնայնությամբ: Կաթող ջրի ձայներն արթնացնում են շատ մարդկանց զգացմունքները: Բայց հատկապես ավելի խորը անձկություն է այն արթնացնում աղքատների մեջ: Պղտոր երկինքը մի ակնթարթում պարզվում է, եւ ապշեցուցիչ վառ ծիածանը կորվում է գլխապտույտ կապույտ երկնքի միջով: Տեսնելով ծիածանը՝ երեխաները հուզված գոռում են: Դեղին պղտոր ջրով փոքրիկ լողավազանը՝ նեղիկ ճամպարհին: Արեւից թխագունած մշուշոտ գոլորշու հետքը, հողից ելած վարդը, լոկ լինելու համար, մեկեն սնվում է ջրով: Կտրուկ կարմիր բույրով գոլորշին հայտնվել է մարդկանց օրգանների մեջ եւ նրանց սփոփանքով է լցրել: Թեպետ մարդիկ գալիս ու գնում էին՝ իր հեռավոր դիրքի պատճառով նրբանցքը դեռեւս այնքան լուռ եւ ամայի էր:

-Տամփա Լհամո,- լալիս էր Դագան կանգնած ու ձեռքերը կանթած:

Դա քառանկյուն բակ էր՝ կենտրոնում երկհարկանի շինությամբ, ընդհանուր առմամբ տասներեք ընտանիք, ներքնաբակը կենտրոնում էր: Ներքնաբակի կողքին քարերից ու ցեխից սարքած սանդղահարթակն էր, որ գոյություն ուներ դույլերը կրելու հարմարության համար: Դագայի տունը գտնվում էր դարպասի մոտի անցման մոտ եւ ընդամենը մի քանի քայլի վրա էր: Դագայի կտրուկ եւ զիլ ձայնը ձգվեց դարպասի եւ անցման միջով վախեցնելով Տամփա Լհամոյին, ով տազնապալի սպասում էր Լամթթրեին: Տամփա Լհամոն այնուհետեւ գլխահակ մտավ դարպասով ներս: Տամփա Լհամոն ծնկեց կեղտոտ վառարանի կողքին, դրա մեջ կովի թրիք նետելով: Կրակը դանդաղ կլլում էր թրիքը, վառարանից ծուխ հանելով, պարուրելով նեղիկ, փոքրիկ սենյակը:

Ծուխը ստիպեց Լիամոյին արցունքներից հեղձուկ զգալ: «Պռատ շրթունքով կին, դու այնքան սենտիմենտալ ես, որ նույնիսկ մտածում ես այդ Լամեթրեի մասին, քանի նա ձգտում է առ կրակը»: Դագան սենյակ մտավ Լիամոյից հետո, քմծիծաղելով, եւ նրան ծանակելով: Լուրերը լսելուց հետո նրա աղջիկը սիրահարվեց Դրենթուին: Նա աննկարագրելի մռայլ տրամադրության մեջ ընկավ: Նա այնքան բան կորցրեց իր շրթաճոռթուկ աղջկա համար: Դագան մտածում էր: Դեմքը հայելում ակնհայտորեն ցույց էր տալիս նրա տարիքը: Էրոզիայի շատ տարիներից հետո նրա դեմքն այլանդակ կլինի: Այդ էր գալիս նրա մտքին, սաստիկ խանդն ամբողջովին փլում էր նրա սիրտը, ուղղորդելով նրան հարձակվելու իր աղջկա վրա: Դագան քառասուն չորս տարեկան էր: Նրա ամուսինը լքել էր այս աշխարհում նրան, թողնելով շրթաճոռթուկ աղջկան: Արդեն քսան տարուց ավելի այրիանալուց հետո նա չափազանց արտառոց դարձավ: Նրա ամենանորմալ ժամանակներում, նա ձգտում էր ուրիշներին վնաս պատճառել, բայց միաժամանակ, թեթեւակի վշտանում էր: Նա անվերջորեն բլբլում էր եւ սիրում էր լալ ու հեծկլտալ: Բացի այդ, նա քմահաճ էր տրամադրված եւ հատկապես սիրում էր ուրիշի գործերին խառնվել: Հանդիպումից առաջ քննադատություն սարքեցին եւ հասարակությանը հակադրեցին նախկին տառապանքները նրա այժմյան երջանկությանը: Դագան ուրախ էր բեմ ելնելու համար: Խոսելով իր սեփական փորձի մասին հասարակության մեջ, նա արցունք թափեց: Այս խոսքերով, նա բարձր գնահատվեց կադրերի կողմից: Նրանք բոլորը համաձայնվեցին, որ նա շատ գաղափարական միտք ունի, չնայած ցածր ծագմանը: Այդուհետ նրանք ձայն տվեցին նրան՝ որպես շրջանի հասարակական անվտանգության անդամի, եւ որպես նրա, որ ղեկավարում էր Լայն Սանգին: Մի երեկո Սյանյանյան կոմիտեի հարեանությամբ քաղաքական ուսումնական հանդիպում տեղի ունեցավ: Նավթալամպի աղոտ լույսի ներքո մարդիկ կծկվել էին իրար կողքի: Հազն ու թըռցները հաճախակի էին եւ քրտնքի ու ոտքերի նեխահոտը լողում էր օդում: Պղտոր օդում լսելով տնօրեն Դավայի ելույթը՝ մարդիկ ձանձրույթից հորանջում էին: Վերադառնալով սյան մոտ, Դագան դժվարությամբ փնտրում էր Լամեթրեին ու Դրենթուին: Երբ նա գտավ Լամեթրեին, որ նստած էր ուղիղ նրա առաջ, նրա աչքերը պաղեցին: Հանկարծ ողջ արյունը ողողեց նրա դեմքը, ստիպելով

## Ցերինգ Նորբու

Նրան սաստիկ տապ զգալ: Նա զսպում էր արցունքներն աչքերի վրա, նրա շունչը ծանրանում էր, զգալով, թե ասես անթիվ որդեր էին սողում դրա վրայով, ստիպելով նրան անտանելի նվվալ: Թվում էր, թե Դրենթուն էլ էր ինչ-որ բան զգում: Նա շրջվեց, շուրջբոլորը նայելով: Նա կանաչ խոտագույն գլխարկ եւ ջինսե հագուստ էր կրում: Նավթալամպի լույսի տակ Դագան չէր կարող պարզ տեսնել նրա քառակուսի դեմքը: Գլուխն իջեցնելով, նա ձեւացրեց, որ քուղերն է կապում, որպեսզի թաքնվեր նրա հայացքից: Դագան քսան տարուց ավելի այդպիսի զգացողություն չէր ունեցել, ինչը կարող էր շվարեցնել նրա հոգին: Այն բանից հետո, որ նա լսեց Լամթերեի հետ իր աղջկա սիրավեպի մասին, նրա համարյա ընդամենը զգացմունքները կրկին զարթնեցին: Նա թուլություն ու նվվոց էր զգում, ասես պաղ քամի էր փչում նրա ոսկորների մեջ: Նա ողջ ուժով փորձում էր գերիշխել իր հույզերին եւ իր ունակություններին եւ համապատասխանորեն հայացքը դարձրեց դեպի բեմը: Այդուհանդերձ, միտք ունենալով տեսնել Լեմթերի խառնամբոխն իր գլխում: Նա չէր կարողանում տիրապետել իրեն այդ սարսափելի մտքի պատճառով: Անտանելի տանջանքներ կրելով, ի վերջո հանդիպումն ավարտին հասավ: Երկնքից կախված լուսինը, երկրի վրա էր տարածել աղոտող արծաթե լույսի բույրը: Յրտին միախառնված շողանքը, մաքրված ինչպես հուզմունքից, այնպես էլ տարփանքից, շուրջբոլորը լռության մեջ էր թաղում: Դագան դանդաղ քայլելով սրահից ելավ առ ամբոխը: Նա մոտեցավ լայն բացվածքին, որտեղ ամեն ինչ պարզ երեւում էր լուսնի լույսի ներքո: Նա շրջվեց, որպեսզի գտնի Լամթերեին, բայց չնկատեց նրան: Դագան ելավ ամբոխի միջից, գնաց լուսնի լույսին անհասանելի մի անկյուն եւ արձակեց իր անդրավարտիքը պատասխանելով բնության կանչին: Որոշ տղամարդիկ ձայնի ուղղությամբ հայացք էին նետում, միայն որպեսզի գտնեին սեւ ստվերը եւ ջրի փութկոտ ձայնը: Պարզ հայացքը չորսալով, նրանք ճնշված տրամադրությամբ հեռացան: Կրկին լուռ էր: Դրենթուն հայտնվեց հարթավայրում, անվստահ անցելով Դագայի կողքով:

-Դրենթու:

Կամացուկ ձայնը հասավ հեռավոր անկյունից եւ վախեցրեց Լամթերեին: Կինը հանկարծ ելավ, անդրավարտիքը վեր քաշելով, որպեսզի ծածկեր իր ճերմակ հատակը: Հենց այդ պահին Լամթերեի դեմքը

կարմրեց, եւ նրա սիրտը սկսեց արագ խփել: Նա տեղնուտեղը կրունկների վրա կանգնեց:

-Դրենթու:

Եվս մի ազդանշան եկավ: Նա անհաղորդ կանգնել էր տեղում, տեսնելով, որ նա, ով իրեն անունով էր կանչում մթին անկյունից, քանի դեռ անդրավարտիքն էր կոճկում, Դիամփա Լիամոյի մայրն էր: Երկյուղելով, որ նա կնախագգուշացվի, նա սկսեց ամբողջովին դողալ:

-Ինչո՞ւ ես դու այդքան ամաչկոտ,- ասաց Դագան, մոտենալով նրան:

Դագան, քանի դեռ Դրենթուն կանգնած էր եղինջի վրա, բռնել էր նրա ձեռքից: Նա, հեզորեն գլուխը կախած, անվստահ առաջ էր քայլում, նրա կողքին: Ստածելով, որ Դագան անպայման իրեն կհարցնի ինչ-որ բան Տամփա Լիամոյի մասին, նա արագ մտովի պարզաբանեց պատճառները եւ նրա աղջկա ազդեցությունն իր վրա, իսկ այնուհետեւ իրեն փոքր-ինչ թուլացած զգաց:

-Մի ամաչիր: Ես պարզապես պիտի քեզ հարցնեմ մի բանի մասին:

-Այո, տիկին Դագա: Ի՞նչ է պատահել:

Լամբերտի ձայնը փոքր-ինչ դողալով էր հնչում:

«Դա լավ շոջադարձ է»: Նրա դեմքի վրա խորհրդավոր ժպիտ հայտնվեց:

Դագան քսան տարուց ավելի տղամարդու հետ այդքան մոտիկ չէր եղել: Նա փոքր-ինչ հմայված եւ հուզված էր: Նա նույնիսկ կարող էր զգալ տղամարդու այդ աղի ու դառը հոտը: Շատ տարիներ անց նա համարյա թե արտասովեց, երբ կրկին զգաց այդ հոտը:

-Տիկին Դագա, ձեր ձեռքը...,- ասաց Լամբերտն:

-Ի՞նչ: Դու կարծում ես իմ ձեռքերը կեղտո՞տ են: Ես դրանք օգտագործել եմ միայն անդրավարտիքս հանելու եւ բնության կանչին պատասխանելու համար: Ես իմ հետույքը չեմ սրբել,- ասաց Դագան, այնուհետեւ պինդ սեղմեց Դրենթուի ձեռքերը:

-Ես վախենում եմ, որ դու կարող ես ընկնել այս մութ տեղում,- այնուհետեւ ավելացրեց նա:

Դրենթուն նրա ձայնի մեջ անհամբերություն զգաց:

-Ես այդ նկատի չունեի: Ես նկատի ունեի, որ դա ոճիր է պատշաճության դեմ:

Դագան, լայն աչքերը բանալով եւ ձեռքերը տարուբերելով, գոչեց.

## Ցերինգ Նորբու

-Ինչպիսի՞ն են քո հարաբերություններն աղջկա հետ:

Լամեթրեին ցնցեցին Դագայի խոսքերը: Նա բութ սեւեռվեց նրա վրա եւ գլուխը կախեց: Դագան ուրախ էր տեսնել, որ Լամեթրեն շփոթության մեջ էր, երբ նա հեզորեն քայլում էր նրա կողքին:

-Տիկին Դագա, մենք պարզապես ընկերներ ենք: Անցյալ անգամ, երբ մենք միասին աշխատում էինք այն ջրանցքի շինարարության վրա, նա ինձ օգնեց լվալ իմ հագուստը:

-Ինչպե՞ս դուք ծանոթացաք,- Դագան հանկարծ շատ ավելի մտերմիկ հարց տվեց:

-Այդպես էլ մենք ծանոթացանք:

Լամեթրեն բարձրացրեց գլուխը, նկատելով, որ Դագան սառը սեւեռվել էր իր վրա: Նա իրեն շվարած էր զգում: փողոցում խաղաղ էր եւ լուռ, նրանց, պոչը շարժելով, լոկ մի շուն էր հետեւում:

-Պնա,- Դագան հրեց նրան:

Շունը շրջվեց, մի քանի վազքաքայլ արեց, հետո շրջվեց ու սեւեռվեց նրանց վրա:

-Մենք միասին ենք գնում:

Դա հարց չէր, այլ կարգադրություն: Իրավիճակի սրությունից խուսափելու համար, Դրենթուն հեզորեն հետեւում էր Դագային: Լամեթրեն թույլտվություն խնդրեց հաջորդ գիշեր հանդիպելու համար: Ինչպես եւ ծրագրվել էր, նա եկավ Դագայի դռան մոտ եւ կանգնեց այնտեղ: Նա զգուշորեն շուրջբոլորը նայեց, որպեսզի համոզվեր, որ ոչ մեկն իրեն չէր նկատել, եւ զգուշորեն ծեծեց դուռը: Դուռը ճռռալով բացվեց: Լույսի շողը նավթավառից շողում էր Լամեթրեի տազնապած դեմքի վրա:

-Ներս անցիր,- կամացուկ ասաց Դագան:

Լամեթրեն ներս մտավ սենյակ: Առաջին բանը, որ աչքի գարնեց՝ մաքուր սենյակն էր, որ ցողվել էր ջրով: Օդում դեռեսս հողաբույր կար:

-Որտեղ է Ջամիա Լհամոն,- հարցրեց Դրենթուն:

-Դու իսկապես հիմար ես: Ինչպես նա կարող էր այստեղ լինել, քանի դեռ մեր միջեւ այսպիսի քննարկում է: Ես նրան խնդրել եմ այս գիշեր քեռու մոտ մնա: Կեսօրվա խոհաճումից հետո Դրենթուն համարձակություն կուտակեց եւ որոշեց Դագային ասել, որ պատրաստ է ամուսնանալ նրա շրթաճոռոթով աղջկա հետ:

Դագան նստեց նրա կողքին: Դրենթուն զգում էր, որ նա չի շտապում

իրեն հարցնել այդ մասին, միաժամանակ ամաչելով դրա մասին հիշատակելուց, միաժամանակ համբերատար սպասելով, թե երբ Դագան առաջինն ինքը կխոսի: Դագան ելավ, վերցնելով տափաշիչը քառակուսի սեղանի վրայից: Նա բացեց տափաշիչը, եւ օդը լցվեց կտրուկ, բայց քաղցր հոտով:

-Այն, ինչի մասին մեք այսօր պիտի խոսենք՝ երջանիկ իրադարձությունն է: Մենք պիտի խմենք,- ասաց Դագան:

Դրենթուն նաեւ մտածեց, որ ինքը պիտի խմի հուսալով, որ դա իրեն համարձակություն կտա Դագայի հետ խոսելու համար: Այդ պատճառով նա լռելայն խրախուսեց Դագայի առաջարկությունը: Բարկահամ գինին հոտում էր նրա կոկորդն ի վար, եւ ակնթարթաբար, թվում է՝ հուրը այրվում էր նրա ստամոքսում, ստիպելով նրան ոտքից գլուխ իրեն տաք զգալ: Դագան այդժամ կրկին բացեց տափաշիչն ու լցրեց բաժակները:

-Արի, մի բաժակ եւս,- ասաց Դագան:

Դրենթուն նայեց Դագային, կկոցվելով, նա մի բաժակ եւս պարպեց: Գինու մի քանի գավաթից հետո Դրենթուն իրեն շատ ծանր զգաց եւ էքստազի մեջ ընկավ:

-Տամփա Լհամոն, նա...նա...»:

Մի երեք անգամ խմելուց հետո, Դրենթուն խիստ հարբած էր: Այնուհետեւ Դրենթուն փովեց մահճակալի վրա եւ փակեց իր աչքերը: Դագան քնքշորեն նայում էր Դրենթուին եւ սիրո կրակը բռնկվում էր նրա սրտում: Նրա արյունն ու մարմինը նվվում էր մոլեգին հրից, որ ստիպում էր նրան ինքնակառավարումը կորցնել: Նա խմեց իր բաժակի մեջ մնացած գինին, լցրեց Դրենթուի բաժակն ու հանեց նրա հագուստները: Փչելով նավթալամպի վրա, Դագան ուժգին բռնել էր անգիտակից Դրենթուին իր ձեռքերի վրա, տեղաշարժելով իր ձեռքը նրա ուսից կրծքին եւ այնուհետեւ վար նրա պորտին: Գործողությունն արագացրեց նրա արյան շրջանառությունը, եւ վերադարձրեց նրան բերկրանքի զգացողությունը: Նա ծանր էր շնչում, եւ մարմինը փափկեց: Դրենթուն լորդի պես խմած էր: Նույնիսկ լսելով, թե ինչպես է շնչում, բուրում, նրա արտասովոր հոտն ու հպումը նրա ողորկ մարմնին, Դագային զգացնել էր տալիս, որ եթե իր ձեռքը ծավալվեր, ապա կնմանվեր դրա շուրջ վիտացող որդերի: Այդ զգացողությունը Դագային քնելուց ետ էր պահում:

## Ցերինգ Նորբու

Կեսգիշերին մոտ Դրենթուն շրջվեց: Նրան բռնած իր կրծքի կողքին, Դագայի աչքերից երջանկության արցունքներ էին հոսում:

### 2

«Լամթթեն սկզբում կամուսնանար մոր, իսկ հետո աղջկա հետ»:

«Հեյ, Լամթթեն իրոք իր գործը գիտի»:

«...»:

Լուրերը Դագայի եւ Լամթթեի ամուսնության մասին շրջանային կոմիտեում իրարանցում առաջացրեց: Լամթթեի բարեկամները մահացած էին, որպեսզի ընդվզեին այդ ամուսնության դեմ, կամ նրա հետ կապերը խզեին: Լամթթեն քսանմեկ տարեկան էր, սիկ Դագան՝ Քառասուն չորս: Մարդիկ չէին կարողանում պատկերացնել, թե ինչպես է ստացվել այդ ամուսնությունը: Մարդիկ նույնիսկ կասկածում էին, որ Լամթթեն համաձայնության եկել է՝ թե՛ մոր եւ թե՛ աղջկա հետ: Այն բանից հետո, որ Լամթթեն ամուսնացավ Դագայի հետ հասարակական աղմուկը հետհետեւ նվազեց եւ մարդիկ սկսեցին ընտելանալ նրան: Քանի որ Դագան քսան տարի Լամթթեից մեծ էր, ապա միշտ պահպանում էր նրան, ասես նա տնային կենդանի էր, ինչը Լամթթեին անհարմար վիճակի մեջ էր զգում: Բացի այդ, ամեն օր Լամթթեն պիտի դիմանար Տամփա Լհամոյի խղճուկ հայացքին, եւ հետեւաբար Լամթթեի հանգիստը խախտվում էր: Ընտանիքի անդամ դառնալով, Լամթթեն երբեք ընտանեկան ջերմություն չէր զգում: Դագան խելքահան էր լինում նրա համար, բայց նաեւ իշխող էր: Երբ Լամթթեն սենյակում միայն Տամփա Լհամոյի հետ էր լինում, Դագան հանկարծ ցանկությամբ էր լցվում: Խփում էր ամանների եւ թավաների սալօջախի մոտ, տնքում ու տնքում էր, ձեռքը կրծքին դնելով: Նախեւառաջ, Լամթթեն շատ անհանգստանում էր Դագայի առողջության համար: Նա հաճախ ձախ ձեռքով փութանակի յակի յուղ էր հանում բանկայից, շփելով դրանով Դագայի քունքերը աջ ձեռքի ցուցամատով: Բայց տեսնելով այդ, Տամփա Լհամոն կողմ կանգնում եւ սարկաստիկ ժպիտը շուրթերին կկոցվելով նայում էր նրանց: Դագան գլուխը ձեռքերի մեջ առաջ տնքում ու տնքում էր: Նրա ծամաձռությունը ուժասպառել էր Լամթթեին: Երբ Լամթթեն արդեն շատ էր հոգնում, ապա Դագան խոր հոգոց էր հանում, ելնում եւ խնդրում էր Լամթթեին իրեն մի գավաթ թեյ մատուցել: Լամթ-



թրեն այնքան թրմեցրած թեյ լցրեց Դագային, համարյա թե ամաչելով: Տեսնելով այդ, Դագան տեղնուտեղը մոռանում էր իր գայրույթը եւ իրեն շատ գոհ էր զգում: Նա դադարում էր տնքալ եւ հանում էր քթախոտատուփը իր տիբեթյան հանդերձանքի գրպանից: Բացելով այն, լցնում էր քթախոտը իր ձախ քթանցքի մեջ, այն աջ ձեռքի մատներով քթանցքով վեր ուղղելով: Ներքաշելով, նա բացում էր իր բերանը եւ քուլա-քուլա արտաշնչում էր: Նա արդեն կարող էր կրկին խոսել եւ ծիծաղել: Ավելի ուշ Լամեթրեն հասկացավ, որ դա ընդամենը հնարք էր եւ զայրացավ իր տագնապած վարքի համար, որ նա ցուցաբերում էր նրա առաջ: Այդ ժամանակից ի վեր, նա սկսեց անտեսել Դագայի անհմուտ խաղը: Լամեթրեն շատ լավ գիտեր, որ այդ ընտանիքում նա շատ բարդ իրավիճակում էր: Ամեն անգամ, երբ նա տեսնում էր Տամփայի սառը դեմքը, նա ամոթ էր զգում: Նա մտածում էր, որ հենց ինքն է նրան ցավ եւ տառապանք բերել: Նա ուզում էր նրան ամեն ինչ ասել, բայց չէր կարողանում համապատասխան ժամանակ գտնել: Ամեն երեկո մթնշաղից առաջ, Տամփա Լամոն վերցնում էր իր վերմակը, որպեսզի քներ վառարանի կողքին, քանի դեռ նա, առանց որեւէ զգացմունքի քնում էր Դագայի հետ պատի հակադիր կողմում: Նա նույնիսկ չափազանց նողկանք էր զգում Դագայի սիրախաղային գործողություններից, ով սիրում էր ոտքը դնել նր կրծքին եւ քնքշորեն շոյել այն:

-Ինչո՞ւ դու չես արձագանքում,- ասում էր Դագան:

-Շատ ուշ է, քնիր:

Լամեթրեն շրջվեց անկողնում, դեմքը պատին, մեջքով դեպի Դագան: Անկախ այն բանից, որ Դագան ձեռքերով նրան թափահարում էր, նա անտեսում էր նրան: Լամեթրեն շատ լավ գիտեր, որ դա վաղը վեճի կհանգեցնի, բայց նա ավելի շուտ կվիճեր նրա հետ, քան Տամփա Լամոյի առաջ ինչ-որ բան կաներ: Քանի դեռ Դագան զուգարանում էր, Լամեթրեն հավաքեց իր իրերն ու լքեց տունը նույնիսկ դույզն ինչ էտ չնայելով: Երբ Լամեթրեն վերադարձավ վագոններով գնացքով, նա տեսավ ախոռի կողքին կանգնած Դագային, որ ժպտում էր իրեն: Լամեթրեն դեմքը շրջեց, երբ կառքը մոտ բերեց կապիտանի գրասենյակի մոտ եւ կանգ առավ:

-Դրենթու, կինդ եկել էր քեզ փնտրելու,- ասաց կապիտան Միգմարը, գրասենյակից դուրս գալով:

## Ցերինգ Նորբու

-Նա այնքան նողկալի է:

Լամբերեն արդեն պատրաստվում էր գնալ:

-Տես, նա կանգնած է ախոռի կողքին: Նա հրաժարվեց գրասենյակ գալ,- փութկոտ ասաց կապիտան Միզմարը: Լամբերեն հայացքն ուղղեց կապիտան Միզմարի վրա, անօգ գլուխը տարուբերելով եւ օրորվելով ուղղվեց ախոռի մոտ: Դագան վառ գույնի նոր գլխաշորով էր, այնժամ, երբ նրա դիմափոշին դեմքի աջ կողմում ջնջվել էր, բայց հետքերը դեռեւս կարելի էր աղոտ նշմարել, նա տարակուսած նայում էր նրան:

-Ի՞նչ ես դու այստեղ անում,- հարցրեց Լամբերեն:

Դագան հարցական աչքերը թարթեց:

Նա ձայնն իջեցրեց ու ասաց.

-Ինչո՞ւ դու առանց խոսք իսկ ասելու կորար: Ես նույնիսկ վիճեցի իմ շրթաճոռթուկ աղջկա հետ: Ինչո՞ւ:

Լամբերեն նայելով նրա խորշումած դեմքին ու հաստ շուրթերին, հանկարծ մոլեգնեց եւ նրան հարվածելու գայթակցություն զգաց:

-Ինչու: Դու ամեն ինչ տանը քանդեցիր: Չնայած այն բանին, որ ես քեզ հետ ընդամենը մի ամիս եմ ապրել, ես խորունկ ընկճախտի մեջ եմ ընկել: Ես պատրաստվում եմ քեզնից բաժանվել:

Լամբերեն հեռացավ:

-Խնդրում եմ, Դրենթու:

Դագան ծնկի իջավ կեղտոտ հողի վրա, արտասվելով նրա ձեռքերի տետում: Նրա լացը կանգնեցրեց Լամբերենին եւ նա լիովին ցնցվել էր, երբ Լամբերեն ետ նայեց:

Դագայի նոր գլխաշորն ընկել էր հատակին: Նրա մազերը կեղտոտ էին, եւ երբ լալիս էր, նա դողում էր: Լամբերեն զգում էր, թե ինչպես է արյունն իր մարմնում ետ հոսում: Նա դեն նետեց մտրակը եւ նետվեց Դագային ձեռքերով բարձրացնելու: Լամբերեն օգնեց նրան եւ հենց նրա ձեռքերով բարձրացրեց:

-Մի հիմարացիր: Ես կվերադառնամ քեզ հետ: Լավ:

Լամբերեն շնչահատվում էր, երբ բարձրացնում էր նրան:

Դեսուդեն նայելով, նա մի խումբ հանդիսականների տեսավ, որ խմբվել էին իրենց շուրջ:

Լամբերեն ամոթ զգաց: Նա ծնկի իջավ, գլուխը ձեռքերի մեջ առնե-

յով: Դագան ձգեց Լամթթրեի ձեռքը, բայց նա ետ հրեց այն:

-Դա զվարճալի է: Նրանք նույնիսկ միասին հիստերիկա սարքեցին:

-Լամթթրեն ծեծե՞լ է նրան:

-...

Լսելով այլոց քննարկումները, Լամթթրեն ամաչեց:

Նա մտածեց, որ խի է խաղի առարկա դարձել, եւ որ այդտեղ մնալու երես չունի:

-Եթե դու ուզում ես ավելին տեսնել, պարզապես հետեւիր ինձ: Ես կորցնելու բան չունեմ: Արի: Դու վախկոտ ես:

Այս խոսքերն ասելով, Դագան գլուխը վեր տնկած, մոտեցավ ամբոխին:

Տեսնելով նրա կեցվածքը, վկաները անկարգ հեռացան:

-Կանգնիր: Դու վախկոտ ես: Արի, մի գնա:

Դագան վազեց ցրված ամբոխի ետքից: Վերջապես Դագան վերադարձավ, ճանկեց Լամթթրեի ձեռքը եւ խնդրեց նրա տուն վերադառնալ: Առանց այլ ընտրության, նա ուսի վրա քաշեց չբացած վերմակը եւ հետեւեց Դագային: Ելնելով գնացքի վագոնի դռնից եւ առաջ ձգվեց, մինչեւ որ Լամթթրեն վնասվեց եւ հետեւեց նրան:

Մեկ ամիս անց, շրջանային կոմիտեի աջակցությամբ, Ջամփա Լիամոն ներկայացվեց ճանապարհաշինարարական բրիգադին: Դագան զբաղված էր իրերը դասավորելով, մինչդեռ Լամթթրեն լուռ նստած էր մահճակալի վրա: Որոշ ժամանակ անց նա ելավ եւ քայլեց դեպի կեդտոտ վառարանը՝ ձևկաչոք նստելու, որպեսզի կրակը տնտղեր: Լամթթրեն արցունքներից խեղդվում էր՝ ծխից կամ իր իսկ վշտից:

Հաջորդ առավոտյան, Ջամփո Լիամոն հեռանալիս լրիվ անտարբեր էր Լամթթրեի եւ Դագայի հանդեպ: Նա մինչեւ բեռնատար նստելը ոչինչ չասաց: Ճաքած ներկով բեռնատարը շարժվեց արեմուտք, փոշու ամպեր հանելով: Երբ փոշին ցրվեց, մեքենան արդեն տեսադաշտից հեռացել էր: Այն բանից հետո, երբ բոլորը գնացին, Լամթթրեն ձեռքերը մեջքի ետեւն անելով, կուզին տալով ու ժիր սեւամաղձ հուսահատությամբ հետեւեց Դագային: Նրա հեռանալուց հետո ոչ մեկն այլեւս ոչինչ չլսեց այնտեղ ապրող կնոջ մասին: Լամթթրեն իրեն մեղավոր էր զգում: Նա հստատ հավատում էր, որ դա իր մեղքն էր, որ շրթաճոռոթով կինը աքսորյալ դարձավ: Տանալով իր մեղքը վանել, նա խնդրում էր ուրիշ-

## Ցերինգ Նորբու

Ներին որոշ տեղեկություններ իմանալ Տամփա Լհամոյի մասին: Ի վերջո, նա լուրեր ստացավ, որ նա Գյակա շրջանում ճանապարհներ էր նորոգում: Թաքցնելով Դագայից՝ Լամթերեն ասում էր մյուսներին, որ օգնեն իրեն նամակ գրել նրան եւ երկու զույգ բրդե գուլպա եւ երկուսուկես կիլոգրամ սպիտակ շաքար ուղարկեց նրա համար: Ծանրոցն ուղարկելուց նա իրեն ավելի լավ զգաց: Մի անգամ, երբ Լամթերեն տուն մտավ, նա տեսավ Դագային, որ խաչված ոտքերով նստել էր կեղտոտ վառարանի մոտ, եւ թշերը ուռցնելով փորձում էր կրակը բորբոքել: Կովի թրիքը առկայծեց, իսկ հետո հոծ ծուխ բարձրացավ: Դագան նավթալամպը չէր վառել: Կրակի լույսի ներքո, Լամթերեն տեսավ նրա կնճռոտ դեմքը: Մի վայրկյան նա նրա հանդեպ խղճահարություն զգաց: «Ձմեռը մոտենում է, ես կնորոգեմ կեղտոտ վառարանը, որպեսզի նա տիպված չլինի կարկը բորբոքել»:

Լսելով այդ՝ Դագան սկսեց արտասվել: Ինչպես եւ խոստացվել էր, Լամթերեն մաքրեց կեղտոտ վառարանը եւ տախտակների երկտեղանի ննջարանի մահճակալ սարքեց: Հարեանները զարմացել էին նրա հմտությունից: Այս ժամանակից ի վեր Լամթերեն խնդրում էին տեղի աղյուսի շարվածք անել կամ փայտի գործ հարեանների համար: Լամթերեն ջանադիր էր եւ միշտ գործը լրջորեն էր անում: Լամթերեն եւ Դագայի կյանքն այնքան էլ քաղցր չէր, բայց խաղաղ եւ հաստատուն էր: Ժամանակի ընթացքում Տամփա Լհամոն հետզհետե Լամթերենի հիշողությունից անհետացավ: Համատեղ կյանքի երկարածովող օրերի ընթացքում, Լամթերեն արդեն այնքան ատելի չէր Դագայի համար, չնայած այն բանին, որ սիրահարված չէր իրեն, ինչպես եւ ընտանիքների մեծ մասը, նրանք ապրում էին, մանրուքներով լեցուն, իրենց կյանքը:

### 3

Տասը տարի անց, Դագան ուշ գարնանը կաթված տարավ: Լամթերեն թողեց իր աշխատանքը, որպեսզի հոգ տաներ նրա համար, եւ այդ ժամանակաընթացքում նաեւ ինչ-որ փայտի գործեր էր անում, որպեսզի գլուխը պահեր: Այնժամ, երբ նրանք կյանքի արհավիրքային նվազում չէին կրել, նրանց կյանքը նեղված դարձավ: Փոքր-ինչ նախաճաշելով, մի կտոր ցամփա կլլելով, Լամթերեն ամեն կերպ ջանում էր, որպեսզի ամեն անգամ ուտելիս լավ սնվեր: Երբեմն Դագան կարողանում

Եր ախորժանք ապրել թարմ կաղամբից, բողկից եւ տավարի մսից: Լամեթրեն ողջ իր ճիգերը կենտրոնացրեց նրան հոգ տանելու վրա, բայց այդ ձմեռ նա կորցրեց նրան: Իր հարեւանների օգնությամբ Լամեթրեն կազմակերպեց թաղումը, պահելով կարեւորության մթնոլորտը, եւ դրա համար արժանացավ ամենքի գովասանքին: Դագայի մահվանից հետո, ամեն գիշեր Լամեթրեն իրեն մոլորված էր զգում, եւ առանց խմելու չէր կարողանում քնել: Միայն խմելով եւ իրեն ընդարմացման մեջ զգալով, նրա բոլոր հոգսերն ու ցավերը անհետ կորչում էին նրա սրտից: Թվում էր, թե Լամեթրեն, ով շատ հաճախ զրուցում եւ ծիծաղում էր հարեւանների հետ, պարապ կյանքով էր ապրում: Սակայն գիշերը նրա մենությունը չէր կարող թաքնված լինել մոմերի լույսի, մռայլ պատերի եւ լայնարձակ երկտեղանի մահճակալի տակ: Խմելով, հիշելով հին ժամանակները, Լամեթրեն մտաբերում էր Դագայի հետ անցկացրած օրերը, այդ թվում եւ իր վեճերը նրա հետ, եւ նա ափսոսում էր, որ նրանից երեխա չի ունեցել: Այժմ, որպես ամուրի, նա պիտի կրեր իր մենության Էրոզիան, թափահարելով գիւու շիշը, ներսից անձայն, Լամեթրեն փովեց մահճակալին, շուրթերը չպպացնելով: Ձեռքերը դնելով իր կրծքին, Տիամփա Լիամոյի պատկերը վառ երեւակվեց նրա գիտակցության մեջ: Լամեթրեն երեք տարի ապրեց խմելով ու հիշելով: Ժամը հանկարծ վրա հասավ 1980-ականներին: Լամեթրեն ամեն օր փողոց էր ելնում: Ի բացառյալ գիւի գնելում, նա իր աշխատավարձը պահպանում էր: Լամեթրեն ծրագրում էր կրկին ամուսնանալ, եւ այդ պատճառով նա սկսեց ուշք դարձնել այն բանին, թե ինչպես է հազնված: Խոտագույն կանաչ գդակը փոխարինվեց կապտասեւ գլխարկով, նրա կամբինեզոնը փոխարինվեց դաքրոնե անդրավարտիքով: Բայց, շուրջբոլորն աչք ածելով, նա չէր կարողանում իրեն հարմար կին գտնել: Ողջ այդ ընթացքում, նա եւ ծանոթներին հարցուփորձեց Տիամփո Լիամայից, բայց պատասխաններն անընդհատ հիասթափեցնում էին նրան: Մի օր, Լամեթրեն շուտ տուն վերադարձավ: Նա քնատ նստել էր պատուհանի տակ, արեւի տակ ջերմանալով, խորհելով այն մասին, արդյո՞ք արժե ավելի շատ հարցուփորձել Տիամփո Լիամայի մասին: «Մայրիկ, մայրիկ»: Մանկան ձայնը հանկարծ հասավ նրա ականջին: Նա շրջվեց եւ տեսավ օրորվելով դեպ իրեն եկող տաբատն իջեցրած ու բաց հետույքով մի մանկան: Երեխան կանգնել ու ձեռքերն էր

## Ցերինգ Նորբու

բարձրացնում: Լամբերեն այնքան ուրախ էր երեխային տեսնելու համար, որ գրկեց նրան, եւ սկսեց նրա հետ խաղալ: Երեխան միառժամանակ տարուբերվում էր նրա ձեռքերի վրա: Յագնէնը, հարեւանը, զոզնոցը տարուբերելով մոտեցավ եւ զարմացած ասաց. «Փոքրիկ ոգնին ակնթարթորեն խուսանավեց: Շնորհակալություն, որ օգնեցիր հոգ տանել նրա մասին»: Լամբերեն ցնցվեց նրա խոսքերից, եւ ասաց. «Սա ո՞ւմ երեխան է»: Յանգչենի դեմքին երջանիկ ժպիտ հայտնվեց, երբ նա վերցրեց երեխային ու ասաց. «Իմ մեծ տղայինն է: Նա եւ իր կինն աշխատում են Նայնգի Վուլեն Միլում եւ շատ զբաղված են, որպեսզի հոգ տանեն նրա մասին, այդ պատճառով նրանք խնդրեցին իրենց օգնել»: Լամբերեի հիշողության մեջ այդ փոքրիկ ոգնու հայրը դպրոցական պայուսակով փախըրտ ուսանող էր: Նա չէր կարողանում իր հիշողության մեջ այս երեխային զուգորդել այն դպրոցականի հետ: Նա Յանգչենին հարցրեց. «Եթե նրանք արդեն երեխա ունեն, ուրեմն մենք ծերանում ենք»: Դրա հետ մեկտեղ Լամբերեն վախենում էր իր տարիքից: Ժամանակն ու մակընթացությունը ոչ մեկին չեն սպասում: Նա հոգոց հանեց, առանց դադար տալու, աչքերի անկյուններում գոյացած կնճիռների, կամ ավելի ու ավելի թուլացող մաշկի եւ նոսր մազերի համար: Լամբերեն այդ գիշեր գինի էր կոնծում: Մենությունը ու անամոքությունը, անօգնությունն ու կարոտը ավելի ամուր էին նրան գրկում: Նա որոշեց ամուսնանալ եւ երեխա ունենալ: Հայտնի մոմը հոսում էր ծայրով, մինչեւ որ, ի վերջո, հանդարտեց սեղանի վրա: Տեսնելով այդ, մի ինչ-որ անբացատրելի տրտմություն ներխուժեց նրա սիրտը: Նա մտածեց, որ փառավոր երիտասարդությունը լիովի կորսվել է: Այժմ նա լոկ լքել էր կյանքի հիվանդագին ծաղկումը: Դա անմոռանալի օր էր Լամբերեի կյանքում: Անձրեւ էր մաղում, ինչը վշտացնում էր մարդկանց: Բայց նա շատ զբաղված էր, վազ տալով իր պատուհանի մոտ դրված տիբեթական պահարանների մոտ: Անդադար անձրեւի պատճառով բակում ոչ մեկը չկար: Բացի Լամբերեի հանած կտկտոցից, միայն, ջրհորդանից ելնող կաթող անձրեւի ձայնն էր: Այդ երկու ձայները ներդաշնորեն միաձուլվել էին վերածվելով քաղցր մեղեդու: Այդ պահին, մի բաց կապույտ տիբեթական հանդերձանքով կին եկավ դեպի Լամբերը եւ իր համար փոքր-ինչ ուտելիք խնդրեց: Կողմ թողնելով իր գործը, Լամբերեն գնաց ուղիղ իր տուն եւ հանեց գուրջի արձակող փքաբլիթը:

Այնուհետ կինը Լամեթրեի համար հանեց թասը, Լամեթրեի համար տաք թեյ խնդրելով.

-Տրի շշի մեջ փոքր-ինչ թեյ կա, դուք կարող եք օգտվել:

Լամեթրեն սկսեց փայտ սղոցել: Աղքատ կինը շվարած էր: Նրա հագուստից ջուր էր կաթում, նա չէր կարողանում չդողալ: Երբ Լամեթրեն ավարտեղ ցախ կտրելը եւ հայտնաբերեց, որ կինը տեղում կանգնած է, նա տխրամած ասաց.

-Դու ուզում ես, որ ես քեզ ծառայեմ: Քեզ թեյ լցրու:

Կնոջ մարմինն անշարժ էր կենում: Այնուհետեւ, գիտակցելով, որ կնոջ հագուստը թաց է, նրա սրտում կարեկցանք արթնացավ: Նա թողեց իր գործը եւ կնոջը հրավիրեց ներս, եւ կրակը բորբոքեց վառարանում, երբ կինը սկսեց թեյ խմել:

-Տաքացիր թեյից հետո եւ չորացրու հագուստդ, որպեսզի չհիվանդանաս: Լամեթրեն պատրաստվում էր ելնել դուրս, նա ինչ-որ բան մտմտաց ու ետ դարձավ: Նա ոտից գլուխ նայեց կնոջը: Նա քսանն անց էր, եւ բավական սիրունատես էր: Նա ասաց.

-Դու որտեղի՞ց ես:

Կինը կլլեց փքաբլիթը, լայն բացած աչքերով ասելով. «Չհամոյից»:

Լամեթրեն հավելեց.

-Դու այստեղ ես, որպեսզի բարեկամների՞դ գտնես:

Կինը ոչինչ չասաց, միայն գլուխը տարուբերեց:

-Մենա՞կ ես: Որտե՞ղ ես ապրում:

Կինը գլուխը հակեց եւ կամացուկ պատասխանեց.

-Ես ապրելու տեղ չունեմ:

Լամեթրեն դուրս նայեց: Անընդհատ մշուշոտ անձրեւ էր մաղում: Մի քանի րոպե զննելով, նա ասաց.

-Ունց որ թե, անձրեւը մի քանի օր կտեւի, եթե դու գնալու տեղ չունես, դու կարող ես էստեղ մնալ: Ես բոլորովին մենակ եմ այս տանը:

Գավաթը բռնած ձեռքը դողում էր, եւ թեյը թափվեց հատակին:

-Ինձ սխալ չհասկանաս: Պարզապես ես խղճում եմ քեզ:

Մի քանի շողշողուն արցունքներ կաթեցին նրա աչքերից: Դրանից հետո Լամեթրեն հասկացավ, որ կինը երախտապարտ է իրեն: Նա մատնացույց արեց նրան սալօջախը եւ առաջարկեց նրան տաքանալ դրա մոտ, երբ արդեն թեյ խմելն ավարտել էր:

## Ցերինգ Նորբու

Կինը ծնկաչոք իջավ հատակին ու ասաց.

-Սըր, թույլ տվեք ձեզ օգնել ձեր ամենօրյա գործերում, ձեզ միայն պետք է ինձ երեքանգամյա սնունդ առաջարկել:

-Լավ, ինչպես կուզես,- խոստացավ Լամբերեն:

Գիշերը Լամբերեն քնում էր ննջասենյակում, իսկ կինը սալօջախի կողքին: Լսելով կնոջ խոմփոցը մութ գիշերով, Լամբերեն զգաց, թե ինչպես ողջ սենյակը լցվել էր բույրով, որը գերեց նրան: Այդ կինը մենությունից էլ լքվածությունից ազատեց նրան: Նա այլևս Տիամիային չէր կարոտում: Ողջ գիշեր նա իրեն վստահ էր զգում եւ երջանիկ տրամադրություն ուներ, այնպիսին, որ նա երբեք չէր ունեցել: Փափուկ տիբեթական վերմակի տակ նա երջանկությամբ լի էր: Լամբերեն ինքն իր մեջ մտածում էր. «Սա հենց այսպես կոչված երջանկությունն է»: Ինչ որ անբացատրելի երջանկություն էր այցելել նրան: Լամբերեն չէր կարողանում քնել: Երբ կինը ելավ կեսգիշերին, Լամբերենի ականջներում շրշացող ձայն լսվեց: Նա ժպտաց մութ գիշերվա մեջ: Կնոջ միզելու ձայնը հասավ Լամբերենի ականջներին: Նա ուշադիր լսում էր իրեն հարմարավետ էր զգում: Տրամադրությունը կակղեցրել էր նրա սիրտը եւ կլլել էր նրան երջանկության հույսով: Լամբերեն իրեն բավարարվածության, հուզմունքի, անհամբերության եւ նյարդայնության զգացմունքներով հեղված էր զգում: Բայց երբ օրը բացվեց, նա քաղցր քուն մտավ: Լամբերեն գարթնեց միայն կեսօրին: Դրսում դեռ անձրեւ էր մաղում, եւ ջուրը դեռեւս թափվում էր ջրհորղանից, բայց Լամբերենի տրամադրությունն այլ էր: Այդ գիշերից հետո, ողջ մշուշը նրա սրտում ցնդեց, եւ Լամբերեն ոգին նոր սահմանի հասավ: Նա նստեց մահճակալի եզրին, աղոտ բավականություն զգալով: Նրա աչքերի մշուշից մարդկայնություն էր ելնում, ինչպես նաեւ ջերմություն եւ երջանկություն: Կինը բարձրացրեց վարագույրը եւ գլուխը ետ տարավ, եւ նա զվարթ ժպտաց Լամբերենին: Երբ Լամբերեն տեսավ երիտասարդ եւ անբասիր դեմքը, նա երջանկությամբ եւ ուրախությամբ լի էր:

-Սըր, ես թեյ եմ պատրաստել:

Արցունքները կաթեցին Լամբերենի դեմքից: Նա հիշեց Դազայի ձեր եւ այլանդակ դեմքը, նրա արցունքոտ, մազնիսական ձայնը, ուռած մարմինն ու թորշոմած մաշկը: Այն օրերին նա մշտապես կարող էր զգալ Դազայի բերանի անդուր հոտը եւ լսել նրա վաղեմի բլբլոցը: Իր



ընթուշ պատանության մեծ մասը ևս անցկացրեց այդ տարեց կնոջ հետ, համատարած տաղտուկի մեջ: Այն օրերին ևս երբեք այդպիսի հուզիչ զգացողություն չէր ունեցել, ինչպես երեկ:

Այդ զգացողությունն իրոք ֆանտաստիկ էր:

-Թեյը ներսում դիր:

Տեսնելով, ինչպես իջեցվեց վարագույրը, Լամբերեն տեղնուտեղը արցունքները սրբեց եւ ավելի լուրջ նստեց: Լվացվելուց եւ հագնվելուց հետո կինն այլ տեսք ուներ: Նրա տամուկ աչքերը շողում էին, ինչպես վայելուչ ճագարիկներ, իսկ նրա բարալիկ շուրթերը փոքրիկ եւ վարդագույն էին: Քաղցրությունն ու ջերմությունը կրկին դողացին Լամբերեի սրտում:

-Արի էստեղ: Ինձ հետ փոքր-ինչ ցամփա կեր եւ թեյ խմիր:

Կինը գլխով արեց եւ նստեց սեղանի կողքի նստարանի վրա:

Լամբերեն փոքր-ինչ ցամփա դրեց եւ փայտե գավաթով թեյ մատուցեց, ևս ձախ ձեռքով բեռնել էր թասն ու ցամփան էր հարում: Ցամփան արագ պատրաստվեց: Լամբերեն անհանգիստ հարցրեց.

-Դու գիշերը լա՛վ քնեցիր:

Կինն ամաչկոտ ժպտաց նրան եւ պատասխանեց, «Այո, շատ լավ»:

Այդ ընթուշ տեսարանը Լամբերեի սիրտը փափկեցրեց: Նա չէր կարող օգնել, բայց անհապաղ մոտեցավ նրան: Բերկրալի երգը պոնկեպոնսկ լցրել էր նրա սիրտը:

-Արդյոք դու չե՞ս կարող մնալ այս տանը,- կրկին հարցրեց Լամբերեն: Կինը նայեց նրան եւ ամաչկոտ գլուխը հակեց: Լամբերեն նայեց պատուհանից դուրս, որպեսզի տեսներ արծաթավուն անձրեւը, եւ ջուրը անդադար ջրհորդանից դուրս էր հորդում: Նա իրեն ուրախ էր զգում:

-Անունդ ի՞նչ է:

Կինն ամաչկոտ գլուխը բարձրացրեց եւ պատասխանեց, «Չելա»:

-Չելա,- կրկնեց Լամբերեն: Թեյը խմելուց հետո ևս ներկայացավ:

-Դու կարող ես ինձ Դրենթու կանչել: Կինս մահացավ եւ մենք երեխա չունեցանք: Այսպիսով, ես այժմ միայնակ տղամարդ եմ: Չելան ծիծաղեց լսելով այդ եւ գլուխը խցկեց ծնկների մեջ: Տեսնելով նրա սպիտակ վիզը, Լամբերեն դողաց, ասես հոսանքի հարված ստացավ: Նրա արյունը ուռչում էր, իսկ շնչառությունը հաճախանում: Որպեսզի այդ զգացմունքը թաքցնի, ևս փութանակի ելավ եւ կաղալով ելավ փողոց:

## Ցերինգ Նորբու

Անձրեւի դադարի ոչ մի նշան չկար: Բակն այնքան կեղտոտ էր եւ այնտեղ ոչ մէկը չկար: Լամեթրեն մտածեց, որ եթէ անձրեւը չդադարի, նա անվերջորէն կարող է շփվել Չելայի հետ: Լամեթրեն թեթեւակի գլխապտույտ զգաց այն բանից հետո, երբ խմեց Վայթ սպիրիտիկը: Մոմերի լույսի ներքո լսելով Չելայի խոմփոցը, բաժանված միայն վարագույրով: Նա մտածեց, որ այս անգամ գիշերը շատ հրաշալի էր: Լամեթրեն խմեց իր գավաթի մեջ եղածը, հանգրեց մոմն ու պառկեց տաք անկողնու մեջ: Անձրեւ էր տեղում, եւ անձրեւի ձայնի տակ քնելը միութարանք էր: Որովհետեւ անձրեւը կարող է մարդկանց ստիպել ավելի շուտ ննջել եւ մոռանալ իրենց հոգսերի մասին: Սակայն Լամեթրեն երկար չէր կարողանում քնել, եւ նա շնչեց սենյակի հիասքանչ բույրը: Նա կարող էր հստակ լսել Չելայի, անկողնում շուռումուռ եկող արծակած կամացուկ ձայները: Նա սպասում էր, մինչեւ որ Չելան հանգստանար: Մեղեդային տկտկոցը նրան հույս էր տալիս: Բայց նա մինչեւ կեսգիշեր այն չլսեց: Լամեթրեն ջանում էր հաղթահարել իր քնատուրբունը, բայց դրսում անձրեւի կաթիլները նրան քաղցր քուն բերեցին: Նա հիաքանչ քնի մեջ ժպտաց:

4

Երեք թե չորս օրից անձրեւը դադարեց: Լամեթրեն այդ շրջանում հանգստանում էր: Նա ամեն օր բլբլում էր Չելայի հետ, նրանք սկսեցին վստահել եւ խղճալ իրար, անձանոթներից ընկերների վերածվելով: Չելան նույնպէս սալօջախի մոտից գնաց դեպի մյուս մահճակալը: Խմելուց հետո Լամեթրեն ամեն գիշեր քաղցր երազներ էր տեսնում: Նա իրոք Չելային ուզում էր ասել. «Ամուսնացիր ինձ հետ»: Բայց երբեմն բառերը խցանվում էին նրա կոկորդում: Նա վախենում էր, որ եթէ իր խաղաթղթերը բացի, Չելան կանհետանա իր կյանքից: Նա մտածում էր, թէ այդ բաները թեթեւ տանել, թույլ տալով նրան ջերմություն զգալ, եւ թույլատրելով նրան մտածել, որ ինքը լավ մարդ է: Այդպիսով նա սպասում էր, մինչեւ որ պայմանները հասունանան եւ գա հաջողությունը: Այդ օրերին բակի հարեանները սիրում էին այցելել Լամեթրեի տուն: Նրանք սեւեռվեցին Չելայի վրա եւ հարցրեցին.

-Դրենթու, ո՞վ է նա:

-Նա այնքան երիտասարդ է: Նա քո բարեկամն'իհիւ է:

-Նա քո ընկերոջին է:

-...

Լամթթեն իրեն անհարմար էր զգում.

-Նա եկել է իր բարեկամներին գտնելու, բայց չկարողացավ նրանց հետ կապվել, այնպես որ նա ինձ մոտ է տեղավորվել:

Հարեաններն ասում էին՝ «Օհ», բայց հոգու խորքում նրանք ասացին, «Գրողը տանի, Լամթթե, դու մեզ ճիշտը չես ասում: Պարզապես սպասիր եւ կտեսնես»: Լամթթեն ուշք չէր դարձնում իր մեջքի ետետում հարեանների բամբասանքներին: Նա մտածում էր, որ Չելան պարզապես ապրում է իր տանը: Նրանք սեռական հարաբերության մեջ չէին: Նա ոչ մի սուտ էլ չէր ասում: Լամթթեն վախենալու բան չուներ: Այն գիշեր, քանի դեռ Լամթթեն մոմերի լույսի ներքո գինի էր ըմպում, բարկ վայթ սպիրիտի բույրը լցրել էր տունը: Նա փոքր-ինչ գինովցած էր, Չելան կարմրեց լսելով ֆիլմի երաժշտությունը, որ ռադիոյով են հաղորդում: Լամթթեն հարցրեց.

-Ուզո՞ւմ ես փոքր-ինչ:

Չելան ծիծաղի միջից ասաց.

-Խմելը տղամարդու բան է: Կանայք չեն խմում:

Այս լսելով, Լամթթեն հիշեց իր եւ Դագայի միջեւ եղած տեսարանը: դա գինին էր, որ զգեստնել էր նրան, դա գինին էր, որ դժվարացնում էր ինքն իրեն արդարացնելը: Այդ մտածելիս նա փոքր-ինչ տխրություն էր զգում: Լամթթեն խոհածու էր. «Կինը չպետք է խմի, դա լավ չի»: Դագայի տարեց դեմքը հայտնվեց նրա աչքերի առաջ: Լուսնի լույսի ներքո նայելով ջահել դեմքին, Լամթթեն հաճելի զգացողություն ապրեց, ասես լեռնադայուր տեսավ:

-Հիմա դու կարող ես գնալ քնելու:

Լամթթեն իր բաժակի մեջ գինի լցրեց: Այդժամ Չելան սկսեց արձակել իր տիբեթական հագուստը: Միայն ներքևաշորով նա սկսեց անկողինը բացել: Նրա սլացիկ կազմվածքը նման էր կուրացուցիչ լույսի, որ Լամթթեին ստիպեց աչքերը չբանալ: Նրա սիրտն արագ էր խփում: Նույնիսկ երբ Չելան դեմքով դեպի պատը պառկեց, նա դեռ ասես փշերի վրա լինեց: «Ես լալիս եմ, որպեսզի գտնեմ քեզ» երգն էր հնչում ռադիոյից: Լամթթեն ոչինչ չէր հասկանում այդ բառերից, այլապես նա հակված էր արտասվելու: Դռան հանկարծակի թակոցը ցնցեց Լամթ-

## Ցերինգ Նորբու

թրեին: Երբ ևս պատրաստվում էր մոմը ձեռքին ելնել, դուռը բաց էր: Չելան նստել էր մահճակալի վրա:

-Եկեք վերցնենք սրանց: Եկեք վերցնենք սրանց: Լապտերը շողում էր Լամեթրեի դեմքի վրա և նա, կոյրի պես, ոչինչ չէր տեսնում:

-Վերցրու կնոջը մահճակալի վրայից:

Լամեթրեի ձեռքերը կապված էին: Լամեթրեն չգիտեր, թե ովքեր են սրանք, բայց նա զգում է, որ սրանք բարի նպատակներով չեն եկել:

-Սրանց տարեք շրջանային կոմիտե:

Լամեթրեն ստիպված էր լքել իր տունը: Հարեանները հավաքվում էին դարպասի մոտ: Ողջ ուժերը լարելով մի խումբ մարդիկ Լամեթրեին ու Չելային բերեցին Սիյանյանի հարեանության կոմիտե: Սրանք հարձակվեցին սրանց վրա, մեղադրելով սրանց անառակության մեջ:

-Ոչ, մենք երբեք նման բան չենք արել,- մոլեգին բողոքում էր Լամեթրեն:

Բայց դա սրան եւս մի դաժան ծեծի հանգեցրեց: Լուսաբացից հետո, Հարեանության Կոմիտեի քարտուղարը նամակ գրեց տիբեթական կոնֆեսիային, հաստատելով սրանց չարդարացված հարաբերությունները իրենց անուններով, և ստիպեցին սրանց ստորագրել: Չելան թքեց քարտուղարի վրա ու ասաց.

-Ես պիտի արած լինեի այդ, համենայն դեպս, այդ ժամանակ, ես ավստսանք չէի զգա, եթե նույնիսկ մահանայի: Ես այնքան ավստսում եմ, որ այդ չեմ արել»:

Տնօրեն Դավան ձեռքը թափահարեց, մեկին մատնացույց անելով, որ Չելային դուրս բերի: Չելայի կոպիտները տարածվեցին ողջ տնով մեկ՝ միջանցքի, աստիճանների և բակի երկայնությամբ, իսկ այնուհետև անհետացան փողոցում: Լամեթրեի սիրտը պարապ էր: Տնօրեն Դավան բռնեց նրա ձեռքից, որպեսզի ստիպեր թողնել ցուցամատի դրոշը թղթի վրա: Ինչպես ծանր բեռի թեթեացում, տնօրեն Դավայի դեմքի վրա ժպիտ ծաղկեց: Նա մատի դրոշմը դնելուց հետո հոգոց հանեց: Այնուհետև նա թուղթը ծալեց և դրեց գրպանը, համոզվելով, որ այն չորացել է: Երբ Լամեթրեին տուն բաց թողեցին, արդեն հաջորդ կեսօրն էր: Մարդիկ նայում էին նրա վրա, որպես հիմարի: Ամենուր շուկներ ու փսփսոցներ էին:

Մտնելով տուն, նա տեսավ, որ Չելայի վերմակը անփոփոխ էր մնացել: Չելայի խոսքերը հնչեցին նրա ականջներում, «Ես պիտի այդ

արած լինեի, համենայն դեպս այդ ժամանակ ես չէի ափսոսա, եթե նույնիսկ մահանայի: Ես այնպես ափսոսում եմ, որ դա չեմ արել»: Լամբերտի ոտքերը թուլացան: Նա ձեռքը դրեց մահճակալի վրա, նստեց եւ, սկսեց արտասվել: Լամբերտն ցավալիորեն հայտնի դարձավ Սիյանյանի հարեանության կոմիտեում, եւ հավելյալ նաեւ այլ հարեանության կոմիտեում: Մարդիկ նրա մեջ խուլիզան, չարագործ եւ ծաղրաբան էին տեսնում: Նա հազվադեպ էր փողոց դուրս գալիս, եւ նրան փայտագործությունից հեռու էին պահում: Նա օրն անցկացնում էր ալկոհոլով եւ քնելով, երազկուն անցնելով օչեչօի միջով: Լամբերտի բարեկամները, հասարակական կարծիքի ճնշման տակ, պիտի օգնեին նրան: Նրանց օգնությամբ նրան վարձեց շինարարների մի խումբ: Լամբերտն հմուտ հյուսն էր: Բոլորը նրան սիրում էին: Մի օր, երբ լսում էր տեղում եղածների խոսակցությունները, նրան հաղորդեցին, որ օտարականները Լհասայում, բոլորը Կառավարության կողմից ուղարկվել էին ետ, իրենց հարազատ քաղաքները: Ասում են, մի դյուժին բեռնատարներ էին ժամանել, որոնցից յուրաքանչյուրը մարդկանցով լի են: Այդ լսածները նրան հիշեցրին այն տեսարանը, երբ նա ետ ուղարկեց Տամփային: Ծակված անիվով ավտոմեքենան նրա սերը տարավ հեռավոր երկիր միայն նրա ետեւից թողնելով փոշով ծածկված երկինքն ու անողոք մեղքը: Այս անգամ մեքենան հերթական անգամ կործանեց նրա հույսերն առ գեղեցկություն: Լամբերտն արագ ծերացավ, իսկ նրա մազերը ճերմակեցին: Նրա լուրջությունը հաճախ շփոթեցնում էր մարդկանց, եւ նրանք իրենք իրենց հարց էին տալիս, արդյոք նա հիմարացել է: Ժամանակը թռչում էր, դանդաղ բուժելով կոտրված սիրտը: Մարդիկ հետզհետե մոռացան իրենց ցավերն ու անօգությունը: Լամբերտն արդեն հիսունն անց էր, բայց նա դեռ միայնակ էր: Ոչ մեկը նրան չհարցրեց իր ամուսնության մասին, եւ նա գիտեր, որ մարդիկ անհանգստացած չեն: Նրա «անառակության» հետեւանքները: Դա պատահեց տասնյակ տարիներ առաջ, բայց դեռ խլվում էր մարդկանց ուղեղներում: Թեպետ կնոջ բույրը շատ հաճախ հայտնվում է երագում, նա մտածում է ծեծի տեսարանի մասին եւ նա արթնանում է լոկ երագանքի համար, որը մի ակնթարթում մոռացվում է: Լամբերտի տաղտկալի երթուղին իր տևից մինչեւ այն տեղը, եւ ինչը նա հաստատակամ կրկնում էր: Այդ ժամանակաընթացքում Լհասան սաստիկ փոխվել էր, եւ

## Ցերինգ Նորբու

Լամթորեն պարզապես փակում էր աչքերը այդ կառուցած բարձրահարկ շենքերի, կիպ կառուցված խանութների եւ առատ կյուրերի առաջ: Այդուհանդերձ կար եւս ինչ-որ բան, որ կփոխեր Լամթորենի ճակատագիրը: Աշխարհի վերջին, ծեր արհեստավոր-նկարիչը շինարարական կոնստրուկցիայից վախճանվեց: Այդ ծերունին ողջ կյանքում ամուրի մնաց, դրա համար նրա թաղումը նախապատրաստեց աշխատավորական բաժինը: Լամթորեն ու այլ տարեց մարդիկ նշանակվել էին, որպեսզի օգնեին: Տան անկյունը, որտեղ դրված էր ծեր արհեստավոր նկարչի մարմինը՝ տեղադրվել եւ գատվել էր սպիտակ գործվածքով: Մոմերի լույսերի ներքո Լամթորեն տեսավ ծեր արհեստավորին, սպիտակ գործվածքով փաթաթված, եւ պատի անկյունում պառկեցրած: Նավթալամպի լույսն առկայծում էր: Լամթորեն մտածեց. «Անկախ այն բանից, հասավ նա իր հավակնություններին, թե ոչ, մենք բոլորս, ի վերջո, այստեղ կպառկենք, ինչպես ծեր արհեստավորը»: Նրա արցունքները հոսեցին: Նա տխուր էր այդ ծերունու եւ հենց իր համար: Ուրվագծերն այն երեք կանանց, ովքեր սիրային հարաբերություններ էին ունեցել իր հետ, հանկարծ բռնկվեցին նրա գլխում: Նա դեռեւս ընկճված էր: Լամաների խառը երգեցողություններում եւ նավթալամպի կրակի հոտի մեջ, նա զգաց, որ կյանքն անշոշափ է: Երեք օր անց ի կատար ածվեց ծեր ներկարարի երկնային թաղումը եւ Լամթորեն վերադարձավ տուն: Թաղումից հետո Լամթորեն մնում էր վատ տրամադրության մեջ: Նույնիսկ առատ քանակությամբ գինի խմելով, նա դեռեւս չէր կարողանում քնել: Նրա առողջությունը անքնության պատճառով փչացել էր: Լամթորեն ճաղատացել էր, նրա աչքերը դուրս էին ընկել եւ դրանց տակ ստվերներ էին հայտնվել: Սարդիկ նրան խորհուրդ տվեցին հիվանդանոցում ֆիզիկական վիճակի հետազոտում անցնել: Երբ Լամթորեն հիվանդանոց ընկավ, բժիշկն ասաց, որ նա չափազանց հոգնել է, եւ որ նա հանգստից հետո կարգի կգա: Բժիշկը նաեւ խորհուրդ տվեց նրան գիշերները քայլել: Բժշկի խորհրդին հետեւելով, Լամթորեն այդ գիշեր ելավ զբոսնելու: Չեռքերը մեջքի ետեւը դրած, Լամթորեն վիզը ձգած միայնակ քայլեց մայթով: Ախ, ինչ հիասքանչ էր գիշերային տեսարանը: Վառ լույսերը, անվերջանալի տրանսպորտային հոսքը եւ ձայների կուտակումը: Հանկարծ մի կին բռնեց նրա ձեռքերը: Նախքան ինչ-որ բան ասելը, նրան քարշ տվեց խանութ եւ նստեցրեց թախ-

տի վրա: Կինը նազելորեն եւ նրբագեղությամբ ասաց. «Սըր, թույլ տվե՞ք ձեզ մի գավաթ գինի մատուցել»: Լամեթրեն գլխով արեց: Կնոջն անսալով, նա մի քանի գավաթ գինի ըմպեց: Այնուհետեւ, երբ նա հասավ մարդու ամենագաղտնի մասին, կնոջ բուրմունքը տազնապեցրեց նրա սիրտը, եւ դողդողաց Լամեթրեի քթանցքերում: Նա տեսավ նրա կուրծքն ու ճերմակ վիզը, եւ Լամեթրեն ամբողջովին հրապուրված էր: Դրանից հետո Լամեթրեի տրամադրությունը բարձրացավ: Նա սկսեց ավելի երիտասարդ երեւալ, իսկ երբեմն վերադառնում գինետուն, որպեսզի խմեր: Նա այլեւս չէր նոթոտում: Մի քանի ամիս անց, Լամեթրեն ամուսնացավ այդ կնոջ հետ գինետնից եւ բերեց իր տուն: Նրա արարքը իրարանցում ստեղծեց հարեանների շրջանում: Բայց Լամեթրեն, դիպչելով իր ճերմակ մորուքին, ասաց. «Ինչ որ ձեզ պետք է, պետք է եւ ուրիշներին»: Հաջորդ աշնան սկզբին հարեաններն իմացան, որ Լամեթրեի կինը հղի է: Այդ պահից ի վեր նա երբեք ափսոսանք չէր զգում այն բանի համար, որ կրկին ապրում է աշխարհում: Մինչեւ այդ պահը նա չէր ապրել կնոջ եւ տղամարդու միջեւ գոյող չքնաղ սերը: Իր երջանկության հետ, Լամեթրեն էլ ավելի սեր ուներ ալկոհոլի հանդեպ: Լամպի լույսի ներքո նա սեւեռվել էր հղի կնոջ վրա եւ իրեն բավարարված էր զգում: Կինն ուշադիր հեռուստացույց էր նայում եւ չէր նկատում նրան: Լամեթրեն անսահման ուրախ էր, եւ այդպիսի բերկրանքի հաճախանքը ստիպեց նրան արտասվել: Նախքան արցունքները սրբելը, նա ընկավ մահճակալի վրա եւ մինչեւ վերջ արտաշնչեց իր կյանքը: Նրա հոգին լողում էր տանը, ուր նա ապրել էր երեսուն տարուց ավելի: Նա լսում էր, ինչպես են վանականները երգում քավարանից նրա հոգու ազատագրման համար: Տեսնում էր հարեանների վշտացած դեմքերը, իր լացող կնոջը, իր ճերմակ գործվածքով փաթաթված մարմինը եւ նավթալամպը, որ լուսավորում էր իր ուզին: Բայց Լամեթրեը այդ բաներից ոչ մեկի համար հոգ չէր տանում, բացի չծնված երեխայից: Նրա հոգին, օդի պես թեթեւ, հպվում էր կնոջ փորին եւ զգում էր պտղի շարժումը: Լամեթրեն մտածեց. «Ոչ մի բան այս աշխարհում սիրուց ավելի լավ չէ»: Ուղեկցվելով լամաների զանգուլակների զնգոցով, Լամեթրեի հոգին ելավ տնից առ մթին գիշերը: Լամեթրեն չվախեցավ, որովհետեւ նա հիշեց, որ այս աշխարհում նա իրոք ինչ-որ մեկին խորունկ սիրել է: Նա ոչնչից չվախեցավ, քանի որ սերն իր կողմում էր:

## ԼԵԳԵՆԴ

-Դա անխոցելի է: Դա իսկապես անխոցելի է:

Կեսօրը ձմռանն ավելի կարճ է: Մինչև վեցն անց կեսը, արեւի վերջին լույսը ննջում է պանդոկի պատուհանների ետեւում եւ հանկարծ սենյակը լցվում է պաղ օդով: Պանդոկի տիրուհին ծնկաձայլ նստել է վառարանի կրակը բորբոքող երկաթի մոտ, երբ կովի թրիքի ծուխը ելնում է սենյակն ի վեր: Կովի թրիքից եկող խոտի բույրից, ես զգում եմ, որ վերադարձել եմ իմ գեղջկական հարազատ քաղաքը:

-Դու ինձ չե՞ս հավատում:

Դիմացս նստած ծերունի Տանգզուրը բարկացկոտ նայում է ինձ: Ես կողմ քշեցի նրա հրացայտ հայացքը, դրա փոխարեն նայելով ընթացող մեքենաներին եւ փողոցում մոլորված հետիոտներին:

-Անհնար է,- պատասխանում է առաջինը հեծանվառիկչայի վարորդը:

-Եւս հինգ գավաթ գարեջուր,- կոպիտ գոչում է ծերունի Տանգզուրը,- դժվար է ժամանակակից մարդկանց հասկացնել այդ:

Նա գավաթն ուժգին խփում է փայտե սեղանին եւ ձայնն արձագանքվում է պանդոկով մեկ: Ցնցված, ես հայացքս ուղղում եմ համառ ծերունու վրա ու սկսում եմ նայել: Սեղանի վրա ծերունի Տանգզուրի առաջ հինգ դատարկ գավաթներն են ծխախոտի կողքին եւ հրահանը թրջվում է ցայտած գարեջրից: Պանդոկատիրուհին մոտենում եւ ձգում է մատները նեղիկ գավաթները վերցնելու համար: Սեղանը դատարկվում է:

-Այս քո կենացն է,- ասում եմ ես, լեռնային գարու գինու գավաթը ձեռքիս:

-Հրաշալի է, դրանից հետո եկեք այս փոխարինենք գարեջրով,- պատվիրում է ծերունի Տանգզուրը:

-Ոչ, ես կուզենայի լեռնային գարու գինի խմել,- պնդում եմ ես:

-Գարեջուրը միայն ինձ,- նա իր գրպանից հանում է 100 ֆունտանոցը:

-Գարեջուրը ինձ հետ լեզու չի գտնում,- ասում եմ ես:



Իմ փողը բավում է միայն հինգ գավաթ զարեջրի, բայց լեռնային զարու գինու համար բավական է, որպեսզի մեռնելու չափ հարբես:

-Դու կատակո՞ւմ ես: Մենք համերկրացիներ ենք, հիմա բոլորը սկսեցին զարեջուր խմել եւ Մաջունգ խաղալ: Եթե դուք նստեք ինձ հետ, ես բոլորիդ զարեջրի համար կվճարեմ:

Հրաժարվելու դեպքում հեծանվառիկչայի վարորդը եւ ես դատարկ գավաթներով միանում ենք նրա սեղանին:

Պանդոկը մեծ չի եւ ընդամենը չորս սեղան ունի: Դրա կախովի ու պարզունակ աթոռակները հաճախ ճոճոան ձայներ են հանում: Պանդոկատիրուհին հինգ շիշ զարեջուր է դնում սեղանի վրա եւ բացում է դրանք իր տիբեթյան զգեստից հանած գրպանից: Ծերունի Տանգչուբը արագ դիպչում է պանդոկատիրուհու ձեռքին:

Նա ալկոհոլի ուժգնությունից թեթեւսոլիկ է դառնում: Պանդոկատիրուհին ձեռքը կողմ է տանում եւ դիպչում է ծերունի Տանգչուբի բաց դեմքին: Ես բարձրաձայն ծիծաղում եմ: Բարձր տրամադրության մեջ ծերուկ Տանգչուբը սեղմում է նրա ազդրը:

- Նա լավիկն է: Հա, հա, հա:

Ծերունի Տանգչուբը ինքնագոհ ծիծաղից ցնցվում է: Կարմիր մետաքսաթելով նրա սանդակոթիկը ձեռքից դուրս է պրծնում՝ վերուվարելով ծերունի Տանգչուբի կրծքի վրա: Վաջրիական սանդակոթիկի զույկը դեղին է եզրերին նստած որոշակի աղտոտությամբ: Երեւի թե այն պատճառով, որ շատ երկար է կրել:

Պանդոկատիրուհին ամոթխածորեն հերթով մեզ է հանձնում գավաթները:

-Պարպեք մինչեւ վերջ,- ասում է պանդոկատիրուհին:

-Տմբուր:

Ծերունին պարպում է իր զարեջրի գավաթը:

-Քո վաջրիական սանդակոթիկը պոկվել է քո զգեստից,- ասաց պանդոկատիրուհին ժպտալով:

-Դա զանձ է: Դա իմ պահպանիչ թալիսմանն է:

Դա իրոք անխոցելի՞ է,- կրկին հարցնում եմ ես:

-Սա անխոցելի է,- նայելով ինձ՝ ասում է ծերուկ Տանգչուբը:

-Նույնիսկ ատրճանակը չի՞ կարող դրան վնասել,- հարցնում եմ ես:

-Ինչո՞ւ դուք, ժամանակակից մարդիկ, ինձ չեք հավատում:

## Ցերինգ Նորբու

Երբ ծերուկ Տանգզուբը պատրաստվում է ծխախոտ վերցնել, նա տեսնում է սեղանի վրա թափված գինին: Ես առաջարկում եմ իմ «Սպիտակ հիբիսկուս» ծխախոտը, եւ ծերունին վերցնում է, կպցնելով այն: Կովի թրիքի ու ծխի հոտը կենում են պանդոկի օդում եւ երբ երկաթյա վառարանն էլ իր ջերմությունն է տալիս, սենյակը տաքանում է:

-Վեջիրիական սանդակոթիկն ընծայաբերել էր Ռինպոչեն Խիաղի տաճարից: Ես այն տասը տարուց ավելի է՝ կրում եմ: Դա իրոք ինձ կարող է պաշտպանել սրերից ու տեգերից:

Ծերունի Տանգզուբի ձայնը քնքշանում է եւ բերկրանքի զգացումը թրթռում է նրա դեմքի վրա: Նա վերցնում է գարեջրի գավաթը, որպեսզի կոկորդը փոքր-ինչ թարմացնի, եւ շարունակում է խոսել:

-Ես մի անգամ քսան հազար յուանով Դորջե Փհուրբա դաշույն գնեցի: Ինձ վիճակված էր հանդիպել Դորջե Փհուրբային: Նույն օրը, մինչեւ լուսաբաց, ես մտադիր էի ծխական զբոսանք անել տաճարով մեկ, բայց դրա փոխարեն ես վիճեցի կնոջս հետ, ես խնդրեցի նրան առաջինը գնալ: Դուռը փակելուց հետո, ես ելա ու տեսա պայծառ ամպերը Փուրբի լեռան կատարին, ծխելով եւ աղոթելու դրոշակները ծածանվում էին քամու տակ: Ես աղոտ, անհստակ ձայն էի լսում: Կարդալով Ռարա Մանթրան լիովին, ես անցա Լհասա Գետը եւ հասա Սանգյա տաճարը Չոքբորի ելնելուց հետո: Ես աղոթում եւ սողում էի ճանապարհի վրա իմ սովորական երեսուն խոնարհումները, իսկ հետո մտա մոտակա թեյարանը: Որոշ ժամանակ անց Քհամսեցի մարդը արեւմտյան ոճի հագուստով երկար սրով զարդարված իր իրանիի վրա, նստեց կողքս եւ երկու ափսե տիբեթական շիլա պատվիրեց: Երբ նա պատրաստվում էր ուտել, ես նկատեցի ուլունքով ոսկե մատանին՝ տիբեթյան թանկարժեք քարով մատի վրա:

-Ինչ մեծ մատանի է,- ապշեցի ես:

Քհամսեցի մարդը հպարտորեն պատասխանեց.

-Սա պետք է որ տասնյակ հազարավոր յուան արժենա, այպես չէ՞:-  
Հա, հա:

-Անվեհեր,- գովեցի նրան: - Դուք պետք է որ մեծ վաճառական լինեք:

Հետո ես սկսեցի նրա հետ շփվել: Ի վերջո, մենք միասին դուրս եկանք թեյարանից, եւ որոշ ժամանակ անց նա ինձ հարցրեց.

-Դուք ուզում եք զնե՞լ իմ Դորջե Փհուրբան:

-Դա անխոցելի Դորջե Փհուրբա՞ է, որ երկնքից է ընկել:

-Այո: Դա Սիադի տաճարի գանձն է: Տիրեթյան «ա». եւ «հոնգ» բառերը շողում են դրա վրա, ինչպես նաեւ Պաղմա Սամբիվայայի հինգ մատների հետքերը:

-Դե, ուրեմն, ինչ է այս հազվագյուտ գանձը: Ի՞նչ արժե:

-Հիսուն հազար յուան: Ես փողի պատճառով դժվար կացության մեջ եմ:

-Դուք վստա՞հ եք, որ դա Սիադի տաճարի գանձն է:

-Դուք կարող եք իմանալ այդ մասին, եւ եթե ես ստում եմ, ես այն ձեզ ձրի կուղարկեմ:

Ինձ համարյա համոզեցին: Եթե նա ճիշտ է ասում, դա իսկական գանձ է:

Մի պահ ես նույնիսկ մտածեցի, հետո փորձեցի բոլոր հնարավոր միջոցները՝ համոզելու նրան, որ գինն իջեցնի, եւ ի վերջո, նա համաձայնվեց այն ինձ վաճառել քսան հազար յուանով: Տերողորմյաները տարուբերելով մենք զատվեցինք ամբոխից ու անկյունում կանգ առանք: Քհամսեցի մարդը հանեց մետաքսե գործվածքի կտորը, ձախ ձեռքին այն բռնած: Նա աջ ձեռքի ցուցամատով մեղմորեն բացեց այն: Ափաշափ Դորջե Փհուրբան հառնեց իմ աչքերի առաջ: Այդ սեւ բառերի պատճառով մատներն էլ անպարզ էին: Ես տարակուսեցի եւ կրքոտությունս մարեց: Քհամսեցին ձեռքն ուսիս դրեց եւ խնդրեց ինձ առաջ հակվել: Ես ձեռքերիս մեջ բռնել էի Դորջե Փհուրբան եւ ուշադիր զննում էի եւ հայտնաբերեցի այն իրական խոսքերը եւ մատնահետքերը: Իմ սիրտը ուժգին բաբախում էր, եւ ես որոշեցի զնել այն: Ես փողը տվեցի նրան, եւ Դորջե Փհուրբան դարձավ իմ գանձը:

Մենք կրկին խմեցինք: Պանդոկում այնքան շոգեց, որ ծերունի Տանգչուբը հանեց ոչխարենուց իր բաճկոնը:

Դրանից հետո, կինս բարկացավ ինձ վրա: Բայց ես զնեցի այն, եւ ոչ մեկին չէի կարող մեղադրել այն բանում, թե այն իսկական էր, թե կեղծ: Ես ամրացրի այն որմնախորշում, իսկ հետո զարունն անցավ: Ամեն անգամ, երբ ես տեսնում է Դորջե Փհուրբան որմնախորշում, սիրտս այրվում էր, ասես ինձ խաբել էին: Ամառը սկսվեց, եւ Լիասայում տեղացին առաջին անձրեւները: Այդ օրը կայծակը խփեց եւ ճայթեց որոտը:

## Ցերինգ Նորբու

Որմնախորշում լուսավոր էր, եւ շարժվող լույսի ձայնի հետ ես ու կինս սարսափի մեջ էինք: Բայց մենք շուտով հանգստացանք եւ փութացինք ծալած ձեռքերով սուտրաներ երգել: Դրանից հետո մենք ստուգեցինք որմնախորշը, որպեսզի ոչինչ չգտնեին: Խորունկ գիշերով հանկարծ շողաց լույսի ժապավենը, Բուդդայի քանդակի շողանքը որմնախորշում: Դա սարսափելի էր: Ես վազեցի որմնախորշի ճակատամասի կողմը եւ հայտնաբերեցի, որ լույսը ճառագում էր իմ Դորջե Փիուրբայից: Ես տեղում կանգնած բուք նայում էի եւ գաղափար իսկ չունեի՝ Էնպիսի մեծ ցնցում էր:

-Ինչո՞ւ եք դուք գիշերվա կեսին մոմերը վառել:

Ես լսում էի կնոջս հարցը:

Դորջա փուրբան շողում էր: Կինս հագավ իր տիբեթյան զգեստն ու վազեց որմնախորշի մոտ: Նա այդ ֆանտաստիկ տեսարանից ցնցված էր: Երկար լռությունից հետո նա ասաց.

-Դորջա փուրբան իր առկայությունը հայտնի է դարձնում:

Կինս ինձանից ավելի հանգիստ էր: Նա փութանակի ձևի իջավ, որպեսզի խոնարհվի եւ կրկին ու կրկին սուտրաներ էր օրհնեցում: Ես փութանակի հազնվեցի: Լույսն անհետացավ: Ես միացրի լույսն ու անթարթ նայեցի որմնախորշին: Կինս ելավ, որպեսզի ձեռքերը լվա, այնուհետեւ վառեց մոմերը, այնուհետեւ Գանդենյան խոտերը: խնկաբույրը լցրեց տունը, իսկ դրսում լսվում էր շան հաչոցը: Ես հանդարտեցի, վստահ, որ Դորջե Փիուրբան իսկական էր: Ես Դորջե Փիուրբան հանեցի որմնախորշից, դեռեւս սեւ լամպի լույսի ներքո: Ես դրեցի այն ճակատիս, որպեսզի աղոթեմ, նախքան այն կրկին որմնախորշի մեջ դնելը: Մենք կնոջս հետ անքուն նստել էինք մահճակալի վրա:

-Մենք պիտի վերադարձնենք սա քիսմետի մարդուն, բայց ես քսան հազար յուան եմ ծախսել այն գնելու համար: Անվտանգությունը՝ ամենակարեւորն է: Փողը գալիս ու գնում է: Սիրտս դեռ վախից թպրտում էր, ես վախենում էի, որ մենք կարող էինք դեմ առնել ինչ-որ դժբախտ պատահարների, առանց բնական պատճառների:

-Ի՞նչ ես մտածում այն Սիադի տաճար վերադարձնելու մասին, - ասաց կինս: - Մենք պիտի երջանիկ օր ընտրենք:

Հաջորդ օրերին լույսը չէր հայտնվում: Այդուհանդերձ, այն գիշեր, երբ մենք օրը երջանիկ էինք համարում, Դորջե Փիուրբան կրկին շո-

դաց: Լույսի այդ շերտի գույնը մշտապես տատանվում էր եւ Բուդդայի արձանիկը մուգ կապույտ դարձավ, եւ համապատասխանաբար ոսկե-դեղին ու ճերմակ:

Մինչեւ լիքը գավաթ գինին խմելը, ծերունու շառագունած դեմքը նայեց պանդոկատիրուհու կողմը, որպեսզի համոզվեր, որ նա նույնպես ուշադիր լսում էր:

-Եկավ վարձու մեքենան, որպեսզի մինչեւ լուսաբաց մեզ տանի: Նոր շորեր հագած, մենք խունկ վառեցինք, որպեսզի աղոթենք աստվածներին: Փողոցային լապտերիների դեղին լույսերի ներքո, մենք ընկանք V8-ի տակ: Մեքենան առաջ մղվեց: Ես ափսոսացի, որ այդքան երիտասարդ վարորդ եմ ընտրել: Թաքնված հոգսերն արթնացան իմ սրտում: Երեք ժամ անց օրը գորշացավ: Արեւը լեռան կատարից շողում էր ոսկեգույն լույսով: Այդ ժամանակ մեքենան ընթանում էր մայթից հեռու ծուռումուռ գրունտե ճանապարհով, իր ետեւից փոշի հանելով, ավելի ուշ մեքենան կանգ առավ հոսող գետի մոտ: Վարորդը նայեց ժամացույցին եւ հպարտորեն ասաց՝ «Այսօր շատ հիասքանչ է: Կարծես մենք թռչում ենք»:

Կինս շատ տարօրինակ էր իրեն պահում, քանի որ նա անձկության նախանշաններ չուներ: Այնուհետեւ վարորդն ավելացրեց. «Մենք շուտով կհասնենք Սիադի տաճար, այս արագահոս գետը հատելուց հետո»:

Ես տեսա, որ այնտեղ ցուլ կար, որ մոտենում էր մեզ: Երբ նավակն ափ ասավ, ծեր նավավարը շատ հոգնել էր: Ես ու կինս անհանգստանում էինք, որ նավակը կարող է շուռ գալ արագահոս գետի վրա: Վարորդն ասաց.

-Ես մի քանի անգամ եղել եմ Սիադի տաճարում: Ես ձեզ էստեղ կսպասեմ:

Ես եւ կինս բարձրացանք նավի վրա: Նավը ափը լքելիս տատանվում էր: Նավակի հատակը թացացել էր, թրջելով իմ կաշվե կոշիկները: Ես անհանգստանում էի, որ մինչեւ մենք հանդիպակաց ափ հասնենք, նավակը կխորտակվի: Հանկարծ գետը հանդարտեց ու անդորրավետ դարձավ, արտացոլելով ճերմակ ամպերը, կապույտ երկինքն ու լեռների ուրվագծերը, ասես հայելի լիներ: Յլանավը մեխանիկորեն տեղափոխվեց հանդիպակաց ափ, ինչպես թռչող նետ: Տուրը ցռուկի վրա ցր-

## Ցերինգ Նորբու

վել էր երկու կողմերի վրա: Նավավարը ցնցված էր, կասկածանքով նայելով ինձ: Որոշ ժամանակ անց նա ինձ հարցրեց. «Ինչպե՞ս կարող է պատահել: Ես մտածում էի, թե դա կարող էր լինել իմ պայուսակի միջի Դորջե Փհուրբայից: Ես հանկարծ ինձ հարմարավետ զգացի: Կինս վախով նայեց ինձ, «Ինչպե՞ս կարող էր նավն առաջ շարժվել այսպիսի ուղիղ գծով»: Ես ասացի, «Դիարմապալան Սիադի տաճարից պահպանում է մեզ»: Օհ,- պատասխանեց նավավարը, ասես հանկարծ ինչ-որ բան հասկացավ: Երբ մենք հանդիպակաց ափ հասանք եւ ես վճարեցի նավավարին իր ծառայությանն համար, նա ասաց.

-Դուք ձեզ հետ ինչ-որ առանձնահատուկ բան եք տանում:

-Ոչ, փոքր-ինչ ուտելիք է պայուսակիս մեջ,- փութանակի պատասխանեցի ես:

Նավավարը խոժոռվելով սկզբում նայեց մեզ, հետո գետին:

-Ի՞նչ արժե:

-Սա ձրի է: Չէ: Ես շատ երջանիկ եմ, որ առաջին անգամ հանդիպել եմ էսպիսի առեղծվածային բանի:

Նավավարը հանեց իր բռնոթին, մի փոքր լցրեց մատների վրա եւ հոգոց հանեց: Բարձրացնելով իր թուխ եւ կնճռոտ դեմքը, նա նայեց մեզ ու ասաց.

-Եթե դուք վերադառնալիս վարձեք իմ նավակը՝ այն ձրի կլինի:

Ինձ մեղավոր զգալով այն բանի համար, որ նրանից թաքցրել եմ, ես նրան ասացի.

- Կինս եւ ես գալիս ենք այստեղ, որպեսզի վերադարձնենք Սիադի տաճարի գանձը:

Նավավարն արցունք թափեց, ձեռքերը բարձրացնելով ու ճակատին դնելով.

-Իմաստուն թրիրատնա, կորսված գանձը տուն է վերադառնում:

Ես արձակեցի կապոցը եւ փորձում էի նրան ցույց տալ Դորջե Փհուրբան:

Հանկարծ պանդոկի դռան վարագույրը բացվեց եւ երկու տղամարդ մտան: Նրանք երբ տեսան ձերուներս, ողջունեցին.

-Դու էսօր շատ շուտ ես էստեղ եկել:

-Ես համարյա հարբած եմ: Ինչո՞ւ դուք էսքան ուշ եկաք,- ասաց ձերունին:

-Մենք խառնված էինք հանդիպմամբ դպրոցում,- պատասխանեց երկարամազ ուսուցիչը:

-Ես նրանց պատմում էի Դորջե Փհուրբայի պատմությունը,- ասաց ծերունին:

Ուսուցիչները նստեցին եւ պանդոկատիրուհին նրանց սեղանին մի ոյուժին բողբոջներ դրեց:

-Դա շատ հետաքրքիր է,- խոսակցությանը միացավ գիրուկ ուսուցիչը:

-Բայց նրանք ինձ չեն հավատում,- տխուր ասաց ծերունին:

Ուզում ես հավատա, ուզում ես՝ ոչ: Դա պարզ է,- խոսակցությանը միացավ երկարամազ ուսուցիչը:

Բարձրացնում գավաթներն ու զարեջուր ենք խմում: Ջգացողությունը, որ ես հարբել եմ, պարզապես ֆանտաստիկ է: Դուք կմոռանանք հոգևությունը ծանր աշխատանքից, ինչպես նաեւ այն փաստը, որ գրպանում փող չունեք:

-Ապասիր, նվիրատու: Ռինպոչեն երկար սպասել է քեզ:

Հետեւելով ձայնին, ես ետ եմ նայում: Ծուռումուռ քայլելով այստեղ եկավ ծիրանի հագած մի վանական:

-Փութացեք տաճար,- կոչ արեց նավավարը:

Ես կրկին արձակեցի կապոցն ու գնացի վանականի մոտ: Նավավարն ու վանականը ողջունեցին միմյանց: Տաճար տանող ճանապարհին մենք սկսեցինք զրուցել: Ես իմացա, որ նավավարն իրականում Սիադի տաճարի վանական էր, ով ստիպված էր վերականգնել իր աշխարհիկ կյանքը կուլտուրական հեղափոխության ժամանակ, եւ այն ժամանակից ի վեր ֆերմայում ծառայելիս նավավար էր աշխատում:

-Կարծում էի, ես երբեք իմ կյանքում չեմ տեսնի Դորջե Փհուրբայ:

Քարերի տակ նավավարի ոտքերը հատում էին նրա խոսքերը: Արցունքները հոսում էին նրա աչքերից, տամկացնելով նրա դեմքը: Երբ մենք քայլում էինք կատարով, ճերմակ պատերով ու ոսկեգույն կտուրներով տաճարը ուղիղ կեցած էր մեր դիմաց: Խնկածուխը տատանվում էր վեր եւ թմբուկների, ձնձղանների եւ փողերի ձայնը թեւածեց հովտի վրայով: Ավազով եւ քարե սալիկներով պատված արահետով քայլելով, մենք անցանք վայրի վարդերի եւ փշոտ մացառուտի միջով եւ հասանք Սիադի տաճարի քարե աստիճաններին: Բարձրանալով աստիճաններ-

## Ցերինգ Նորբու

րով մենք եկանք տաճարի գլխավոր սրահը: Ռինպոչեն նստած էր, մյուս վանականների նման, խաչած ոտքերով՝ լոտոսի դիրքով: Երգեցողությունը հապաղեց: Ես կարող էի հասկանալ, որ վանականները երգում էին առ Բարեբեր Երկինքը: Վանական-ուղեկցորդը խնդրեց մեզ նստել բարձիկներով գորգիկների վրա և մեզ յուզով թունդ թեյ մատուցեց: Երգեցողությունը թեւածեց սրահում դիարմա թմբուկների և վաջիրի զանգերի հնչյունների ուղեկցությամբ: Որոշ ժամանակ անց վանական-ուղեկցորդը կանչեց ինձ ու ասաց ինձ, որ գանձն ընծայեմ Ռինպոչեն: Ես հանեցի գործվածք-ծածկոցը, որպեսզի հանեմ Դորջե Փիուրբան և գնացի վանականի հետ դեպի Ռինպոչեն, նրան այն ընծայելու:

-Սիադի տաճարի գանձը վերջապես վերադարձավ: Դա ժողովրդի օրհնանք է,- ասաց Ռինպոչեն:

Բոլոր վանականները նայում էին Դորջե Փիուրբային և որոշ տարեց վանականներ նույնիսկ ուրախությունից լալիս էին: Ռինպոչեն ինձ ուզում էր վերազնման գումարը վճարել, բայց ես հրաժարվեցի: Հետո նա հանեց իր կնիքը և դրեց իմ շապկի վրա: Այն կախարդված էր, և հետեւաբար՝ անխոցելի և կարող է չար հոգիներից խուսափել: Ծերունի Ջանգչուբը հանեց վերնաշապկից իր վաջիրիական կնիքը, ցուցադրելով այն մեզ: Ես զգուշորեն ասացի.

-Հին ասացվածք կա անխոցելի Դորջա փուրբայի մասին, բայց երբեք լուրեր չեն շրջել վաջիրիական կնիքի այդպիսի գործառնության մասին:

-Դու համառ ես, ինչպես մոլորված ջորի,- պարսավում է ծերունին: Դուք կարող եք հարցնել այս ուսուցիչներին: Նրանք քաջատեղյակ են:

Սանգմոյի արտահայտությանը: Աչքերը հեռացնում են տարիների ընթացքում կուտակված հեղհեղուկությունը: Դա իմ սիրտը քնքշացնում է: Ինչո՞ւ է գինին քաղցրանում իմ փորում: Ինչո՞ւ ես նախկինում այդ քաղցրությունը չէի զգում: Դա իմ տրամադրության փոփոխությունի՞ց է: Ես վստահ չեմ: Ես կում առ կում խմում եմ: Քաղցր համը դանդաղ տարածվում է գլխովս մեկ, եւ ես լիովին անձնատուր եմ լինում դրան:

Այս գիշեր ես աներագ խորը քնում եմ: Քո ականջները ծակված են յուղապատ պողպատե ասեղով: Կարմիր գործվածքից ժապավենով կապված, դու ուշադրության կենտրոնում ես:

Սանգմո, որպեսզի թույլատրեմ քեզ վերամարմնավորվել, ես վերցնում եմ ազատված ոչխարին, որպեսզի ամեն օր թերթեմ Սուրբ Գրերը: Ես ոչխարին այնպես եմ վերաբերվում, կարծես այն դու ես: Սանգմո, դու այլեւս չես հայտնվում իմ երազներում: Ես չգիտեմ քո իրավիճակը: Խնդրում եմ, հայտնվիր իմ երազում, եթե հնարավոր է:

Այժմ մարդիկ կարող են ինձ տեսնել իմ սպիտակ ոչխարի հետ, որ ամեն օր թերթում է Սուրբ Գրերը Լինգհորի ճանապարհին: Կարմիր գործվածքն ականջների վրա եւ կարմիր գույնը, բծերը քո ողնաշարի վրա ցույց են տալիս, որ դու, մինչեւ մեռնելդ, անվտանգության մեջ կապրես: Սոտ մի ամիս ես քեզ տանում էի ճանապարհներով, որպեսզի շրջենք Լինգհորում, եւ դու ամեն ինչի հետ ծանոթացար հետիոտների ծիսական ճանապարհին: Այսօր ես քեզ չեմ կապի, եւ մենք կարող ենք զնալ, որպեսզի Սուրբ Գրերն ընթերցենք: Ինձ մոտ իմ գործած պայուսակումս ես: Ես իմ տերողորմյան եմ տարուբերում, մերթ ընդ մերթ կանգ եմ առնում, որպեսզի հասկանամ, թե արդյոք դուք հետեւում եք ինձ: Երբ հարկ է, որ մենք փողոցն անցնենք, ես քեզ տանում եմ վախենալով, որ քեզ կխփեն: Երբ ես ծանոթների եմ հանդիպում եւ շփվում եմ նրանց հետ, դու միշտ կանգնած ես իմ կողքին: Նրանք ասում են. «Նայդրագ, դու իրոք բարի գործ ես արել: Արժանվույնը արժանիին:»

«Այս ոչխարը համարյա մարդ է»: «Նայդրագ, դու կարող ես նրա վզից զանգուլակ կախել, որպեսզի ետ չնայես»: «Հանդիպումը քեզ հետ այս ոչխարի մեծագույն օրհնանքն էր»: Ես շատ ուրախ էի, երբ լսում էի այդ խոսքերը: Ես կարծում եմ, որ քո հայտնությունը՝ իմ ճակատագիրն է: Բայց եթե երազումս Սագմոն չհայտնվեր, ես պատահա-

բար քեզ չէի հանդիպի: Ի՛նչ զուգադիպություն: Ես քայլում էի դեպի Ցիանջունգ թեյարան եւ դու խցկվեցիր վարագույրի արանքով եւ պառկեցիր սեղանի տակ: «Դրսում մնա: Դու չես կարող այստեղ մնալ»: Ես գոռում եմ: Բայց դու թաքնվում ես սեղանի տակ, լիովին անտեսելով ինձ: Մյուս թեյ խմողները նայում են ինձ, եւ հասկանալով ժպտում են: «Թող նա պառկի այնտեղ: Դա մեծ նշանակություն չունի», - ասում է ինձ մատուցողուհին: Ես երկար չէի փորձում քեզ: Ես վերցրի գործած պայուսակից իմ թասն ու դրեցի այն սեղանի վրա, իսկ այնուհետեւ կտրտեցի տապակած խմորը կտորների, որպեսզի կերակրեմ քեզ: Դու լեզվով լիզեցիր այն ու ծամեցիր: Ես հագեցա շատ քաղցր թեյ խմելուց, բայց դու պարզապես լուռ պառկած ես գլուխդ շրջելով դեպի ներս ու դուրս անող մարդիկ: «Հյուսիսային Ռիթսում գոնպոյի գլխավոր սրահը վերանորոգման մեջ է: Ես լսել էի, որ նրանց չի բավում աշխատուժը: Եթե ինչ-որ մեկը կարող է օգնության ձեռք մեկնել, առավելություններն անսահման են», - ասում է միջին տարիքի մի մարդ կողքի նստածին: Նրա խոսքերը զարմացնում են ինձ: Ես կարծում եմ, որ դա հնչում է որպես հիանալի հնարավորություն: Ես ուզում եմ մասնակցություն ունենալ: Ես լցնում եմ մնացած թեյն իմ թասն ու դնում եմ, սրբիչով այն չորացնելուց հետո, պայուսակիս մեջ: Դու խելոք շարժվում ես, երբ ես արդեն կանգնած եմ: Ելնում ենք թեյարանից եւ վերադառնում ենք աղմկոտ փողոց: Այժմ դու շրջապատի վրա ուշք չես դարձնում եւ սեւեռուն հետեւում ես ինձ: Մենք անցնում ենք երկար նրբանցքով եւ վերադառնում ենք քառանկյունի բակ: Քեզ կապում եմ պատուհանի տակ, ջուտջութ պայուսակից փոքր-ինչ խոտ եմ վերցնում եւ, մինչեւ ջրով թասը լցնելը, դնում եմ այն քո առաջ: Աչքդ չկտրելով երկու ամաններից, դու, ոնց որ թե քաղցած չես: Ես քո աչքերից տեսնում եմ, որ դու հոգնել ես: Դու, փոքր-ինչ ականջներդ շարժելով, պառկած ես հատակին: Ես գիտեմ, որ դու պատրաստ ես հանգստանալու: Ես սենյակ բոբիկ եմ մտնում: Քամված միջատակերը դնում եմ լուսամուտագոգին, որպեսզի արեւի տակ չորանան: Ես խաչած ոտքերով նստած եմ մահճակալիս վրա: Ես խոհաշում եմ, թե որքան գումար պիտի գոհաբերեմ Հյուսիսային Ռիզում Գոնպոյի գլխավոր սրահի կառուցման վրա: Ինչպես ես կարող եմ ընդունվել նրանց կողմից շինհրապարակում: Բոլոր տիբեթցիները գիտեն, որ պետք է քավել սպանության ոճիրը, Միլարեփան

## Ցերինգ Նորբու

պաշտոնապես ընդունեց Սարփային որպես իր վարպետ եւ մաքրում էր իր մեղքերը ծանր աշխատանքով, անկախ իր վերքերից եւ մեջքի վրայի թարախակալումներից, ինչպես նաեւ ձեռքերի եւ ոտքերի վնասվածքներից: Որպեսզի Սանգմոյին լավ վերամարմնավորում տայի, ես 500 յուան գոհեցի եւ որոշեցի մի ամիս աշխատել օգնելու համար Սանգմոյին նվազեցնել իր մեղքերը: Ողջ բակը խավարով էր պարուրված, քանի դեռ ես մտորում էի: Քնելու ժամանակն է, քանի որ ես պիտի հաջորդ օրը վաղ առավոտյան զարթնեմ: Ես զարթնեցի դռան թակոցից: Ես փութանակի ելա ու գոչեցի դռան կողմը, «Այդ ո՞վ է»: Ոչ մեկն ինձ չպատասխանեց: Դրսում լուռ էր: Ես պատկերացում իսկ չունեի, թե ով էր դուռն թակում վաղ առավոտյան: Գուցե թե հարեաններիցս մեկը հիվանդացել է. «Ողջույն: Ո՞վ է»: Ես վառում եմ լույսը: Դռան թակոցը նորից է լսվում, եւ այն ավելի անհանգիստ է հնչում: Ես հագա անդրավարտիքս, որպեսզի շտապ դուռը բացեմ: Ես բարձացնում եմ դռան վրայի վարագույրը եւ լամպի լույսի ներքո ոչ մեկը չկա: Ես փոքր-ինչ հակում եմ գլուխս եւ տեսնում եմ, թե ինչպես ես դու հենվում իմ սեւ դռանը, գլուխդ վեր բերած մայելով: Հանկարծ ես ինձ անկաշկանդ եմ զգում: Այդ դու էիր դուռը թակում, շտապեցնելով ինձ թերթել Սուրբ Գրոց էջերը: Ես քեզ պախարակում եմ, բայց իրականում շատ ուրախ եմ: Ես փոքր-ինչ ջուր եմ ավելացնում եւ վառում եմ խունկը որպես երկրպագում Բուդդային: Քեզ փոքր-ինչ խոտ կերակրելուց հետո, մենք միասին գնում են Սուրբ Գրոց էջերը թերթելու: Յեմենտե մայթը փողոցային լապտերում արտացոլում է քո սմբակների տկտկոցը եւ դա այնքան մեղեդային է հնչում իմ երգեցողության ուղեկցությամբ: Երբ մենք հասնում ենք Կունդելինգ վանքը, սկսում է անձրեւ մաղել: Մենք սկսում ենք արագ շարժվել, որպեսզի անձրեւից պատսպարում գտնենք: Անձրեւն ուժգնանում է եւ մայթերի ու ճանապարհների վրա ջրափոսեր են կուտակվում: Կոշիկներս թաց են, եւ քո բուրդն էլ լրիվ թրջված է: Ինչ որ մեկն առջեւում գոռում է՝ «Արի Էստեդ, որպեսզի պատսպարվես»: Վազում ենք մինչեւ ռեստորանի քիվերի մոտ: Մի յոթ-ութ մարդ կա, եւ մեծ մասն եկել են այստեղ Սուրբ գրերը թերթելու: Ես կարծում եմ, որ դու պաղել ես, որովհետեւ ներս ես խցկվում: Մի ջահել ուզում է քեզ ուժեղ խփել: Դու պատասխան չունես, բայց մի տարեց կին, որ կողքին է կանգնած, կշտամբում է նրան, ասելով. «Մի՞թե դու չես տեսնում, որ դա

ազատված ոչխար է: Դու չպիտի հրեիր նրան: Դու ավելի շատ կենդանի ես, քան մարդ»: Երիտասարդը պատրաստվում էր առարկել, սակայն մյուսներն էլ սկսում են նրան պախարակել: Երիտասարդը վազում է սաստիկ անձրեւի տակ, փութացնելով իր ճամփորդությունը: «Այդպիսի ջահելներն ինչպիսին ես է, ուրիշների չեն խղճում: Նրանք զազանից էլ վատ են»: «Հավանաբար ես գիշերով խմել է եւ նոր հիմա տուն է գնում: Նրա շնչառությունից խմիչքի հոտ է փչում»: «Մեր հետագա սերունդները թուլությունների են վերածվում»: Մենք մնում ենք կտուրի տակ: Լսելով նրանց խոսակցությունները, ես հուսով եմ, որ անձրեւը շուտով կարող է կտրվել: Կես ժամ անց անձրեւը սկսում է թուլանալ, եւ մենք կրկին սկսում ենք թերթել Սուրբ Գրերը: Մենք ուղեորվում ենք Ռիզոդում Գոնպո ժամատան հարավային մասը, թաց, ինչպես ջրասույզ առնետներ, եւ այցելում ենք պատասխանատու վանականին: Ես նրան փող եմ զոհաբերում, հուսալով, որ ես ինձ թույլ կտա այստեղ աշխատել որպես չորակավորված բանվոր: Ես ուրախությամբ համաձայնում է իմ առաջարկին. «Մենք ձեզ օրը երկու անգամ ուտելիք եւ թեյ կմատակարարենք»: Ես այնքան ուրախ եմ այդ լսելու համար: Ողջ օրը ես հող ու կեղտ եմ մաքրում, իսկ դու պառկած ես, սանդուղքին կապված Ռիզոմ Գոնպո ժամատան մոտ: Երբ մենք տուն վերադառնանք, ես քեզ համար գործած պայուսակ կսարքեմ, իսկ հաջորդ օրը դու հողն ու ավազը անդադար ետուռառջ կտանես: Դուք ջանում եք սրահ կառուցել: Վանականներն ասում են. «Այս ոչխարը վերարտադրում է այծերի տեսարանը, որոնք օգնել էին կառուցել ջոքհանգ վանքը»: Մենք կամավոր այնտեղ քսաներեք օր աշխատում էինք: Սակայն մենք չենք կարող օգնել հետագա աշխատանքներին: Դա արդեն արվեստագետների աշխատանք է: Նրանք պատերի վրա որմնանկարներ կնկարեն: Աշխատանքներն ավարտելուց չորս օր հետո, վանականը, որ պատասխանատու էր Հարավային գոլժո ժամատան համար, ուղարկում է մի վանականի, որպեսզի ես ձեռնասայլակի օգնությամբ մեզ վեց պայուսակ խոտ ու սարիրա հասցնի: Ես հետետում եմ նրա ցուցումներին, որպեսզի խոտահաբերը թաղեմ ջրի մեջ: Եւ ամեն մի երջանիկ օր մենք խմում էինք: Երբեմն ես նաեւ օգտագործում էի սրբազան ջուրը, որպեսզի մաքրեի քո աչքերը: Ամեն առավոտ, դուռն թակելով, արթնացնում ես ինձ: Այդժամ դու ելնում ես առաջինը

## Ցերինգ Նորբու

Եւ ես հետեւում եմ քեզ: Ես երբ հանդիպում եմ ծանոթների, դու պարզապէս շարունակում ես առաջ գնալ, մինչեւ որ հարմար տեղ գտնես, որպէսզի սպասես ինձ: Թէյարանում դու շատ հաճախ մնում ես սեղանի տակ, որտեղ ես նստում եմ: Քեզ տեսնելիս թեյի մյուս սիրահարները ուրիշ սեղան են գտնում, որպէսզի մի հարմար տեղ գտնեն: Այնտեղ բոլոր մարդիկ քեզ ճանաչում են: Վաղ առավոտյան ես երազում էի Սանգմոյի մասին: Դու գնում ես մշուշով ծածկված լեռնային արահետով, խաղաղ եւ պաղարյուն: Ավելի ուշ դու հեղհեղուկ ես դառնում, այլ տեսք ստանալով: Ես լայնաբաց ժպտում եմ, ատամներս մերկանում են: Այդպիսի երջանկությունն արթնացնում է ինձ: Ես նստած եմ մահճակալի վրա, որպէսզի վերլուծեմ երազս: Ես կարծում եմ, որ դու, թերեւի թե, խուսափել ես դժոխքի տանջանքներից: Քո դեմքի հանգիստ արտահայտությունը հանգստացնում է ինձ: Եւ դու աղոտանում ես, դա նշանակում է, որ արդյունքում դու վերամարմնավորվում ես: Ես այնքան հուզված եմ, այդ մտածելիս, եւ այդ պատճառով չէի կարողանա քնել, եթե նույնիսկ փորձեի: Երեկոյի երկրորդ կեսին փորս ցավում է: Ես կարծում եմ, որ այսօր չեմ կարող դիմել Սուրբ Գրերին, եթե ես կարգին վիճակում չեմ: Քո հաշվով ո՞նց է: Բայց այդժամ, ես մտածում եմ, դա կարող է տեսել ընդամենը մեկ ժամ: Ես կարգին կլինեմ: Այդ պատճառով փորիս համար տիբեթական դեղ եմ ընդունում եւ անկողին եմ մտնում: Երբ դու թակում ես դուռը, փորս դեռ ցավում է: Դա ինձ գամում է անկողնուն: Դու ավելի ուժգին ես դուռը թակում: Ես պիտի գամ, որպէսզի դուռը բացեմ, չնայած իմ անտանելի ցավին, եւ արձակեմ քեզ: «Այսօր ես հիվանդ եմ: Դու կարող ես ինքդ դուրս գալ այսօր, բայց դու պիտի վաղ վերադառնաս», - ասում եմ ես: Դու նայում ես ինձ, սպասելով, որ ես քեզ հետ կգամ: Ես պիտի քեզ մինչեւ դուռը բերեմ եւ քեզ առաջ հրեմ: Նույնիսկ այդ ամենի հետ մեկտեղ դու հափշտակված նայում ես ինձ: Ես ձեռքս տարուբերում եմ, ցույց տալով քեզ, որ առաջ գնաս: Դու հասկանում ես իմ նշանը եւ գնում ես նրբանցքի վերջը, թողնելով կճղակներիդ հետքերը: Մահճակալի վրա պառկած, ես սպասում եմ, մինչեւ որ ցավն անցնի: Արեւի լույսը շողում է լուսամուտագոգի վրա: Ես պառկած եմ մահճակալի վրա եւ անհանգստանում եմ քեզ համար: Սիրտս պայթում է անհանգստությունից, այնպէս որ ես նույնիսկ մոռանում եմ իմ ցավը: Հագնելով շորերս ես դուրս եմ գալիս քեզ փնտ-

րելու: Ցավից քրտնքի կաթիլներն հոսում են ճակատիցս: Ես չեմ կարողանում ոտքերս շարժել, այդ պատճառով ես պիտի նստեմ մեջքով դեպի դուռը: Ցավը սկսում է մեղմանալ: Երբ ես նայում եմ նրբանցքի վերջին, դու հայտնվում ես, ամբողջովին ճերմակի մեջ, իմ աչքերի առաջ: Դու նազանի գալիս եմ նրբանցքի վերջից, մերթ ընդ մերթ կանգ առնելով, որպեսզի շուրջբոլորդ նայես: Ես ուրախությունից լալիս եմ, երբ տեսնում եմ, որ դու միայնակ գնացել ես դիմելու Սուրբ Գրերին: Ես մեծ ճիգով կանգնում եմ, սպասելով, թե դու երբ կմոտենաս: Այդժամ ես քեզ կապում եմ պատուհանի տակ եւ քեզ խոտ եմ կերակրում: Հանկարծահաս ցավը բռնում է ինձ, ստիպելով ինձ ծնկել եւ ձեռքով բռնել ցավոտ տեղը: «ՍրգՆայդրանգ, դուք լա՞վ եք»: «Դուք հիվանդանոց գնալու կարիք ունե՞ք»: «Դուք դժգունա՞ծ եք: Եկե՞ք ձեզ հիվանդանոց ուղարկենք»... Հարեանները հավաքվում են միասին եւ պնդում են այն, որ ինձ հիվանդանոց ուղարկեն: Նրանց առարկելու ուժ չունենալով, ես գնում եմ հիվանդանոց՝ հետազոտության: Բժիշկն ինձ խորհուրդ է տալիս մնալ հիվանդանոցում, որովհետեւ ես լուրջ հիվանդ եմ, սակայն ես հրաժարվում եմ ընդունել նրա խորհուրդները: Դրա փոխարեն ես ցավազրկիչ եմ ուզում: Հարեաններս նույնպես հորդորում են ինձ մնալ հիվանդանոցում: Նրանք ասում են. «Մենք հերթով ձեզ ուտելիք լուղարկենք»: Ես այնքան երախտապարտ եմ նրանց, բայց ես պարզապես չեմ կարող մնալ հիվանդանոցում: Բժիշկը խնդրում է իմ որոշ հարեանների լքել սենյակը, եւ երբ նրանք վերադառնում են, բոլորը մոայլամա՞ծ են դառնում: Նրանց դեմքերից ես գիտակցում եմ վիճակիս լրջությունը: Այստեղ ապաքինվելու հույս չկա: «Բժիշկ, ես ինքս ինձնով եմ: Խնդրում եմ, պատմեք ինձ իմ վիճակի մասին»: Խնդրում եմ բժշկին, եւ բժիշկն ասում է. «Դուք պարզապես այնքան եք հոգնել, որ ձեզ պետք է հիվանդանոցում մնալ, քանի դեռ դուք կազդուրվում եք: «Խնդրում եմ ինձ ճիշտ ասե՞ք: Ես կարող եմ տեսնել հարեաններիս աչքերից, որ ես լուրջ հիվանդ եմ»: «Մի անհանգստացե՞ք: Այնքան էլ վատ չէ: Ձեզ պարզապես պետք է հիվանդանոցում մնալ»: Հարեաններս ինձ պատշաճ խոսքեր ասացին: Բայց ես պնդում եմ. «Բժիշկ, կարելի է նայել բժշկական թերթիկը: Ես հավատում եմ, որ կարող եմ հանգստություն պահպանել, եթե նույնիսկ վատթարագույնն է»: Բժիշկը նայում է հարեաններիս, որոնք հետո կախում են գլուխները, բառ իսկ չասելով:

## Ցերինգ Նորբու

«Ես ոչ տղա ունեմ, ոչ էլ աղջիկ, այդ պատճառով պիտի ինքնուրույն որոշում կայացնեմ: Խնդրում եմ, թույլ տվեք ինձ նայել»: Ի վերջո, բժիշկը դժկամությամբ ինձ է տալիս արձանագրությունը: Ստամոքսի քաղցկեղ: Այդ երկու բառերը թաղվեցին աչքերիս մեջ, եւ ես ցրտից դողացի: Ես այնքան էլ շատ ժամանակ չունեմ: Եթե ես մահանամ, իմ ազատված ոչխարը կվերապրի: Իմ տրամադրությունն այդպիսի հոգսերից ավելի ու ավելի բարդանում է: Դա սասանեց իմ վճռականությունը, ես գտնվում եմ մահվան հանդիման, ես չեմ կարող ազատ լինել բոլոր սահմանափակումներից ու ներդրումներից: Ես նայում բժշկին եւ հարցնում եմ. «Ինձ ինքան է մնացել ապրելու»: Բժիշկն ասում է. «Ես չեմ կարող ասել, բայց եթե ավելի լավ հոգ տանեք բուժման մասին, դուք կարող եք ավելի երկար ապրել»: Ես չեմ կարող հիվանդանոցում մնալ: Հենց որ ես այդ անեմ, հեղուկ դեղը կներարկեն մարմնիս մեջ, ամեն օր եւ ես ստիպված կլինեմ իմ ողջ ժամանակը ծախսել դրա վրա այստեղ, ընդունակ չլինելով Սուրբ Գրեորով դիմելու Բուրդային եւ երկրպագելու: Եթե այդպես է, իմ ոգին կնետի մինչեւ իմ մահանալը:

«Բժիշկ, ինձ պարզապես այսօրվա համար ցավազրկիչ սրսկեք: Ես պետք է տուն գնամ, որպեսզի որոշ անհետաձգելի հարցեր լուծեմ, եւ ես վաղը կվերադառնամ»: Փախչել, ես ստում եմ բժշկին: Հնարավոր է, բժիշկը տեսավ իմ խորամանկությունը: Նա ասաց. «Կյանքը կատակ բան չի»: Այնուհետեւ ես շատ կեղծ խոստումներ եմ տալիս, եւ նրանք ի վերջո համաձայնում են իմ որոշմանը: Ոչխարը փութանակի ելնում ու վազում է ինձ մոտ, երբ տեսնում է, որ ես իմ հարեանների օգնությամբ վերադառնում եմ: Ես արտասովեցի: Սանգոյին նույնպես մեր ձեռքը հանձնեցին: Նա իր վերջին շունչը տանը փչեց: Դա այնքան անհարմար էր, որ ես այդպես դառն լալիս էի: Հարեանները կարող են մտածել, թե ես մահացու վախենում եմ մեռնելուց: Նրանք ըջում են քեզ եւ տանում են սենյակ: Ես տեսնում եմ քո տամուկ աչքերը եւ հակած գլուխը: Հարեանները հավաքվում են իմ շուրջը, համոզելու ինձ հաջորդ օրը վերադառնալ հիվանդանոց: Նրանցից ոմանք նույնիսկ վերադառնում են տուն եւ ինձ ձուլ, կարագ եւ տավարի միս են բերում: Նրանք նույնիսկ խոստանում են ինձ, որ հոգ կտանեն քո մասին, իմ ազատված ոչխար: Նրանց հավատարմությունը թեթեւացնում է սիրտս: Այդժամ հարեաններս գնում են տուն՝ վախենալով, որ կարող են ուժասպառել ինձ: Ես



իջեցնում եմ վարագույրն ու վառում եմ լույսը: Փորս փոքր-ինչ ցավում է: Քեզ հասցնելով մինչեւ տուն, ես նստում եմ փայտե մահճակալի վրա, իսկ դու պառկած ես ոտքերիս մոտ, բարձրացնում գլուխդ եւ նայում ես ինձ: Ես քեզ խուտուտ եմ տալիս, եւ այդ պատճառով դու ուրախությամբ փակում ես աչքերդ: Ես չգիտեմ, թե ես երբ կմահանամ, բայց այս օրերին, քանի դեռ ողջ եմ, ես քեզ կտանեմ բարի գործերի, այնպես, որ դու կարող ես ազատվել քո չար կարմայից եւ լավ վերամարմնավորում ունենալ: Նույնիսկ եթե ես մահանամ, քեզ կորդեգրեն բակի մյուս մարդիկ, մինչեւ որ դու մահանաս ծերությունից: «Մենք շարունակում ենք մեր կանխորոշված հարաբերությունները կյանքի հետ, եւ դա կշարունակվի մեր հաջորդ կյանքում, որը մենք կապրենք», - ասացի ես հուզված: Դու, ոնց որ թե, հասկանում ես ինձ եւ արցունքն աչքերիդ առջեւիդ թաթերը դնում ես ոտքերիդ վրա: Ես բռնել եմ քո վիզը՝ վերացած արտասվելով: Քո խոնավ շնչառությունը հոսում է իմ ականջի մեջ, ինչպես Սանգունյի մոտ, եւ հանգստացնում է ինձ: Երբ ես աղոթում եմ, որպեսզի աշխարհն ազատվի քաղցից, հիվանդությունից եւ տառապանքներից, ես նաեւ կաղոթեի, որպեսզի դու ծնվեիր արծաթե գոպով բերանիդ մեջ եւ լավ ծնողներով, եւ որպեսզի ունակ լինեիր ընկալելու բուդդայական ուսմունքը հաջորդ կյանքում... Ես քեզ շատ բաներ ասացի, կարծես թե ես կարող եմ վաղը մահանալ: Դրսից ինչ-որ հաչոց է գալիս: Ես հասկանում եմ, որ արդեն ուշ է: Մենք պետք է գնանք քնելու: Ես քեզ ուղեկցում եմ բակ եւ խնդրում եմ շուտ քնել: Ես հիվանդանոց չեմ վերադառնա: Անհետաձգելիության զգացողությունը ստիպում է ինձ քեզ տանել Բուդդային երկրպագելու տաճարներում եւ գնել տասնյակ կիլոգրամ կենդանի ձուկ, որպեսզի ազատեմ նրանց գետափին: Այդ ձկները դուրս են լողում պոլիետիլենե փաթեթից եւ ընկնում են ջրիմուռների մեջ, անհետանալով իմ տեսադաշտից: Հարյուրավոր կյանքեր փրկվեցին մահվան դարպասներից: Մենք օգնեցինք նրանց հեռանալ վախից եւ հուսահատությունից, եւ նրանք նոր կյանք սկսեցին կապուտակ գետում: Մենք նայում ենք գետին, երկնքի կապույտ ստվերներին եւ ճերմակ ամպերին: Քամին մեղմ փչում է գետի վրա, նրան ծածանք պարզելելով: Երկնքի եւ ամպերի ստվերը սկսում է դողալ գուռիներն աղմկում են քամու տակ. գետամբարի երկու կողմերը ծածկված են կանաչ խոտով, եւ դրանց շուրջ թիթեռներ են պտտվում: Մենք թարմացել ենք եւ մեր սրտերը բա-

## Ցերինգ Նորբու

րեգթությամբ եւ սիրով լի են: Ես ոտքերս խաչած ստամ եմ գետի մոտ, բացում եմ բարձր լեռնային գարու գիւտ շիշն ու դանդաղ կոնծում եմ: Ես ձեռքերիս մեջ արագ տարուբերում եմ տերողորմյան, փոքր-ինչ հարվածներ հարուցելով, որոնք հանգստացնում են սիրտս: Դու անփութկոտ զննում ես, բայց երբեմն սրում ես ականջներդ, որպեսզի զգոն նայես կողքից անցնող մեքենաներին: Արեւմարից առաջ մենք դանդաղ տեմպով գալիս ենք տուն: Ամառվա վերջի ավարտն է: Ռինփոչեն Տեմոն Լինգում դասախոսություն է կարդում: Երբ ես վերցնեմ քեզ լսելու նրա խոսքը, բակը մարդկանցով լի է: Մենք ստամ ենք միմյանց կողքի՝ անկյունում: Մենք լսում ենք քարոզը, դու պառկած ես հողին լռության մեջ, ականջներդ բարձրացրած, եւ երբեմն նայում ես նրան գահավորակի վրա: Երբ դու հոգևություն ես զգում, դու գնում ես ամբոխի շուրջը պտտվելու եւ որոշ ժամանակ անց վերադառնում ես ինձ մոտ: Մարդիկ այնքան զարմացած են քո վարքից եւ նրանք կարեկցում են քեզ: Հաջորդ օրը շատ մարդիկ, որոնք գալիս են լսելու քարոզը, փոքր-ինչ խոտ ու բանջարեղեն են բերում քեզ համար: Նրանք շոյում եմ քո մեջքն ու ասում են. «Դու պիտի հանդիպես Բուդային, որպեսզի լավ արդյունք ստանաս»: Տաճարի վանականներն էլ շատ բարի են քո հանդեպ: Նրանք քեզ թույլատրում են մտնել տաճար, որպեսզի երկրպագես Բուդային եւ թերթում են Սուրբ Գրերը: Բացի այդ, նրանք քեզ կարմիր գործած ժապավեն են ուղարկում՝ ականջիցդ կախելու համար: Մենք ամեն օր այդպես զբաղված ենք: Դա կրկին աշնան կեսի մի օր է: Այդ ժամանակարնթացքում փորս դեռ ցավում է, բայց փոքր-ինչ ավելի լավ եմ զգում, քան նախկինում: Սանգմոն այլեւ չի հայտնվում իմ երազներում: Ես հուսով եմ, որ նա վերամարմնավորվել է: Սանգմոյի հետ կապված իմ մտահոգությունները քչանում են, իմ ազատված ոչխարները, օրեցօր բազմանում են: Ես անհագստանում եմ այն բանի համար, որ իմ մահից հետո ոչ մեկը քո մասին հոգ չի տանի, եւ դու դաժան վերաբերմունքի կարժանանաս կամ քեզ կքշեն բակից: Այդպիսի հոգսերը մնում են իմ մտքում, կոչելով ինձ եւս մի քանի տարի ապրել: Ամեն օր ես աղոթում եմ Թրիաթնային, որպեսզի ես ավելի երկար ապրեմ այս աշխարհում: Աշնան կեսին, ես ծրագրել էի քեզ տանել աղոթելու Լինգհորի ճանապարհի վրա: Երբ ես քեզ ասում եմ այդ, քո հայացքը ցանկությամբ է բռնկվում: Ես նոր գործած պայուսակ եմ սարքում քեզ համար եւ քաթա-

ևն գոզնոց ինձ համար: Ամեն ինչ արված է: Մինչև երկնքի լիովին շա-  
 ռագունելը, մենք կսկսենք մեր ճամփորդությունը: Ես ամեն քայլափոխի  
 զլուխ եմ տալիս, եւ այդպիսով, դանդաղ քայլում եմ: Դու քայլում ես կող-  
 քիս եւ մերթ ընդ մերթ հայացք ես նետում ինձ վրա: Մի պայուսակ ցամ-  
 փա կա եւ պայուսակի ծախս կողմում մի շիշ թեյ, ինչպես նաեւ մի փունջ  
 չինական կաղամբ եւ աջ կողմից մի շիշ ջուր: Երբ արելը ելնում է, մենք  
 հասնում են Դոուսենջի հարավային կողմը: Ավտոբուսները վերովա-  
 րում են մեկը մյուսի ետեւից, եւ շատ արտասահմանցի եւ տեղաբնիկ  
 տուրիստներ են ելնում: Երբ նրանք տեսնում են մեզ, նրանք հավաք-  
 վում են մեր շուրջը եւ լուսանկարում են: Ես սողում եւ ելնում եմ, իսկ այ-  
 նուհետեւ երկու քայլը մեկ կրկնում եմ նույն շարժումները: Ես ստանում  
 եմ դրանք եւ երախտապարտ եմ լինում: Ես մի օր այդ փողերը կընծա-  
 յեմ տաճարին: Մենք սողում ենք առաջ եւ հետզհետեւ նրանց ետեսում  
 ենք թողնում: Ես պարզապես հույսս դրել եմ այն բանի վրա, որ Թրի-  
 րաթնան կօրինի ինձ եւ կթույլատրի ինձ շարունակել ապրել, որպեսզի  
 ուղեկցեմ քեզ: Մենք ճամփեզրին ճաշում ենք: Ես ոտքերս խաչած նս-  
 տում եմ մայթին եւ փաթեթից հանում եմ չինական կաղամբը, դրանք  
 կոտրատելով, որպեսզի կերակրեմ քեզ: Դու այնքան քաղցած ես, որ մի  
 քանի անգամ կլլելով ողջ կաղամբն ուտում ես: Ես այդժամ ողջ կաղամ-  
 բը քեզ տալուց հետո տրորում եմ ցամփան: Հետաքրքրասիրությունից  
 պատահական անցորդները նայում են մեզ, բայց հետո շտապ հեռա-  
 նում են: Ես քեզ փոքր-ինչ ցամփա եմ կերակրում եւ պլաստիկ տուփի  
 մեջ ջուր եմ լցնում, որպեսզի ծարավդ հագեցնեմ: Ծառի ստվերի տակ  
 հանգստանում ենք, բայց սուրացող մեքենաներն ու աղվկոտ ամբոխը  
 փոքր-ինչ լարվածության մեջ են գցում մեզ: Այսպես, մենք սկսում ենք  
 աղոթել եւ կրկին սողալ: Երկրորդ օրը մենք եւս մի ճամփորդություն ենք  
 սկսում այն տեղից, որտեղից սկսել էինք երեկ: Բայց այսօր տասնյակ  
 մարդիկ կան, որոնք աղոթում եւ դանդաղ շարժվում են մեզ հետ: Դատե-  
 լով նրանց հագուստից, նրանք երեկ թե Տիբեթի հեռավոր արեւելքից  
 են: Մենք քարշ ենք գալիս առաջ եւ դիմավորում ենք լուսաբացը:  
 Հայտնվում է ոսկեգօծ արեւն ու ճամփորդությունը հանկարծ վառ է  
 դառնում: Զո սպիտակ բուրդը մաքուր եւ ճերմակ է երեսում արեւի վառ  
 լույսի տակ, ինչպես անբասիր ծաղկող ճերմակ լոտոս:

## ՊՈՈՆԿՈՐԴԻ

Հուլիսյան շաբաթ է:

Լիասայում շատ տոթակեզ կեսօր է: Վուզերը տղայի ձեռքը բռնած, ծառերի ստվերի տակ մայթեզրով առաջ է քայլում: Վուզերը գեղեցիկ է, բարձրահասակ եւ նիհար: Նա քսան տարեկան է եւ մեքենագրուհի է կառավարական օրգաններում: Քայլելով ամուր ցեմենտե գետնի վրայով, բռնելով իր որդու քնքուշ ձեռքը, Վուզերն իրեն վստահ եւ ջերմ է զգում: Մերթ ընդ մերթ նա սեւեռուն նայում է փոքրիկ տղայի դեմքին: Այնինչ փոքր տղա Տիգթան ամենեւին անհաղորդ է մոր հայացքին: Դրա փոխարեն նա շուրջբոլորն է նայում, թեպետ եւ հուզավառ տրամադրությամբ: Մայր ու որդի հատում են փողոցը եւ ելնում են մայթ: Այնտեղ բազմաթիվ մարդիկ կան, եւ նրանք ամբոխի մեջ փոքրիկ ու աննշան են թվում: Անցնելով խաղալիքների խանութի մոտով, Տիգթան կանգ է առնում եւ քաշում է Վուզերի հագուստից, երկչոտ ասելով.

-Մայրիկ, ես ուզում եմ այս դպրոցական պայուսակը:

Վուզերը հետեւում է Տիգթայի հայացքին, որպեսզի այնտեղ տեսնի դեղին դպրոցական պայուսակի տեսքը: Նայելով Տիգթային, նա տեսնում է որդու մղումով լի աչքերը: Նրա սիրտը հանկարծ նվաղում է:

-Դա իսկապե՞ս քեզ դուր է գալիս,- հարցնում է նա Տիգթային, ծնկի գալով եւ դեմքը նրան մոտեցնելով:

-Հա,-մարտահրավեր նետելով պատասխանում է Տիգթան:

-Դու ասում ես սիրում ես մայրիկին, ես կզնեմ այն քեզ համար:

Վիշտը ամրացնում է պայմանը: Տիգթան կարմրում է, երկչոտ գլուխը հակելով:

-Ես քեզ սիրում եմ,- ամաչելով ասաց Տիգթան: Վուզերը, ազդվելով նրա ձայնից, արտասովեց: Այդ հայացքից Տիգթան հուզվեց եւ իր պուճուրիկ ձեռքերով սրբեց նրա արցունքները: Վուզերը բռնում է նրա ձեռքերը, դրանք սեղմում է իր դեմքին եւ հեծկտում է:

-Մայրիկ, մի լացիր: Ես հիմա չեմ ուզում այդ պայուսակը»:

Վուզերը թուլացնում է ձեռքերը և արցունքներն է սրբում: Մի քանի անցորդներ նայում են, թե ինչպես է Վուզերը զսպում իրեն և ասում է.

-Տիգրա, մայրիկը կգնի այն քեզ համար: Ես այդ պայուսակը քեզ համար գնելու անհրաժեշտությունից չեի լալիս:

Տիգրան շվարած նայում է Վուզերին: Վուզերն ու Տիգրան գալիս են Լոնգվոնթանի վրայի բաց թեյարանը, և Վուզերը լճակի կողքին խաղաղ տեղ է գտնում: Տիգրան իր դպրոցական պայուսակը դնում է սեղանի վրա և ուրախությամբ նայում է դրան: Վուզերը գոհունակությամբ նայում է նրան: Վտիտ և կարճահասակ մատուցողը նրանց սիրայթով բանկա և մի գավաթ թեյ է բերում: Վուզերը վճարում է երկուսի համար:

-Հիանալի կլիներ, եթե դու կարողանայիր ամեն օր ինձ հետ խաղալ,- ասում է Տիգրան, գլուխը հակելով:

Վուզերը դառնորեն ժպտում է: Նա ցածրացնում է ձայնը.

-Բայց ես չեմ կարող: Ես հորիցդ բաժանվել եմ, և նա չի թույլատրի քեզ շատ հաճախ ինձ հետ հանդիպել: Դու դա գիտես:

Տիգրան լայն բացում է արցունքոտ աչքերը: Տեսնելով այդ, Վուզերը փութով ավելացնում է.

-Բայց ես կվերցնեմ քեզ խաղալու, երբ հնարավորություն լինի:

Լսելով այդ Տիգրան տարօրինակ ծոում է բերանը: Նրա շարժումը նման է թունավոր գինով բաժակի, որ կործանում է ցավ է առաջացնում նրա մարմնի յուրաքանչյուր մասում:

-Տիգրա, դու ուզո՞ւմ ես խաղալ մրցարշավային մեքենայով,- Վուզերը քսան յուան է հանում, որպեսզի Տիգրային շեղի: Հետեւելով նրան իր աչքերով, Վուզերը տազնապալից է մնում և դողում է: Նա սեւ պայուսակից հանում է ակնոցն ու դնում է այն: Վուզերը մեջքը տաքացնում է արեւի տակ՝ հոգնության հետ, որ ուղեկցում է նրան: Այդպիսի ջերմությունը հանգստացնում է զարմացնում է նրան: Նա պիտի գլուխ հանի իր սրտաբուխ բաներից, դեռեւս նա հանգիստ է: Երբ Գրոցոն գրավեց նրա հետաքրքրությունը, նա արդեն ուներ Տիգրային, բայց նրա ամուսնությունը բավականաչափ երջանիկ չէր: Նրա նախկին ամուսնու ընտանիքի աչքին նա պարզապես սպասուհի էր: Նրանք խորություն էին դնում և քամահրում էին նրան հենց սկզբից: Նրանց լկտիությունը, հավանաբար սերում էր նրա տնտեսական վիճակից և նրանց ընտանիքի

## Ցերինգ Նորբու

սոցիալական ուժերից: Նրանց համար ծիծաղելի եւ տրտմալի էր, որ այդպիսի երեւելի ընտանիքի հետևորդը սիրահարվել էր նրան, սովորական ընտանիքի մի աղջկա: Վուզերը ողջ ուժով փորձում էր իր ընտանիքի հետ հաշտ ապրել, բայց նրա ջանքերը, բացի կոպտությունից եւ անտարբերությունից, ոչինչ չտվեցին: Ժամանակի ընթացքում մարդը, որ ժամանակին սաստիկ սիրահարված էր նրան, նույնպես օտարացավ եւ հակակրանք զգաց նրա հանդեպ: Վուզերը ընկավ ընկճախտով լի ու հեղձուցիչ կյանքի մեջ, ինչը ստիպեց նրան փախչել:

Այն օրը, երբ աշխատանքի ժամն ավարտվում էր, Գյացոն կոստյումով եւ փողկապով հայտնվեց տպարանի դռան արանքում:

-Վուզեր, գնա եւ մեքենագրիր այս փաստաթուղթը:

Գյացոյի տեսքն ագրեսիվ էր, իսկ ձայնն ազդեցիկ:

-Ես ծառայության մեջ չեմ,- կցկտուր ասաց նա:

Գյացոն մտավ սենյակ եւ վճռական ասաց.

-Դու պիտի այսօր դա տպես:

Խիստ ձայնը Վուզերի մեջ նողկանք չէր առաջացնում, այլ, ընդհակառակը, դա նրան շատ գրավիչ թվաց: Վուզերը փաստաթուղթը դրեց համակարգչային սեղանի վրա, նա տպագրեց այն: Գյացոն նստեց նրա կողքին, ծանր շնչելով, ինչը Վուզերին ստիպեց թեթևորեն տպել: Անբնականորեն նա կողմ քաշվեց, որպեսզի որոշակի հեռավորության վրա մնար:

-Միստր Գյացո, դուք կարող եք տուն գնալ,- ասաց Վուզերը:

Նա մեղմ ժպտաց ու ելավ: «Ես կսպասեմ քեզ իմ գրասենյակում»: Այնուհետեւ նա ելավ տպարանից իր թիկնեղ ուսերով ու շողշողուն մազերով, ինչը շատ տպավորեց Վուզերին: Նրա մատները նրբազեղ շարժվեցին ստեղնաշարի վրա եւ ներդաշնության մեջ աղմուկ էին հանում: Նա թղթապանակը ձեռքին բարձրացավ երկրորդ հարկ: Գյացոյի գրասենյակի դուռը բաց էր:

-Դու արեցիր այդ: Շնորհակալություն:

Գյացոյի գրավիչ ձայնը լուռ ցնցեց նրա սիրտը:

Նրա դեմքին ժպիտ հայտնվեց, երբ տեսավ նրա կողքին տաված փաստաթուղթը:

-Որտե՞ղ ես դու ապրում,- անսպասելի հարցրեց նա:

-Արեւմտյան արվարձանում,- ասաց Վուզերը:

-Թույլ տուր քեզ տուն տանեմ,- ասաց Գյացոն, սեւեռվելով փաստաթղթի վրա:

Նա ուզում էր հրաժարվել, բայց զիջեց նրա անկեղծության պատճառով:

Մութ էր, միայն խանութներն ու պարասրահները փողոցի կողմից լապտերներով լուսավորվում էին: Նա ձգեց աջ ձեռքը, որպեսզի ճաղին միացնի: Սաքսոֆոնի սուլոն հիպնոսացրեց նրան: Երբ նա որսաց նրա հայացքը: Գյացոն լուրջ նայում էր առաջ, իսկ Վուզերը շփոթվել էր, եւ տուն տանելու փոխարեն Գյացոն նրան տարավ ռեստորան: Դա պարզապես անհաջողություն է,- ասաց նա, դեմքը կողմ տանելով: Վուզերն ուզում էր տուն գնալ, բայց երբ տեսավ նրա, կրքով բռնված, մեղմ հայացքը, նա որոշեց ուղեկցել նրան: Դա փոքրիկ եւ մաքուր ռեստորան էր: Նրանք նստել էին դեմ դիմաց, եւ Գյոցեն մի քանի տապակած ճաշատեսակ պատվիրեց: Պանդոկատիրուհին նրա ծանոթն էր: Այն ընթացքում, որ Վուզերը դանդաղ իր հյութն էր խմում, Գյոցեն խմեց զարեջրի հաջորդ շիշը: Վուզերը սկսեց անհանգստանալ, որ նա կարող է ավերակի ներգործումից հետո այլ կերպ իրեն պահել: Ճաշատեսակները տաքացվեցին, Բայ Գյացոն մի երկուսը փորձեց: Երբ Վուզերը ելավ մեքենայից, նա նայեց Գյացոնին: Իսկ նա էլ քնքշորեն նայեց նրան: Այդժամ Վուզերը փակեց մեքենայի դուռը, եւ ներսից նրան փութանակի հրաժեշտ տվեց Գյացոն: Վուզերը ինքն իր մեջ մտմտաց, «Այսքան գինի խմելուց հետո նա այնքան սթափ եւ ողջախոհ է»: Վուզերը նույնպես նրան ձեռքով արեց: Մեքենան դանդաղ շարժվում էր ճանապարհով լապտերի լույսի ուղեկցությամբ: Վուզերը հանկարծ իրեն փոքր-ինչ դատարկ ու տրտում զգաց: Նա բարձրացրեց գլուխը, որպեսզի տեսնի անցնող մեքենաները: Վուզերը հակեց գլուխը, որպեսզի ծեծեր իր տան դուռը: Այդ երեկոյից սկսած Գյացոն հաճախ էր գալիս տպարան: Նրանց խոսակցություններն էլ փոխվեցին՝ աշխատանքից առ դժբախտ ընտանեկան կյանքը: Դժբախտ պատմությունները միշտ տարվում էին, եւ կարող էին այնպիսի հուզական տատանումներ եւ խղճահարություն հարուցել /համենայն դեպս, Վուզերն էր այդպես կարծում/: Այդպիսի սողկալի անդրադարձումներն ու խղճահարությունը նման էին մագնիսի, որ գրավել էր Վուզերին, որպեսզի նա դեմ առներ Գյացոյին: Արեւի ջերմ լույսի տակ Վուզերը սեղմվեց Գյա-

## Ցերինգ Նորբու

ցոյին, լողալով արեւային վառ լույսի մեջ, ինչ-որ մեղրանման քաղցրութիւն ներխուժեց նրա սիրտը: Լամպի վառ լույսի ներքո եւ Գյացոյի ջերմ գրկախառնումներում Վուզերը պարում էր, ինչպէս քարացածութեան մեջ: Լուսնի լույսի ներքո նա շողում էր լույսի տակ, որպէս առատաբեր հող, սպասող, թէ ինչպէս է Գյացոն իրեն հերկելու եւ շուռ տալու: Նա իրեն մշտապէս հանձնում էր մշտատեւ քաղցր խոսակցություններին, ինչպէս «Ես քեզ սիրում եմ» եւ «Ես չեմ կարող առանց քեզ ապրել»: «Արի բաժանվենք: Ինձ համար բավական է», - գոչում էր Վուզերը ձախ ձեռքով իր աչքը փակելով: Նրա ամուսինը սեղմել էր բռունցքը, կանգնած նրա առջեւ եւ գայրոյթից դողալով: Նա պատրաստ էր ամեն պահի նրան ավելի ուժեղ հարված հասցնելու: Նրա աչքը խայթված էր, իսկ ամուսնու բռունցքը հեռացրել էր մեղքի զգացողությունը, որը նա կարող էր ապրել նախկինում, եւ նրա մեջ նրա հետ վիճելու եւս մի պատճառ հայտնվեց, «Այն ժամանակից ի վեր, ինչ ես ամուսնացել եմ քեզ հետ, ես տարիներով տառապել եմ: Դու վախկոտ ես եւ նմանակող: Դու միշտ հետեւում ես քո ձևողների կամքին, զնա նրանց հետ ապրիր»: Այդ խոսքերով Վուզերը տանում էր իր բեռը, նա վազեց միջանցքով եւ տնից դուրս վազեց: Վախեցած, Տիգթան թաքնվել էր պատի անկյունում, եւ ընկել էր կոյտի վրա: Հաջորդ արեւմարին, Վուզերն ու Գյացոն պայմանավորվեցին հանդիպել Լիասա գետի ափին: Գյացոն անընդհատ ծխախոտ էր կպցնում եւ դրանց միջեւ հոգոց էր հանում: Վուզերը նայեց գետի մյուս կողմի լապտերին, լիովին մոլորված: Նա համբերատար սպասում էր, մինչեւ որ Գյացոն խոսակցություն սկսի, ասելով ինչ-որ «արի ամուսնանաք»-ի նման մի բան, սակայն Գյացոն լռում էր: Վուզերը կանխագգում էր, որ ամեն ինչ էլ ավելի վատ կլինի: Նա հուզված էր եւ զգում էր, որ Գյացոն իր լռությամբ եւ մշտատեւ հոգոցներով ուզում է խուսանալ:

-Դու ի՞նչ ես ծրագրել,- Վուզերը խախտեց անտանելի լռությունը: Նա զգաց, թէ ինչպէս է նրա մարմինը դողում, երբ նրա վրա իջավ ջերմութեան կտրուկ նվազումը: Նրա տրամադրությունն ընկավ, մտածեց նա: Նրա ռեակցիան հիասթափեցրեց Վուզերին: Այդ պահին նա զգաց գետի սառնությունը եւ ողջ հույսը կորցրեց: Գետի ջուրը վազեց: Թեպետ դա պարզ չէր երեւում, նա այդ զգում էր ալիքների թնդունից: Վուզերը մտածեց. «Մարդկային սերը նույնպէս ջրի նման է, որն անընդ-



հատ փախչում է, միայն թե երբեք չվերադառնալով: Ես կբաժանվեմ ամուսնուցս: Իսկ քեզ հետ ի՞նչ»,- հարցրեց կրկին ևս եւ արդեն մտովի պատրաստվելով նրա պատասխանին: Գյացոն գլուխը հակեց ու ոչինչ չասաց: Երբ ևս ծիւում էր, լույս բռնկվեց եւ Վուզերը տեսավ դժգույն եւ այլանդակ դեմքը:

-Ես չեմ կարող թողնել իմ կնոջն ու մեր երեխային:

Գյացոյի ձայնն ավելի ու ավելի թույլ էր հնչում:

-Ինչո՞ւ դու գայթակղեցիր ինձ,- բարկացկոտ բղավեց ևս:

Նա գլուխը հակեց, իմանալով որ սխալ է:

Վուզերը ցատումից դողում էր, բայց եւ ծարավ էր զգում:

-Ինչո՞ւ դու գայթակցեցիր ինձ:

-Ես նույնպես պատասխան կտամ դրա համար,-ասաց ևս: Բայց ևս չէր համարձակվում նայել Վուզերի դեմքին:

-Դու կարծում ես դա քիչ փո՞ղ է: Իմ սերն ու արժանապատվությունը արժե՞ն այդ քիչ փողին:

Գյացոն ոչինչ չասաց:

-Ուրեմն, դու իրոք խաբել ես ինձ:

Վուզերը հուզված էր եւ շնչակտուր:

-Ես սիրում եմ քեզ: Մի ատիր ինձ:

Գյացոն բարձրացրեց դժգույն դեմքը: Վուզերին դա տաղտկալի եւ ծիծաղելի թվաց, դա ընդամենը խաղ էր: Հենց այդ պահին Գյացոն ծաղրածու էր թվում, որ փոխել էր իր դեմքը միայն այլոց ողջույններին ու խղճահարությանն արժանանալու համար: Այդ մտածելով, ևս բարձրածայն ծիծաղեց, ինքն իրեն չնայելով: Այդ քամահրական ծիծաղը կաշկանդեց Գյացոյին: Ի վերջո, Վուզերն արցունքն աչքերին ասաց.

-Նույնիսկ հիմա ես ոչ մեկին չեմ մեղադրում: Եթե նույնիսկ ես երբեք քեզ չհանդիպեի, ես միեւնույնն է կբաժանվեի իմ ամուսնուց: Բայց այսօր դու հիասթափված ես եւ ինձ ցավ պատճառեցիր: Այսուհետ դու ինձ համար այլ բան չես, քան անձանոթ:

Գյացոն բութ նայեց Վուզերին:

Վուզերն արագ գնաց դեպի ճանապարհը, լսելով Գյացոյի խուլ ճիչերն իր ետեւից: Մթության մեջ այնքան կեղծավոր եւ անիմաստ ճիչերն այնքան էին նյարդայնացնում: Վուզերը տաքսի կանչեց եւ արագ հեռացավ: Վուզերը խմեց մնացած թեյը: Տիգթան չվերադարձավ: Նա

## Ցերինգ Նորբու

Նայում էր կապույտ երկինքն արտացոլող լճակին, սպիտակ ամպերին, ուռենիներին եւ նույնիսկ Փոթալա ապարանքի մի կողմին: Այնուհետեւ Վուզերը հայացքը տանում է դեպի լճակի ծայրի ծառուղու ճանապարհը: Իրենց երեխայի հետ երիտասարդ զույգ տեսնելով նրա սիրտը ցավում է: Բաժանման ձեւական ավարտից հետո Վուզերը թեթեւություն զգաց: Նա թուլացած էր, հիացած եւ ազատ: Վուզերը մեծ հաճույքով սկսեց հայտնվել ռեստորաններում, պարասրահներում եւ Լանգամայի սրահներում ընկերների հետ: Նա իր սիրտը հագեցնում էր բարկահամ զարեջրով եւ շամպայնով: Ուշ գիշերը Վուզերը վերադարձավ իր տուն, որտեղ նա իր գլուխը դրեց փափուկ բարձին, սեւեռվելով աղոտ լույսին, իսկ այնուհետեւ կամ ննջում էր, կամ դր փոխարեն նստում էր մթության մեջ, ախորժանք ապրելով մենակ կյանքից, եւ ծխախոտ ծխելով:

Թեեւ Գյացոն նրան ձիթենու ճյուղ էր երկարել, նա չէր շարժվում, չկամենալով լռվել այլ վատ հարաբերություններում: Ժամանակը բաժանումից հետո սկզբում հիանալի էր: Բայց ժամանակը հոսում էր, դատարկությունը, մենությունն ու ընկճախտը լցնուն էին նրա սիրտը, ծայրահեղ հոգնություն բերելով: Այդ օրերին Վուզերը հաճախ նստում էր, սեւեռվելով համակարգիչի վրա, կամ սպասելով, երբ մյուսները կկանչեն իրեն, երբ նա աշխատանքն ավարտի:

-Ողջույն, կարո՞ղ եմ խոսել Յանգզենի հետ:

-Օ՛հ: Այդ դու ես, Վուզեր:

-Քեզ ձանձրա՞լի է ինձ հետ, այդպես չէ՞: Ես արդեն մի քանի անգամ զանգել եմ,- ասաց Վուզերը, ցույց տալով իր դժբախտությունը:

-Չէ, ես չգիտեմ: Ես իրոք կարծում եմ, որ դու փոքր-ինչ տարօրինակ էիր: Դու լա՞վ ես:

Նրա բերանի անկյունի մկանը ձգվեց: Նա խորը հոգոց հանեց.

-Ես ձանձրանում եմ: Ես ուզում եմ ինչ-որ մեկի հետ խոսել: Խնդրում եմ, պետք չի:

-Հե՛յ, իսկ ինչո՞ւ մենք չհանդիպենք գործից հետո,- Յանգզենն ընդհատեց նրան:

-Դու կարո՞ղ ես դուրս գալ:

-Հա:

. . .

-Վուզեր, սպասիր ինձ ոսկե ձիու քանդակի մոտ վեցն անց կես:

-Ես ճիշտ ժամին այնտեղ կլինեմ:

Վուզերը լսափողը կախեց եւ նստեց համակարգչի առաջ, իր առջեւ բառերը համակցելու խնդիր դնելով: Այդպիսի տաղտկալի խաղ է, բայց դա օգնեց նրան ժամանակը սպանել:

Եկավ ծխելը թողնելու ժամանակը:

Վուզերն ու Յանգչենը գնացել էի տիբեթյան ռեստորան, որտեղ տապակած լուլիկներով կարրի բրինձ կար: Ռեստորանը սովորական էր եւ խոնավ, այնտեղ ընդամենը չորս սեղան կար եւ գինու մի պահարան, դրա ետեւում խոհանոցային սպասքով: Լռությունն այդ ռեստորանի միակ արժանիքն էր:

-Դու խմելու որեւէ բան ուզո՞ւմ ես,-հարցրեց Վուզերը:

-Գարեջուր,- վրա բերեց Յանգչենը:

Նրանք ժպտում էին իրար:

-Մատուցողուհի, երկու շիշ գարեջուր,- գոչեց Վուզերը դրան մոտ կանգնած մատուցողուհուն:

-Ողջույններ,- բարձրացրեց նրա գավաթը:

Վուզերը խմեց: Երկու շիշ գարեջուր խմելուց հետո, Վուզերը թեթևակի գլխապտույտ եւ հուզում զգաց:

-Եւս երկու շիշ գարեջուր,- ասաց Վուզերը:

Յանգչենը խոժոռվեց:

-Դա այնքան ձանձրալի է: Իսկ ի՞նչ, եթե մենք այն մարդուն խնդրենք միանալ մեզ,- ասաց Յանգչենը:

Վուզերը մտածեց, որ դա հետաքրքիր գաղափար է եւ կոչ արեց նրան առաջ անցնել: Յանգչենը վճռականորեն նրան ժպտաց:

Ես կզանգեմ, բայց դու պիտի հաշիվը փակես:

Վուզերը շատ ուրախ էր այդ լսելու համար: Նա հինգ յուան հանեց եւ Յանգչենը ելավ: Վուզերը եւս երկու շիշ պատվիրեց եւ ինքն էլ խմեց: Նրա դեմքը կարմրեց եւ սկսեց ավելի արագ շնչել: Նա մտածեց, թե ազատվել է իր բոլոր հոգսերից, հույսերից եւ ցանկություններից, թողնելով միայն անկենդան սիրտը: Վուզերը բարձր տրամադրությամբ ժպտաց: Վուզերն ու Յանգչենը գարեջուր էին խմում, երբ մի փնթի մարդ մտավ ռեստորան: Նրա երկար մազերը, որ ենթադրել էին տալիս,

## Ցերինգ Նորբու

թե նա արտիստ է, ցաքուցրիվ կախվել էին: Նրա անսովոր հագուստը մեկեն գրավեց Վուզերի ուշադրությունը:

-Հեյ, արի էստեղ,- Յունգենը դեմքով շրջվեց նրա կողմը եւ ջերմորեն կանչեց նրան:

Երկարամազ մարդը առաջ քայլեց եւ նստեց Յանգենի կողքին:

-Ողջույն: Ես Անտոնն եմ: Ի՞նչ է ձեր անունը:

Անտոնը նայեց Վուզերին եւ ներկայացավ:

Վուզերը մտածեց. «Նա այնքան կոպիտ է»: Այդու նա ոչինչ չասաց, այլ սեւեռվեց նրա վրա:

-Ափսոս: Ես փոքր-ինչ կոպիտ եմ, ճի՞շտ է,- ասաց Անտոնն անհանգիստ:

Նրա երկար մազերը ծածկեցին նրա աջ աչքը, երբ նա իր ուշադրությունը շեղեց Վուզերից:

-Խմել ուզո՞ւմ ես,- հարցրեց Անտոնը, նայելով Յանգենի կողմը:

Վուզերը նայեց Անտոնի դեմքին՝ գեղեցիկ, սպիտակ եւ հարթ:

Նրա երկչոտ աչքերը, հատկապես երկար մատները սկիզբ դրեցին Վուզերի երեւակայության լրիվ խորանալուն:

-Ես ես մի գավաթ կուզենայի:

Վուզերը նայեց ուղիղ Անտոնի աչքերին: Նա նրան հաճելի ժպտաց: Նա մտածեց, որ իր առջեւ կանգնած մարդը երիտասարդ է:

-Արի գնանք Անտոնի մոտ,- ասաց Յանգենը, հորանջելով եւ մերկացնելով բոլոր ջարդված ատամները:

Դա Վուզերին զարմացրեց:

Տաքսին նրանց տարավ այն շենքի մոտ, որտեղ ապրում էր Անտոնը:

Երբ նրանք տեղ հասան, հեռվում փողոցային լապտեր էր վառվում, եւ Վուզերը տեսավ, որ դա վերջերս սարքված շենք է: Անտոնը նրանց վեր տարավ: Աստիճանների շրջադարձի վրա, Յանգենը:

-Օ՛յ,- գոչեց Վուզերն ու ձեռքը թափահարեց:

Լսելով այդ, Անտոնը վար վազեց, որպեսզի Վուզերին օգնի:

Անտոնի տանը երկու ննջասենյակ կար: Նրանք նստել էին ընդարձակ հյուրասենյակում, մինչեւ որ Անտոնը միայնակ ցած իջավ:

-Նա ի՞նչ գործի է,- հարցրեց Վուզերը, ձեռքերով նրա դնչին դիպչելով:

- Նա խելագար է եւ ուզում է գրող դառնալ,- բութ ասաց Յանգչենը:
- Գրո՞ղ,- զարմացած ասաց Վուզերը:
- Բայց ես երբեք չեմ տեսել, որ նա բառ իսկ գրի վերջին վեց ամսվա ընթացքում, ինչ ես նրան հանդիպել եմ:
- Վուզերը մտածեց, որ Աստոնը հետաքրքիր մարդ է եւ հարցրեց.
- Իսկ ի՞նչ աշխատանքի է:
- Դու սիրահարվե՞լ ես նրան,- մռայլ ասաց Յանգչենը,- նա ուսուցիչ է:
- Վուզերը զգում էր, որ տեղին չէ Յանգչենին հարցեր տալը: Նա մտածում էր, որ Աստոնը լավ մարդ է, եւ իրեն շատ դուր եկավ: Վուզերը քմծիծաղեց, երբ պատկերացրեց իրեն եւ Աստոնին մերկ: Նա իրեն թույլ եւ ընդարմացած էր զգում եւ զովության զգացումը սկսեց բարձրանալ նրա ձևկներն ի վեր: Աստոնն իր հետ մի արկղ գարեջուր բերեց, եւ նրանք խմում էին, երաժշտություն լսելով, երբ մնացյալ աշխարհը լռության մեջ էր: Նրանք բոլորը հարբեցին: Աստոնը օրորվեց, անջատելով հեռուստացույցն ու լույսերը, երկու մոմ վառելով եւ հանելով կիթառը, որպեսզի նվագի: Սանտա Լյուչիան, Սիրային ռոմանսը եւ այլ մեղեդային երաժշտություն էր հնչում մեկը մեկի ետքից: Արցունքները հոսում էին Վուզերի եւ Յանգչենի աչքերից:
- Ես այնպես խղճում եմ իմ տղային: Ես շատ վատ մայր եմ,- ասաց փլվելով Վուզերը, սրբելով Յանգչենի արցունքները:
- Իմ իրավիճակն ավելի վատ է, քան քեզ մոտ: Իմ ամուսինը լքել է ինձ: Երեւում էին նրա ջարդված ատամները:
- Աստոնը գարեջուր լցրեց նրանց դատարկ բաժակների մեջ ու շեղ նայեց նրանց:
- Մենք հիմա չենք կարող տուն գնալ, ասաց Յանգչենը եւ նայեց պատուհանից դուրս:
- Վուզերը մի բաժակ գարեջուր խմեց:
- Դուք կարող եք այստեղ քնել,- ասաց Աստոնը հենվելով թախտի ոտքին:
- Արի ողջ գիշեր խմենք: Վուզեր, դադարեցրու լալ: Թարմացիր,- ասաց Յանգչենը: Վուզերը դողում էր: Նա բարձրացրեց իր բաժակը եւ կեսը թափեց հատակին:
- Շատ ուշ է: Արի քնենք:
- Վուզերը ուժասպառ էր:

## Ցերինգ Նորբու

-Աստու, դու կարող ես Վուզերի հետ քնել,- ասաց թթված Յանգզե-  
նը, բերանը թրջելով:

-Լավ,- ասաց Վուզերը, գլխապտույտ զգալով: Աստունը փութաց  
սրան օգնել:

Յանգզենը վրդովված նայեց սրանց եւ աչքերից արցունքներ հոսե-  
ցին:

Վուզերը չկարողացավ դիմադրել սրա ցանկությանը, եւ Աստունից  
բռնվելով, գնաց ննջարան: Այդ գիշերվանից Աստունն ու Վուզերը կես  
տարի շարունակում էին հարաբերվել: Աստունը սիրում էր սրան: Վուզե-  
րը նույնպես սրա մեջ ուժգին խանդ էր տեսնում: Նրա խանդով լի սերը  
սրան փակուղու մեջ էր դնում: Տիրելու սաստիկ ցանկությունն ու սրա  
չարությունը թաքնված էին, թվում էր թե, նա ամաչկոտության մեջ: Նա  
շատ անսպասելի բաներ էր անում, բայց հետո Վուզերի համար ցավոտ  
էր, եւ Աստունը ծնկի էր գալիս սրա առաջ ու ներողություն էր խնդրում:  
Մի քանի դեպքերից հետո Վուզերը որոշեց խուսափել սրանից: Ոչ մե-  
կը չէր անհագստացնում սրան: Նա կրկին իրեն միայնակ զգաց եւ սկ-  
սեց հաճախ գնալ հասարական միջոցառումների, ավելի շատ տղա-  
մարդկանց ծանոթանալով: Բայց սրա համար այդ տղամարդիկ միայն  
ժամանակավորապես բավարարում էին սրա Ֆիզիոլոգիական պա-  
հանջները, բացի դրանից, սրանք լիովին անօգուտ էին: Թվում էր թե  
Վուզերի վզի վրա որդեր էին գալարվում: Նա թրմիացնում է սրան, եւ  
Տիգթան սկսում է քրքրջալ: Քանի որ սրա աչքերի առաջ հայտնվում է  
իր որդու անմեղ դեմքը, նա հանկարծ կյանքում սրան նեցուկ է կանգ-  
նում:

-Սայրիկ, դու քնել ես:

Վուզերը սրա արեւային ակնոցը հանելով ասաց.

-Ես շատ անճոռնեի տեսք ունե՞մ, երբ քնած եմ:

Վուզերը թեթեւակի հակվում եւ սեղմում է Տիգթայի դեմքը:

Վուզերը տաքսի է կանչում եւ Տիգթային տանում է ամուսնու տուն:

Տիգթան տնից ելնելով ձեռքով է անում Վուզերին: Նա վազում է  
բակ, դուռը փակվում է, եւ Վուզերի սիրտը քրքրվում է: Նա փակ աչքե-  
րով իջնում է նստատեղի վա, երբ վարորդը շրջվում եւ ընթանում է ճա-  
նապարհով:

Այդ գիշեր, պաղ քամին քրքրում է իմ սիրտը: Արագ քայլերով ես

հրաժարվում եմ տուն գնալ, մինչեւ որ չիմեմ: Ինձ մի բաժակ գինի էլ տուր այս մշուշոտ գիշերով: Ես երբեք չեմ ափսոսա, որ սիրահարվել եմ քեզ: Քեզ լքելը դա դատապարտվածության մե՞ղք էր: Կրկին ու կրկին, ես զգում եմ, որ մարմինս ջարդոտվում է եւ ես խեղդվում եմ իմ արցունքներից: Ինչու է իմ ճիչն այդքան անճարակ...

Վու Բայի երգը հնչում է տաքսի կանչողների ձայների միջից: Դա հուզում է Վուզերին եւ նա սկսում է համարյա բարձրաձայն լալ:

-Սըր, խնդրում եմ կանգնեք:

Մթնշաղ է արդեն: Արեւմուտքում ամպերը լողում են բլրի գլխին վարդագունելով:

Քնքուշ փչում է հովը, եւ Վուզերի սիրտը թեթեւանում է: Նա դանդաղ ընթանում է առաջ եւ հետզհետե մթնում է:

Խսանութները, վարսավիրանոցները, ռեստորաններն ու պարասրահները երկու կողմից փոխիյուսված են եւ լույսերով են շողում: Բարձր երաժշտությունը, աղմկոտ ամբոխը, ավտոբուսների դղրդոցները, այդ ամենը չի կարողանում քշել նրա ներքին մենությունը: Նա միայնակ է: Վուզերը քմծիծաղում է եւ հոգնած դեմքով նայում՝ գիշերվա մեջ, որը կենաց ուժ չունի: Նա կանգնած է խաչմերուկում, չիմանալով թե ուր գնա: Նա վախենում է մենությունից եւ խավարի լռությունից...

Վուզերի հեռախոսը զանգում է: Նա վերցնում է այն, որպեսզի հաղորդագրությունը կարդա, «Դա Գրեյսոնն է: Շուտ արի»:

Վուզերը հեռախոսը դնում է պայուսակի մեջ եւ ինքն իրեն քրթմնջում «Պոռնկորդի»:

## ՇՐՋԱՆԸ

1

«Մի աղքատ ծեր կին, որ չի կարող աշխատել: Նա հուսով էր, որ իր տղան, որ վանական էր, հոգ կտանի իր մասին: Սակայն նա չհոժարեց հոգ տանել նրա մասին: Այս անգամ ես պիտի վերցնեմ վանական Դոփեթին»:

Ձին ընթանում էր դեպի Չհարի տաճարը, թամբի վրա ինձ տանելով: Նայելով երկնքին, իհարկե, ես ոչինչ չարեցի այդ գիշեր: Այդպիսով, ես ստիպված եմ գիշերելու տեղ փնտրել Լյու գյուղում: Ձին մի կերպ անցավ մանրախիճ ճանապարհով, իր ճանապարհին խոր հետքեր թողնելով: Քամին փչում էր, ի վերջո բոլոր գետերը ջնջելով:

«Դոբին, դու ծերացել ես: Եւ փտում ես, ինչպես եւ ես: Վերջին հինգ տասնամյակների ընթացքում, ես Ռոնգա Շիկյա կալվածքի քայքայման վկան եղա: Երբ իմ մազերը սեւ փայլում էին, իմ մաշկը ձիգ էր, եւ իմ ատամների մարգարտաշարի պես էին: Չհասը բերեց ծեր տիկնոջ կալվածք: Ոչ մեկը չգիտեր, թե որտեղից է նա, եւ ինչու էր նա պատկանում ծեր տիկնոջը: Նույնիսկ այն բանից հետո, որ ծեր տիկինը մահացավ, նա այդ մասին լուր էր: Ճիշտ նույնպես, քանզի Չհասը խուսափում էր բացահայտել նրա ծագումը, մարդիկ հետզհետե կորցրեցին հետաքրքրությունն այդ հարցի հանդեպ: Երբ ես առաջին անգամ տեսա Չհասին, կարճ մազերով, նա զբաղված էր նախրապանությամբ, բոբիկ ոտքերով: Նա նույնքան բարձրահասակ էր, որքան Ռոնգա Շիկյայի վառարանը:

-Վահ, Դոբին, ինչո՞ւ դու գլուխդ տարուբերեցիր, կարծում ես ստո՞ւմ եմ: Ավաղ, այն ժամանակ իմ ծնողները դեռ ողջ էին եւ մենք Ռոնգա Շիկյայի գյուղացի վարձակալներն էինք: Հայրս դերձակ էր ծառայում հանգստի սեզոնի ընթացքում, իսկ մայրս որպես օժիտ ոսկերչական իրերի ոսկյա եւ արծաթյա օժիտ ուներ, այնպես որ մենք հազիվ էինք ծայրը ծայրին հասցնում: Ես սովորում էի Ռոնգա Շիկյայի Տիերի Վանգչիուկի մասնավոր դպրոցում: Մեր ուսուցիչը շատ խիստ էր: Սակայն նա վաղուց մահացել է: «Օ՛ւմ, մարգարիտ լուտոսի ծաղկում: Ես եր-



բեք այնքան խիստ չեմ եղել քեզ հետ, ճի՞շտ է, Դոբին»: Համենայն դեպս, որոշակի ըմբռնողությամբ, դու ինձ գլխով արեցիր: Ուսուցիչը մեզ խնդրեց երեսուն նամակ գրել գրատախտակի վրա: Եթե որեւէ մեկի ձեռագիրը վատը լիներ, հա, հա, Դոբինը դատապարտված կլիներ պատժի: Կամաց-կամաց, իմ հակումն առ թութունը իրեն զգացնել տվեց: Թույլ տուր ինձ բռնորթի վերցնել:

Ուսուցիչը միայն մեկ անգամ ինձ խփեց, բայց այդ միակ փորձը խորապես բուն դրեց իմ գլխում: Այն ժամանակ, ես չէի կարող երեսուն ոտանավորների կեսը միայն մտքում կարդալ, այդ պատճառով ուսուցիչը տաքաթս իջեցրեց եւ ուռնու ճյուղով հետույքս դաղեց: Երբ հետույքս բեզոնիայի պես կարմրեց, ուսուցիչը շնչահատվելով, վերջապես կանգ առավ: Այնուհետեւ ես իմ դաղած հետույքով մորս տուն տարա: Մի օր, ուսուցիչը պատժեց Տիերի Վանգչիուկին Ռոնգա Շիկայից, կարգադրելով նրան կանգնել պարապուտի մոտ, սառույցի վրա: Յուրտը հարբուխ առաջացրեց եւ ի վերջո նա չկարողացավ չկեղտոտել եւ իր վրա չմիզել: Նրա տիբեթական խալաթի ներքևամասն ամբողջովին աղտոտվել էր: Այնուհետեւ, ուսուցիչն ինձ ասաց, որ ուղեկցեմ Տիերի Վանգչիուկին գետի մոտ լվացվելու: Ձմեռային արեւն այնքան ջերմին էր, որ տաքացրել էր գետաքարերը: Տիերի Վանգչիուկն ինքը հանվեց: Ես նրա կեղտոտ տիբեթական խալաթը կոխեցի ջրի մեջ: Երբ կեղտը լվացվեց ջրում, անդուր հոտը կեղտի հետ հոսում էր հոսանքն ի վար: Տիերի Վանգչիուկն ասաց, որ կուզենար կողերը լվալ եւ խրվեց գետի հատակը: Տեսնելով սպիի պես չորացած կեղտը նրա հետույքի թշին: Տիերի Վանգչիուկը, հնարավոր է մեզանից լավ էր հագնված, բայց նա որդերով էր վարակված: Դպրոցից տուն գնալու ճանապարհին, Տիերի Վանգչիուկը անկյունում ձևկաձալ նստեց: Արեւի տակ հանեց վերնաշապիկը, խնդրելով, որ իր փոխարեն բռնենք որդերին: Որդեր բռնելը համազոր էր կոնֆետ որսալուն: Մենք մի կոնֆետ ստացանք ամեն մի տասը որդ բռնելու համար: Մի երկու օր հետո, նրա վերանաշապիկի վրայի որդերը մենք հաջողությամբ հավաքել էինք: Կոնֆետների համն ուտելուց հետո առաջվա պես մնում էր մեր բերաններում: Լեզվիս ծայրը քաղցր էր լինում նույնիսկ իմ երազներում: Մենք կախված կոնֆետներից, այդ պատճառով մենք համոզում էինք Տիերի Վանգչիուկին, որ պեսզի նա վարտիքը հանի: Մեր սադրանքներից գայթակղվելով, Տիե-

## Ցերինգ Նորբու

րի Վանգչիուկը հանեց վարտիքն ու հեռու նետեց: Հեղեղի պես մենք վրա արձանք նրա ներքնաշորի վրա, քշելով որդերին նրա միզահոտ վարտիքի վրայից: «Դոբին, մենք այնքան հիմար էինք: Մենք չպիտի այդքան մանրակրկիտ բռնեինք ոջիլներին: Մենք պիտի ոջիլներին թողնեինք բազմանալու համար, ինչը մեզ թույլ կտար շարունակել կոնֆետներ ուտել»: Այնուհետև, երբ արդեն ոջիլ չմնաց բազմացնելու համար Վանգչիուկի ոչ վերանշապկի եւ ոչ էլ վարտիքի վրա, մենք աչք դրեցինք նրա գլխի վրա: Սակայն, պարզեատրումն արդեն քանակի հետ կապ չունեի: Դրա փոխարեն նա խնդրեց մեզ ծամել մեր բռնած ոջիլները: Նա, ով ամենաբարձր ձայնը հաներ, նա էլ ամենաշատ կոնֆետը կստանար: Երբ ոջիլները Տիերի Վանգչիուկի վրա իսպառ վերացան, մենք բոլորս դատարածեան մնացինք: Ասում են, որ երբ արեւը նոր էր ելել լեռնապարի վրա, կալվածքում լավագույն ձիերով Գերի Վանգչիուկն ու ծեր տիկինը սկսեցին իրենց ճամփորդությունը Լհասա Չիասի հետ, որ նրանց ծառաներից չորրորդն էր: Տեսնելով ցանցը ոսկե շողերի, որ կախվել էին նրանց վրա, բոլորը ցնցվում էին: Մեկ ամիս անց, ծեր տիկինը վերադարձավ Ռոնգու, սակայն Տիերի Վանգչիուկն ու Չիասը չվերադարձան: Չորս տարի անց Տիերի Վանգչիուկը մի անգամ վերադարձավ կալվածք, մնաց մի քանի օր, իսկ հետո կրկին վերադարձավ Լհասա: Այդ չորս տարվա ընթացքում մեծ փոփոխությունը Ռոնգայում իմ ընտանիքն էր: Հորս մահից հետո, իմ ընտանիքի վիճակը շարունակվում էր վատանալ: Մայրս ստիպված եղավ վաճառել իր ոսկին եւ արծաթե զարդերը մեր հոտերի եւ ձիերի հետ մեկտեղ: Նույնիսկ այդ զոհողություններից հետո էլ երեք տարվա ընթացքում մենք համարյա աղքատացանք: Հետեւաբար մենք դարձանք Ռոնգա Շիկայի վարձակալ գյուղացիների գերիները: Այլ կերպ ասած, մայրս եւ ես այժմ Ռոնգա Շիկայի ծառաներն էինք: Օգտվելով ծեր տիկնոջ բարեգործությունից, մեզ չուղարկեցին դաշտերում աշխատելու, եւ նա թույլատրեց մեզ հետեւել դոնապանին, որպեսզի որոշ փաստաթղթեր կարգի բերենք: Մայրս ծեր տիկնոջը կհաթայի մի կտոր առաջարկեց:

-Ինչ անհաջողություն: Դերձակի մահից հետո քո ողնաշարը քայքայվեց,- ասաց ծեր տիկինը: -Բարեբախտաբար, դերձակի որդին լսեց նրա խոսքերը եւ իմ որդի Տիերի Վանգչիուկը չարեց այն աշխատանքը, որ անում էին այդ ստրուկները:

Նիանգ գյուղում ընդամենը երեք տնտեսություն կար: Նրանք արհամարհեցին խեցեգործությամբ զբաղվող ընտանիքին: Ծեր կինը հաճախ ասում էր, որ իր ամբողջ կյանքը նվիրված է եղել Մահվանը, եւ որ նա չի ուզում, որ կավագործների ընտանիքն իր մահից հետո դիպչի մարմնին: Մեկ տարի անց՝ աշնան սկզբին, միայնակ ծեր կինն անցավ: Հենց այդ առավոտ Հանչիբեկ հայրիկը գնացել էր զանգահարել ծեր կնոջը, բայց փոխարենը նրան գտել է մահացած: Քայլելով չափազանցած՝ Հանչիբեկ հայրիկը բղավեց. «Անհամարձակ ծերունին վերջապես մահացավ»: Նրա դեմքը ցնցումների նշան չէր ցույց տալիս, կարծես մահը նույնքան նորմալ էր, որքան ցամփա ուտելը:

Ես վազեցի դեպի ծեր կնոջ տուն: Նա հանգիստ պառկեց խոտի մի կապոցով, որը ծածկված էր տիբեթյան զգեստներով: Մահը, կարծես, ոչնչով չէր տարբերվում քնից: Չարմանալի չէ, որ մեծերը զարմացան:

Հանչիբեկ հայրիկը խնդրեց խեցեգործ քեռի Դավային հաղորդել լուրը ծեր կնոջ մահվան մասին:

Հաջորդ օրը, երբ արելը մայր էր մտնում, քեռի Դավան վերադարձավ Նիանգ գյուղ: Նա վերադարձել էր ժապավենով, սպիտակ մի կտորով եւ կարագի լամպով, որը տվել էր Ռոնգա Շիկայի ծեր տիկինը:

Երեք օր անց մթության մեջ, Հանչիբեկ հայրիկն արթնացրեց ինձ. «Ես միայնակ չեմ կարող դա անել: Ինձ պետք է, որ գաս ինձ հետ»:

Նա իմ բարձի կողքին դրեց տիբեթական բրդով փաթաթված գործիքները:

## Ցերինգ Նորբու

«Ոչ»: Մայրիկը չհամաձայնվեց:

Նավթի ճրագի լույսն այնքան մռայլ էր, որ ես չէի կարողանում պարզել մայրիկի դեմքը՝ միայն կտրուկ ստվեր տեսնելով:

Հանչիբեկ հայրիկը հակադարձեց. «Հիմա նա տղամարդ է»:

Մայրիկս ոչինչ չասաց:

Մենք միասին գնացինք ծեր կնոջ տուն: Աղֆորում, Ռոնգա Շիկայի ծեր տիկնոջ ուղարկած թեթեւ ընծաները թեթեւ փայլում էին: Դողացող լույսի ներքո ես տեսա ծեր կնոջը, որը դրված էր մի անկյունում, նա սպիտակ կտորի մեջ էր փաթաթված, իսկ խատայի ժապավենը դրված էր դրսում: Ես տարածեցի թեթեւ ընծաներից արտանետվող վառվող հոտը: Այդ հոտը մնաց քթանցքիս մեջ, ուստի ես վախ չունեի:

Դրսում, լուսինը փայլում էր երկրի վրա, եւ ամենուր թագավորում էր մահացած լռությունը: Հանչիբեկ հայրիկը կրում էր ծեր կնոջ մարմինը, մինչ ես Տիբեթի բուրդը կտրում էի գործիքներով, երբ գնում էինք դեպի Թարա բլուր: Քամու մեջ խայթող ցուրտը ծածկեց ինձ եւ քթիցս սկսեց հոսել: Ծեր կինն այնքան ամուր էր փաթաթված, ես չէի կարող օգնել, բայց կարծում էի. «Նա պետք է իրեն շատ տաք զգա»: Ճանաչապարհին Հանչիբեկ հայրիկը դադարեց հանգստանալ հինգ-վեց անգամ բողբոջելով առ այն, թե որքան մեղավոր պետք է լիներ ծեր կինը: Նա ասաց. «Այնքան ծանր է: Նա, անշուշտ, շատ մեղքեր էր գործել»:

Ես Հանչիբեկ հայրիկին ասացի. «Զգուշացեք: Մի նյարդայնացրեք նրան, թե չէ նա ձեզ կհայհոյի»:

Շունչ քաշելով՝ Հանչիբեկ հայրիկը պատասխանեց. «Մահից հետո մարդիկ քար են դառնում՝ առանց որեւէ զգացողության»:

Ես չէի կարող ինձ ստիպել հավատալ նրա խոսքերին: Ես հինը սպասում էի կին՝ նրան ճանապարհին սաստելու համար: Այնուամենայնիվ, քանի որ արեւի առաջին ճառագայթը ընկած էր երկնքի գերեզմանոցում, ծեր կինը դեռ պետք էր նրան ծաղրեր: Նույնիսկ երբ նա ծեր կնոջը զգեց գետնին իր երկնքի թաղման համար, միեւնույն է՝ լռեց: Ես հարցրեցի.

Մահը նշանակում է, որ նա այլեւս չի՞ կարող խոսել:

-Ավելին, բրնձի ամանը նույնպես չոր է,- պատասխանեց Հանչիբեկ հայրիկը:

-Չո՞ր,- հարցրեցի ես:

-Այլ կերպ ասած, նա չի կարող ոչ մի կաթիլ ջուր խմել, ոչ էլ մի կաթիլ ցամփա ուտել: - Բարեբախտաբար, նա մահացավ առանց որևէ հիվանդության եւ ցավի: Պարզապես նրա բախտը բերեց: Ես հուսով եմ, որ իմ բախտը ճիշտ նույնպես կբերի, երբ ես մահանամ,- հավելեց կուզիկ հայրիկը:

Արեւայույսի տակ ես ողջ մարմնումս ջերմություն էի զգում: Ես տեսնում էի ոսկորները, եւ կտորները, դեսուսեն նետված ողջ երկնատակում: Կուզիկ հայրիկը մի քանի ճյուղ ու սմբած խոտեր կտրեց եւ, ծնկի իջած հղի վրա, կայծքարով կրակ էր անում: Կայծերը հանելով, նա բեջանով փչում էր առաջացած հրի վրա: Երբ դանդաղ ծուխը բարձրացավ, գլխավերեւում մի բոլուկ գիշանգոլ կախվեց: Կուզիկ հայրիկը պուկեց պառավի վրա փաթաթված սպիտակ գործվածքը, եւ այն դրեց մերկացած քարե դարավանդի վրա: Նա վտիտ ու գառամ պառավ էր: Նրա աչքերը մեղմ գոցված էին, ասես թե նա պարզապես ննջում էր:

-Մնա ես քարի տետում,- կարգադրեց Կուզիկ հայրիկը, չնայելով ինձ: Նա պառավին դեմքով վար իջեցրեց եւ վիզը ճարպոտ պարանով փաթաթեց: Գիշանգոլները իջան վար, կուտակվելով, անհանգիստ միմյանց հրմրելով:

Թաքնվելով լեռան տետում, ես սկսեցի սենյակի Կուզիկ հայրիկի եւ իմ առջեւի պառավի վրա: Նրա կողքին ծնկի գալով, Կուզիկ հայրիկը մի պտղունց բռնոթի վերցրեց ու քրթմնջաց. «Օմ, մանի պատմե հում»: Ելնելով, նա իր տիբեթական հանդերձանքի երկու թելքը հանգույցով կապեց, տիբեթական բրդի միջից հանեց կտրող գործիքներն ու դրանք դրեց հարթ քարի վրա: Ծնկի գալով, Կուզիկ հայրիկը սիրային երգ էր երգում, ձեռքին սեւ դանակը բռնած: Բարձրացնելով դանակը, նա կտրվածք արեց եւ, ճանկելով մսի մեծ կտորը, այն նետեց գիշանգոլներին: Ոգիների նման, արյան կարմիր կաթիլները պառավի մարմնից դեն էին թռչում, առկայծելով ավազոտ հողի վրա: Գիշանգոլները կուտակվեցին նրա շուրջը, ջանալով սնունդ ճարել: Այդ տեսարանը մահու չափ վախեցրեց ինձ: Իմ դեմքը նույնիսկ խոնավացավ: Ես գլուխս ծնկներիս մեջ խրեցի: Բայց նույնիսկ այդ դեպքում ես դեռեւս լսում էի նրա երգն ու ոսկորներ ու գանգը փշրող քարի թնդյունը:

Որոշ ժամանակ անց Կուզիկ հայրիկը ուսս թափահարեց: Ես աչքերս բարձրացրի ու տեսա, թե ինչպես այդ գիշանգոլները թեւերն են

## Ցերինգ Նորբու

թափահարում, անհավասար ստվերներ նետելով: Ես սարսափած սե-  
նովեցի այդ ստվերների վրա:

-Դու այդ ամենը տեսե՞ր ես,- հարցրեց նա:

Ես գլխով արեցի, նկատելով, որ ոտքերս դողում են:

-Մահվանից հետո մարդիկ քար են դառնում, այլևս ցավ զգալու  
անընդունակ,- մխիթարում էր ինձ Կուզիկ հայրիկը:

Ես գլխով արեցի, թեպետ դեռ սարսափում էի:

Կուզիկ հայրիկը ինձ իր ձեռքերի վրա առավ: Ես զգում էի նրա  
մարմնի ջերմությունը: Նա ականջիս շնչացրեց:

-Դու դեռ ջահել ես, բայց դու դրանցից չես վախենա, երբ մեծանաս:

Կուզիկ հայրիկը տուն բերեց արյունոտված սպիտակ փալասն ու ա-  
սաց, որ ինձ համար վերնաշապիկ կկարի: Մարմնովս մեկ փշաքաղվեցի:

Վերադառնալով երկնային հուղարկավորությունից, ես այլևս չէի  
կարողանում ժպտալ: Ամենը, ինչ այնտեղ կատարվել էր, հետապնդում  
էր ինձ, ինչպես հարթման մղձավանջ: Ջորուզիշեր ես վախենում էի, որ  
մայրս, Կուզիկ հայրիկը կամ ես կարող ենք մահանալ: Պառավի մահից  
հետո ողջ երջանկությունը, որ նա նվիրել էր ինձ, առեանգված էր, ինձ  
թողնելով միայն մահվան վախը:

Մայրս առաջինը նկատեց իմ մեջ տեղի ունեցող փոփոխությունը:  
Նա Կուզիկ հայրիկին ասաց.

-Երեխայի հետ ինչ-որ բան էն չի: Արդյոք չտանենք նրան Յամանա-  
կե երկրպագության՝ Չհարի տաճար:

-Մենք դա կքննարկենք, հենց որ կալսելը վերջացնենք,- ասաց Կու-  
զիկ հայրիկը, անմիջապես մերժելով մայրիկի գաղափարը: Այնուհե-  
տե նա հավելեց.

-Մի երկու-երեք օրից նա կապաքինվի: Երբ ես մահանամ, նա ինձ  
համար պիտի երկնային հուղարկավորության ծես կատարի:

-Մայրիկ, իսկ Բուդդային երկրպագելուց հետո մղձավանջները  
կդադարեն,- հարցրեցի ես:

-Բուդդան սատանային կքշի քո մտքից:

Լսելով այդ խոսքերը, ես սկսեցի ժհարի տաճարի կարոտը քաշել,  
բայց ձևողներս շատ զբաղված էին, որպեսզի ինձ էնտեղ տանեին:

Երբ ես ավելի ու ավելի էի վիատության մեջ ընկնում, Նիանգ գյուղ  
եկավ դռնապան Սանջայը Ռոնգա-Շիկայից: Նրա մետաքսե հանդեր-



ծանքները վառ ներկված էին, ծայրը մեղմ ու հնչեղ էր, եւ նա շատ ուժեղ էր ձիու վրա: Նա ձիուց իջավ եւ գրպանից ինձ համար փոքր-ինչ կերակուր հանեց: Հենց այդ ժամանակ ես ես նրա դաստակի վրա նկատեցի վարդագույն հոպունքները: Մահվանից առաջ մի անգամ պառավն ինձ ասաց, որ օրինյալ տերօղորմյան կարող է ցրել մղձավանջները: Ես սենեովեցի այդ հոպունքաշարի վրա: Այնուհետեւ ծառայապետը հայտարարեց, որ ինձ կտանի Չհարի տաճար: Ես հիացած էի, բայց մայրս չէր կարողանում դադարել լալ:

Ես լվացի դեմքս ու մազերս, հագա տիբեթական բրդե հանդերձանքս ու կոշիկները, որ Բաթլերն էր նվիրել: Ես հիացմունքի մեջ էի, եւ անընդհատ Կուզիկ հայրիկս հարցնում էի. «Սա իսկապե՞ս իմ հագուստն է»: -Լսելով իմ խոսքերը, մայրս ամեն անգամ սկսում էր արտասվել: Կուզիկ հայրիկս շարունակում էր չորով պատասխանել. «Իհարկե, դա քոնն է: Վաղը մենք քեզ կտանենք Բուդդային երկրպագելու»:

Կուզիկ հայրիկս ինձ բարձրացրեց ձիու վրա, միաժամանակ մայրիկին համոզելով ավելի արագ քայլել: Երբ մենք գնում էինք, աստղերը դեռնա երկնքից կախված էին: Մեզ պարուրել էր մթան հաստ շերտը: Մեզնից ոչ մեկը բառ իսկ չարտասանեց, թողնելով միայն մունջ խավարի մեջ տարուբերվող գոտեկապերը:

-Տաճարն այստեղից հեռո՞ւ է,- հարցրի ես մորս:

-Հեռու է,- պատասխանեց նա:

-Իսկ ի՞նչ է այնտեղ՝ տաճարում,- շարունակում էի հարցնել ես:

-Երբ դու փոքր էիր, մենք քեզ տանում էինք այնտեղ: Մի՞թե դու չես հիշում: Ծատ Բուդդաներ կան: Բուդդային երկրպագելուց հետո դու այլևս մղձավանջներ չես ունենա,- փութաց պատասխանել Կուզիկ հայրիկս:

-Մի՞թե իմ մղձավանջերն իրոք կանցնեն,- կրկին հարցրի ես:

-Հա,- ասաց Կուզիկ հայրիկս, շարունակելով առաջ քայլել:

Երբ արեւը ելավ լեռան արեւելյան բարձունքի վրա, ես տեսա ժհարի տաճարը առավոտյան հրացուքի ֆոնի վրա:

-Դու տեսնո՞ւմ ես այն,- հարցրեց ինձ Կուզիկ հայրիկս:

-Այն պարզապես վիթխարի է:

## Ցերինգ Նորբու

Ես զարմանքով նայեցի տաճարին: Բայց մայրս պարզապես շարունակում էր լալ:

Պարուրված նրա անհունչ հեծկտոցներով, մենք մոտեցանք լեռան ստորոտին:

-Էդպես մի վշտացիր,- Կուզիկ հայրիկս կշտամբեց մայրիկին մինչեւ լեռ բարձրանալը:

Տաճարի դարպասների մոտ նրանց մի վանական էր սպասում: Տեսելով մեզ, նա հարցրեց.

-Սա հենց այն երեխա՞ն է, ում ուղարկել է Ռոնգա Շիկայի ծեր տիկի-նը:

Կուզիկ հայրիկս հանեց գլխարկն ու խոնարհվեց, պատասխանելով.

-Այո:

Սո Յի Թիուբթեն Նյաման սպասում էր մեզ Դաջին սրահում /գլխավոր սրահում/:

Վանականի գլխավորությամբ մենք բարձրացանք ուղղաբերձ աստիճանով Դաջին սրահ: Սրահը գվվում էր երգեցողությունից, Կափալայի թմբուկներից եւ զանգուկակների զրնգոցից: Երբ այդ հնչյունները ներխուժեցին ականջներիս մեջ, իմ ներքին սարսափը չքացավ, ինչպես մեռյալ տերեւները ուժգին քամու տակ:

Վանականը բարձրացրեց ծանր վարագույրը եւ ուղեւորվեց ուղիղ Ռինփոջեի մոտ, որ նստած էր գահի վրա լիակատար լոտոսի դիրքով եւ, գլուխը հակած, ինչ-որ բան էր քրթմնջում: Գահի վրա բազմած Ռինփոջեն ինձ ավելի մոտ կանչեց: Շարքերով նստած վանականները նայում էին մեջքիս: Ես փոքր-ինչ վախեցա, բայց Կուզիկ հայրիկս շարունակում էր ինձ առաջ մղել:

-Իսկ հիմա արագ: Խոնարհվիր Ռինփոջեի առաջ:

Ռինփոջեն անհավանական սիրալիր էր: Նա ճերմակ մազեր ու հենքեր ուներ: Կուզիկ հայրիկս գրպանից հանեց կիաթայի կտորը ու մեկնեց այն Ռինփոջեին մի քանի տիբեթական մետաղադրամներով, որ ծառայապետն էր ընծայել:

-Իսկ անունդ ի՞նչ է,- հարցրեց Ռինփոջեն:

-Նիենդրագ,- պատասխանեցի ես:

-Նիենդրագ, մոտեցիր ինձ,- ասաց Ռինփոջեն:

Ես ավելի մոտ եկա: Նա դիպավ իմ գլխին ու ականջին: Այնուհետև նա շլացուցիչ ժպտաց: Իմ սարսափն ու տարօրինակությունը անադմուկ ցրվեցին: Ռինփոչեն ինչ-որ բան ասաց վանականին, որ բերում էր մեզ, եւ այդ ստիպեց նրան փութով հեռանալ: Մի րոպեից նա վերադարձավ սկուտեղով, որի վրա մկրատ էր դրված:

Կուզիկ հայրս ասաց.

-Ավելի ուշ Ռինփոչեն քեզ համար ձեռնադրության ձես կկատարի: Մի շարժվիր:

Տեսնելով Ռինփոչեի ժպտացող դեմքը, ես զգացի, որ ես նրան շատ վաղուց գիտեմ:

Երգեցողության ձայներն իմ շուրջը, ասես անվերջանալի ձայնային ալիքներ պատրաստվում էին ինձ երկինք հանել: Նայելով ինձ, Ռինփոչեն որոշ ժամանակ ծոր տալով երգում էր: Այնուհետև, մի փունջ ճակելով իմ գլխից, նա այն մկրատով կտրեց եւ սկուտեղի վրա դրեց: Ռինփոչեն ասաց.

-Թույլ տուր ինձ քեզ կրոնական անուն տալ: Այսուհետ դու Դուփելթն ես:

Ռինփոչեն խնդրեց, մեզ այստեղ բերած վանականին, տանել ինձ Կան գյուղ վերահանդերձավորվելու եւ ածիվելու: Արեւի տակ այդ վանականը բութ դանակով մազերս խուզեց, գլխիս վրա մի քանի կտրվածքներ թողնելով: Դրանից հետո նա ինձ խնդրեց հանել իմ տիբեթական բրդե հագուստը, բացատրելով, «այդ ամենը աշխարհիկ բաներ են: Ես քեզ մաքուր հագուստ կտամ»: Նա ինձ ծիրանագույն գոգնոց բերեց, կարճիկ ժիլետ, խալաթ ու մի զույգ կաշվե սապոգներ: Սապոգները մեծ էին, շատ ազատ իմ փոքրիկ ոտքերի համար: Երբ ես ետ վազեցի Դաջին սրահի աղոտ լույսի մեջ, այնտեղ միայն մի տարեց վանական էր, խաչած ոտքերով նստած ու տերողորմյան տարուբերող:

Ես նրան հարցրի.

-Իսկ ո՞ր եմ ձևողներս:

-Նրանք արդեն գնացել են:

-Ես պետք է նրանց գտնեմ,- ասացի ես:

Ծեր վանականն ասաց.

-Դու արդեն վանական ես, այդ պատճառով դու ոչ տուն ունես, ոչ էլ ընտանիք:

## Ցերինգ Նորբու

Հանկարծ ինձ տազնապ համակեց: Ես սրընթաց դուրս վազեցի Դաջին սրահից եւ կանգ առա քարե աստիճանների վրա, որ տանում էին դեպի լեռան ստորոտի ոլորուն արահետը: Այնտեղ ոչինչ չկար: Սաստիկ արցունքները հորդացին դեմքիս, պղտորելով արահետն ու բնապատկերը:

-Հետեւիր ինձ: - Ուսիս վրա ինչ-որ մեկի ձեռքը հայտնվեց: Գլուխս շրջելով, ես տեսա իմ ետեւում կանգնած Դաջին՝ սրահի ձեռք վանակա-նին: Նա այլարկոտ նայում էր առաջ, նոսր մազիկները նրա ծնոտի ներքնամասում քամու տակ երբեք էին:

-Հետեւիր ինձ: -Նրա ձեռքը ծակը սեղմեց ուսս: Ծեր վանականը բարձրացրեց վերմակս քարե աստիճանների վրայից եւ, տանելով այն ուսի վրա, ելավ: Ես հնազանդորեն հետեւեցի նրան: Մենք անցանք խորը եւ անդորրավետ ծառուղիով, բարձրացանք ուղղաբերձ գառիկողով դեպի Յամաթակա սրբավայրը եւ թեքվեցինք ձախ՝ դեպի Կան գյուղը: Մեր հանրակացարանը գտնվում էր երկրորդ հարկում: Դա մի սենյակ էր, որի դուռը բացվում էր դեպի արեւմուտք, իսկ պատուհանը՝ դեպի արեւելք:

-Այսուհետ, դու ինձ պիտի գուրու Լուևգթոգ կոչես: Ես քեզ գրագիտություն եւ գեղագրություն կուսուցանեմ: Այդ ծախսերը կհոգա Ռոնգա Շիկայի ձեռք տիկինը: Գիշերը դու կարող ես քնել այստեղ, ներքեւում,- ասաց գուրու Լուևգթոգը, խաչված ոտքերով, մահճակալի վրա նստած:

Գուրու Լուևգթոգի մահճակալը դրված էր պատուհանի մոտ, մահճակալի կողքին դրված էր ցածրիկ տիբեթական պահարան, որի վրա դրված էր փաթմասամբհավայի կավե արձանիկը: Այդ պահին լուսնահետքը ոսկե փայլով մնացել էր փաթսամհավայի վրա:

Այդ գիշեր ես ննջեցի գուրու Լուևգթոգի երգեցողության ներքո, այն-ժամ, երբ մղձավանջները արտաքսվել էին իմ գիտակցությունից:

-Դուփելթ, ելիր,- ասաց գուրու Լուևգթոգը, փայտիկով ինձ հրելով:

Ելնելով մահճակալի վրայից, ես ողջ ուժով ջանում էի մթան մեջ անցնել սենյակը. «Գուրու, այստեղ դեռես մութ է: Ինչո՞ւ նավթալամպը չեք վառում»:

-Աչքերդ բանի պետք չեն,- նախատեց ինձ գուրու Լուևգթոգը, լուցկին չրխկացնելով: Հուրը նրա մատների վրա այրեց մթության քողը, կանգ առնելով նավթալամպի վրա:

- Դոփելթ, մեր գնալու ժամն է,- ասաց Չեզը:
- Դոփելթ, աչքերդ բաց ու վար նայիր,- մենք արդեն մոտ ենք: Գնացինք այստեղից:
- Կաց,- ընդհատեց Չեզը: -Գնալուց առաջ յոգուրթ կեր: Այն միայն մեր բեռը կշատացնի այս ճանապարհին:

3

Բաց թամբի վրա քամի չկար, այրող արեւը արագորեն գոլորշիացնում էր ողջ խոնավությունը ցախի միջից: Ճյուղերն ու ոստերը հակվել ու ծոմովել էին: Դոփելթի մեջքին ստաձ, մայրը երկու ձեռքով բռնել էր որդու ուսերից: Հանկարծ նա ուզեց որդուն պատմել իր անցած կյանքի մասին:

-Դոփելթ, դու ինձ հիշեցրիր Չհայր Տերի Վանգուկին: Առանց նրա դու չէիր ծնվի: Այն օրերը նրա հետ ամենաերջանիկն էին իմ կյանքում: Դոփելթ, քեզ այնքան էլ շատ ժամանակ չի մնացել այս երկրի երեսին: Թույլ տուր ինձ կամացուկ պատմեմ քեզ իմ կյանքի պատմությունը, որովհետեւ այլ հնարավորություն ես երբեք չեմ ունենա: Մայրս, քո տատիկը, ծնունդով Գոնգոմբյանից էր: Նա սիրահարվել էր քհամսեցի մի մարդու, որը առետրական քարավանից էր: Նա նրա հետ փախավ Լհասա: Գալուց հետո նա հիվանդացավ, փոխնիփոխ ցրտից ու տապից տառապելով: Նա դեղ ընդունեց եւ լամային տուն հրավիրեց, բայց նրա հիվանդությունը արագորեն շարունակում էր զարգանալ: Սակայն առետրական քարավանը արդեն պատրաստվում էր Հնդկաստան գնալ, այդ պատճառով քհամսեցի մարդը մայրիկիս մի քանի արծաթադրամ տվեց ու գնաց: Այդ ժամանակ քարավանը կանգ էր առել Դեչժուն նստավայրում: Երբ առետրական քարավանը հեռացավ, մայրս ստիպված եղավ այնտեղ ապրել: Կես ամսից փոքր-ինչ անց մայրս մի կերպ այդ վիճակից դուրս եկավ: Դեչժուն նստավայրի մարդիկ նրան կոչում էին «Կին Քամս-Փա-ից»: Երեք ամսից քարավանը չվերադարձավ: Մայրիկիս փողերը պրծան: Այլեւս գոյություն պահպանելու միջոցներ չունենալով, նա ստիպված էր պարտքով փող վերցնել Դեչժուն նստավայրից: Մեկ ամիս անց մայրս մնաց առանց գրոշի: Երբ նա գնաց երկրորդ անգամ պարտք անելու, Դեչժուն նստավայրի կանան-

## Ցերինգ Նորբու

ցից մեկն ասաց. «Կին Քհամսա-փա-ից, մենք կարող ենք ձեզ պարտքով փող տրամադրել, բայց դուք ի՞նչ կարող եք գրավ դնել»:

-Երբ առետրական քարավանը վերադառնա, ես ձեզ կվճարեմ:

-Եթե առետրական քարավանը չվերադառնա, դու կկարողանա՞ս պարտքը վերադարձնել:

-Ոչ: -Մայրս հուսահատությունից լալիս էր, ձեռքերով դեմքը ծածկած եւ ծնկի իջած:

-Եթե դու համաձայնվես անել այն, ինչ ես կասեմ, ես քեզ եւս տասը արծաթադրամ կտամ:

-Մայրիկ, խնդրում եմ, միանգամից գործին անցեք:

Մայրս արցունքները սրբեց եւ տրտմորեն գլուխը բարձրացրեց:

-Եթե դու չկարողանաս փողը չորս ամսից վերադարձնել, ապա ստիպված կլինես քեզ գրավ դնել: Դու կդառնաս Դեչժոն նստավայրի ստրկուհին,- ասաց Դեչժոնի տիկինը:

Մտածելով, որ Քհամսեցու քարավանը կվերադառնա հետագա չորս ամսվա ընթացքում, նա համաձայնվեց գործարքին:

Տիկինը Դեժոնգից հիացմունքի մեջ էր: Նա գովեց մորս՝ «Կին Քհանսա-Փաից, դու այնքան ոգով ուժեղ ես: Գնա եւ շտապ ժողովիր քո փողերը»:

Հետեւելով Դեչժոնի նստավայրի ծառայապետին, մայրս ելավ, պարտքով փողը վերցրեց, գրավոր պարտավորություն արեց եւ մալազրեց այն:

Մալայն Քհամսա-Փաի առետրական քարավանը չվերադարձավ, նույնիսկ նրա մահվանից հետո: Դեչժոն նստավայրը նոր ստրկուհի ստացավ: Տիկինը Դեչժոնից համոզեց մորս տիբեթական վզնոց գործել: Ողջ այդ ընթացքում նա սպասում էր Քհամսա-Փաի առետրական քարավանին, հուսալով, թե այդ մարդը կվերադառնա եւ վերականգնի նրա ազատությունը:

Տարիներն անցնում էին, եւ նրա հույսերը կրկին ու կրկին խափանվում էին: Վերջապես նա ազատվեց այդ վայրի ցանկությունից: Քանի դեռ նա շարունակում էր աշխատել, Դեչժոնի պարոնի հայացքը պատուհանից նկատեց նրան:

Մի գիշեր, քաղցր ու փուչ բաներ քչփչալով, պարոնը Դեժոնգից մտավ նրա անկողինը:

Նա ասաց.

-Ուսուցիչ, ես արևահոսություն ունեմ:

Պարոն Դեչժունը հանեց նրա զգեստը, ասելով.

-Քհամսեցի կին, դու այնքան նուրբ մաշկ ունես: Դա ինձ դողահար է անում:

Մորս աչքերին արցունքներ հայտնվեցին:

-Թույլ տուր ինձ ամեն գիշեր քնել քեզ հետ,- ասաց Դեժունգի պարոնը, հեռանալով: - Բոկոտն, գույնզգույն կոշիկներով, նա անհետացավ խավարում:

Այդ գիշերից հետո Դեչժունն ամեն գիշեր անցկանցում էր մորս անկողնում:

Սիրավեպի պատճառով պարոն Դեժունգը մորս թույլատրեց ծառայել տիկին Դեժունգին:

Մայրս կարծում էր, որ քանի դեռ ինքը պարոն Դեչժունի բարեհաճությունն է վայելում, ավելի լավ կյանքն կունենա, քան մյուսները: Սակայն, երբ մայրս հայտնաբերեց որ հղի է, պարոն Դեչժունը նրան ամուսնացրեց շեֆ-խոհարար Թենգինի հետ:

Ես ծնվեցի Դեչժուն նստավայրի ծառաների համար հատկացված սենյակում: Երբ ես ութ տարեկան էի, մայրս հիվանդությունից մահացավ: Ես դարձա Դեչժունի տիրուհու ծառան, մշտապես ենթարկվելով նրա կարգադրություններին: Փոքր-ինչ դժգոհության դեպքում նա ինձ կծեծեր:

Մի անգամ պարոն Դեժունգի քույրը լքեց Ռոնգա Շիկան, որպեսզի այցելության գնար իր ընտանիքին: Ճաշից հետո նրանք սկսեցին տիրեթական մաջոնգ խաղալ: Անհաջողությունը սնանկացրել էր Դեժունգի տիրուհուն: Նա չէր կարողանում դադարել տարվել: Երբ գիշերը եկավ, Դեչժունի պարոնի քույրն ասաց. «հաջորդական հաղթանակն ինձ ստիպում է վատ զգալ: Եւ ընդհանրապես, մի՞թե ես փողերի չեի տանում իմ սեփական ընտանիքից: Քույրս, ինչ կասես այն մասին, որ քո փոքրիկ ծառային ինձ տաս»:

-Դու նկատի ունես աղախնի՞ն:

-Հա, ես հենց նոր հետեւում էի աղջկան: Նա բավական արագ է գործում:

-Լավ, հիմա նա քոնն է:

## Ցերինգ Նորբու

Այսպիսով, Դեժուզի տիրուհին Չենլայի՝ Ռոնգայի Շիկայի տիրուհու պատճառով ինձ կորցրեց: Նրան տարան հեռավոր Ռոնգա Շիկա: Տեղ հասնելուն պես Կոնլան ինձ կարգադրեց հոտն արածեցնել, կերակրելով ինձ օրվա ընթացքում միայն մի գդալ ցամփայով: Տարուց ավելի ես արածացնում էի հոտը Ռոնգա Շիկայի համար, տառապելով քաղցից: Այդ ժամանակ շատերն էին հարցնում իմ ծագման մասին: Ես չէի ուզում բացահայտել իմ համեստ ծագումը, որովհետեւ ի պատասխան նրանք ինձ խղճահարության մի քանի խոսք կասեին: Այդպիսի խոսքերն ինձ համար անօգուտ էին:

Հաջորդ ձմեռ Կոնլան ինձ իր աղախինը դարձրեց: Ճիշտն ասած, Կոնլան ավելի մեծ բարությանբ էր օժտված, քան Դեժուզի տիրուհին: Երկու տարվա ընթացքում, որ ես նրա աղախինն էի, ինձ միայն մի անգամ են բռունցքով խփել: Բայց նա հախ հայիոյում էր ինձ:

Ավելի ուշ, երբ Չիայլո Տիերի Վանգչուկը տասներեք տարեկան դարձավ, նամակ եկավ պարոն Դեժուզից, որում ասվում էր. «Հեռավոր գյուղական վայրում մնալը Չիայլոյին ոչ մի լավ բան չի խոստանում»: - Նա խորհուրդ տվեց Չիայլոյին գնալ Լիասա, որպեսզի շարունակեր ուսումը: Կոնլան գոհ էր, քայլել գլուխը վեր պահած, ուղիղ մեջքով եւ բուրբիկ հերթով ժպտալով:

Մի աշնանային առավոտ, երբ արեւը նոր-նոր էր հայտնվել լեռնային ճանապարհի վրա, Ռոնգա Շիկայի ծեր ծառայապետը վառեց անուշահոտությունները: Շքեղ հագնված Կոնլան եւ Չիայլո Տիերի Վանգչուկը ձեռքերի մեջ բռնել էին բարձրլեռնային գարու բուշելը եւ լուռ աղոթում էին, մինչեւ գարին երկինք նետելը: Դռների ետեւում Կուզիկ Ռոդենը արդեն ձևկաձալ կեցել էր ձիու կողքին: Կոնլան ու Չիայլոյը թռան Կուզիկ Ռոդենի մեջքին, որպեսզի ծի հեծնեին: Այնուհետեւ Կուզիկ Ռոդենը կանգնեց, ձիուն առաջ տանելով, իսկ նրա ետքից եւ մեզ բեռուբարջով: Կեսօրին Սենակը խնդրեց մեզ կանգ առնել ամբարտակի մոտ: Դա խոտածածկ ափ էր, որի կողքով վտակ էր հոսում: Տղամարդիկ բերեցին ու եռացրին ջուրը, որպեսզի թեյ պատրաստեին: Կոնլան, ոտքերը ձգելով, անընդհատ հոգնությունից էր բողոքում: Ես ձևկի իջա, մերսելով նրա մեջքն ու ոտքերը: Երբ թեյախմությունն ավարտվեց, եւ մենք հասկացանք, որ Չիայլո Տիերի Վանգչուկը փախել էր: Կոնլան ինձ կարգադրեց նրան ետ բերել: Այդ օրը, վախենա-



յով ծանակվել ողջ Դեչժուն և ստավայրով մեկ, Չենյան խնդրեց ծեր ծառայապետին փոխառել նրա աղջկա տիբեթական հանդերձանքը եւ մի զույգ կանացի սապոզները: Հազնելով նոր հագուստները, ես հիացմունքի մեջ էի: Ես ձայն տվեցի Չհայլոյին: Երբ ես վերադառնում էի, Չհայլոը հանկարծ զիլ ճչաց, ինչից որ մազերս բիզ-բիզ կանկնեցին: Նա մատնացուց արեց վտակը, ճչալով.

-Նայիր: Դե ես ի՞նչ բան է:

Ուտքերս վախից դողում էին, բայց հետաքրքրասիրությունը ինձ ստիպեց նայել այնտեղ, ուր նա մատնացուց էր արել: Տրիմուռները լողում էին թափանցիկ ջրում, ինչպես փոքրիկ ձկներ: Մի ակնթարթում ես ուղիղ վտակի մեջ ընկա: Ամեն տեղ չքմփում էր ջուրը: Շնչահատվելով, ես փութանակի վտակից ելա: Տուրը մանրիկ շիթերով հոսում էր իմ տիբեթական հանդերձանքի ծայրից: Խոտերի վրա պառկած, Չհայլո Տիերի Վանգչուկը ընկել էր ծիծաղի նոպայի թակարոը, երկու ձեռքերով փորը սեղմելով: Եւ այդժամ ես հասկացա, որ նա էր ինձ ջուրը հրել: Տրից թրջվելով, ես վերադարձա Կոենյայի մոտ: Նա հայիոյեց. «Կույր էշ, ինչո՞ւ դու ջրի մեջ ցատկեցիր»:

Աչքերս վար բերելով, ես չէի համարձակվում բառ իսկ արտասանել:

-Քեզ տեղն է միայն մաշած հագուստ կրել: Քո վրա նույնիսկ նոր հագուստ է կեղտոտվել:

Չհայլո Տիերի Վանգչուկը խնդմնդաց: Օ՛, ոնց էի ես նրան ատում:

Կուզիկ Ռոդենը լցրեց Չհայլոյի ու Կոենյայի ամանները ցամփայով, որը նրանք սկսեցին հարել եւ ուտել: Նրանց կողքին ես շարունակում էի թեյ լցնել: Կոենյան ինձ երկու կտոր ցամփա եւ մի բաժակ կանաչ թեյ տվեց:

Երբ մենք վերջապես ժամանեցինք Դեժունգ և ստավայրը, պարոն Դեժունգը արդեն ուղեւորվել էր Նորբուլինգկու: Տիրուհի Դեչժունը կանգնած էր դարպասների մոտ, մեզ ներս թողնելով: Հասնելով Դեչժուն և ստավայր ընդամենը երեք օր, Սենյան շատ էր ուզում վերադառնալ Ռոնգա Շիկա: Պարոնը եւ տիկին Դեչժունին ես փորձում էի համոզել եւս մի քանի օր մնալ, բայց Սենյան հաստատակամ ասաց. «Հիմա բերքահավաքի ժամանակն է: Տանը ոչ մի ընդունակ մարդ չկա: Շատ բաներ կհետաձգվեն, եթե ես չվերադառնամ: Այսպես թե այնպես, Ռոնգա Շիկան ինձանից է կախված,- Կոենյան, գլուխը բարձրացնելով, հոգոց հանեց:

## Ցերինգ Նորբու

-Այսպիսի մեծ կավածքի տիրուհի լինելը՝ հեշտ խնդիր չի կնոջ համար: Մինչև ծերանալը, ամուսնացիր մարդու հետ եւ թույլ տուր նրան տեղափոխվել կավածք,- շարունակում էր տիկին Ղեժժունը:

Կոնկան պատասխանեց.

-Մի անգամ ես մի գաղափարի վրա մտմտացի: Բայց ոչ մի տղամարդ հավերժորեն իր կնոջը հավատարիմ չի: Այդ մտածելիս, ավաղ, ես կգերադասեի պահպանել իմ ընտանիքի ունեցվածքն ու սեփական երեխայիս մեծացնել:

Նկատելով նրա պաղ հայացքը, պարոն Ղեժժունը կամացուկ հազաց ու գլուխը բարձրացրեց: Երբ խոսակցությունն ընդհատվեց, սենյակում մեկեն լռություն տիրեց:

Քնալուց առաջ Կոնկան ինձ նվիրեց Տիերի Վանգչուկին: Ես չէի ուզում մնալ, որովհետեւ չէի ուզում տեսնել Ղեժժունը ստավայրի մարդկանց, բայց ինչպես ստրուկ, իմ ճակատագիրը կախված էր ուրիշների որոշումից:

Չհայրը սովորում էր Նունգրոնգխիա դպրոցում: Ամեն օր ես քարշ էի տալիս նրա գրասենյակային պիտույքները: Առաջին մի քանի օր ազնվագարմ երեխաները ծանակում էի Չհայրին, նրան գյուղացի անվանելով: Լսելով նրանց վիրավորանքները, Չհայրը սկսում էր արտասվել, հողին նստած ու ոտքերը ցնցելով: Թեպետ Չհայրն երկու տարի ինձանից մեծ էր, տեսնելով նրան այդ վիճակում ես չէի կարող նրան չխղճալ: Երբ մենք վերադարձանք Ղեժժունգ նստավայր, տեսնելով չայրի կեղտոտ հագուստը, տիկին Ղեժժունգն ինձ ապտակեց: Չհայրը Տիերի Վանգչուկը ինձ պաշտպանեց՝ «դա իր մեղքը չի: Մյուսներն ինձ ծաղրում էին: Նրանք ինձ գյուղացի էին կոչում»:

-Դու չե՞ս կարողացել Չհայրին պատասխանել,- հարցրեց տիկին Ղեժժունգը: Ինչպե՞ս դու կարող ես ձեռնհաս ծառա լինել: Դու պիտի պատժվես:

Հենց այդ պահին, երբ տիկին Ղեժժունգն ուզում էր փայտով ինձ խփել, մտավ պարոն Ղեժժունգը: Նա ճանկեց ձեռքերս ու սասաց. «Դա աղջկա մեղքը չի: Նրա վրա մի բարկացիր»:

-Դու պաշտպանո՞ւմ ես նրան: Պաշտպանո՞ւմ ես քո վիժվածքին:

Տիկին Ղեժժունգը վրա հասավ, բայց պարոն Ղեժժունգը փակեց նրա ճանապարհը: Փակելով ցածրահասակ տիկին Ղեժժունգի ճանապարհը:

ինչպես վայրի յակ, տիկին Դեժնզը փորձում էր ազատվել նրանից:

Չհայր Տիերի Վանգչիուկն ասաց.

-Ես դպրոց չեմ վերադառնա: Վաղը ես Չիասին ետ գյուղ կբերեմ:

Պարոն Դեժնզը թողեց տիկին Դեժնզի ձեռքերը: Բոլոր հայացքներն ուղղվեցին Տիերի Վանգչիուկի կողմը: Տիկին Դեժնզը մոլորված տեսքով հարցրեց.

-Դու ուզո՞ւմ ես վերադառնալ:

-Հա,- պատասխանեց Չիայրը:

-Չէ, դու չես կարող հեռանալ: Զո մայրն այնքան շատ է վճարել քո սովորելու համար: Իսկ դու այդ փողերը զուր կծախսեիր,- բարկացած զոչեց պարոն Դեժնզը: Տիկին Դեժնզը անճոռնի սստել էր մահճակալի վրա, արցունքները սրբելով:

Ե՛ւ Չիայր Տիերի Վանգչիուկը ե՛լ ես վախենում էինք պարոն Դեժնզից: Ժամանակի մեծ մասը նրա թուխ դեմքը ամուր էր, ինչպես քարը: Եթե նա նայեր ձեզ, դուք ողջ մարմնով կողոպտեիք: Այդ օրը նրա ցածր ճիչը բոլորի վրա տպավորություն թողեց: Չիայրը չէր համարձակվում նայել պարոն Դեժնզին: Միայն Դեժնզի ծառայապետը համարձակվեց նրան խորհուրդ տալ, որ հանգստանա:

Պարոն Դեժնզը սստել էր, ոտքերը խաչած վերմակի վրա եւ ասում էր. «Վաղը դու կգնաս դպրոց: Եթե նրանք քեզ գյուղացի կոչեն, սրտիդ մոտ մի ընդունիր: Դրանից բան դուրս չի գա: Չիաս, կարգի բեր Վանգչիուկի հագուստը: Իսկ հիմա դուք կարող եք գնալ»:

Չիայրը չհամարձակվեց ցույց տալ իր գայրույթը: Հաջորդ օրը նա հեզորեն գնաց դպրոց: Երբ նրանք Չիայրին գյուղացի անվանեցին, ես նրանց վրա քար նետեցի: Այդ երեխաները շուտ փախան: Շուտով այդ երեխաները ծանոթացան Տիերի Վանգչիուկի հետ: Դեժնզն սստավայրում, բացի այն, որ ես գնում էի Չիայրին տուն բերելու, իմ պարտավորությունների մեջ էր մտնում խոհանոցում օգնելն ու բանջարեղենը լվալը: Երբեմն ես ստիպված էի լինում ծառայել պարոն եւ տիկին Դեժնզներին:

Ամեն տարի Սենկան գալիս էր Չիայրին այցելելու՝ հացահատիկով ու մսով, Դեժնզն սստավայրի համար միրգ կամ բանջարեղեն բերելով: Որպեսզի Չիայրի ուսման համար վճարեր, Սենկան փոխանցեց պարոն Դեժնզին ձողներից ստացած հողակտորը: Տիկին Դեժնզը ասաց նրան.

## Ցերինգ Նորբու

-Մենք չենք կարող այն ընդունել: Այդ հողը՝ քո օժիտն է, որ թողել են քո ծնողները:

-Տների Վանգչուկի ճակատագիրը իմ եղբորից է կախված,- ասաց Կոնելան: - Այդ հողը՝ ոչինչ է:

Տիկին Ղեժունը երեք տարի անց Գերի Վանգչուկին ուղարկեց Դրեփունգ վանք գրագիտություն սովորելու /սկզբում սանսկրիտ/:

Չհայրը ինձ պատմեց, որ իր ուսուցիչն էր տարեց Ռիսպոչեն, ով բարի էր նրա հանդեպ: Մեծ հեռավորության պատճառով, Չհայրը բնակվեց վանքում: Արդյունքում ես ստիպված էի մնալ Ղեժուն նստավայրում, ենթարկվելով տիկին Ղեժունի խիստ հրամաններին: Տիկին Ղեժունը միշտ ինձ համար ամենակեղտոտ ու ծանր գործն էր գտնում: Ծամելով կաթի մնացուկները ուռչող այտերով, նա նստած էր վերելի միջանցքում եւ նայում էր, թե ես ինչպես եմ աշխատում: Այդպիսին էր տիկին Ղեժունի ամենակույ հանգիստը: Քանի որ նա չէր կարողանում դեկավարել պարոն Ղեժունին, ապա իր գայրույթը պարպում էր պարոն Ղեժունի բարեկամի վրա: Ինչպես տերոգորմյան նրա ձեռքին, ես այլ ելք չունեի, քան նրա վիրավորանքները տանելը: Ղեժուն նստավայրում ես խոտ էի հնձում, փայտ ջարդում, ոչխարների էի խուզում եւ տիբեթական բուրդ էի գործում, բայց այդուհանդերձ ժամանակ էի գտնում տիկին Ղեժունին եւ նրա աղջկան ծառայելու համար: Չնայած այդ ամենին, տիկին Ղեժունը դեռեւս համարում էր, որ ես բավականաչափ չեմ աշխատում: Նա ինձ հաճախ ձրիակեր էր կոչում, ավելի քիչ օգտակար, քան ջորին:

Ամեն անգամ, երբ Չհայրը վերադառնում էր, տիկին Ղեժունը ինձ աշխատանքի չէր տեղավորում: Ինձ պետք էր միայն շորերս փոխել, լվալ Չհայրի կեղտոտ հագուստը եւ թեյ մատուցել: Տեսնելով, որ ես գնում եմ Չհայրի ետեւից, տիկին Ղեժունը քմծիծաղում էր. «Տների Վանգչուկ, դու նրան երես ես տալիս: Եթե նա հետո էլ ոչինչ չանի, ապա ի՞նչ կլինի նրա հետ»:

Չհայրը քմծիծաղեց ու շարժունքով ինձ իր ետեւից կանչեց: Չհայրը սիրում էր նայել, թե մյուսներն ինչպես էին գառ խաղում: Ամեն անգամ, որ մեկը գառ էր խաղում ճանապարհին, նա կանգ էր առնում եւ ինձ խնդրում էր զբոսնել բարկիոր-սթրիթով: Երբ ես վերադառնամ, մի երեք պտույտ կատարելուց հետո, հնարավոր է, նա դեռ այնտեղ

կանգնած լինի: Հենց որ ես փոքր-ինչ անհամբեր էի դառնում երկարատև խաղերից, նա մատները շրխկացնելով ասում էր. «Դու առաջինը վերադարձիր»:

Ժամանակավոր միանձնուհի գտիր, իսկ հետո ամուսնացիր:

Ստիպված եղան դատական պրոցես սկսել, որովհետև աղջիկը բավական համակրելի է:

Դուռը մի փակեք, քանի որ դեռ ծնողները տանն են:

. . .

Չհայրն իմացավ կանանց եւ տղամարդկանց միջեւ եղած հարաբերությունների մասին, ոսկորների երաժշտությունից, ավետելով իր տղամարդկության մասին, բայց դա արդեն այլ պատմություն է: Ավելի ուշ Չհայրը սկսեց ուսումնասիրել տիբեթական բժշկությունը, եւ այդ ամենը, իհարկե, կազմակերպեց պարոն Դեժոնգը: Վախենալով կորցնել հացահատիկը, միսն ու յուղը յոթ թե ութ մարդկանց համար, որոնք հասցվել էին Չենլոյ, տիրուհին Դեժոնգը խնամում էր Չհայրի Չենլոյի բոլոր հնարավոր միջոցներով: Դրա շնորհիվ նույնիսկ ես ստացա մի քանի մաշած հագուստներ:

Անցավ յոթ տարի, եւ Չհայրը տղամարդ դարձավ: Նրա շուրթերի շուրջ դեղին մորուք հայտնվեց, որից ցցվում էր ադամախնձորը: Այն ժամանակ ես սլացիկ ու բարձրահասակ էի: Պարոն Դեժոնգն ասաց, որ կես տարուց նա Չհայրի համար աշխատանք կգտնի, քանի դեռ նա երեւակայությամբ լի է: Մի ժամանակ Չհայրը գնաց իր զարմիկի հետ, մինչեւ ուշ գիշեր չվերադառնալով: Ես նստում էի աստիճանի վրա եւ մինչեւ կեսգիշեր սպասում էի նրան: Վերջապես նրանք ետ քարշ եկան, նրանցից ալկոհոլի հոտ էր փչում: Ես նրանց օգնեցի իրենց սենյակները գնալ: Երբ ես գնացի միզարանը Չհայրի սենյակում դնելու, ես տեսա, թե ինչպես նա վերմակը ոտքով նետեց հատակին: Երբ ես նրան կրկին ծածկում էի վերմակով, Չհայրը հանկարծ գրկեց ինձ եւ կարգադրեց հանվել:

Ես ասացի: «Ոչ, Չհայր»:

Նրա ձեռքը սահեց իմ ոտքերի արանքով, ասելով. «Ոչ: Դու առանց այդ էլ արդեն թաց ես»: Ինձ համար շատ ամոթ էր, որպեսզի խոսք իսկ արտասանեի: Չհայրը փչեց-հանգրեց նավթալամպը եւ հանեց գոտիս: Ամեն օր ես անհամբեր սպասում էի գիշերամուտին: Երբ բոլորը քնում

## Ցերինգ Նորբու

Էին, ես բոբիկ, մատներիս ծայրերի վրա սողոսկում էի Չհայրի սենյակ: Նրա անկողինը անհավանական տաք էր: Գլուխը դնելով ձեռքիս, նա մերթ ընդ մերթ ականջիս քաղցր պարապություններ էր շնչում: Այդպիսի պահերին գիշերը չափազանց կարճ էր: Անգիտակցաբար ես ստիպված եղա արագ ելնել եւ մատներիս ծայրերի վրա իմ սենյակ վերադառնալ: Այն ժամանակ ես ցանկություններով լի էի, հուսալով մնալ միայն Չհայրի հետ:

Իմ ամենաերջանիկ օրերին Սենյան ջորիների խումբը տանում էր գետի մոտ:

Երկյուղելով, որ մեզ կարող են բռնացնել, Չհայրն ինձ չէր թույլատրում գիշերով իր մոտ գալ: Այդ օրերն ինձ համար ծանր էին: Ես անհամբերությամբ սպասում էի, թե երբ Կոնկան ավելի վաղ գյուղ կվերադառնա:

Սակայն այդ օրերը երկար չտեւեցին: Որոշ ժամանակ անց սրտխառնուք ունեի, եւ դա գրավեց Դեժոն-կրոստերի ստնտուի ուշադրությունը:

Նա ինձ հարցրեց.

-Դու հիվանդ ես:

-Ոչ,- պատասխանեցի ես: Ես պարզապես սրտխառնուք եմ զգում:

-Երեւի քո դաշտանային շրջանն է:

-Այն վաղուց չի եղել:

Նա ասաց.

-Դե, ուրեմն, ամեն ինչ կարգին է: Դու քեզ ավելի լավ կզգաս:

Այդ երեկո ես թաքուն մտա Չհայրի սենյակը: Սակայն ետդարձի ճանապարհին տիկին Դեժոնգն ու Դեժոնգ-կրոստերի ստնտուն ինձ բռնացրին: Տիկին Դեժոնգը փայտով ինձ ծեծեց: Վախենալով բոլորին արթնացնել, ես չէի համարձակվում ծպտուն իսկ հանել: Փայտը մի կողմ թռավ, բայց ես չափազանց վախեցած էի, որպեսզի ցավ զգայի: Երբ աքաղաղը երրորդ անգամ կանչեց, տիկին Դեժոնգն ի վերջո խնդրեց ստնտուին կանչել պարոն Դեժոնգին: Տեսնելով ինձ քրջերի մեջ ու բոբիկ, պարոն Դեժոնգը հասկացավ, թե իմ ու Չհայրի միջեւ ինչ էր տեղի ունեցել: Նա ապտակեց ինձ: Փռվելով հատակին, ես տեսա աստղերը, որոնք տեղնուտեղն ընկան հատակին: Իմ դեմքը շիկնեց:

-Ախ դու անամոթ վիժվածք,- գոչեց պարոն Դեժոնգը:

-Պարոն, ես հղի է,- ասաց ստնտուն:

-Ինչպե՞ս ես կարող եմ այդ բացատրել քոջս: Անամոթ աղջիկ:

Պարոն Դեժնզը ճանկեց փայտե թասն ու նետեց այն ինձ վրա: Ես փութկոտ գլուխս ձեռքերով ծածկեցի, թեյի մնացուկները ներծծվեցին մեջս:

-Թանկագինս, մենք պետք է իդեալական գաղափար հորինենք, որ պեսզի Կոնկան մեզ չմեղադրի:

Տիկին Դեժնզի խոսքերը տեղուտեղը հանգստացրին պարոն Դեժնզին:

Պարոն Դեժնզը կատաղի նայեց ինձ, մաքրելով իր թեւքի վրայից թեյի տերեւները:

-Մի գիշերով սեքսը Չհայլդի ու ծառայի միջեւ այնքան մեծ բան չի: Արի նրան Ռոնգա Շիկա վերադարձնենք: Ոչինչ չի պատահի,- ազդարարեց պարոն Դեժնզը բարկացկոտ՝ գնալուց առաջ:

Ստնտուն ինձ փակեց մթերքների նկուղում՝ ախոռի կողքին: Ես այնտեղ սպասում էի Չհայլդին, բայց նա այդպես էլ չհայտնվեց: Ես ինձ մխիթարում էի այն բանով, որ նրան, երեւի թե ետ էին պահել պարոն եւ տիկին Դեժնզները, որովհետեւ նա չէր կարող այդքան անսիրտ լինել: Ուշ առավոտյան Դեժնզն նստավայրի ծառայապետը ծառայի հետ բացեց դուռը: Ծառայապետն ինձ ասաց. «Չհես Ռինգինը քեզ ետ՝ Ռոնգա Շիկա կտանի: Դե սա քո հագուստն է: Քո վերմակը կապված է ձիուն»:

Ես դռան արանքից նայեցի, մնալով երկու տղամարդկանց միջեւ, հուսալով տեսնել Չհայլդին: Արեւի տակ մի քանի, սևուկ ժողովող, թռչուն էին ճովողում:

-Իսկ ո՞ւր է Չհայլդ Տիերի Վանգչիուկը,- հարցեցի ես ծառայապետին:

-Չհայլդը գնացել է Կաշանգում աշխատելու:

Իմ արցունքները թափվում էին այնպես, ասես ինչ-որ մեկը բռունցքով խփել էր կրծքիս: Բարեբախտաբար, տղամարդը, որ վերադարձրել էր ինձ, ողջ ճանապարհին անեկդոտներ էր պատմում: Նա ինձ ստիպեց մոռանալ իմ ներքին ցավն ու արտաքին վնասվածքները: Ռենգինի ճանապարհին ինձ պատմություններ էր պատմում Ակուղունպեի եւ Մեյրուզիժնզեի մասին: Սակայն, մոտենալով Ռոնգե Շիկային վատ տրամադրության մեջ, ես անհաղորդ էի նրա պատմություններին:

## Ցերինգ Նորբու

Կոնելյայի որոշումն ինձ չէր շփոթեցնում, բայց ես չէի սպասում, որ նա ինձ կուղարկի կալվածքի ամենաայլանդակ տղամարդու մոտ: Հնարավոր է, հենց այդ էլ իմ պատիժն էր: Այդ գիշեր Կուզիկ Ռոդենը փորձեց քնել ինձ հետ: Ես բռնել էի ոտքերս, չթույլատրեով նրան դիպչել ինձ: Կուզիկ Ռոդենը սարսափելի անխիղճ էր: Նա ճանկեց գլուխս եւ սկսեց այն խփել պատին, մինչեւ որ ճակատիցս արյուն եկավ: Կուզիկ Ռոդենը վերջապես հանձնվեց: Նա ինձ ոտքով հրեց, փսքեց ու տեղնուտեղը ննջեց: Չորս օր ես քնում էի անկյունի պատի մոտ: Մեր հարսանիքի առաջին օրերից հետո, ես չէի կարողանում ամեն անգամ չորրբոքվել, երբ տեսնում էի Կուզիկ Ռոդենին: Նա ոչինչ չէր կարողանում անել, բացի ինձ ծեծելուց: Ավելի ուշ փորս օրեցօր ավելի ու ավելի մեծացավ: Տեսնելով փորս, Կուզիկ Ռոդեն կորցրեց իմ հանդեպ ամենայն ցանկությունը:

Մայիսին փորս կլոր ու ցցված էր: Մարդիկ կալվածքում ասում էին, թե ես պատրաստվում եմ երեխա ծնել: Այդ ժամանակ Չհայլդ Ջերի Վանգչուկը ուղեւորվեց տուն՝ իր հարսանիքին: Կոնելյան ողջ այդ ընթացքում մնում էր Չհայլդի հետ: Այսպիսով, նա չկարողացավ ինձ մոտ գալ: Նրա հարսնացուի ժամանումը կալվածքում բոլորին հուզեց: Սակայն ես սենյակում մենակ մնացի եւ դառն արտասվեցի:

Ողջ օրը, ինչպես տիբեթական բրդի գործքը, գրկում էին երկրպագություններն ու գովաբանությունները, ծակելով իմ սիրտը բազում փշերով:

-Հարս Կհանդրոն, իրոք, շատ տգեղ է,- ասաց Կուզիկ Ռոդենն այն գիշեր: Ես ինձ շատ ավելի լավ զգացի, եւ ես նույնիսկ կամեցա անհպաղ տեսնել այդ կնոջը:

Հաջորդ օրը, երբ ես խոհանոցում թեյ էի ըմպում, նա եւ Չհայլդը եկան կենտրոնական բակ: Արքայազնի պես հագնված, Չհայլդը շլացուցիչ շողում էր արեւի տակ: Թեեւ հարսը հագնված էր լեդիի պես, զարդարված ագատով, նեֆրիտով, ոսկյա եւ արծաթյա նախշազարդերով, նրա տափակ դեմքի հետ ոչինչ չէիր կարող անել: Ես հուզված էի, տեսնելով, որ նա այդպիսի կնոջ հետ է ամուսնանում:

Նույնիսկ հարսանիքի վերջում ես չէի կարողանում Չհայլդի հետ հանդիպել: Ես մտածեցի, որ նա պետք է իմանա, որ երեխան իմ փորում իր երեխան է: Սակայն շուտով Չհայլդը գնաց: Ես պատասխան չստացա, եւ դա ինձ փոքր-ինչ հիասթափեցրեց:



Մի ամսից ծնվեցիր դու, իմ թանկագին կրկնակ: Այժմ դու չէիր կարող լսել, թե ես ինչ ասացի, որովհետեւ շատ մանրամասներ չափազանց բարդ են, որպեսզի դրանք կարելի լիներ բարձրաձայն ասել: Դրանք ես կարող էի միայն լուռ ասել ինքս ինձ:

Քո ծնունդից հետո Կուզիկ Ռոդենը չափազանց հուզված էր: Նա քեզ ընդունեց ինչպես իր որդուն եւ ևս ոչինչ սկսեց ինձ ավելի լավ վերաբերվել, այլ, սովորականի պես, չձեռնել:

Այդ ժամեւ Չիայլոը վերադարձավ Ռոնգա Շիկա՝ ընկճված եւ փակվեց իր սենյակում, հրաժարվելով որեւէ մեկին տեսնել: Ես որոշեցի, թե նա հուսահատվել էր, մի անգամ բախվելով ևս ոչինչիս ծանր փորձության, ինչպես եւ մանուկ հասակում: Ամեն օր ես կանգնում էի բակում, ձեռքներս թեքում էի արեւի տակ, եւ հուսով էի տեսնել Չիայլոին: Ծառայապետ Սանջայը հաճախ էր փողոց ելնում, որպեսզի ներս հրավիրեր բժիշկներին եւ լամաներին: Ամեն դեպքում, Չիայլոին մենք չէինք տեսնում: Թեպետ ես կարող էի տեսնել Կհանդո Յոշեին եւ Չենլուին ամեն օր, ես չէի կարող ասել, թե այդ ինչ հիվանդություն է, նրանց դեմքերի արտահայտությունից: Հաջորդ գարուն Չիայլոը վերջնականապես խելքի եկավ: Մի անգամ ինձ մոտ եկավ ծառայապետ Սանջայը: Ես հետեւեցի նրան դեպի նրա տուն: Դռան մոտ ծառայապետն ինձ ներս թողեց, բայց հետո դուրսից դուռը փակեց:

Չիայլոը նստած էր սենյակում, ավելի վատ տեսք ունենալով, քան նախկինում:

Նա ասաց.

-Չիես, ես կարոտում եմ քեզ:

-Օ՛Ֆ,- տևքացի ես:

Չիայլոը ելավ, ձեռքիցս բռնեց եւ ինձ քարշ տվեց մահճակալի մոտ: Նա վիզս համբուրեց եւ դիպավ պտուկիս: Իմ ինտիմ տեղերը կրկին տամկացան: Ես ասացի.

-Երեխան քոն է:

-Ես ամեն ինչ հասկանում եմ:

-Մի՞թե դու չես ուզում նրան տեսնել,- հարցրեցի ես:

-Ես արդեն տեսել եմ նրան: Մի՞թե դու նրան դուրսից քուղերով չէիր կապել:

-Ես այլ ընտրություն չունեմ:

## Ցերինգ Նորբու

-Ես կարոտում եմ քեզ: Արի գոնե մի գիշեր իրար հետ քնենք:

Չհայրն ինձ քարշ տվեց մահճակալի մոտ: Ես լի էի այլևս նրան չհանդիպելու վճռականությամբ, բայց ամեն անգամ այդ չէի կարողանում անել: Ես անհամբերությամբ սպասում էի ծառայապետ Սանջայի վերադարձին: Ողջ այդ ընթացքում ծառայապետ Սանջայը Կուզիկ Ռոդենին ժամանակ առ ժամանակ հրավիրում էր զբոսնելու: Կուզիկ Ռոդենը հաճախ բողոքում էր, որ իր կոշիկները կոտրվում են:

Մի անգամ գիշերը, Կոենլան ինձ աղախնի միջոցով կանչեց իր մոտ: Նրա սենյակում միայն ես եւ ինքն էինք: Նա ասաց.

-Անցյալը մնացել է անցյալում: Ես չեմ ուզում, որ ես ինչ-որ ամոթալի բան լինի: Դա ողջ կալվածքը քառսի կվերածի: Դա քո ցանկությունն է:

-Ես չեմ ուզում այդ տեսնել, բայց...

-Ես ուզում եմ, որ դու եւ Կուզիկ Ռոդենը տեղափոխվեք Նիանգ գյուղ:

-Այո, տիկին:

Երբ մենք ժամանեցինք Նիանգ գյուղ, տարածությունն իմ եւ Չհայրի միջեւ նույնքան մեծ դարձավ, ինչպես երկրի ու երկնքի միջեւ: Երբ Կուզիկ Ռոդենը առաջարկեց ինձ քնել իր հետ, ես այլևս չէի հրաժարվում: Բացի աշխատանքից, ես մտածում էի այն մասին, որ լավ է քեզ դաստիարակելը: Ամեն աշնան բերքահավաքից հետո Կուզիկ Ռոդենն ինձ հարցնում էր, արդյոք ես չեմ ուզում նրա հետ կալվածք վերադառնալ: Ես միշտ ասում էի. «Ես ոչ մի տեղ չեմ ուզում: Թույլ տվեք ինձ մնալ այստեղ, մինչեւ որ ես ծերությունից մահանամ»:

Կուզիկ Ռոդենը հացահատիկը բարձեց ձիու վրա եւ բերեց այն Ռոնգա Շիկա: Ես այլևս չէի ուզում այնտեղ գնալ:

-Դոփեյթ, այն ժամանակ դու հետզհետե էիր մեծանում, ամեն օրեցօր ավելի ու ավելի նմանվելով Չհայր Տիերի Վանգչիուկին: Ինչ-որ առումով այդ ինձ համար մխիթարանք էր: Երբ դու յոթ տարեկան էիր, Չհայր Տիերի Վանգչիուկը մահացավ, եւ այդ անսիրտ Կոենլան քեզ խլեց ինձանից: Ես չէի կարողանում քեզ պաշտպանել, եւ ես ստիպված եղա քեզ ժիարի տաճար ուղարկել, ինչպես նա այդ ուզում էր: Վերադառնալով տուն, ես օրերով հեծկլտում էի, տառապելով աչքերիս վարակից: Մտովի անընդհատ նզովում էի Կոենլային: Իմ նզովքներն ի վերջո ի կատար ածվեցին: Վիրահատություն եղավ: Նրա հարսը

ամուսնացավ մեկ այլ տղամարդու հետ եւ նրան կալվածք բերեց: Ես երջանիկ էի տեսնել, որ կալվածքն այլ մարդիկ էին գրավել:

Մահվան մահճում Կուզիկ Ռոդենը ձեռքս ճանկեց ու ասաց. «Ես ուզում եմ տեսնել Նայենդրագին»:

Իսկ հետո նա ակնթարթաբար մահացավ, ուղեւորվելով այն աշխարհ եւ ինձ լրիվ մենակ թողեց: Այդ ժամանակ Կոնելյան ասաց. «Չառամ կիևը չի կարող ֆերմայում աշխատել: Ի՞նչ կասես, եթե հրավիրեն կալվածքում աշխատելու»:

Ես վերադարձա Ռոնգա Շիկա իմ սովերի հետ: Ես ուզում էի տեսնել, թե ինչպես է Ռոնգա Շիկան հետզհետե քայքայվում:

Կոնելյայի մազերը ճերմակել էին, իսկ մեջքը կուզիկացել էր: Նա հաճախ էր ձեռնափայտին հենվում, շրջանցելով Սպիտակ աշտարակը, եւ միայն նրա սովերն էր հետետում նրան: Մի անգամ ես տեսա Սենլային միայնակ դեպի Սպիտակ աշտարակը գնալիս: Ես նետվեցի նրա մոտ, ծնկի գալով եւ խոնարհվելով, որպեսզի պաղատեմ. «Տիկին, խնդրում եմ, թույլ տվեք իմ որդուն վերադառնալ աշխարհիկ կյանքին: Իմ ողջ կյանքում մենք ձեր տրամադրության տակ կլինեմք»:

Տերողորմյան տարուբերելով, Կոնելյան զարմացած էր երեսում: Նա ասաց.

-Աշխարհիկ կյանքն այնքան էլ հաճելի չէ: Ինչ-որ ժամանակ մարդը կկորցնի այն, ինչին որ մի ժամանակ տիրում էր: Կյանքը նման է դրամայի:

-Ինձ պարզապես իմ որդին է պետք:

-Դու ավելի ու ավելի ես խճճվում,- քամահրական ասաց Կոնելյան: Ես պատասխանեցի.

-Ես ուզում եմ, որպեսզի նա վերադառնա աշխարհիկ կյանքի եւ ապրի ինձ հետ:

Կոնելյան մոլեգնեց, իր ձեռնափայտը թափահարելով եւ ասելով.

-Դոփելիքը պատրաստվում է քննություն հանձնել Դուրեկերույի քննության համար /աստիճան տիրեթական բուրդիզմի գծով/: Մի՞թե դու ուզում ես քայքայել նրա ապագան:

-Ես չեմ ուզում, որ նա նախանձելի սիրամարգ լինի: Ես պարզապես ուզում եմ, որպեսզի նա էջ լինի իմ կողքին:

Կոնելյան ոտքը գետնով տվեց ու բարկացած ասաց.

## Ցերինգ Նորբու

-Դու տան կենդանիներից վատ ես: Նույնիսկ չմտածես այդ մասին:

Նա շարունակում էր իր ճանապարհը: Ես ծնկի իջած կեցած էի, մինչև որ նա դադարեց քայլել: Բայց նրա մեջ մի կաթիլ կարեկցանք չկար: Այդ պահին ես իրոք կամեցա գլուխս խփել Սպիտակ աշտարակին եւ վերջ տալ, տառապանքներով լի, իմ կյանքին: Սակայն ատելությունն ինձ ապրելու առիթ էր տալիս: Ես երդվեցի, որ քեզ ետ կվերադարձնեմ: Իսկ հիմա, Դոփելթ, դու ինձ հետ ես: Ես այլեւս երբեք չեմ թողնի քեզ ինձ լքել: Ավելի ուշ Կոնելայի կյանքն էլ ավելի ծանրացավ: Կհանդրոն առավել հեզնական դիտողություններով էր վերաբերվում նրան, եւ երբեմն նույնիսկ հայհոյում էր նրա տաղտալի արարքները: Կոնելան չհամարձակվեց պատասխանել Կհանդո Յոշոին, ու նա ստիպված եղավ վհատորեն հեռանալ:

Նրանց մեջքի ետեւում կալվածքում հաճախ ասում էին. «Կոնելան շատ դժբախտություններ է ապրել: Նա այնքան խղճուկ է:

Միայն թե՛ ես համարում էի, որ դա նրա հատուցումն է:

Մանրամաղ անձրեւի տակ գտան Կոնելայի դիակը: Նա կծկվել էր Ռոնգա Շիկայի անտառի ետեւում, իր առաջ նետելով տերողորմյան: Ծառայապետ Սանջայը տանում էր նրա մարմինը, ուղեկցվելով արտասովոր մարդկանցով: Խուսափելով կալվածքի շուրջ մարդկանց բամբասանքներից, Կհանդրոն արժանի թաղում կազմակերպեց:

4

-Մենք հասանք լեռան ստորոտը,- ասաց Դոփելթը, մոտենալով Մարնի լեռանը, եւ նեղվելով լեռան հենակետում գտնվող Մառնիի քարե բլրի կողքին:

-Եկեք հանգստանանք:

Մառնիի քարե բլուրը բարձր չէր: Վերելում աղոթքի դրոշ կար: Ետքը թեքելով Մառնիի քարե բլուրին, Չհասը խորհեց, թե ինչպես իրականացնել իր ծրագիրը:

Չհասն ասաց. «Յոգուրտի այս դույլը տվել է Խանդո Եսեն: Եկեք խմենք այն եւ շարտենք դույլը, որպեսզի այն ինձ հիշեցնի Ռոնգա Շիկան»:

-Լավ.

Դոփելթը գրպանից հանեց փայտե ամանը՝ այն փոխանցելով մորը:

Չհասը վերցրեց փայտե ամանը եւ դուրս հանեց մածունը, դնելով Դոփելթի ամանի մեջ:

-Դոփելթ, ինչու՞ չես ուզում մնալ տան տարածքում:

«Ես վանական եմ, ես չեմ ուզում աշխարհիկ կյանք ունենալ, որը լցված է միայն տառապանքներով եւ հակամարտություններով: Բայց ես գուցե սովոր չեմ տաճարում ապրելու համար»:

-Դա պարզապես ժամանակավոր:

-Դու որոշել ես ինձ տանել տաճա՞ր:

«Մեր անհանգստությունները բխում են մեր անսահման ցանկություններից: Մեզ տիրում են ազահությունը, ատելությունն ու անտեղյակությունը: Միայն այն ժամանակ, երբ մենք ամբողջից հեռու լեռը զնանք, մենք կարող ենք հանգստացնել մեր միտքը: Ստածումի մեջ հոգեւոր աճեցման ավելացումով՝ մենք կարող ենք ազատվել մեր անսահման ցանկություններից եւ հասկանալ, որ աշխարհում ամեն ինչ անկայուն է:

Չհասը ոչինչ չասաց: Նա բաժակը փոխանցեց Դոփելթին՝ ցանկանալով, որ խմեր մածունը: Սպիտակ մածունը թաքցնում էր Չհասի հույսը՝ այլեւս չմասնակցել որդու տանջանքին: Դոփելթը խմեց ամբողջ մածունը: Չհասը սկսեց նրա մոտ՝ առանց սարսափի կամ զղջալու:

Չհասը հանգիստ ասաց.

-Դոփելթ, մենք չենք կարող զնալ ժհարի տաճար: Պարզապես քո խմած մածունը թունավոր է: Դու պատրաստվում ես մեռնել:

-Ես գիտեի, որ դու կարող ես ինձ թունավորել: Այդ գիշեր, երբ մենք հեռացանք Ռոնգա Շիկայից, Գուանինը (Գթասրտության աստվածուհին) հայտնվեց իմ երազում: Նա ասաց. «Մի՛ խմիր որեւէ մածուն, կամ դու չես կարող գոյատևել»: Երբ խնդրեցիր ինձ խմել մածունը, ես ընդունեցի մահը: Ես հավատում եմ, որ իմ մահը թույլ կտա քեզ զղջալ՝ հանգեցնելով քեզ տեղեկացված լինելուն՝ քո մեղքի եւ անբաժանելիության մասին: Այսպիսով, դուք կարող ես դեն նետել ատելությունն ու ամաչել քո արած գործերից: Ես քեզ չեմ մեղադրում. Բուդդան մի անգամ քաղցած վագր էր կերակրում իր սեփական մարմնով: Ինչպե՞ս կարող էի պահպանել իմ մարմինը:

Հանկարծ Չհասը ծեծեց կրծքին եւ քաշեց նրա մազերը՝ թափահարելով արցունքները:

## Ցերինգ Նորբու

Դոփելթը ոտքի կանգնեց՝ որոշ հեռավորության վրա բերելով մաժուկով թասը: Նա թափեց մաժուկը, այնուհետև ծածկեց ավազոտ հորով: Դրանից հետո նա ետ գնաց դանդաղ՝ նստած Չհասի մոտ:

«Մայրիկ, Թրայոկան (երեք աշխարհ) կրակի պես անկայուն է: Սիրահարվելով եւ ատելով՝ կարող եք ապրել միայն ցանկության ոլորտի ցիկլի մեջ (բաժանված է վեց տիրույթների): Իմ մահից հետո դու պետք է լավ հոգ տանես քո մասին: Ես սիրում եմ քեզ. Ես օգտագործում եմ իմ մահը՝ իմ սերն արտահայտելու համար քեզ»:

«Որդի՛ս, դու չես կարող մեռնել: Ես արժանի եմ սպանվելու»:

Դոփելթի մատները սահեցին Չհասի չթափված մազերի միջով՝ նա լսեց, որ նրա սիրտը դողում էր տխրության մեջ, երբ բարձրանում էին առավել բնական եւ մաքուր հույզերը: Անպիտան լոտոսների պես նրանք ծաղկում էին եւ փչում նրա սրտում:

Տոքսինը դանակով հարվածում էր Դոփելթի մաժուցիկին սրի նման: Կոտրվելով մոր ձեռքերից, փորելով որովայնը, նա քայլում էր որքան հնարավոր է: Դոփելթը չի ցանկացել, որ իր մայրը տեսնի իրեն հոգեվարքի մեջ, ինչը միայն կբարձրացնի իր մեղքի զգացումը:

-Դոփելթ:... Դոփելթ:...»

Երբ աղաղակները թռչում էին նրա ականջին, ցավը թեթեանում էր: Դոփելթը դիմեց իր մորը դիմավորելու՝ նստած եւ խորհրդածելով լոտոսի կեցվածքով: Մտածելիս նա հստակ տեսավ մոխրագույն մազերով մի ծեր կնոջ, որը ծնկի էր գալիս արեւոտ ծառուղում՝ մի փոքր ցեխոտ աշտարակ պատրաստելով կաղապարով: Երբ նրա աչքերից, բերանից եւ քթանցքներից հոսեց խոնավ արյունը, ցավը հանկարծ դադարեց: Հոգին լքեց Դոփելթի մարմինը եւ լողաց առ Չհեսը, թեթեւ, ինչպես օդը: Չհեսը սողաց Դոփելթի մարմնի մոտ: Մոտենալով, տեսնելով, նրա բերանից, ականջներից, բերանից ու քթանցքներից հոսող արյունը, նա ուշաթափվեց: Հոգին մոտ վազեց, որպեսզի հրի ու գրկի նրան, բայց թիզ անգամ չկարողացավ նրան տեղից շարժել: Այնուհետև հոգին սահեց նեղիկ գալարուն արահետի վրայով, հանց քամի, մոտենալով ժիարի տաճարին: Նա դարպասներից ներս մտավ, թռավ կտրուկ քարե աստիճանների վրայով եւ հայտնվեց Դաջին սրահի դարպասների մոտ: Լուսադեմին ես պիտի փոքր-ինչ կովի թրիք վերցնեի խոհանոցի կավե վառարանի վրայից, լցնեի այն կավե խնկամանի մեջ եւ վա-

զեի Դաջին սրահ խունկ ծխացնելու համար: Մշուշով պատված, շուրջ-բլուրս անուշահոտությամբ, երբ վառում էին խնկերը: Թիուփթեն դամփա Նյիմա Ռինփոչեն մի քանի վանականների օգնությամբ մազլցեց լոտոսե նստատեղի վրա: Երգող վանականի ղեկավարությամբ հնչում էին բարձր եւ ցածր ձայները: Ողջ Դաջին սրահը լցվել էր ձայների տամկությամբ: Լինելով փոքրիկ վանական, ես կարող էի նստել միայն վերջին շարքում: Այդ ընթացքում բազում ձեռքերը ուղիղ ծափ էին զարկում, ասես բազում ալիքներ հուժկու շառաչով զարկվում էի ժայռերին: Այդպիսի ձայնային ալիքները թույլատրում էին ամեն ինչի մասին մոռանալ, ապրելով միայն հոգետր աշխարհում:

Կարճատեւ հանգստից առաջ, որպես ջահել վանականներ, մենք պիտի վազենք խոհանոց, բարձրացնելով յուղոտ թեյով տակառները, որպեսզի Դածին սրահում, առավոտյան թեյ մատուցեինք: Յուղով թեյը պղնձե թասերով թռավ վար: Մենք ետուռաջ էինք վազում, ասես մեր ոտքերի տակ անիվներ էին, եւ մենք մրցում էինք միմյանց դեմ: Դա բերկրալի էր:

Առավոտյան թեյից հետո, երբ մարդկանց ծիրանագույն հոսքը հորդեց երեք դարպասներից, Դաջին սրահում հետզհետե լռություն տիրեց: Բամբուկե տախտակիկը ձեռքին գուրու Լուկաթոզը խնդրեց ինձ կարդալ այբուբենն ու ձայնավորները:

Բամբուկե տախտակիկի հնչյունների ներքո ես շատ օրեր ու գիշերներ անցկացրի:

Ծեր տիկինը Ռոնգա-Շիիկայից ուղարկեց դռանապան Սանջային ինձ փոքր-ինչ յուղ, ցամփա եւ փող բերելու: Այդ բաներով ես կարող էի Տիգիսի Շանգիի մոտ քերականություն սովորել:

Մեկ տարուց ես քերականության քննություն հանձնեցի:

Միկի թիուփթեն դամփա Ռինփոչեն ինձ իր սենյակ կանչեց: Նա հիվանդացել էր եւ այդ պատճառով կարողանում էր միայն մեղիտացիա անել պատուհանի մոտի մահճակալի վրա: Ցածրիկ սեղանի վրա դրված էին բուրդիստական գրերը եւ վաջիրական կնիքները: Սենյակում կեցած էր խնկաբույրը:

Մտնելով սենյակ, ես երիցս խոնարհվեցի Նյիմե Ռինփոչեի առաջ:

-Դուփեյթ, ես լսել եմ, որ դու շատ խելոք ես, բայց չես հանգստանում: Գյուղական առվակը անընդհատ հոսում, իսկ ծովն այնքան նկատելի

## Ցերինգ Նորբու

չի: Դրանցից որո՞ւմ է ջուրն ավելի շատ` ծովում թե՞ գետում:

-Ծովում ջուրն ավելի շատ է,- պատասխանեցի ես:

-Ինչպես եւ գետակի դեպքում, նվազ գիտելիքներով մարդիկ նույնպես հեշտությամբ հանգստանում են, այնինչ իսկական գիտունները երբեք չեն պարծենում: Դու պիտի սովորես ծովից, պահելով բոլոր գետերն առանց ինքնագոհության:

-Այո: Դա մշտապես կմնա իմ հիշողության մեջ:

-Ես կարծում եմ ես չեմ կարողանա մինչեւ ամառվա վերջ ապրել: Նախքան մահանալս, հարկ է ինչ-որ բաներ կարգի բերել: Վաղը դու կսկսես ուսումնասիրել Ցեման /բուրդիստական տրամաբանությունը/ Սոնամի գիտության ճյուղերը: Ապագայում դու քո գլխի տերը կլինես:

-Ես ընդհանրապես ոչինչ չունեմ, այդ պատճառով ես կարող եմ լոկ ջանադրաբար սովորել եւ օգնել բոլոր ապրող էակներին, որպեսզի ազատվեն տառապանքներից եւ ապրեն ձեր բարությանը համապատասխան:

-Քո խոսքերը լսելով ես թեթեւությամբ եմ զգում:

Այդ ամառ Սիքի Թհուբեն Նյամա Ռինփոչեն անցավ Փարիսիրվա-նայի /մահացավ/: Հեռվից եւ մոտիկից գալիս էին հավատացյալները, որպեսզի հարգանքի տուրքը մատուցեին նրա մարմնին: Մենք յոթ օր շարունակ երգում էինք Դաջինի սրահում: Յոթ օրվա ընթացքում Սիքի Թհուբեն Նյամա Ռինփոչեն նստած էր իր ննջարանի վերմակի վրա, պահպանելով լիակատար լուտոսի դիրքը: Այդպիսով, այդ հավատացյալները կարող էին խոնարհվել եւ կհաթա առաջարկել: Ութերորդ օրը նրա մարմինը տեղափոխվեց տաճարի ետեւի բլրի վրա դիակիզման համար: Թաղմանը եկան ձեր տիկինը Ռոնգա Շիկայից, Քհանդրոն եւ ծառայապետ Սանջայը, մայրիկս եւ Կուզիկ հայրիկս:

Դիակիզումից հետո ձեր տիկին Ռոնգա Շիկան ինձ խնդրեց մտնել Սոնամի սենյակ: Ծեր տիկինը ճերմակահեր էր, փղոսկրից պատրաստած ուլունքաշարը ձեռքին:

-Տիկին, ես այստեղ եմ,- պատկառանքով ասացի ես:

Նրա դեմքը դարձավ իմ կողմը, եւ նա երկար լուռ էր, իսկ արցունքները հոսում էի այտերի վրայից:

-Իսկ ինչո՞ւ էի ես քեզ ուզում տեսնել,- կամացուկ հարցրեց ձեր տիկինը, կողմ թեքվելով:

Ես պատասխանեցի.



-Բոլոր իմ ծախսերը դուք եք հոգում: Պատճառը, որի համար դուք կանչել եք ինձ, այն է, որպեսզի ինձ ջանադրաբար սովորելու խրատ տաք:

-Նույնիսկ ավելին: Ես քեզ ուղարկեցի տաճար, որպեսզի օգնեմ քեզ ազատվել աշխարհիկ տառապանքներից,- ասաց ծեր տիկինը:

-Գուրուն ինձ լուսավորեց առ Չորս Վսեմ Ճշմարտությունները: Ես հիասթափվել եմ մեռյալների այս աշխարհում:

-Այդ բավական չէ: Դու պիտի բողոքիչիթա ունենաս /պայծառաստե- սության միտք/, որ բոլոր կենդանի էակներին օգնում է վանել իրենց տառապանքների ողջ անդունդը: Միայն այդժամ իմ ցանկությունը կի- րականանա,- ասաց ծեր տիկինը, սեւեռվելով պատի վրայի թանգիուի /գլանածեւ նկար/ վրա:

-Երբ Նյիմա Ռինփոչեն ողջ էր, նա նույնպես ինձ այդ էր ուսուցա- նում: Դա դրոշմվել է իմ հիշողության մեջ:

-Ահա եւ լավ է: Ես կշարունակեմ տաճարում եղած ժամանակ քո բո- լոր ծախսերը հոգալ: Ես այլեւս ձեզ չեմ անհանգստացնի: Ծառայա- պետ Սանջայ, եկեք վերադառնանք:

Նախքան նա իր խոսքը կավարտեր, ծառայապետ Սանջայը բարձ- րացրեց վարագույրն ու ներս եկավ: Ծեր տիկինը շեմից ելավ: Նա իմ հիացմունքն առաջացրեց:

Ես քարե աստիճաններով հետեւեցի նրանց մինչեւ լեռան ստորո- տը: Ծեր տիկինը ձի հեծնեց եւ, առանց աչքերը կտրելու, երկար նայում էր ինձ: Նրա դեմքի վրա դրոշմված էին միաժամանակ թե տխրություն- նը եւ թե ուրախությունը: Դա բարդ է, բացատրելը դժվար է: Երբ ես վե- րադարձա, Կուզիկ հայրս եւ նաեւ մայրս իմ սենյակում էին: Ես արագ նրանց թեյ մատուցեցի:

-Ես զգում եմ, որ Նյամա Ռինփոչեի մահվանից հետո մենք մեր ող- նաշարը կորցրինք,- ասաց Կուզիկ հայրս:

Նրա աչքերի տակ արցունքի կաթիլներ էին, որ նման էին չորացած առվակի: Մայրս ծույլ-ծույլ լուում էր, բրդե տիբեթական թաշկինակով արցունքները սրբելով:

-Իսկ ծեր տիկինն արդեն վերադարձա՞վ Ռուզա Շիկա,- հարցրեց Կուզիկ հայրս:

-Նա հենց նոր գնաց:

Մայրս սրսփաց:

## Ցերինգ Նորբու

-Մենք հենց որ թեյը խմենք, կվերադառնանք,- ասաց Կուզիկ հայրս, ասես ներողության ակնարկ անելով:

-Պետք չէ այդքան շտապել: Դուք կարող եք ընթրիքից հետո գնալ,- ես ջանում էի նրանց պահել:

-Չէ, մենք պիտի վերադառնանք Նիանգ գյուղ: Ել, պառավ,- համոզում էր մորս Կուզիկ հայրս:

-Որդիս, Նյամա Ռինփոչեն վախճանվեց: Ի՞նչ կասես այն մասին, որ վերականգնես աշխարհիկ կյանքը եւ սովորական մարդու պես ապրես մեզ հետ: Ես կգնամ պաղատելու ձեր տիկնոջը: - Մայրս հանկարծ ձեռքերն իրար զարկեց:

-Դե դու ես ինչ անհեթեթություններ ես ասում,- բարկացած ասաց Կուզիկ հայրս:

-Մայրիկ, հայրիկ, ես գիտեմ, որ դուք ծերանում եք եւ արդեն այնքան էլ առողջ չեք: Ես պիտի ձեր մասին լավ հոգ տանեի: Բայց ես վանական դարձա, անընդունակ իմ հույզերն ու ցանկությունները ղեկավարելու: Խնդրում եմ, ներեք ձեր չամուսնացած որդուն:

Լսելով իմ խոսքերը, մայրս նորից հեծկլտաց: Կուզիկ հայրս օգնեց նրան իմ սենյակից դուրս գալ: Ես ուզում էին նրանց ուղեկցել մինչեւ լեռան ստորոտը, բայց Կուզիկ հայրս հրաժարվեց: Տեսնելով մորս հուսահատ մեջքը, ես նույնպես հեծկլտացի:

Հոգին դուրս թռավ Յամատակա սրբավայրից: Այդ պահին թեթեւ երկրպագությունների հուրը մարեց: Մթին գիշերով վանականը, որ պատասխանատու էր լուսային ընծայաբերումների համար, տեսավ հոգին: Նա հետեւեց նրան դեպի լեռան ստորոտը եւ տեսավ ձեր կնոջը, որ պարկած էր գետնին Դոփելթի կողքին:

Լուրերը տարածվում էին, ինչպես անտառային հրդեհը: Ամեն կողմից դեպի ժհարի տաճարն էին գալիս հավատացյալները: Նրանք մտադրվել էին Դոփելթի համար սարքել Սպիտակ աշտարակը Մարնիի քարե թմբի կողքին: Սպիտակ աշտարակի կառուցման ավարտից հետո ծառայապետ Սանջայը փորձեց Չիեսին տանել:

-Բաթեր,- ասաց Չիեսը,- այս կյանքում ես շատ մեղքեր ունեմ: Եթե դու գեթ մի կաթիլ գթասրտություն ունես իմ հանդեպ, խնդրում եմ, թող ինձ մուրճն ու պողպատյա դանակը: Ես ուզում եմ հազարավոր անգամներ փորագրել «Մանի փաղմե հում»-ը քարե տախտակների վրա:

-Դու կարող ես այդ եւ կալվածքում անել:

-Չէ: Կալվածքն ինձ կհիշեցնի սիրո եւ ատելության մասին, որոնք կործանեցին ինձ: Ես կմնամ տաճարում եւ ինձ Բուդդային կընծայեմ:

Հավատացյալները լքեցին ժհարի տաճարը: Լեռան ստորոտի մոտ, հենց նոր սարքված Սպիտակ աշտարակի մոտ, ճերմակահեր Չիեսը փայտի վրա փորագրում էր՝ ՕՄ ՄԱՆԻ ՓԱԴՄԵ:

Երբ Բուդդային երկրպագելու եկած մարդիկ, նրան ցամփա եւ մանրադրամ էին տալիս, նրանք հայտնաբերում էին, որ նա կույր եւ կաթվածահար է: Բայց նրա փորագրած խոսքերը ավելի նրբին ու բազմանշանակ էին դառնում: Մարդիկ չէին դիմանում եւ ասում էին. «Նա այդքան ջանադրաբար է փորագրում, որպեսզի իր մեղքերը քափի»:

Ուրրուն ասֆալտե ճանապարհով, մարդկանցով լի, դանդաղ եւ ծանր ավտոբուս է ընթանում: Անցուղիները լցված են մեծ ու փոքր պարկերով: Մի քանի գյուղացի աղջիկ ծոր տալով ժողովրդական երգեր են երգում, որոնք պարզության ու բնականության տարրերով են հագեցած: Ամեն երգից հետո ավտոբուսը լցվում է ծափահարություններով եւ ձայների աղմուկով: Աղջիկները երկչոտ գլուխները կախում են, լոկ մի ակնթարթ լռելով, իսկ հետո կրկին սկսում են ժողովրդական երգեր երգել: Ծխախոտը բերանին գեր վարորդը շարունակում է ետ նայել, վայրի ծիծաղով հուշող դատողություններ է անում: Նրա դեղին ատամները տակնուվրա էին անում: Տասներեքերորդ ու տասնչորսերորդ նստարանների վրա, ճմռթած կոստյումներով ու քշտած թեւքերով երկու երիտասարդ էին նստած, հաճախ անդուր եղանակով ծխի օղակներ արձակող: Դրանցից ավագին կոչում են Չուբանգ, իսկ մյուսին՝ Դավա: Ետելի նստարանին նրա կողքին փոքրիկ թռնիկով մի պառավ էր նստած: Նրանց կողքին՝ մազակալած դեմքով մի աժդահակ եւ մի վտիտ կին, հավանաբար, հիվանդությունից հյուծված: Այդ վեց մարդիկ պատրաստվում են շարունակել ճանապարհը մինչեւ Դրոմ: Երեկոյան հինգի մոտ ավտոբուսը հասնում է Նորցե եւ շուտով դրանից հետո, ավտոբուսից ելնելով, այդ վեցը վերցնում են իրենց բեռը: Մի քանի ուղեւոր ուղեկցում են նրանց, ելնելով ավտոբուսից, որպեսզի տեսնեն, թե ինչպես են նրանք դատարկում իրենց բեռը: Արական սեռի որոշ ուղեւորներ, անհասկանալի մեղեդիներ երգելով, միգում են ճամփեզրին: Գեր վարորդը շալվարը բարձրացնում ու գոչում է. «Դե

## Ցերինգ Նորբու

վերջապես մենք տանն ենք: Ցանկանում եմ ձեզ լավ գիշեր անցկացնել ձեր կնոջ հետ, բայց վստահ եղեք, որ դուք դնով չեք շփոթվել: Այնուհետև նա նորից կոպիտ ծիծաղով է բռնում: Ավտոբուսը շարունակում է ծանր առաջ ընթանալ: Պառավը գնում է մայթից դեպի լաստանավը, մեջքից կախ կլոր ու հաստ ջուրե պայուսակը: Աժդահակը իր բեռը մեջքին է դնում, այն պարանով կապում է եւ օգնում է ծանր հիվանդ կնոջը ծանր բեռից գլուխ հանել: Հիմա, չնայած ամռանը, հարուստ անձրեւի կաթիլներով, Նորբում լեռները լերկ են մնում, ժայռերով, որոնք մենություն եւ ամայություն են սփռում: Եթե մենք չտեսնեինք կանաչ ծառը գետի հակադիր ափին նավավարի տան կողքին, ապա ենթագիտակցաբար կմտածեին, որ հիմա դեռեւս պաղ ձմեռ է: Նրանք բեռնաթափվում են, գոռալով. «Հեյ, նավը տար ու մեզ վերցրու»:

-Հեյ, նավավար,- նրանք նորից ու նորից են զոչում, բայց հանդիպակաց ափը վերադառնում է դատարկ լռությամբ եւ անպատասխան: Զուգանգը մռայլ փնթփնթում է. «Գրողը տանի, ինչո՞ւ դու չես պատասխանում»:

Աժդահակը, դիմացը, հանգիստ է թվում: Նա թույլատրում է հիվանդ կնոջը հենվել բեռին, իսկ ինքը կողքն է նստում, ոտքերը ծալած:

-Ընդմիջում արա,-ասում է աժդահակն անվրդով դեմքով ու սառը ձայնով: -Եթե նավավարը տեսնի այստեղ որեւէ մեկին, նա նավ-ցլով մեզ կմոտենա:

Նրանք բոլորն անօգ նստում են: Մեռյալ լռության մեջ մնում է լոկ հոսող գետի խշշոցը:

Աժդահակն իր տիբեթական կոստյումի ծոցագրպանից դեղով փոքրիկ շիշ է հանում: Կափարիչը պտտացնելով, եւ նա ցուցամատի վրա փոքր-ինչ բռնոթի է լցնում եւ ֆշշոցով ներքաշում է այն, թույլ ծխողակներ թողնելով: Նրա կանչած երկու ջահելները նույնպես մղում ունեն առ ծխախոտը: Նրանք հանում են իրենց ծխախոտներն ու սկսում են ծխել:

Կրկին տանջալից լռություն է տիրում:

Երիտասարդ ու ագրեսիվ Դավան չի կարողանում տանել երկար սպասումը: Նա ելնում ու ողջ ձայնով մեկ գոռում է. «Ծերուկ, դու ի՞նչ է, մեռել ես»:

Ճահել աղջիկը, ինչ-որ բան քրթմնջալով, բարձրացնում է քարն ու

այն գետն է նետում: Աժդահակը ճմկոտում է, մորուքն է շոյում եւ սառ-  
նասրտորեն ասում է. «Երիտասարդ, պարզապէս դիմացիր: Եթէ խմել  
ես ուզում, գետից փոքր-ինչ ջուր վերցրու ու խմի: Եթէ սոված ես, կա-  
րող եմ քեզ փոքր-ինչ ուտելիք տալ:

-Իսկ դա ե՞րբ կլինի: Մենք դեռ պիտի շարունակե՞նք մեր ճամփոր-  
դությունը այն բանից հետո, որ գետն անցնենք:

-Ես հավատում եմ, որ երբ պայմանները հասունանան. հաջողությու-  
նը կգա: Եթէ հիմա ամենահամապատասխան ժամանակը չէ, եթէ դու  
նույնիսկ կոկորդ պատռելով գոռաս, միեւնոյն է՝ ամեն ինչ զուր կլինի:

-Չի կարող պատահել, որ տանը ոչ մեկը չլինի:

-Այնտեղ միայն մենավոր ծեր նավավարն է,- ասում է պառավը:

Հանգստությունը վերադառնում է: Հիվանդ կինը որոշ ժամանակ  
հագում է: Ելնելով, աժդահակը ծոցագրպանից հանում է փոքրիկ  
պլաստմասե ճաշամանը եւ, գետից փոքր-ինչ ջուր հանելով, այն բերա-  
նին է մոտեցնում: Դրանից հետո նա այն գրպանն է դնում, եւ հիվանդ  
կինը ցածրաձայն ինչ-որ բան է հարցնում: Աժդահակը կամացուկ դիպ-  
չում է նա գլխին: Պառավը հանում է պարկը՝ ցամփայով, գարու լիկյո-  
րով եւ բլիթներով, բոլորին խնդրում է իր հետ կերակուրը կիսել: Աժդա-  
հակն ու երկու ջահելը նույնպէս առաջարկում են իրենց ուտելիքը, եւ  
Դավան էլ իր կերակուրն է առաջարկում, բացի այդ նաեւ երկու շիշ գա-  
րեջուր: Այն բանից հետո, որ ամեն ինչ պատրաստ է, աժդահակը մի  
զավաթ գարեջուր է խնդրում: Նա կեսից ավելին խմում է, բայց ետ է  
թքում, քանիցս կրկնելով. «Հոտ է գալիս, եւ համն էլ սարսափելի է»: Բո-  
լորը սկսում են ծիծաղել: Երբ նրանք սկսում են ուտելուց հետո հավա-  
քել, հիվանդ կինը տազնապալից հարցնում է. «Մի՞թէ հանդիպակաց  
ափին իսկապէս միայն ծեր նավավարն է: Արդյոք դա նշանակում է, որ  
եթէ նա այնտեղ չլինի, մենք չե՞նք կարողանա գետն անցնել»: Նրանք  
խստաբարո դադարում են հավաքել եւ լուռ իրար են նայում: Աժդահա-  
կը հագում է. «Թույլ տվեք ձեզ ծեր նավավարի մասին մի պատմություն  
պատմել: Կյանքը միշտ փոխվում է...»:

Ծեր նավավարը ժամանակին աղջիկ ուներ, եւ նրանք միասին էին:  
Նավավարը միշտ երես էր տալիս իր աղջկան: Ամեն անգամ, երբ նա  
մարտնչում էր անհանգիստ գետի մյուս կողմում, նա միշտ հուզված եւ  
ուրախ էր, որ կարող է փող վաստակել, ինչի օգնությամբ նա կկարողա-

## Ցերինգ Նորբու

Նա իր աղջկան թույլ տալ հազվել է փոքր-ինչ ավելի լավ ուտել: Սակայն այն ընթացքում, որ օրերն անցնում էին, այդպիսի խաղաղ է ներդաշնակ կյանքն արագ քայքայվում էր: Վեց տարի առաջ լաստանավին մոտեցավ թիկնավետ եւ նրբակիրթ մի քիամսեցի առետրականը: Պետն անցնելով, քանի որ արդեն ուշ էր, առետրականը մնաց նավավարի տանը: Քիամսեցի առետրականը ընտանիքին բազում նոր եւ ֆանտաստիկ պատմություններ պատմեց, որոնց մասին նախկինում երբեք չէին լսել: Նավթավաճառի թույլ լույսի ներքո քիամսեցի առետրականն իր արցունքներն էր թափում՝ «Ա՛խ, գրողը տանի: Վիթխարի քառակուսի արկղում մարդկանց ահագին ամբոխ կարող է վեր ու վար անել, ինչպես նաեւ կան ավտոմեքենաներ, գնացքներ ու ինքնաթիռներ: Դու այդ չես հասկանա, եթե նույնիսկ ես քեզ ամեն ինչ բացատրեմ: Պնացքը՝ երկար արկղ է, մեքենայի արագությամբ վազող: Ինքնաթիռը սրընթաց թռչում է երկնքում, տանելով հարյուրավոր մարդկանց, զարդարված մի զույգ թելով: Իսկ դուք ինքներդ սրան հավատո՞ւմ եք: Ես գիտեմ, որ դուք այդ չգիտեք: Եւ այդ հեռուստացույցը: Դուք կարող եք այն նայել ձեր սենյակում: Եւ ձայնարկիչը կարող է պահպանել ձեր ձայնը: Դա շատ տարօրինակ է»:

Նավավարի աղջիկը հմայվել էր նրա խոսքերից: Նա շատ ուզեցավ այդ ամենն իր աչքերով տեսնել: Հուզմունքից նրա սիրտը թարտում էր: Լսելով այդ պատմությունները, նավավարը, թվում էր, լրիվ քարացել էր: Բայց երբ ժամանակը լրացավ, նա սառը ասաց. «Լամպի նավթը վերջանում է: Պնա քնելու»:

Հաջորդ առավոտ քիամսեցի առետրականը պատրաստվում էր հեռանալ: Այդ մտքից նավավարի աղջիկը տխրեց, նա այնպես էր նրանով հիանում: Նա աշխարհի երեսին ամեն ինչ գիտեր: Բացի այդ, նա սրամիտ դիտողություններ էլ վճռական ոճ ուներ: Նրա կերպարն անջնջելի էր, ինչպես մատնահետքը: «Սա ի՞նչ է, սիրո առաջին նույնն է», - հարցնում էր նա ինքն իրեն, բայց պատասխան չկար: Նա պարզապես զգում էր, որ նրա գնալուց հետո գիշերներն իրեն շատ երկար կթվան էւ նա իրեն շատ մենակ կզգա: Հաջորդ գիշերներից էւ ոչ մեկի ժամանակ նա այլեւս չի լսի այդ գաղտնիքները, էւ իրեն կմնան լոկ հոր աղոթքների քրթմնջոցներն ու տերողորմյայի տարուբերումը, որ արձագանքվում էր նրա ականջներում: Նա նրա կարիքն ուներ: Նա չի դի-

մանա այլևս նրա գնալուց հետո: Այդու նա ելևում ու արտասպում էր, մինչև որ նրա տիրությունը մեղմացավ, իսկ այնուհետև վերադառնում էր իր սենյակը, որպեսզի վերջապես ննջեր իր ներքևակի վրա:

Հաջորդ առավոտ քիամտեցի առեւտրականը մի քանի գավաթ թեյ ըմպեց և իրերը հավաքեց: Աղջիկն անշարժ կանգնած էր և ուռած աչքերով ու զզզված մազերով նայում էր նրան: Չնայելով նրան և ոչևս մասին չհարցնելով, նա վերցրեց իր բեռը և ուղևորվեց դեպի Դրոմ: Նա լուռ, ոտքերը շրջացնելով, հետևեց նրան: Որոշ տարածություն անցնելուց հետո, քիամտեցին կանգ առավ և նայեց աղջկան: Նա հանեց արծաթե դանակը, որ կախված էր գոտուց, և այն նրան մեկնեց: Ես շուտով կգամ այստեղ: Եւ եթե դու կամենաս, ես կմնամ քո տանը: Նա գլխով արեց, և արցունքներն եկան արծաթե դանակի կոթի վրա: Քիամտեցին գնաց, և կանգնել էր որոշ ժամանակ, մինչև որ հնչեց քիամտեցու գոցունը՝ առեւտրականն անհետացավ: Մի ամսից քիամտեցին վերադարձավ, բայց աղջիկը լալիս էր: Նավավարը նրան թույլատրեց բնակվել իր տանը, և մի քանի օր անցնելուց հետո քիամտեցին գալիս և գնում էր: Վերջին անգամ, երբ քիամտեցին պատրաստվում էր գնալ, նավավարը հայտնաբերեց, որ իր աղջիկը հղի է: Արցունքն աչքերին նա համաձայնվեց, որ նրանք միասին գնան Լիասա:

Առավոտյան նավավարը ելավ, որպեսզի կրակ վառի: Ծխի պատճառով նա անընդհատ արցունքոտում էր: Արցունքները սրբելով, նա հիշեցրեց ինքն իրեն, որ պիտի իրեն զսպի այն բանի համար, որ ցույց չտա իր ընկճվածությունն ու հուսահատությունն աղջկա առաջ, հուսալով դրա փոխարեն, որ իր աղջիկը երջանիկ տրամադրությամբ կհեռանա:

-Արցունքներդ սրբիր և թաքցրու հիասթափված աչքերդ,- ասաց նա:

Երբ թեյը պատրաստ էր, նա արթնացրեց նրանց, որպեսզի նրանք միասին նախաճաշեին ու թեյ ըմպեին: Երբ նրանք նստեցին ցյով նավը, նավավարը հանեց իր ազաթե վզնոցն ու այն կախեց աղջկա վզին: Յլով նավը մյուս ափ հասցնելով, նավավարը հանեց նավն ու գլխիվայր դրեց քարի վրա: Բեռը տանելով, նավավարը ծանր քայլերով առաջ անցավ:

Եւ նրանք գնացին:

## Ցերինգ Նորբու

Նրանք գնացին ավտոբուսով, տեսադաշտից կորսվելով: Նա կանգնել էր մենակ: Ի վերջո նավավարը չդիմացավ, ծնկածալ ընկավ ու բարձր արտասվեց, դուրս թափեց իր ողջ ցավը, վիրավորվածությունն ու վերողմունքը: Նա ելավ, եւ օրորվելով գնաց լաստանավի մոտ:

Այդ օրվանից նա փոխվեց: Անկախ այն բանից, արդյոք կար որեւէ մեկը հանդիպակաց ափին թե ոչ, նա ամեն օր թիավարելով հասնում էր մյուս ափ եւ նստում էր այնտեղ, որտեղ մեկը նստած ենք հիմա: Բռնութի քաշելով եւ լուռ սպասելով, մինչեւ որ սկսի ետ թիավարել: Օրվա երկրորդ կեսին նա կրկին կթիավարի, ոտքով կքայլի մայթով եւ կսպասի ավտոբուսներին: Ավտոբուսներն անցնում էին նրա կողքով, մեկը մյուսի ետքից, բայց եւ ոչ մի ավտոբուս նրա կողքին չէր կանգնում: Նավավարը զուխը վար էր հակում եւ կտրուկ զառիվայրով իջնում էր դեպի ճանապարհը: Մոտենալով գետի ափին, նա դանդաղ նստում էր իր ցլով նավը:

Մովորաբար նա ուրբաթախոս էր, բայց ամեն անգամ, երբ նրա մոտ ուղեւոր էր հայտնվում, նա կարող էր սովորականի նման հարցնել. «Այսօր ամսի քանի՞սն է»:

Վեց ամիս մնաց:

Երկու ամիս մնաց:

Եկավ գարունը: Առավոտյան քամին միջաթափանց պաղ էր, բայց նավավարը կանգնած էր բարձր, նայելով մունջ մայթին: Չնայած սառը գիշերվան, նա կսպասի այնքան մինչեւ որ մայթի վրա ոչ մի մեքենա չմնա: Այնուհետեւ նա մտնում էր իր խարխուլված քարե տունը: Այդ մենավոր սպասումը ձգվեց ինը ամսից ավելի: Բայց նա դեռ իր աղջկա եւ ոչ մի հետքը չէր տեսնում: Նավավարը տագնապեց. «Մի՞թե նա չափազանց շատ էր արնաքամվել երեխա բերելիս, կամ, գուցե թե, նրա երեխան մահացել է, կամ...»: Անհամար ենթադրությունները տանջում էին նրան: Ի վերջո նավավարը վաճառեց իր միակ անասունն իր ընտանիքում եւ փութաց Լհասա՝ աղջկան փնտրելու:

Ճանապարհին նա անընդհատ աղոթում էր Աստծո ողորմածության համար: Երբ մյուսները նրան հարցնում էին, նա շատ կարճ էր պատասխանում: Այնուհետեւ նա խորշումած շուրթերով աղոթքներ էր հղում, թվում էր, անսպառ, կրկնելով բացուխվող շարժումը:

Ավտոբուսը կանգ առավ Լհասայի ուղեւորական դեպոյի մոտ,



անվերջ բլբլալով, ուղեորներն ելան ավտոբուսից: Նավավարը դուրս գալով՝ պայուսակը ուսին, ծովում կորսված, տեղում կանգնել էր, այս ու այն կողմ նայելով: Բացի մեքենաներից, այստեղ միայն մարդիկ ու տներ էին: Նավավարը չգիտեր, թե ուր գնա: Նա հետևում էր մի քանի հետիոտներին, մի դյուժին քայլի վրա ետ մնալով, բայց ծառուղիներում մարդիկ կորչում էին, այլեւս ետ չվերադառնալով:

Ձայների այդ խառնադմուկից յուրաքանչյուր նյարդը լարվեց: Ինչպես թափառական անտուն ուրվականի, նրան հետապնդում էր վախեցնում էին վայրի շները: Դաժանությունը, որով նրան վրա էին տալիս այդ թույլ եակները, գրգռում էր նրան: Նա մի քանի քար վերցրեց եւ սկսեց դրանք շների կողմը նետել: Երկյուղալի վախով համակված, նրանք թույլ հաչեցին ու ցրվեցին: Կողքով անցնող երիտասարդը բարձր հայհոյում էր. «Նեյ, ծերուկ, եթե դու էդ շներին ոչ մի ուտելիք չես տվել, ապա ի՞նչ իրավունք ունես խփել նրանց: Մի՞թե դու չգիտես, թե ինչ խղճուկ է նրանց կյանքը»: Նավավարը զսպեց իր գայրույթը: Նա չէր համարձակվում նայել երիտասարդի աչքերին, այլ պարզապես գլուխը հակեց եւ անօգ զնաց առաջ: Նա զգաց, թե ինչպես նա մեջքի ետեւից նրան ոտից գլուխ սառը օդ պատեց: Նա պատկերացրեց, թե ինչպես շներն ու երիտասարդը նայում են նրան քմծիծաղոտ աչքերով, երբ նա հեռանում է: Նավավարը վերջապես անցավ նրբանցքն ու ելավ փողոց: Հայտնվելով այստեղ, նա բոլոր անցորդներին հարցուփորձում էր առեւտրական քիամսեցու եւ իր աղջկա մասին: Մարդիկ զարմացած լսում էին նրա նկարագրությունը, բայց միայն գլուխներն էին տարուբերում, ասելով. «Ես չգիտեմ»: Ոմանք նույնիսկ պարզապես պատասխանում էին, որ չեն տեսել: Մի պառավ նրան ասաց. «Բիձուկ, եթե դու ուզում ես գտնել քիամսեցի առեւտրականին, դու ավելի լավ է գնաս Բարխուր-սթրիթ»:

Հետեւելով պառավի խորհրդին, նավավարն ուղեորվեց Բարխուր-սթրիթ: Նա նստել էր շեմին, նայելով, եկող ու գնացող մարդկանց հոսքին: Աչքը չկտրելով անձանոթ դեմքերից Գարեը սկսեց մայր մտնել, արեւմուտքից լեռը թողնում էր միայն փողոցի լապտերների մեղմ լույսը: Մարդկանց հոսքը, ծիսականորեն արահետով ընթացող, խախտում էր պահի հանդիսավորությունն ու լռությունը: Նավավարը, աղմուկով կլանված, տեսնելով մարդկանց անվերջանալի հոսքը,

## Ցերինգ Նորբու

զիսացավ զգաց: Կեսգիշերվա հասնելուն պես Բարխուր փողոցը շատ լուռ դարձավ: Այդ պահին քաղցն ու հոգևությունը ի վերջո վրա հասան նրան: Նա իջեցրեց իր ցամփայով պայուսակն ու, մատներով այն ճանկելով, բերանը տարավ: Նա մեծ կուժ արեց, բայց առանց թեյի այն լցվեց կոկորդը, եւ նա չէր կարողանում այն կուլ տալ: Այնուհետեւ, հավաքելով ցամփայով պայուսակը, նա գիշերելու համար լուռ տեղ գտավ: Երբ նա արթնացավ, արդեն կեսօր էր: Նավավարն աչքերը տրորեց, նորից տեսնելով մարդկանց անվերջանալի հոսքը նրանց ծիսական զբոսանքների ճանապարհին: Նրանց մեջ նա փնտրում էր քհամսեցի առետրականին ու իր աղջկան:

Արելը ելել էր արեւելյան լեռնաշղթայից, երկիրը լցնելով ոսկեգոծ լույսով: Բարխուր-սթրիթի վրա ավելի ու ավելի շատ մարդիկ էին հավաքվում, բայց նրանցից ոչ մեկը նա չէր, ում նա փնտրում էր: Նրա կողքով սպիտակ դեմքով, կարմիր շուրթերով, փարթամ մազերով եւ նեղլիկ տաբաթով մի ջահել կին անցավ: Նրա մեծ կոնքերը, հասարակությանն ի տես տարուբերվող, շփոթեցնում էին նրան: Խառնուրդները փողոցի երկու կողմից շարադարսված էին: Բարձր երաժշտությունը խփեց նրա թմբկաթաղանթներին, միաժամանակ շվարեցնելով ու անհանգստացնելով նրան: Նավավարը Բարխուր-սթրիթի անկյունում էր, որտեղ նրա վրա էր թափվել ողջ այդ աղմուկը: Միջօրեի մոտ, չկարողանալով այլեւս տանել այդ այդչափ ագրեսիվ աղմուկը, նավավարը թաքնվեց Բարխուր-սթրիթի վրայի մեծ տանը: Բակի մեջտեղում նա տեսավ, որ ջրատար խողովակից ջուր է կաթում: Այդ ձայնից նա խմել ուզեց: Նավավարը վազեց ջրատար խողովակի մոտ ու սկսեց ծորակից խմել: Երբ նա սառը ջուր էր խմում, նա թեթեւություն զգաց: Խոր շունչ քաշելով, նա պատրաստվեց կրկին խմել, բայց հանկարծ լսեց ինչ-որ մեկի կշտամբանքը:

-Սպասիր ծերուկ, մի՞թե դու չգիտես, որ կարող ես կեղտոտել ջրատար խողովակը:

Կինը, զայրույթով լի, դույլը ձեռքին, կանգնած էր նրա ետեւում: Նավավարը շրջվեց եւ թեթեւակի ժպտաց նրան, ասես ներողություն խնդրելով: Կինն անտեսեց նրան եւ հավելեց.- Գեղջուկ, դու այնքան կեղտոտ ես:

Նրա խոսքերը ցավեցրին նրա սիրտն ու նա հանկարծ դժգունեց:

Այս մարդկանց աչքին նա պարզապես քամահրեղի մշակ էր: Արցունքով լի աչքերով, նա հուսահատությամբ լինի գևաց դեպի դարպասները: Կինը շարունակում էր խոսել. «Փո՛ղի, ընդհանուր հիգիենայի ինչպիսի բացակայություն...»:

Եւ կրկին Բարխոբ-սթրիթի աղմուկի ընդհանուր ֆոնի վրա նրա սիրտը միայնակ էր մնում: Այստեղ չկար մեկը, ով կկարողանար մոտենալ նրան, մխիթարեր կամ օգներ: Նավավարը մոռացավ, որ եկել էր իր աղջկան փնտրելու եւ քիամսեցի առետրականին: Գլուխն իջեցնելով, նա մտավ Տոքհանգ վանքը:

Սրահում բարեգութ Բուդդան սեւեռուն նայում էր նրան, ունկ դնելով նրա քրթմնջացող աղոթքներին, ինչպես նաեւ իր ներքին ճիչերին եւ առ զալիքը հույսերին: Բուդդայի լռությունը նրա համար մեծ մխիթարանք էր, եւ նավավարը սկսեց քիչ-քիչ հանգստանալ: Նա հանեց փողերը, որ աշխատել էր քրտնաջան աշխատանքի երկար տարիներին, դրանք դրեց Բուդդայի բոլոր արձանիկների առաջ եւ, ձևկները ծալելով, աղոթք արտասանեց. «Բարձրյալ Թրիբաթնա, խնդրում եմ, օրհնիր աղջկաս եւ թույլ տուր մեզ միավորվել»: Երբ նավավարը ելավ Տոքհանգ տաճարից, դրսում բավական աղմկոտ էր: Առետրականների, երաժշտության եւ առետրի ճիչերի ձայները մեկը մյուսին ծածկում էին: Նա հուսահատվեց քաղաքային կյանքից ու ինքն իրեն ասաց. «Վերադարձիր: Հեռու մնա այս աղմկոտ, անտարբեր տեղից: Ինձ հետ սա կապ չունի: Ես պատկանում եմ Նորցեի լռությանը, որտեղ ես կարող եմ լսել գետի խշշոցը, տեսնել ծովը, մաքրայագույն լեռները եւ ոռնացող քամու ձայնը, որտեղ ես կարող եմ հայել մենության մեջ բաց վայրում, առանց ճնշումների, խտրականության կամ ուշադրության եւ որտեղ ես կարող եմ նստել ժայռի վրա, որպեսզի զննեմ մայրամուտն ու արեւագալը, հետեւել լուսնին, հորիզոնով ընթացող, որում թեթեւություն, հաճույք եւ հանգստություն կա: Վերադառնալ: Ես կարող եմ միայն բնակվել եւ ինձ անվտանգության մեջ զգալ Նորցեում:

Հաջորդ օրը նավավարը վերադարձավ Նորցե: Նա հետզհետե մարում էր, ներս ընկած աչքերով, ցցված այտուսկրերով եւ նոսր վարընկեց մազերով: Դա հարուցված էր սաստիկ կարոտից, որ երկար տարիներ տանջում էր նրան:

Ցուգանը, հարցնելով կարեկցանքի եւ հեզության տոնայությամբ.

## Ցերինգ Նորբու

«Ինչ խղճուկ նավավար է: Ուրեմն, նա այլևս երբեք չի տեսել իր աղջան»:

-Ասում են, որ նրա աղջիկը մի քանի անգամ վերադարձել է,- ընդհատում է պառավը:

-Նա վերադարձել էր քիամսեցի առետրականի հե՞տ,- հարցնում է Դավան:

Աժդահակը մի պտղունց բռնոթի է ներքաշում, ընդ որում կտրուկ ձայն հանելով: Նա ծափ է զարկում եւ շարունակում է պատմել իր պատմությունը:

-Մի անգամ, նավավարի վերադառնալու երկրորդ տարում, նրա աղջիկն իրոք որ վերադարձավ: Այդ ընթացքում նավավարը լրիվ զառամել էր:

Մի անգամ հանդիպակաց ափի ինչ-որ մեկը ձեռքերը թափահարեց եւ բարձր դեպ նրա կողմը գոռաց: Բայց ինչ-որ գետը շատ բարձր էր ոռնում, նավավարը ոչինչ չէր լսում: Նա դանդաղ հոսանքն ի վեր շարժվեց իր նավ-ցուլն ուսած եւ, երբ ժամը հասավ, այն դրեց գետի ջրերի վրա:

Սկզբում նա բարձրացրեց ձախ ոտքը, որպեսզի քայլ աներ ցլով նավակի մեջ, հետո դժվարությամբ բարձրացրեց աջը, այնպես որ ողջ նրա մարմինը ցնցվեց: Ցլով նավակը սկսեց գետնիվար սահել, նավավարը արագ վերականգնում էր իր էներգիան: Ծանր շնչելով, նա ուժ չէր խնայում, որ թիավարեր: Նա հրեց թիակով դեպի հակադիր ափը: Եւս մի հրում անելով, այնուհետեւ ընթացավ դեպի հակադիր ափը: Եւ այդ ամենը ամենաբարձր արագությամբ: Նա ողջ մարմնով ցնցվեց, բայց նրա դեմքին կրկին խանդավառություն հայտնվեց: Եւ այդ պահին նա դարձյալ զգաց, թե ինչպես իր թուլացած մկաններն ուժով լցվեցին: Նա արդեն ծերուկ չէր, եւ ոչ էլ խեղճ մենավոր քայքայվող մարդ: Իր գործողություններով նա ապացուցեց իր գոյությունը:

Նավավարը հաղթահարեց փոթորկվող գետը եւ ափ իջավ: Նա ապշած էր, երբ տեսավ, ափին կանգնած, իր աղջկան, որին զօրուգիշեր կարոտում էր: Այդ պահին, երբ նա կանգնած էր նրա առաջ, նա չէր կարող գրկաբաց նրան իր գիրկն առնել: Նա փոխվել էր, իր մեջ թողնելով վախի զգացողությունն ունայն բանի չիմացությունը, թե ինչպես մոտենար նրան: Նավավարը նրա բեռը լուռ նավակի մեջ տեղադրեց եւ աղջկան թույլ տվեց տախտակամած բարձրանալ: Այնուհետեւ նավակով նրանք տուն վերադարձան:

Նավավարը ցրով նավի առաջամասում էր, իսկ նրա աղջիկը լուռ նստած էր ետևում: Դուռը հրելով, նրանք մտան իրենց տուն: Կանգնած կիսախավար տանը, նայելով քրքրված կահույքին, նրա աղջիկը տխրության ալիք զգաց: Նա չէր կարող օգնել, բայց արտասվեց: Նա տխուր դեմքը խրեց նրա ուսերի մեջ և սկսեց հեծկտալ: Նավավարը նրան ի մխիթարություն ոչինչ չասաց: Նրա գլխում դատարկություն էր: Որոշ ժամանակ անց, երբ նրա աղջիկը դեռ հեծկտում էր, նավավարը, սեւեռուն նայելով նրան, հարցրեց.

-Ինչպե՞ս են գործերդ:

Աղջկա դեմքը նրա տարիքից մեծ էր երևում.

-Հայրիկ, ես չգիտեմ ինչ անել: Ամեն օր կարոտում էի քեզ: Բայց ես լավ եմ:

-Ինչպե՞ս են քո երեխան ու ամուսինը:

-Իմ երեխան չճնվեց, և ես ամուսնուցս բաժանվեցի: Ոչ, ես երբեք չեմ մտածել վերադառնալու մասին: Ես Լիասայում խանութ ունեի, դրա համար ես վերադարձա, որպեսզի քեզ ինձ հետ տանեմ:

Նավավարը վճռականորեն և հաստատուն «ոչ» նետեց:

Նրա աղջիկը ցնցված էր: Նրա կնճռոտ ու թուխ դեմքը լեցուն էր համառության զգացողությամբ:

Նավավարը նկատեց.

-Ես լիովին հիասթափված եմ Լիասայից, իմ ետևում թողնելով միայն սրտխառնուքի և ատելության տպավորությունը:

Շնչահատվելով, աղջիկը զարմացած սեւեռվել էր հոր վրա:

Նավավարը շրջվեց և, մեջքը կռացնելով, ուղղվեց դեպի եռանկյունի վառարանը: Նա ծնկի իջավ և վառարանի մեջ կովի թրիք նետեց: Սենյակը տտպահոտ ծխով լցվեց, և նրա աղջիկը հանեց թաշկինակը, որպեսզի դեմքը ծածկեր:

Երբ գիշերը եկավ, սովորական նավթալամպը, կեղտի շերտով ծածկված, թույլ լույս էր տալիս: Նավավարը նստել էր, ոտքերը ծալած, և սուտրաներ էր երգում, իսկ նրա ձեռքը դողում էր աղոթքի անվի վրա: Լսելով այդ չորուկ և տաղտկալի երգեցողությունը, նրա աղջիկը տաղտուկ ու անհարմարություն զգաց: Նա կրկին կամեցավ համոզել նավավարին իր հետ գնալ:

## Ցերինգ Նորբու

-Հայրիկ, եթե դու ինձ հետ Լիասա գաս, ապա կարող ես ամեն երեկո նստել վառ լուսավորված սենյակում եւ հեռուստացույց նայել:

-ՉԷ:

Նավավարը շարունակում էր ծոր տալով երգել:

-Հայրիկ, մենավոր կյանքը քեզ կարող է շատ միայնակ դարձնել:

-Մենությունը նշանակություն չունի: Ես միայնակ եմ ծնվել եւ մենության մեջ էլ կմեռնեմ:

-Մի՞թե դու չես ուզում քո կյանքում փոքր-ինչ երջանկություն եւ թեթեւություն ունենալ:

-Այո ամենը վաղանցուկ է: Ես ամենեւին էլ տարված չեմ դրանցով: Ինքնամոռնությունը՝ կյանքի միակ ճշմարիտ իմաստն է:

-ՉԷ: Հայրիկ, մենք պիտի պայքարենք այն բանի համար, ինչին ուզում ենք մեր ջանքերով հասնել, այլ ոչ թե կուրորեն սպասենք: Այս կյանքում երջանկություն եւ հաճույք կա: Մենք կարող ենք միայն մեզ վրա հույս դնել, որպեսզի գտնենք դրանք:

Նավավարը տերողորմյան մի կողմ դրեց ու չորուկ ասաց.

-Որքա՞ն հզոր կարող ես մարդիկ լինել իրականում: Արդյոք մենք կարո՞ղ ենք հավերժական երիտասարդություն ձեռք բերել: Կարո՞ղ ենք մենք հավերժորեն ապրել առանց վերամարմնավորման: Մարդիկ շատ փխրուն են: Միայն աստվածների օրհնանքը կարող է մեզ ազատել վերամարմնավորումից:

-Ես պարզապես ձգտում եմ այս կյանքում հարմարավետության: Աղքատությունից տանջված, ես պահպանում եմ ռացիոնալ միտքը: Ես պատրանքներ չունեմ ֆանտազիաների գծով: Ես հավատում եմ միայն շոշափելի իրականությանը:

Նավավարը գրգռված էր երեւում.

-Դու գիտես միայն հարմարավետությունը, բայց դեռ չգիտես մահվան վախը:

Չնկատելով փոփոխությունը նավավարի զգացմունքներում, աղջիկը շարունակում էր.

-Մահը՝ ամենեւին էլ վախենալու չի: Ինձ համար բավական է հարուստ նյութական կյանք ունենալը:

Տեսնելով, թե ինչպես նավավարի աչքերում զայրույթ բռնկվեց, նա կանգ առավ:

-Արդեն ուշ է,- կտրուկ ասաց նավավարը: -Գնա քնիր:

Նրանք միասին մի քանի օր անցկացրին: Այդ շրջանում, ինչպես էլ աղջիկը նրա համոզեր, նա միշտ կտրուկ հրաժարվում էր: Երբ նրա աղջիկը պատրաստվում էր գնալու, նավավարը չսկսեց նրան հորդորել մնալ: Նա գիտեր, որ իր խոսքերը խուլ կմնան: Երբ նրանք մայթին ավտոբուսի էին սպասում, նավավարն ասաց. «Դու դեռ ջահել ես»:

-Հայրիկ, հանգստացիր: Ես կջանամ ողջ ուժով, եւ երբ ես քեզ կարոտեմ, ես քեզ հյուր կգամ:

Հանկարծ նավավարին տխրություն համակեց:

Աժդահակը, որ պատրաստվում էր բռնաթի քաշել, հանկարծ լսեց փոքրիկ աղջկա ճիչը՝ «Տես, մոտենում է ցուլ նավը»: Բոլորը իրենց հայացքները սեւեռեցին դրա վրա: Փոքրիկ եւ վտիտ մարդը թիավարում է նավ-ցուլը՝ մարտնչելով գետի դեմ:

Աշխուժությունը մունջ աճում է երկու ջահելների մեջ: Հիվանդ կինը վերաձննդի եւ ապաքինման հույսի զգացողություն է ապրում: Եւ միայն աժդահակն ու պառավը սպասում են երկյուղածությամբ եւ բարեպաշտությամբ:

Գետանցից հետո համարյա երեկո իջավ: Իհարկե, նրանք չեն կարող այսօր Դրոմ հասնել: Կարճատեւ քննարկումից հետո, նրանք մտադիր են բնակվել նավավարի տանը: Նստած եռանկյունի վառարանի մոտ, որի վրա սեւ այլումինե թեյնիկի քթից ելնում էր թեյի բուրմունքը, նրանք ուտում եւ խմում էին:

-Նավավար, դու ավելի ես մեծանում,- ասում է Չուգանգը,- Թոշակի գնալու ժամանակն է:

-Եթե ես այդ անեմ, ապա մարդիկ ինչպե՞ս գետը կանցնեն:

-Այո, նավավարը ճիշտ է: Առանց նավավարի մենք չենք կարող հասնել հակադիր ափին,- ասում է աժդահակը: Այդժամ պառավը պատասխանում է.

-Նավավար, դու գետը լավ գիտես: Այսպիսով, միայն դու կարող ես մեզ օգնել այն անցնել:

Նավավարը բարախիկ ձեռքով դիպչում է աղջկա դեմքին: Փոքրիկ աղջիկը հարցնում է.

-Պապիկ, իսկ առանց քեզ գետը դեռ կարո՞ղ է գոյություն ունենալ:

-Փոքրիկ հիմարիկ, ինձ դաստիարակել է փոթորկուն գետը: Մար-

## Ցերինգ Նորբու

դիկ վախենում են նրանից, դրա համար էլ նրանք իմ կարիքն ունեն:

-Նավավար, Նորցեն՝ ամայի վայր է, եւ մոտակայքում ոչ մեկը չկա:

Ինչո՞ւ դու կացարան չես գտնում քո աղջկա մոտ:

-Քաղաքում աղմկոտ է, եւ մարդիկ այնտեղ անտարբեր են: Նորցեն դատարկվել է, բայց բոլորն այստեղ սիրով լի են:

Նրանք շարունակում էին խոսել եւ պառկում են քնելու միայն կես-գիշերին: Հաջորդ օրը նրանք ուղեւորվեցին Դրոմ: Ճանապարհին նրանք շարունակում էին խոսել միմյանց հետ, եւ ոչ մեկը չհիշատակեց նավավարին Նորցեից: Մի՞թե նրանք մոռացել էին նրա մասին: Կամ, գուցե թե, միայն այդ ժամանակ, երբ նրանք տագնապով սպասում էին գետանցից առաջ, նրանք իրենց բռնացրին այն բանում, որ մտաբերեցին գառամյալ նավավարին:



## ԻՆՉ-ՈՐ ՄԵԿԸ ՍՊԱՍՈՒՄ Է ՆՐԱՆ ԱՌՋԵՎՈՒՄ

Մի կարծիք, թե ես պարծենում եմ: Մեր համակարգում բոլորը կուզենային հավանություն տալ եւ համաձայնվել, որ «Տիկին Շհագուն ցնցող է»: Թեեւ նա ապրում էր հին քաղաքի ցածրիկ, հնախարխուլ եւ խոնավ տանը, մարդիկ նրա մասին միշտ բարձր էին արտահայտվում: Նա խնայողաբար եւ ջանադրաբար աշխատում էր, որովհետեւ դժվար էր պետական ծառայությամբ երկու երեխաներին դաստիարակելը: Նրա հետեւողական վարքի պատճառով մենք համարում էինք, որ նա ուներ բոլոր արժանիքները՝ բարություն, ազնվություն, բարեգթություն, բարեհամբուրություն, մեղմություն եւ այդպես շարունակ: Մեր համակարգում նա ամենահարգված մարդն էր դարձել:

-Հե՛յ, այդքան զրգռված մի եղիր: Տիկին Շհագուն երբեք իրեն այդպես չի պահել:

-Պնանք Ռիկի Շհագույի ետեւից, որպեսզի պարզենք, թե ինչն է մեզ համար լավ եւ վատ:

-Դուք ուզում եք փո՞ղ պարտք անել: Խնդիր չկա, բայց դուք պիտի տիկին Շհագուին, որպես ձեր երաշխավոր ունենաք:

...

Տիկին Շհագույի հեղինակությունը գերազանցում էր նույնիսկ շրջանային կոմիտեի ամենավառ ու հակասական աշխատողների հեղինակությունը: Մեր աչքերում նա անթերի էր:

Տիկին Շհագույի ծննդատունը Չամդոն էր: 1950-ականների սկզբին նա ճամփորդում էր Արեւելյան Տիբեթից դեպի Լհասա՝ Բուդդային երկրպագելու համար: Դրանից հետո նա ամուսնացավ ունեւոր դերձակ Դիոնդենի հետ, ով տասներկու տարով նրանից մեծ էր: Այդ ժամանակից ի վեր նա երբեք չլքեց Լհասան: 1960-ականների վերջերին, ձուբերող հավի պես, նա իրար ետեւից չորս երեխա ծնեց: Նրանցից երկուսը հիվանդությունից մահացան: Ի վերջո, մնացին լոկ մի տղան եւ աղջիկը: Կորցնելով իր երեխաներին տիկին Շհագուն ճգնաժամի նշաններ չցուցաբերեց, լուռ արցունքներ թափելուց բացի: Քառասուն

## Ցերինգ Նորբու

տարեկանում թոքերի հիվանդության պատճառով Դիոնդենը լքեց նրան: Հետեաբար, ևս այրիացավ: Չնայած դրան, ևս չտրտմեց: Սովորականի պես ևս լուռ լալիս էր, բայց ևս հյուժվեց: Շատ մարդիկ էին փորձում ծանոթանալ տիկին Շհագույի հետ, ով այն ժամանակ դեռ երիտասարդ էր: Եւ որոշ մարդիկ իրոք սիրահարվեցին նրան: Նրանք սիրում էին պահպանված հմայքով նրա նրբագեղ կեցվածքը, նրա անկնճիռ մաքուր դեմքը, ինչպես ևաւ նրա գրավիչ աչքերը...

Սակայն տիկին Շհագուն սիրալիր կմերժեր նրանց: Նա լուր ուզում էր դաստիարակել իր երեխաներին: Ինչպես դանդաղ բարձրացող ծուխը, ժամանակը ցնդում էր մի ակնթարթում: Տիկին Շհագույի դեմքի վրա սկսեցին մանրիկ կնճիռներ հայտնվել: Եւ ճերմակ մազերը սկսեցին միախառնվել սեւերին: Նրա որդին սկսեց իր մասնագիտական կարիերան եւ ամուսնացավ: Շուտով նրանք նրան թոռնիկ պարգևեցին: Նրա աղջիկն ավարտեց համլսարանը եւ աշխատանքի ընդունվեց լավ վարձատրվող մի ընկերությունում: Տիկին Շհագուն, վերջապես, երջանկության արցունքներ թափեց: Հիասքանչ ժպիտը կրկին ծաղկեց նրա դեմքին:

Նրա տղան ու աղջիկը տեղափոխվեցին իրենց տները, այնինչ տիկին Շհագուն շարունակում էր մենակ ապրել հին տանը, որտեղ նրանք ապրում էին ամուսնու հետ: Նա չէր ուզում հեռանալ այդ տնից, որ աղոտ պահպանում էր իր ամուսնու հոտը: Այնտեղ ապրելով, ևս զգում էր, որ կարծես թե իր ամուսինը դեռ կողքին էր: Այս պահին այնտեղ նախկին ընտանիքներից շատ քիչ մարդիկ էին ապրում: Շատերը գնացել էին ծերանոցներ կամ իրենց երեխաների հետ տեղափոխվել էին: Տնային տնտեսությունների մեծ մասն այստեղ այլ տեղերից վարձակալներ էին: Բայց դա ոչ մի նշանակություն չունեւ բոլորի գլխում տիկին Շհագույի պատկերն ունենալու համար: Լինեւ դա Արեւելքը, Արեւմուտքը, Հարավը թե Հյուսիսային Տիբեթը, բնակիչները բոլորը շատ հարգում էին տիկին Շհագուին: Տիկին Շհագուն ցույց տվեց իր արժանիքները, ինչպես բնիկներին, այնպես էլ արտասահմանցիներին:

Տիկին Շհագույի տունը գտնվում էր առաջին հարկում, եւ դուռը ներքնաբակ էր ելնում: Ձմռանը, մարդիկ սիրում էին հավաքվել նրա դռան մոտ եւ արեւի տակ տաքանալ: Շատ տարիներ անց, տիկին Շհագույի տան բակը խարխլված ու տարօրինակ դարձավ եւ փտած հոտ էր

արձակում: Քանի որ տիկին Շհագուն ախորժանք էր ապրում իր կյանքի երջանիկ պահերից, դժբախտությունն արագ հաջորդականությամբ եկավ: Ինչպես հին ասացվածքն է ասում, հաջողությունն ու դժբախտությունը ձեռք ձեռքի տված են քայլում: Նրա որդու հետ պայմանագիր կնքվեց ընկերության, որտեղ նա աշխատում էր, պարասրահը դեկավարելու համար: Մի քանի տարի անց, նա սկսեց շփվել մի ընկերախմբի հետ, որ կախվածություն ուներ ալկոհոլից: Նրանք հաճախ ելնում էին այլ կանանց հետ հիմարություններ անելու: Ի վերջո, Դիանդուպի կինը որոշեց լքել նրան: Դա վատ լուր էր: Բոլորը, որ ճանաչում էին տիկին Շհագունին, գիտեին այդ մասին: Տիկին Շհագուն ամաչում էր իր տղայի արածի համար: Օրորվելով քայլելով, նա առաջին անգամ նրան հյուր գնաց: Նստած իր տղայի դիմաց տիկին Շհագուն մեղմ ասաց.

-Կնոջդ մի մեղադրիր: Դա քո սխալն է: Գնա եւ նրանից ներողություն խնդրիր:

-Դու ոչինչ չգիտես: Մեր միջեւ սեր չկա: Ես կազատվեմ այն բանից հետո, եթե բաժանվեմ նրանից:

Դիոնդուպիը վիզը վեր բերեց: Տեսնելով Դիոնդուպի ուռչող աղամախնձորը, տիկին Շհագուն սրտում սուր ցավ զգաց: Այնքան ցավոտ էր, որ չկարողացավ արցունքները զսպել, նրա չորացած շուրթերը կիպ փակվեցին: Այն բանից հետո, երբ նրա ցավը փոքր-ինչ մեղմացավ, տիկին Շհագուն հիշեց, որ այդ ցցուն աղամախնձորը Դիոնդուպիը ժառանգել էր իր ամուսնուց: Դե, իսկ ինչո՞ւ իր որդին չունեւ այն պատասխանատվությունն ու կարեկցանքը, որ ուներ իր ամուսինը: Դիոնդուպիը իրոք որ լավ մարդ էր:

Լամպերի փառատոնի ժամանակ ծյուն էր տեղում է Լիասայում: Տուրտը վաղ վրա հասավ: Այն ժամանկ ես ընդամենը տասնինը տարեկան էի, ես ցրտից դողում էի եւ վատ էի հագնված: Փայտե թասը ձեռքիս, ես մուրում էի ուտելիքի համար Դիոնդուպի դռան մոտ: Նա դադար տվեց իր աշխատանքին եւ ինձ համար փայտե գդալով թասի մեջ ցամփա լցրեց: Եւ նա ինձ նույնիսկ յուղով թեյ առաջարկեց: Այնուհետեւ նա ինձ թույլ տվեց տաքանալու համար նստել սալօջախի մոտ: Կովի թրիքի կրակն ինձ տաքացրեց: Ես արտասովոր աստիճանի հուզվել էի: Ես չէի սպասում, որ աշխարհում այսպիսի բարի մարդ կլինի: Ողջ օրը

## Ցերինգ Նորբու

մռայլամած էր: Հիասքանչ արեւը երբեք չէր հայտնվում: Երբեմն ձյան փաթիլները թեթեւակի խոտորվում էին վար: Հետիոտների դեմքերը շարունակում էին ծեծվել պաղ քամուց, ստիպելով, որ նրանց ատամները կրճտան:

-Դրսում ցուրտ է: Դուք կարող եք մահու չափ սառչել: Ի՞նչ եք կարծում, դուք կարող եք ողջ գիշեր քնել անկյունում՝ սալօջախի կողքին:

Դոնդենը կարեկցանքով նայեց նրան: Այդ պահին նրա դեմքն ինձ համար անմոռանալի դարձավ: Այդ գիշեր ես ողջ գիշեր քնեցի դերձակ Դոնդենի նախասենյակում, նա ողջ գիշեր զբաղված էր: Նավթավառի լույսի տակ նա մարնրակրկիտ տիբեթյան հագուստ էր կարում: Երբ հաջորդ օրը արեւը ելավ, բուժքույրը Ռանթոնգ ընտանիքից եկավ տիկին Ռանթոնգի ծմեռային զգեստի ետեւից:

-Դերձակ, տիկին Ռանթոնգը խնդրեց այս ձեզ տալ,- ասաց բուժքույրը:- Ինչ վերաբերում է աշխատավարձին, նա ասաց, որ ձեզ միաժամանակյա աշխատավարձ կտա մինչեւ տիբեթյան նոր տարի:

Նա իր փոքրիկ բամբուկե պայուսակը դրեց ցածրիկ սեղանի վրա:

-Ամեն ինչ լավ է, ասաց Դոնդենը տիբեթյան հագուստը մի կողմ դնելով: - Ասացեք նրան, որ հանգիստ լինի: Բայց ես հուսով եմ, որ նրան դուր է գալիս զգեստի վրա արված նախշակարը: Խնդրեմ: Ես միակ դերձակն եմ, ում ծառայություններից օգտվում է Ռանթոնգ ընտանիքը: Դուք ինձ շատ աշխատանքներ եք բերել: Ես շատ գնահատում եմ դա: Մարդիկ նախանձում են նրանց, երբ նրանք քայլում են փողոցով:

-Ես շոյված եմ, եւ փոքր-ինչ շփոթահար,- ասաց Դոնդենը:

-Ո՛վ է նա,- բուժքույրը շրջվեց իմ կողմը:

-Նա...

-Դուք ինչո՞ւ չեք մեզ ասել, որ ամուսնացել եք: Դուք մեզ անձանո՞թ եք համարում: Ես կվերադառնամ, որպեսզի ասեմ տիկին Ռանթոնգին:

Ռանթոնգ ընտանիքի թրջված բուժքույրը մեջքին դրեց տիբեթյան հագուստը, որ փաթաթված էր հնդկական մառույթ կտորով, իսկ այնուհետեւ ելավ դերձակի տնից:

Դերձակն անօգ հոգոց հանեց:

Երբեմն երջանկությունը կարող է ձեզ վրա հասնել ակնթարթաբար, հուզմունքից գլխապտույտ առաջացնելով:

Դերձակ Դոնդեն բացեց ինձ իր սիրտը, երբ ես պաղած ու քաղցած

Էի: Ես չգիտեի, որ դա սեր էր: Այդ պահին ես պարզապես գիտեի, որ այդ պահից ի վեր ես պիտի հակվեմ այդ ամաչկոտ եւ վտիտ մարդու կրծքին, վերածվելով աղջկանից պառավի:

Իր որդին նրան հիշեցնել տվեց իր ամուսին Դիոնդենի մասին: Դիոնդենի բարության, հավատարմության ու մեղմության մասին մտածելով, տիկին Շհագուն չէր կարողանում իր որդու առաջ դողոցն ու արցունքները զսպել: Նրա արցունքները ներծծվել էին նրա ներսի գրպանի թաշկինակի մեջ:

Ամուսնուս մահից մեկ տարի անց ընտանիքիս միջոցների պահպանումը դժվար գործ դարձավ: Իմ երկու երեխաների ուսուցման ծախսերը հոգալու համար, ես ստիպված էի աշխատել այլ ընտանիքներում, որպես դայակ: Ինձ հաջողվեց այդ փոքրիկ հասույթով կերակրել ընտանիքս: Բայց, տեսնելով երեխաներիս մաշված հագուստը, ես շատ էի տխրում: Այն ժամանակ նրանք երկուսն էլ շատ հնազանդ երեխաներ էին: Մենք աղքատ էինք ապրում, բայց միմյանց հետ լավ լեզու էինք զտնում եւ շատ սիրում էինք իրար: Մի անգամ Դիոնդուփը հրաժարվեց դպրոց գնալ եւ ուզում էր ուսումը թողնել, որպեսզի կարողանար իր վրա վերցնել ընտանեկան պարտավորությունները: Ես ասացի.

-Ես կարող եմ հոգ տանել ձեր մասին, մինչեւ որ դուք ավարտեք բարձրագույն կրթությունը:

Նա պնդում էր, որ վատ էր սովորում դպրոցում եւ ավելի լավ կլիներ, որ նա աշխատեր, ինչպես ես էի անում, որպեսզի հոգ տանեի համալսարանական կրթության համար: Ես ամեն կերպ ջանում էի, բայց ոչ մի կերպ չկարողացա Դիոնդուփին տարհամոզել: Ի վերջո, խառնվեց շրջանայի կոմիտեն, եւ նա ընկերությունում աշխատանք գտավ: Մտորելով այդ մասին, ես սկսեցի խղճալ Դիոնդուփին:

-Ձեր որդին դեռ երիտասարդ էր, եւ նրա հետ չէ հոր սերը:

Այնուհետեւ տիկին Շհագուն տանջալիորեն լքեց որդու տունը:

Սակայն Դիոնդուփը չհետեւեց մոր խորհրդին: Նա լքեց իր կնոջն ու երեխային, եւ ամուսնացավ մի պճնամուլ կնոջ հետ:

Տիկին Շհագույի սիրտը կրկին կոտրվեց:

Նախկինում, երբ բակում ոչ մեկը չէր լինում, տիկին Շհագուն նստում էր դռան մոտ փոքրկ աթոռակի վրա, եւ զգում էր, թե ինչպես էր իրեն պարուրում արեւի լույսը:

## Ցերինգ Նորբու

Այնուհետև նա ինքն իրեն ասաց.

-Այս բակից, Դիոնդենը դույլով ջուր էր բերում գլխիս վրա պղնձե շերեփով: Երբ ես կորցրի իմ երկար վարսերը, իմ մեծ կրծքերն օրորվում էին կուրացուցիչ արեւի տակ: Նայելով իմ բացազույն մաշկին, Դիոնդենը ծաղրում էր՝ «Այն ճերմակ է, ինչպես ձյունապատ դաշտը»: Լսելով այդ, ես ուրախացա, իսկ այնուհետև կամացուկ ասացի՝ «Ձյունապատ դաշտում հաճախ Յակ եմ խմում»: Դիոնդենը գլխիս ցնցուղով ջուր էր լցնում: Իմ թաց մազերի արանքից, ես տեսնում էի, թե ինչպես էր նա պղնձե շերեփը բռնում իմ գլխավերեւում, արեւի շողացող լույսի տակ: Ավար: Մի՞թե այն օրերը հազեցած չէին ոսկե լույսով: Թեւեւ մեր կյանքն ավելի դժվար դարձավ, մենք երբեք սիրո պակաս չէինք զգում: Ներկա ժամանակում, մենք կարող էինք ամեն ինչ ուտել, ինչ կամենում էինք, եւ ըստ մեր ցանկության հագնվել: Բայց շատ մարդիկ չէին կարողանում սիրել մյուսներին եւ համերաշխ լինել:

Մտածելով իր որդի Դիոնդուփի մասին, տիկին Շհագուի աչքերը լցվեցին: Արեւի լույսը: Այո, տիկին Շհագուն արեւի լույսի կարիք ուներ, որը ոչ միայն կշերմացներ նրա մարմինը, այլ նաեւ լույս կցայտեր նրա հետզհետե տրտմացող սրտի վրա:

Այնուհետև, տիկին Շհագուն գոցեց իր աչքերը, տեսնելու համար, թե ինչ էր անում իր տղան: Լսելով իր տղայի վարքի մսին, նա դժբախտ էր, բայց իրեն այնքան գրգռված չէր զգում, ինչպես նախկինում: Նա մտածում էր, որ ինքը երբեք չի տխրի իր անհնազանդ տղայի համար: Սակայն շուտով նրա տղան կրկին բաժանվեց, եւ նրա պարասրահն էլ մեծ պարտքի տակ էր: Այդ ամենը դարձյալ նրան տանջում էր: Տղայի ու աղջկա առջեւ, տիկին Շհագուն տվեց իր բոլոր խնայողությունները որդուն, որպեսզի օգնի նրան այդ ամենի տակից դուրս գալ:

-Քո փողը չի բավականացնում, որպեսզի ինչ-որ բան անես,- սառն ասաց որդին դժգույն դեմքով եւ չոր շուրթերով:

-Պարզապես վերցրու:

Նա չէր կարողանում տեսնել նրա տառապալի դեմքը:

-Թեպետ սա շատ քիչ գումար է, բայց կարող է թեթեւացնել քո պարտքը,- ասաց տիկին Շհագուն: - Պարտքը՝ ծանր բեռ է:

-Հարյուր հազար յուանը մեծ նշանակություն չունի: Ոմանք նույնիսկ տասնյակ միլիոն յուաններից ավելի պարտք ունեն:

Դիոնդուփը նայեց լուսամուտագոգին դրած քրիզանթեմներին: Այդ քրիզանթեմները վարդագույն էին, օրորվելով աշնանային քամու տակ: Դրանք տիկին Շհագուփ սիրած ծաղիկներն էին: Նա միշտ լավ հոգ է տանում դրանց: Ամեն անգամ, երբ նա ինչ-որ դեղին տերեւներ էր տեսնում, նա շատ տխրում էր: Այնուհետև նա մի գույգ մկրատ էր օգտագործում եւ մեկը մեկի ետքից կտրում էր տերեւները: Նայելով կոկոններին, նա անհամբերությամբ սպասում էր, թե երբ դրանք կծաղկեն:

-Պարտքի առկայությունը կարող է հուզել քո խիղճն ու բարոյակալությունը,- ասաց տիկին Շհագուն:

Նրա աղջիկ Ցզեն միջամտեց, «Ժամանակները փոխվել են: Պարտքի մեջ ոչ մի լուրջ բան չկա:

Տիկին Շհագուն հիասթափված նայեց աղջկան: Տիկին Շհագուն ոչ մի կերպ չկարողացավ նրանց համոզել: Նա ինքն իրեն հարց էր տալիս, թե ինչու էր աշխարհն այդպես փոխվել: Ավելի ու ավելի շատ մարդիկ էին բարոյական այլասերվածության մեջ ընկնում եւ ազահ էին դառնում:

Ճանապարհելով նրանց, տիկին Շհագուն զգույշ փակեց դուռը, երկյուղելով, որ մյուսները կարող են իմանալ, որ իր որդին ծանր պարտք ունի:

Նրա եւ Դիոնդոնի անբասիր հեղինակությունը քայքայվել էր Դիոնդուփի կողմից: Ինչպե՞ս կարող է երկու սերունդների միջև այդպիսի մեծ տարբերություն լինել: Նախկինում մենք մեզ նրանց նման չէինք պահում:

Ամեն անգամ մեզ հանդիպելիս տեր եւ տիկին Ռանթոնզները ակնածալից ասում էին.

-Ախ, դերձակ, դուք կրկին եկել եք ծիսական ճեմուղի»:

-Դե, այո: Ողջույն պարոն Ռհանթոնզ եւ տիկին Ռհանթոնզ:

-Թացացած բուժքույրը ձեր հաշիվները փակե՞ց,- ասաց պարոն Ռհանթոնզը:

-Դա արված է, սըր, դուք գրավ ճարել եք ինձ: Դուք ինձ այնքան գործեր եք բերել: Ես զգում եմ, որ պարտական եմ ձեզ:

-Դուք ոչ միայն լավ դերձակ եք, բայց եւ ազնիվ մարդ եք:

Դիոնդենը երբեք չէր դավաճանում իր ազնվությանը, քանի դեռ ապրում էր: 1970-ականների սկզբներին նրան տեղափոխեցին հարեան

## Ցերինգ Նորբու

կոմիտեի խմբի ատեյե: Եւ նա դեռեւս պահպանում էր իր ազնվությունն ու հնազանդությունը: Իրավամբ նա իր գործի մեջ լավագույնն էր, բայց երբեք մեծամտությոն չէր ցուցաբերում: Նա նույնիսկ մյուսներին ուսուցանում էր իր հնարքները: Դրա համար էլ յուրաքանչյուրը նրա խմբում հարգում էր նրա բարոյական հատկանիշները: Թեւ երեսուն տարուց ավելի էր անցել, երբ Դիոնիսի աշխատակիցները հանդիպում էին ինձ, նրանք միշտ բարեհոգաբար ողջունում էին ինձ՝ «Տիկին Շհագու, ինչպե՞ս եք դուք»:

-Ես հիասքանչ եմ,- պատասխանում էի ես: Այդ ժամանակ, ես մտածում էի իմ մահացած ամուսին Դիոնիսի մասին:

Դերձակը իրոք որ լավ մարդ էր: Այժմ մենք դեռ հիշում ենք նրա բարությունը:

Այդ խոսքերը հիշեցնում էին ինձ այս արտահայտությունը՝ «Բարությունն ընդլայնում է ճանապարհը»:

Տառապած այդպիսի ծանր բեռից, տիկին Շհագուն ավելի թուլացավ: Շփվելով իր հարեանների հետ կամ նրանց վեճերը հարթելիս, նա այլեւս ջինջ եւ հմուտ մտքի տեր չէր, ինչպես նախկինում: Նրա խոսքերը չէին հաղորդում իր գաղափարները: Մարդիկ մտածում էին, որ նա ծերացել ու մոլորվել է:

Ամենամահացու հարվածը նա ստացել էր աղջկանից: Տիկին Շհագուն մի ժամանակ իր աղջկա մեջ տեսնում էր իր ընտանիքի ամենազարգացած եւ հեռանկարային մարդուն:

Անսպասելի, նրա աղջկան բանտ նստեցրին պետական փողերի վատնումի համար: Լսելով այս լուրերը, տիկին Շհագուն ուշաթափվեց: Բարեգութ հարեանները նրան հիվանդանոց ուղարկեցին: Հիվանդանոցային մահճակալի վրա պառկած, տիկին Շհագուն չէր համարձակվում աչքերը բացել, իր հարեանների կարեկցող աչքերը տեսնելու վախից, եւ այն բանից, որ նա չի կարողանա իր արցունքները զսպել: Ավելին, նրա համար դժվար էր խոսել այդ անսխորժությունների մասին այդչափ բարեսիրտ մարդկանց հետ: Բժիշկն ասաց՝ «Նա շատ թույլ զարկերակ ունի, իսկ ուղեղը շատ բորբոքված է»: Հանդարտ պառկած տիկին Շհագուն իրեն այնքան թույլ էր զգում, որ նա նույնիսկ աչքերը բանալու ուժ չուներ: Երբ ամեն ինչ խաղաղ էր, նրա փակ աչքերը փոքր-



ինչ բացվեցին: Այնուհետև հայտնվեց սպիտակ եւ անբիծ պատը: Անցյալի հուշերը դուրս հորդեցին:

-Աղջիկն անպայման քո ճանապարհով կգնա:

Դիոնդենը ոտքերը խաչած նստել էր ծալովի մահճակալի վրա: Ասեղը նրա ձեռքին ետ ու առաջ էր գնում: Պատրաստի հագուստը իդեալական վիճակում դրված էր նրա կողքին:

-Լինել անպիսինը, ինչպիսին ես եմ, անօգուտ է, համենայն դեպս, իմ կյանքը դեռեւս ձեր կարիքն ունի,- ասացի ես:

-Ինչպես եւ դու, նա էլ կարող է ունենալ ինչ-որ մեկի սերն ու հետաքրքրություններն ապագայում,- Դիոնդենը զլուխը բարձրացրեց:

Ես տեսնում էի նրա ցից ադամախնձորը, որը վերուվարում էր, երբեմն կլլում էր:

-Դե ինչ, ժամանակի ընթացքում աշխարհում կհայտնվի ինչ-որ նույնքան լավը, որքան դո՞ւ: Կավե գավը բռնած, ես նրան թեյ լցրեցի: Նա բաժակը բռնած դադար տվեց իր աշխատանքին: Այնուհետև նա ուղիղ նստեց, «Նրանց կյանքը տարբերվում է մերինից»:

-Նրանք մեզանից լավ կապրեն:

-Հուսով եմ,- ասացի ես: - Ավաղ, ի՞նչ պատահեց: Ես այժմ քեզ չեմ տեսնում,- հավելեցի ես:

-Ես մեռած եմ, այնպես որ դուք ինձ չեք տեսնում: Դիոնդենի ձայնը ինչեց թույլ լույսի մեջ, արձագանքով ուղեկցվելով:

-Ծերուկ, ես մի անգամ չորացրի քո արցունքները քո մահվան ժամանակ: Դուք ուզում եք, որ ես նորից լա՞մ ձեզ համար:

Սակայն, Դիոնդենն անհետացավ:

Արցունքները սրբելով, երբ տիկին Շհագուն պատրաստվում էր վերմակով ծածկվել եւ ննջել, նա հանկարծ լսեց, թե ինչպես մեկը դուռն է թակում: Հետաքրքիր է, թե ո՞վ է թակում իր դուռն այս ուշ ժամին: Տիկին Շհագուն բոկոտն բացեց դուռը: Դիոնդենը կանգնած էր այնտեղ լուսնալույսի տակ:

-Ծերուկ, դե ինչո՞ւ չես մտնում: Սա քո տունն է,- բողոքեց տիկին Շհագուն:

Սովորականի պս Դիոնդենը հանեց փոշեծածկ կոշիկները, մահճակալի ծայրին ոտքերը խաչելով: Նրա դեմքը մթին էր, եւ նա ավելի բարի էր, քան առաջ: Նայելով նրան, տիկին Շհագուն սկսեց հեծկլտալ:

## Ցերինգ Նորբու

- Դու այնքան ծեր ես: Ինչո՞ւ ես մինչեւ հիմա այդքան չարացած: Ես ծարավ եմ, ինձ թեյ տուր:

Տիկին Շհագուն Դիոնդենին թեյ լցրեց: Նա ուշադիր գնում էր իր կնոջը:

-Դու ծերանում ես: Ժամանակը թռչում է: Մեր երեխաները հնազանդ են,- նա մի կում թեյ ըմպեց:

-Աշխարհը շատ արագ փոխվեց: Մեր երեխաները անախորժությունների մեջ ընկան:

Տիկին Շհագուն գլուխը տարուբերեց:

-Նրանք բոլորովին մեզ նման չեն: Թեև մենք աղքատության մեջ էինք ապրում, մենք երբեք մյուսներին վնաս չէինք տալիս:

Դիոնդենն իր վտիտ ձեռքը դրեց նրա ուսին, քնքուշ շոյելով այն:

-Այդպես չէ՞: Ավաղ, չգիտեմ, թե ի՞նչ են մտածում երեխաներս: Ինչո՞ւ է ձեռքդ այդքան պաղ: Ի՞նչ ես կարծում, կրակը չբորբոքե՞մ: -Տիկին Շհագուն, ուղեւորվելով արտաքնոց, սրբեց արցունքները:

-Ինձ քիչ ժամանակ է մնացել: Մնա ինձ հետ:

Իջնելով մահճակալից, Դիոնդենը բռնել էր նրա ձեռքը:

Տիկին Շհագուն ասաց. «Ինչպես եւ առաջ, դու չես թողնում ինձ աշխատել: Եթե անկեղծ լինեմք, ես ամեն կերպ աշխատում էի, բայց մեր երեխաներն այնպես են հիասթափեցնում: Ես շատ տխրում եմ, երբ տեսնում եմ քեզ»:

-Ես քեզ չեմ մեղադրի: Պարզապես հանգիստ եղիր: Ես այնքան հանկարծակի հեռացա: Դուք, երեւի թե, շատ տանջվեցիք:

-Առիթ մի տուր, որ ես ինձ մեղավոր չզգամ, դա ինձ ստիպում է ավելի մեղավոր զգալ:

-Դու կրկին հիմարիկ ես: Մի՞թե մենք միշտ ուշադիր չենք միմյանց հանդեպ: Ես գիտեմ քո դժվարությունները:

Դիոնդենը սկսեց հագնել իր կոշիկները:

-Դուք նորից շտապո՞ւմ եք: -Տիկին Շհագուն մեկնեց ձեռքը, ջանալով կառչել Դիոնդենի ձեռքից: Բայց նրա ձեռքն անհասանել էր, ինչպես ծխամշուշը:

-Աքաղաղը պատրաստվում է ագռավի վերածվել: Ես այլևս չեմ կարող քեզ հետ գրուցել:

Տիկին Շհագուն պատրաստվում էր դուռը բացել, բայց Դիոնդենն

անհետացավ: Նա արագ բացեց աչքերը: Արեւի լույսն անցավ պատուհանի միջով: Դիոնոթուքը պինդ քնած էր, հենվելով մահճակալի ծայրին: Տիկին Շհագուն զգում էր, որ իր բանականությունն ավելի ջինջ էր, քան նախկինում: Նա գիտեր, որ դա վերջին շողանքն էր մահվանից առաջ: Նրան քիչ ժամանակ էր մնացել: Նա բարձրացրեց իր չորացած ձեռքը, պոկելով թթվածնի շլանգը, որ մտցրած էր իր քթանցքները: Եւ այնուհետեւ նա հանեց ասեղի համար ներարկման փողրակն իր ձեռքից եւ աչքերը փակեց: Նա կամացուկ ասաց՝ «Դիոնդեն, ես պատրաստվում եմ հետեւել քեզ»: Իսկ երբ տիկին Շհագուն անցավ մթին թունելով, նա պարզ լսեց բժշկի խոսքերը, «Ոչ, նա չի կարող փրկվել»: Երակարածիզ ոռնոցը ելավ, ինչպես վայրի քամին: «Դժբախտություն», - տիկին Շհագուն լսեց որդու ոռնոցը: Մահացու զևզոցի պես այդ ձայնն արձագանքվեց նրա ականջներում: Նա պիտի առաջ գնար:

ցավ չէի զգում: Ես ուժերի անբավություն զգացի եւ շարժվել չէի կարողանում: Ես լուռ նայում էի իմ գլխավերեփս կապույտ երկնքին ու լողացող ամպերին եւ արեւի տակ տաքանում էի: Այդ պահին, ես լսում էի, թե ինչպես է իմ տակի խոտը քաշիցս տրտնջում, ես դրանց վրա ծաղիկներ էի դնում, որոնք մեղադրում էին արեւի լույսի ուժին այն բանում, որ խոչընդոտում էր օդի տամկության ներքաշմանը: Ամեն ինչ հիասքանչ էր: Ես կարող էի հասկանալ ծաղիկների եւ բույսերի ձայնը: Լսելով նրանց ձայները, ես գիտեի նրանց բերկրանքներն ու տառապանքները: Արեւը դանդաղ մայր էր մտնում պրերիայի արեւմտյան բարձունքի վրա, եւ ամպերը երկնքում շառագունել էին: Հոտ ու ոչխար իրար ետքից գալիս էին ինձ վրա, ուշք չդարձնելով, երբ նրանք գնում էին դեպի Ռագոն ցեղը /անմահների տունը/: Որոշ ժամանակ անց գիշերն անցավ իմ գլխավերեւով: Այն մթին պատնեշ քաշեց Սեչինյան պրերիայի վրա, եւ այդու ես չէի կարողանում պարզորոշ տեսնել, թե ինչ էր ինձ շրջապատում: Ծաղիկներն ու բույսերը դադարեցին խոսել ու սկսեցին ննջել: Սակայն ես վախենում էի, որ հոտն ու ոչխարները կարող են կորչել: Եթե նրանք չկարողանան բարեհաջող վերադառնալ դեպ իրենց ցեղը, նրանց վրա կարող են գայլեր հարձակվել: Արդյունքում, ոչ մեկն ինձ չէր վարձի ևորից հոտադության համար եւ իմ գոյության միջոցներն անսխորժության մեջ կհայտնվեն: Իմ մտատանջությունները լոկ սրվեցին: Ես ջանում էի ելնել, բայց ինձ չափազանց ծանր էի զգում: Ես տազնապաճ պառկել էի խոտի վրա, իսկ հոժ խավարը լցրել էր իմ աչքերը:

«Յարջե, Յարջե...»:

Ես լում էի, թե ինչպես էին հովիվները փնտրում ինձ: Ձայնն անընդհատ էր, եւ շուտով դրանից հետո խավարի մեջ թռան փոքրիկ աստղերը: Հետզհետե դրանք ավելի ու ավելի մեծանում էին, շողալով շուրջբոլորը, ներթափանցելով ընդմեջ հաստ մթին վարագույրի: Լույս կար տասնյակ լապտերներից: Քարի պես, ես դեռեւս տրորում էի խոտերը, դրանք ճկելով: Լույսը լապտերներից շողաց ինձ վրա, այնուհետեւ կողմ գնաց: Ինչ-որ մեկը նույնիսկ դեմ առավ ինձ:

«Յարջեի վրա գայլե՞ր են հարձակվել», - տազնապաճ հարցրեց ինչ-որ մեկը:

Ոչ: Եթե գայլերը գային, ապա հոտի ու ոչխարների վրա էլ կհարձակվեին: Բայց հոտ ու ոչխար չեն բավում»:

## Ցերինգ Նորբու

«Որքը, երեւի թե, խաղում էր, եւ որոշ տարածությունից փախել էր»:

«Ես հուսով եմ, որ սոված գայլերը նրան չեն կերել»:

«Ինչ ափսոս: Արի նայենք նա շուրջը»:

...

Հովիվները շարունակում էին որոնումները պրերիայի խորքում, միմյանց հետ խոսելով: Իմ վախը փոքր-ինչ մեղմացավ: Նրանք ի վերջո ինձ կգտնեն: Բացի այդ, ոչ հոտ, ոչ ոչխար չկար: Պա ինձ հանգստացրեց: Ես չէի կարողանում շարժվել, այդ պատճառով ես պիտի տեղում պառկեի: Նրանց լապտերների շողերն ի վերջո կորան մթության մեջ: Երկիրն ու երկինքը կրկին միաձուլվեցին: Ու գիշերը սաստիկ անձրեւ էր գալիս, բայց ինձ վրա անձրեւի կաթիլները չէի ընկնում, ասես ինչ-որ բան ինձ ծածկում էր: Ես զարմացա, երբ երկու կլոր ուլունքահատիկ տեսա, իմ առջեւ կախված կանաչ շողանքով: Երկարածիզ շնչառության ձայնի ուղեկցությամբ, ինչ-որ մեկի արյունալի մահվան հոտը լցվեց քթանցքներս: Սիրտս կծկվեց: Երկու շողացող գնդիկ մի քանի քայլի վրա կանգ առան, որպեսզի այլեւս ինձ չմոտենային: Ես սպասում էի նրա ներխուժմանը: Այնուիտեւեւ անասելի լարումներն ընդունեցին ինձ, եւ ես ուշաթափվեցի: Երբ ես արթնացա, լուսաբաց էր: Առավոտյան լույսը հետզհետեւ սկսեց հայտնվել: Հեռավոր լեռը բացում էր իր սեւ քողը, հետզհետեւ մերկացնելով կանաչը: Ոչ հեռու, վիթխարի գայլը նայում էր ինձ վրա, բայց նրա աչքերի շողանքում քաղց չկար: Տեսնելով իմ զզվելի հայացքը, նա ողջունեց այն մեղմ հայացքով: Հետո նա շրջվեց ու ետ վազեց պրերիայի խորքերը: Ես գլխի ընկա, որ նա, երեւի թե, պատրաստվում էր հավաքվել: Քանի ես այդ մասին էի մտածում, օրը փոխվեց: Մեղմ ոսկեգույն լույսը պարուրեց ընդարձակ պրերիան: Կանաչ խոտը սկսեց վեր ու վար աճել: ինձ ծանոթ հոտն ու ոչխարները կրկին վերադարձան ինձ մոտ: Այսօր Դորգուն արածացնում էր իմ հոտն ու ոչխարներին: Ինձանից ոչ հեռու Դորգուն դրեց ցամփայով պարկը եւ մուգ այլումինե թասը, տանելով հոտն ու ոչխարները ավելի առատ խոտով մի վայր: Ինչո՞ւ նրանք չտեսան ինձ: Այդ մտածելով, ես սկսեցի անհանգստանալ: Ես փորձում էի ճշալ, բայց չէի կարողանում ոչ մի ձայն հանել, դրա փոխարեն աղի ու դառը արցունքներ հարուցելով, որոնք տամկացրին իմ այտը: Հովիվները, որ փնտրում էին ինձ, ուժասպառ վերադարձան: Հենց որ նրանք անցան Սեչ-

հենյան պրերիան, Դորգուն նրանց ասաց. «Դուք նրա հետքը չգտա՞ք», ինչ-որ մեկը պատասխանեց. «Մենք հետքը չգտանք: Նա գուցե թե մեռած է»: Իրենց ետեւից քարշ տալով կարճաչող վզերով երկար ստվերները, նրանք գնում էին Ռազոն ցեղի մոտ:

Դորգուն փոքր-ինչ կովի թրիք դրեց խոտի վրա: Նա այն գցեց եռանկյունի քարե վառարանի մեջ, խոտը վառելով, եւ այլուժինե թասը դրեց վերեւից: Շուտով քամին թեյի բույրը լցրեց քթիս մեջ: Բույրը փորիս մեջ կծկումներ առաջացրեց: Թշնացող ձայներով կրակը մարվեց: Դորգուն պառկեց խոտերի վրա ու պինդ քնեց: Երկար օրն անցավ: Հովվական երգ երգելով, եւ հոտն ու ոչխարներին արածեցնելով, Դորգուն դանդաղ գնում էր ցեղի մոտ: Ոսկեգօծ մայր մտնող արեւը ծաղկել էր մեջքին, ասես ծաղիկ: Արեւի բազմապիսի մտրակները զարդարված են մի քանի գեղեցիկ աղեղներով: Հարվածների ձայնը լողում էր երկնքում: Լսելով երկարածիգ երգեցողությունը պրերիայի վրա, ես ուզում էի, որպեսզի նա վերադառնա առ Ռազոն ցեղը: Այն գայլը կրկին վերադարձավ: Նա նստել էր ծնկաչոք ինձանից որոշ հեռավորության վրա, ինչպես եւ նախկինում: Լարվածությունը կրկին լցրեց սիրտս: Շնչառությունս հաճախացավ: Գիշերը աստղալի էր եւ վառ լուսնով: Կեսգիշերին, սպիտակ ձիու վրա, Թենման կրկին եկավ Մեչհենյան պրերիա: Տեսնելով Թենմայի ձին, գայլը ուրախ վեր թռավ Թենմային ողջունելու: Այնուհետեւ եւ գայլը, եւ Թենման դադարեցին պրերիայում: Թենման ձիուց վար թռավ ու մոտեցավ ինձ: Նա ուսերս թփթփացնելով ծնկեց: Հանկարծ ծանրությունը, որ մինչ այդ ճնշում էր ինձ, անհետացավ:

«Յարջե, այժմ դու կարող ես վերադառնալ կրկին առ ցեղը»: Թենման շրջվեց, որպեսզի գրկեր գայլի վիզը, դեմքը քսելով նրան: Այնուհետեւ նա բաց թողեց գայլին, թեթեւակի վեր թռավ սպիտակ ձիու վրա եւ վարգեց առ երկինք: Գայլը ձգեց վիզը, երկար ոռնոց արձակելով: Չայնը ցնցեց իմ վերնամասերն ու արյունատար անոթները: Խավարամած պրերիայում գայլն ու ես նայում էինք մեկս մյուսին: Նրա հայացքից ես հասկացա, թե նա սպասում է, թե ես երբ կելնեմ: Ես ելա, տրորված խոտը շտկվեց: Երբ ես կանգնած էի, ես այլեւս չէի լսում խոտի խոսակցությունները: Գայլը չորեքթաթ նստել ու սեւեռուն հայացքով նայում էր ինձ: Լուսնի պարզ ու ջինջ շողանքում ես ուղեւորվեցի դեպի Ռազոն ցեղը: Ցեղի կանայք իրենց հյուղակներում էին, նստած

## Ցերինգ Նորբու

իրենց եռանկյունի երկաթի առաջ վառարանում կովի թրիք են վառում: Ասես պայթուցիկ բան, կովի թրիքի ծայրերը մի վայրկյանում շառագունեցին: Սպիտակ ծուխը լցվեց նեղիկ սենյակների մեջ: Այնուհետև տղամարդիկ ելան իրենց անկողիններից, կեղտն աչքերում, բոկոտն, վրա քաշելով տիբեթական հագուստները: Ելնելուց հետո նրանց առաջին խնդիրը հոտ ու ոչխարին հսկելն էր, ստուգելը, թե արդյոք նրանք լավ վիճակում են: Սոնամն առաջինը ելավ հոտ ու ոչխարին նայելու: Երբ նրա դեմքին փչեց սառցե առավոտյան քամին, քնատությունն ակնթարթաբար անհետացավ: Նա կանգնել էր հոտ ու ոչխարի հոտի փարախի մոտ: Հեռու փախչելով, նա պատասխանեց բնության կանչին: Նա մեջքը տանը դարձրած, հանեց տաբատը: Երբ նա բավարարեց իր միզելու ցանկությունը՝ մի իսկական տեսարան տեսավ: Վիթխարի պրերիայի ծայրից ահագին գայլի ուղեկցությամբ մարդ էր գալիս: Գայլի մորթին շիկավուն էր, հարթ ու շողշողուն, վառվող հուր հիշեցնող: Սոնամը ցնցվեց իր տեսածից: Նա նայում էր նրանց, քանի որ նրա մտքում բազում հարցեր էին ծագում: Հանկարծ, տաբատը վեր քաշելով նա վազեց իր տուն եւ ձայն տվեց այն քնատ տղամարդկանց, որ կանգնած էին դռան մոտ՝ «Գայլ: Գայլ»: Սոնամը ներխուժեց նրա տուն, ցաքուցրելով նրա անոթները հատակին: Դրանցից խմեց գոլորշիացող թեյը: Քանի որ դրանք կարգի բերելու ժամանակ չունեին: Նա հանեց հրացանը սյան վրայից ու սկսեց կոտորակներով լիցքավորել: Ծնկելով հատակին, Սոնամի կինը տակնիվեր նայեց նրան: Նրա արագ շնչառությունը նրան ստիպեց նյարդայնանալ: Նա ասաց, «Մեր հոտն ու ոչխարը գա՛րն է սատկացրել»: Սոնամը անտեսեց նրան: Տանելով կոտորակներով լիցքավորված հրացանը, նա ելավ: Մինչեւ նա շատ մարդիկ էին վազում, իսկ նրան հետետում էր կինը: Ցեղի բոլոր մարդիկ վազում էին առջեւից: Տեսնելով, թե որքան շատ մարդիկ կան, վազելով Յարջեին ողջունելու, գայլը կանգ առավ: Նա Յարջեի վրա թեք հայացք նետեց, այնուհետև կրկին վազեց պրերիայի խորքը: Կարմիր հրե զունդն ընկավ կանաչ խոտի վրա: Հետո ավելի փոքրը, մինչեւ որ այն վերջապես կորավ կանաչ խոտի մեջ: Հովիվները ճանաչեցին Յարջեին: Նրանք չէին կարողանում հավատալ, որ նա դեռևս ողջ է եւ գայլի ուղեկցությամբ: Բոպեական զարմանքից հետո, հովիվները շարունակեցին հուզված առաջ վազել: Յարջեն ցնցոտիներով էր, ցնցվող գլխով

եւ դալուկ դեմքով: Սակայն նրա աչքերը վառվումն էին, պարզ եւ խորունկ, ինչպես լճեր: Իրար հրմբելով հովիվները շրջապատեցին նրան, մեկը մյուսի ետեւից հարցեր տալով: Անհաղորդ կանգնած, նա չէր պատասխանում եւ հանկարծ ընկավ խոտերի վրա: Հովիվները Յարջեին դրեցին Դորջեի մեջքին, ուղեւորվելով դեպի Ռագոն ցեղը: Դորջեն Յարջեին տարավ Սոնամի տուն, թույլատրելով նրան պառկել մահճակալի վրա: Այնուհետեւ Դորջեն տրորեց Յարջեին տաճարից բերած յակի յուղով, եւ թարմ կաթը նրա բերանը լցրեց: Յարջեն գիտակցությունը կորցրած էր: Կաթը հոսում էր բերանից, թացացնելով չոր դեղին հողը: Յարջեն մինչեւ գիշեր չէր գարթնում: Երբ նա քնած էր, հովիվներն արձակեցին նրա գոտին, ոտից գլուխ խիստ զննելով նրան: Նրա ընկնելուց հետո ոչ վերք էր եղել եւ ոչ էլ կապտուկ: Աշխույժ վիճաբանությամբ, այդ հովիվներն առաջադրեցին իրենց կռահումները: Այդուհանդերձ, այդպիսի կռահումները ստուգման չեն ենթարկվում, մեկը մյուսի ետեւից հերքվելով: Այդ պահին ամենաավագ հովիվն ասաց. «Երեւի թե, նրան ուրվականն է գայթակղել»: Բոլոր հովիվները հանկարծ լույս տեսան՝ «Իհարկե»: Նրանք անհանգստանում էին այն բանի համար, թե արդյոք ուրվականը կգայթակղի ցեղի մյուս մարդկանց: Սարսափելի է. նրանք նստել էին արեւի տակ, փորձելով կռահել, թե ուր էր բերել ուրվականը Յարջեին: Ամենաավագ հովիվը հավելեց. «Եթե նրան ուրվականը որսա, նա կարող է ընդմիշտ լռվել քնի մեջ, թռչելով լեռներով ու գետերի վրայով, ասես հարթ հողի վրա քայլելով: Եւ դա մի ժամ կամ մոտավորապես այդքան կտեւի մինչեւ որ նա ավարտի ճամփորդությունը, որը սովորաբար երեք կամ չորս օր է տեւում: Դա այդպես է, եթե մենք նույնիսկ նրան գտնեինք, մենք չէինք նրան այլ կերպ կանչել, եւ մենք կարող էինք նրան մահու չափ վախեցնել»:

«Մի անգամ Թիեջեն կամ Դեվա ցեղը գրավվել էր ուրվականից, իսկ այնուհետեւ նետվել էր Չալիա լեռան թփուտները»:

Հովիվները խոսում էին իրենց տարբեր կարծիքների մասին, բայց նրանց տանջում էր անասելի անհանգստությունը:

Երբ մթնեց, տարիները գարթնեցին: Լսելով հովիվների ձայները, նա չկարողացավ զսպել ուրախության արցունքները: Լսելով, թե ինչպես է Յարջեն շուռումուռ գալիս անկողնում, մարդիկ սենյակում հասկացան, որ նա քնած չէ: Պատրաստակամ հարցրեցին նրան, թե ինչ է

## Ցերինգ Նորբու

պատահել: Նա պատասխանեց. «Թեմման ընտրեց ինձ որպես արքա Գեսարի մարգարե»: Բոլորը զարմանքի եւ հուզումի ալիք զգացին: Նրանց հուզված խոսքերը տարուբերվեցին մթին սենյակում: Որոշ ժամանակ անց նրանք վերջապես հանգստացան: Ինչ-որ մեկն ասաց Յարջեին, որ վերապատմի արքա Գեսարի պատմությունները: Սոնամի կինը վառեց նավթալամպը: Թույլ լույսն առկայծում էր պատրույզի վրա, ակնթարթաբար շողշողալով հովիվների թուխ դեմքերի վրա: Նրանց դիմագծերը կոշտ ու կոպիտ էին դարձել: Ծայրահեղ քաղց զգալով, Յարջեն ուտելու բան խնդրեց: Սոնամը նրան ցամփա եւ յուզուրտ բերեց. եւ կինը նրան մի գավաթ թունդ թեյ մատուցեց: Յարջեն շարունակում էր կլլել ցամփան: Նրա թշերն ուռել էին: Բոլորը սպասում էին, Յարջեի դեմքից այք չկտրելով: Մթության մեջ Յարջեի աչքերն այնքան թափանցիկ էին թվում, վառ եւ մեղմ, ինչպես մանկան աչքերը: Բոլոր հովիվներն այդ էին մտածում: Յարջեն նստել էր ոտքերը խաչած, ուշադրությունը սեւեռելով արքա Գեսարին ողջունելու վրա: Հովիվները ձեռքերը ծալել էին սնդուկների առաջ, նայելով Յարջեին: Ինչ էր հայտնվել նրա մտքում եւ ինչ էր պատահել Մեչիենյան պրերիայում: Արքա Գեսարի հերոսական սխրանքներից եւ ոչ մեկը ի վիճակի չէր հայտնվելու նրա մտքում: Նա շարունակում էր աղոթել, որպեսզի Թեմման նրան աստվածային ուժ տար, բայց ապարդյուն: Նա չէր կարող քարոզել: Սպասման արդյունքը հիասթափեցրեց հովիվներին: Նրանք կարծում էին, որ Յարջեն չի կարող քարոզել արքա Գեսարի մասին: Տասնյակ հիասթափված աչքեր լքեցին նեղիկ սենյակը, ձուլվելով եւ անհետանալով խավարի մեջ հաչացող տիբեթյան գամփոռի ձայնի հետ: Յարջեն գլուխը հակեց, Սոնամին ասելով՝ «Ես քեզ չխաբեցի»:

«Մանչ, դու չափազանց հոգնել ես: Բարի գիշեր՝ այստեղ քնելու համար»:

Յարջեն գլուխը ձեռքերի մեջ առավ: Նրա երկար մազերը կախվել էին, ծածկելով դեմքը: Սոնամը նրան նետեց բրդե հագուստը, փչելով նավթալամպի կրակի վրա: Խավարը պարուրեց սենյակը: Լսվում էր լոկ հանվող Յարջեի շրշյունը: Յարջեն ձեռքը փորին դրեց, շուրջը շոշափելով, որպեսզի սրով կտրի: Բայց նա ոչ մի անբնականություն չէր զգում: Նրա փորը ողորկ եւ հարթ էր: Գայլերի ոռնոցը պատռեց գիշերվա լռությունը, ոտից գլուխ պատելով նրան, հանդարտեցնելով նրա

բանականությունը: Գայլերի ոռնոցների տակ ևս ննջեց: Հաջորդ օրը Յարջեն պնդեց, որ հոտն արածացնի: Հովիվներն անհանգստանում էին նրա համար, այդ պատճառով խնդրեցին Դորգուին ուղեկցել նրան: Երկու տղա նստել էին խոտի վրա, արելով պարոլոված: Ալիքածե խոտածածկ բլուրները միասին ծառս էին լինում, կանաչը մխրճելով հորիզոնի մեջ: Դորգեն հանեց իր հինգաստղանի ձիթագույն գլխարկը, շվարած հարցնելով. «Դու իսկապե՞ս տեսել ես աստծուն»: Յարջեն այդ հարցից շփոթված էր թվում: Նա ելավ խոտերի վրայից, Դորգուին առաջ քարշ տալով: Տեղ հասնելով ևս դուսր թափեց Թենմայի փորոտիքը, Յարջեն վար ցույց տվեց ու ասաց, «Այստեղ փորոտիքս թափել են, եւ իմ սիրտը, աղիքներն ու թոքերը դեն նետվեցին»: Դեռեւս չհավատալով, Դորգուն կամացույց հարցրեց. «Եթե դրանք էստեղ են նետել, ինչո՞ւ ես դրանք չեմ տեսնում»: Յարջեն իրեն նեղացած էր զգում: Նա բարկացկոտ ոտքը դրեց խոտին: Հանկարծ կայծակի բռնկումը շողաց երկնքից: Տղակծկվելով ևս ընկավ, ընկավ խոտի վրա: Դորգուն վախեցավ: Նա պինդ սեղմեց ու թափահարեց Յարջենին, բարձր Յարջեն կանչելով: Յարջեն ուշքի եկավ: Լույսի արտասովոր շող բռնկվեց նրա վառվռուն աչքերում: Նա թափահարեց Դորգուի ձեռքերն ու ելավ: Վարդամշուշի շերտն էր Յարջեի մտքում: Հենց որ մշուշը ցրվեց, երկինքն ու մարդկային աշխարհը հայտնվեցին նրա բանականության մեջ միաժամանակ եւ լիակատար պարզությամբ: Յարջեն ցնցված էր իր տեսած պատկերներից: Նա չէր կարողանում զսպել իր քարոզելու ձգտումը: Յարջեն գործածում էր բառերը պատմելու համար իր մտքում եղած պատկերները: Նրա կողքին կանգնած Դորգուն ցնցված էր: Նա լսում էր, թե ինչպես էր նա տարվել իր պատմություններով: Ես չէի կարողանում արտահայտել նրա խոսքերից իմ բավականությունն ու մղումը: Այն, ինչ եկավ մտքիս, ձյունածածկ սարահարթի նախնիների տառապանքն էր: Նրանք տառապում են չար ոգիների հետապնդումից եւ ստրկացումից: Որպեսզի փրկի դժբախտ կենդանի Էակներին, Գուանյինը խորհրդակցեց Բրահմայի հետ, ասելով նրան, որ աստվածություն կարգի, որ իջնի երկիր եւ փրկի նրանց: Չանազան մրցակցումների շնորհիվ, պարտքն ընկավ պարմանի Թոհգփակար աստվածության վրա: Թոհգփակարը երդվեց Բրահմայի եւ այլ աստվածների առաջ, որոշեց վերամարմնավորման ենթարկվել ձյունածածկ սարահարթում,

## Ցերինգ Նորբու

Եւ երդվեց, որ կփրկի բոլոր կենդանի էակներին տառապանքների անդնդից...

Անկեղծ էմոցիաներով եւ ողջ օրը քարոզում էի: Պրոցեսը դանդաղ դուրս լողաց իմ բանականությունից, ինչպես ծյունոտ ջրի հալոցքը: Ես չէի կարող այն կանգնեցնել: Եւ Դորգուն հրեց ինձ, խնդրելով ինձ կանգ առնել: Արքա Գեսարի իմ պատմությունները վերջապես ընդհատվեցին: Ինչո՞ւ է ժամանակն այդքան քիչ: Ես հենց նոր տեսա արեւը: Անհավանական է, ինձ ողջ օրը հաջողվեց խոսել Գեսար արքայի մասին: Առավել զարմանալիս այն է, որ ես կարողացա քարոզել նրա պատմությունների շուրջ գունագեղ խոսքերով: Երբ ես քարացած կանգնել էի, Դորգուն ասաց. «Հիմա շարունակիր ինձ պատմել Գեսար արքայի մասին»: Նա կանգնել էր իմ կողքին, տարօրինակ հայացքով նայելով ինձ: Այդ հայացքն ինձ ստիպեց փոքր-ինչ շփոթված զգալ, բայց ես շուտ հանգստացա: Ես ոչ միայն արբեցման մեջ էի Գեսար արքային հանդիպելու բերկրանքից, այլ ինձ զարմացրել էին պատկերները, որ բռնկվում էին իմ մտքում: Հետո ես նկատեցի, որ հոտն ու ոչխարները խմբվում էին մեր շուրջ, նայելով երկնքին: Նրանք մոռացել էի ուտել եւ արտավայր վերադառնալ: Արեւն արդեն մայր էր մտել, մթնում էր: Դորգուն եւ ես հոտն ու ոչխարներին ետ ցեղի մոտ ուղարկեցինք:

-Յարջե, գայլը մեզ էր հետեւում,- ասաց Դորգուն կեսճամփին:

Ես այնքան թաղված էի բերկրանքի մեջ, որ շրջապատի վրա ուշք չէի դարձնում: Ես գլուխս շրջեցի: Գայլը, որ մի ժամանակ ուղեկցում էր ինձ, տեսադաշտ մտավ: Նա սերն աչքերում, թեթեւակի հակեց գլուխը, իր կոպիտ ճանկերով, մեզ զուգահեռ, բայց որոշակի հեռավորության վրա: Տեսնելով այդ, ես հոգեկան զմայլանքի մեջ ընկա:

-Ռա հենց պրերիայի իմաստն է,- ասացի ես,- եւ նա երբեք չի հարձակվի մեզ վրա: Լսելով այդ, Դորգուն թուլացավ, ինչպես եւ նրա դեմքի մկանները: Գծով գայլը մեզ հետ քայլում է՝ ցեղին զուգահեռ: Ժամանակ առ ժամանակ, երբ մեր հայացքները հանդիպում էին միմյանց, արյանս մեջ ջերմություն էր բռնկվում: Հոտն ու ոչխարներն անշտապ առաջ էին ընթանում: Եւ երբեմն նրանք էլ առանց վախի նայում էին գայլին: Լռիկ մութն ընկնում էր: Այդուհանդերձ, մթության հետ բերկրանքը ծաղկեց դեմքիս: Ես իմ սրտում քաղցրություն էի զգում, կարծես թե մեղր էի ճաշակել: Ճանապարհին, ես պատկերացնում էի հո-



տաղների զարմացած դեմքերը իմ պատմությունները լսելիս: Ես ցեղը տեսնում էի հեռավորության վրա: Բայց մթության պատճառով ես չէի կարողանում տեսնել տների գույները: Իմ աչքերի առջև միայն որոշ սեւ ուրվապատկերներ էին: Այդ պահին գայլը կանգնել եւ նայում էր, ինչպես եւք մենք վերադառնում: Հենց մենք լուծվեցինք մթության մեջ, գայլը մեր ետևում, երկար ոռնոց արձակեց, որը պատռեց մթին քողը, որ կախվել էր ցեղի գլխին: Հաջորդ օրը, Ռագոն ցեղի բնակչությունը գիտեր, որ ես կարող էի քարոզել Գեսար արքայի մասին: Նրանք թույլատրեցին Դորգուին միայն հոտն ու ոչխարներին արածեցնել, դրա փոխարեն խնդրելով ինձ պատմել իրենց Գեսար արքայի մասին: Ես կանգնեցի Բալիսի վրա ցեղի առաջ, հոտաղներով շրջապատված: Իմ պատմություններն ընթանում էին արեակապույտ երկնքի ներքո, պղպջակվելով այդ հասարակ հովիվների ուղեղներում: Խոտի վրա նրանք երբեմն մոայլվում էին, հռհռում, լարում դեմքերը եւ ծափ էին զարկում...

Իմ հաշվետվությունը ձգվում էր վեց օր, հովիվները հրաժարվում էին որեւէ աշխատանք կատարել: Իմ պատումի շնորհիվ շատ կերպարներ կենդանացան յուրաքանչյուրի մտքում՝ վիշապների արքա Կաչալադուի դուստրը, ում ամուսնացրին արքայազն Սենգիթանգի հետ: Քանի որ այդ ամուսնությունից երեխա չծնվեց, Սենգիթանգն ամուսնացավ երկրորդ կնոջ հետ, բայց դեռեւս առանց երեխայի մնաց: Այնուհետեւ նա երրորդ անգամ ամուսնացավ: Կաչալադուն հետզհետեւ արդեն Սենգիթանգի սերը չէր վայելում: Ժամանակի հետ նրա մենությունն աճում էր, մինչեւ որ նա բոլորեց իր հիսնամյակը: Մի օր, երբ Կաչալադուն գնացել էր գոմ կով կթելու, նա հանկարծ երկնքից մեղեդային երգեցողություն լսեց: Նա նայում էր երկնքին որպեսզի աստված տեսներ: Նա դանդաղ, փերիներով շրջապատված, իջնում էր երկիր: Տեսարանով տարված, նա հանկարծ ուշաթափվեց: Երբ Կաչալադուն ուշքի եկավ, հասկացավ, որ աստված վերամարմնավորվել է իր փորում: Այլ հարձերով շրջապատված, հղի Կաչալադուն ուղարկվեց ամայի մի վայր: Արքան նրան միայն մի մաշած վրան էր տվել, որը չէր կարող դիմակայել քամուն կամ ջրին, եւ նրա հետ մի կույր կով էր, ծեր այծ եւ կաղ մի շուն: Հենվելով երեք կենդանիների վրա, Կաչալադուն դժվարություններով լի կյանքով էր ապրում:

## Ցերինգ Նորբու

Մի ձյունոտ օր, արքայադուստր Կաչիալադուն ծնեց Թոգփակարին: Եւ այդ պահին քամին ու ձյունը դադարեցին վայրի բնության մեջ: Երբ վառ արեւը ներթափանցում էր քրքրված անցքերի միջից, վառ բծերը լուսավորում էին մորն ու որդուն: Երկնքում հայտնվեց երկիրն ու երկինքը միավորող հիասքանչ ծիածանը: Լսելով խեցիների, թմբուկների եւ ծնծղաների ձայները, խաղաղ բնակիչները չէին կարող բերկրալի չպարել... Հովիվները հոգոց հանեցին ու լալիս էին Կաչիալադուի տառապանքների համար, եւ ուրախանում էին Թոգփակարի ծննդյան համար: Ես չէի սպասում, որ պատմությունները Գեսար արքայի մասին կարող են փոխել իմ ճակատագիրը: Ես միայն քարոզելով իմ պատմությունները, ես չէի կարողանում դեկավարել ինձ: Գեսար արքայի ամեն ինչը միշտ թարմ էր իմ հիշողության մեջ: Նա հաղթահարեց ժամանակի եւ տարածության սահմանը, իմ մեջ թողնելով թաղվելու զգացողությունը: Ես կարող էի պարզորոշ տեսնել նրանց հագուստն ու զարդերը, լսել ռազմիկների եռեփվող կիրքը մարտում, զգալ բուրավետ գինու եւ դառն արյան հոտը եւ զգալ խոժոռ Գեսար արքայի ցավը: Ես ոչինչ չէի կարող անել, պատմելը շարունակելուց բացի: Նրա քարոզների անցկացումն ինձ կազատի հոտաղի իմ կայնքից եւ կսկսվի ճամփորդությունների իմ սրարշավը պրերիայիով մեկ: Կանխապես, ես պարզապես կպատմեմ Գեսար արքայի պատմությունները ցեղի մարդկանց: Հետո, քանզի իմ համբավը տարածվեց մյուս ցեղերի մեջ էլ, բոլոր հարեան ցեղերը հրավիրեցին ինձ քարոզելու եւ իրենց համար: Գարնանից մինչեւ ուշ աշուն, ձի հեծած, ես ճամփորդում էի զանազան ցեղերի մեջ: Այդ անսահման պրերիան դարձավ իմ բեմը: Հովիվները իմ ունկնդիրներ էին: Մեզ մոտ հոգեւոր շփում էր Գեսար արքայի ճշմարիտ պատմություններով, եւ միասին կժպտանք ու կարտասվենք: Նրանք որպես վարձատրություն ինձ տավարի, ոչխարի միս, յուղ եւ կաթնաշոռով փքաբլիթ եւ զանազան այլ բաներ տվեցին: Ես դրանք դրեցի ձիուս վրա եւ շարունակեցի ճանապարհս: Ընդհանրապես, ես տեղում վրան խփեցի՝ կովի թրիքով եւ ջրով: Երբեմն ես կրակ էի վառում, ընդունելով պրերիան՝ որպես մահճակալ, իսկ աստղերն ու լուսինը՝ որպես վերմակ: Թե՛նման հաճախ էր հայտնվում իմ երազներում, հանգստացնելով իմ հոգին: Ամեն անգամ, երբ ես պատրաստվում էի ննջել անապատում, գայլը մոտիկ տարածությունից կպահպաներ ինձ:

Այդ ուղեկցությամբ ես ոչ վախ էի զգում, ոչ էլ մենություն: Մի անգամ, ես պատմեցի Տեմիկի մարտի մասին Չենհորյան պրերիայի հովիվներին: Այդ օրը, ես ինչպես աստվածային միջնորդություն ստացած, երեք օր ու երեք գիշեր շարունակում էի խոսել: Բոլոր հովիվները նստած խոտի վրա արբած էին այդ պատմությունից: Այդ ընթացքում նրանք մոռացան ուտել եւ խմել, եւ ինձ հետ երեք օր ու գիշեր անցկացրին: Չորրորդ օրը, մենք բոլորս պառկած էինք մեզմ ժպիտներով, ննջելով տոթակեզ արեալույսի տակ: Որոշ հովիվներ իրենց երազներում նույնիսկ ծիծաղում էին: օրորվելով արեւի շողի տակ, Թենման մոտեցավ ինձ ու արթնացրեց, «Յարջե, դու չպիտի քննես անձնատուր լինես: Բացի այդ, դու դեռ չես ավարտել քո պատմությունները Գեսար արքայի արժանիքների եւ ձեռքբերումների մասին: Ելիր»: Ես բացեցի աչքերս, տեսնելով, թե ինչպես էր Թենման թռչում դեպի արեւի խորքը: Իմ կողքին գիտով լի գավ էր: Ես խմեցի, այնժամ, երբ հովիվներն անհոգ պառկած էին խոտի վրա: Համարյա ողջ օրը քնած լինելով, նրանք դեռես կախված էին իրենց երազներից: Այդուհանդերձ, գիտնիս խմելուց հետո, ես այլևս քնատություն չէի զգում, ասես իմ մեջ կախարդական ուժ լիներ: Ես ելա, անցնելով քնած հովիվների մոտով: Զարթած տիբեթական գամփոը, փովել էր վրանի մոտ, բացեց հոգևած աչքերն ու նայեց ինձ: Հետո կրկին աչքերը գոցեց, անտեսելով ինձ: Ես գտա ձիուս, ելնելով նրա գավակին, եւ գնացի մեկ այլ ցեղի մոտ: Ես երկու օր անցկացրի անձայրածիր պրերիայում: Բացի կիսնակներից, տիբեթական այծքաղերից ու վայրի յակերից, ես ոչ մեկին չպատահեցի: Ինչպես եւ ամենը, մնացյալն էլ թողված էր մթության մեջ, մենք գայլի հետ հասանք Նիենչին Թանգլա լեռան թամբարդին: Հանկարծ, քամու բարձրանալու հետ, ավազ ու քարեր էին թռչում շուրջբոլորը, եւ մենք ստիպված եղանք ձևկաչոք նստել: Գայլն ու ես հենվել էինք միմյանց, երասանները ձեռքիս, սպասելով քամու դադարելուն: Անսպասելի, երբ քամին դադարեց, հանկարծ ձյուն տեղաց: Թվում էր, թե Նիենչին Թանգլայի լեռները նեղացել էին, եւ այդպիսով արգելված էր դրա սահմաններով անցնելը:

Գայլն իր կրծքից մի քանի ոռնոց արձակեց: Ներթափանցող վեգոներով ձյունն ավելի ծանր էր իջնում: Դա պատահեց ինձ հետ արքա Գեսարի պատմությունը կարող էր զվարճացնել լեռների աստծուն, այդ

## Ցերինգ Նորբու

պատճառով ես սկսեցի... Մթին երկնքում ճեղք հայտնվեց, որպեսզի մերկացնի լուսինն ու աստղերը:

Նիկչիեն Թանգիա լեռների աստվածը ներգրավվել էր արքա Գեսարի պատմությունների մեջ: Նա քշեց մթին ամպերը ետ զագաթի կույտի վրա, մերկացնելով նրա վսեմ դեմքը: Լուսնալույսի ներքո ես շարունակում էի ելույթ ունենալ: Շուրջս ձյուն էր ծավալվել: Պատմության վերելքների ու վայրէջքների հետ, ձյունը դադարեց: Ես կարող էի զգալ Նիկչիեն Թանգիա լեռների դրսևորվելու յուրահատկությունները: Նրանք ժպտում էին: Արքա Գեսարի պատմությունների կեսից հետո, գայլն ու ձին անհանգիստ ծալում էին իրենց վերջույթները, ծնկած կանգնելով ձյան վրա, շունչը պահած երկյուղածությամբ եւ լռությամբ: Ես շարունակում էի գնալ մինչեւ հաջորդ լուսաբաց: Երբ արեւը սահում էր երկնքով, ես վերջապես կանգ առա, եւ Նիկչիեն Թանգիայի կողմի վրա ծնկի իջա: Երբ ես առաջ էի գնում, զարմացա, տեսնելով սմբակների հետքերի հստակ շարքը ճերմակ ձյան վրա: Այդ հետքերը ձգվում էին մինչեւ Նիկչիեն Թանգիայի լեռնաստորոտը: Պա ցույց էր տալիս, որ Արքա Գեսարը եկել էր այստեղ մինչեւ գիշեր, եւ նա լսում էր իմ պատմությունները: Նվաղելով՝ սիրտս թաքտաց, եւ ես հուզմունքից ցնցվեցի: Դեգերելով, տասը տարին անցավ ակնթարթի պես: Տղեկից ես վերածվեցի երիտասարդի: Վերին շրթիս վրա սկսեց աղվամազ աճել: Ես ճանապարհորդում էի ողջ պրերիայով մեկ, եւ ժամանելով հովիվներին երջանկություն էի բերում: Պրերիայում նրանք պանիր, հաց, թեյ եւ գինի հյուրասիրեցին ինձ: Ես նրանց պատմեցի Գեսար Արքայի պատմությունները, օգնելով նրան կարճել ժամանակը, պոկելով հաճույքի, զայրույթի, տրտմության եւ ուրախության լարերը, որ դրոշմում էր նրանց սրտերում Գեսար Արքան: Հերոսների պատմությունները նրանց միապաղաղ կյանքը գույնով էր լցնում, եւ բանաստեղծական ճշմարտություն էր հաստատում նրանց մտքերում: Չկամենալով բաժանվել այդ հովիվներից, ես կշարունակեի իմ ճամփորդությունը: Նրանք անհամբերությամբ սպասում էին իմ հաջորդ գալուստին: Իմ սերը նույնպես ծաղկեց պրերիայում: Գեղեցիկ աղջիկներն արտահայտում էին առ ինձ իրենց կապվածությունը հետաքրքրասեր հայացքներով: Այդպիսի հայացքները սահմանափակում էին ոտքերս, ինձ պահելով տասնյակ օրերով ցեղերի մեջ: Նրանց հետ, իմ պատմությունները

Գեսար Արքայի մասին ավելի ու ավելի թուուցիկ, ավելի հուզական եւ գրգռիչ էին դառնում: Հենց վրա էր հասնում գիշերը, Տիբեթական գամփոներով պահակագոր էին կապում իրենց վրանների մոտ եւ դրանց անկյուններում վարագույրներ էին կախում, սպասելով իմ ելույթին: Լուսնի եւ աստղերի լույսի եւ տիբեթական գամփոների հաչոցների ներքո, իմ կրծքում վառված սիրո հետ, ես կպահեի գեղեցիկ աղջկան ձեռքերիս վրա: Այդժամ գայլի ոռնոցի տակ, ես ստիպված կլինեի գեղեցիկ աղջկա տաք գիրկը թողնել, որպեսզի վերադառնայի դեպի իմ պառ մահճակալը: Մի աշնանային օր պրերիան հանեց իր ամառային կանաչ հագուստը փոխարինելով այն ոսկե աշունով: Անձայրածիր ոսկեգօծ պրերիայում ես թափառում էի երեք օր, քանի դեռ ինձ մշտապես ուղեկցում էր գայլը: Միջօրեին մենք քայլում ենք լճափով: Կանաչ եւ մաքուր լճում քարերը կրկին ինձ էին նայում: Լողակներն ու պոչը թափ տալով, ձուկը զմայլված լող էր տալիս: Կապույտ երկնքում սավառնում էին ջրլող թռչունների երամները: Յի գլուխը, որ թողնվել էր լճի մոտ գոհաբերության համար տարիներով մնացել էր այդտեղ: Թռչելով ձիու վրայից, ես լճափին ինը քար դարսեցի եւ ինը խոնարհում արեցի դեպ լճի մեջտեղը: Այնուհետեւ ես հանեցի ձիու վրայից իմ խոհանոցային պարագաները, եւ չոր կովի թրիքով վառարան սարքեցի եւ բարձրացրի այն, որպեսզի կրակ վառեմ: Շուտով թեյի բույրը տարածվեց թասից: Ես գայլի հետ ցամփա ու տավարի միս էի ուտում: Հազենալով, գայլը գնաց լճի մոտ ջուր խմելու, իսկ այնուհետեւ քնելու համար ոչ մեծ մի փոս գտավ: Երբ ես կրակի մեջ մի քանի կտոր չոր կովի թրիք նետեցի, ես տեսա մի դյուժին վայրի քշերի, որ մոտենում էին սահմանի մոտից: Նրանք պատրաստվում էի լճի մոտ ջուր խմել, բայց աչալուրջ վայրի ավանակները գլուխները բարձրացրին, հետեւելով սպիտակ ծխին: Բուպեական տատանումից հետո նրանք վազեցին դեպի լճափ: Անտեսելով նրանց ես պառկեցի ոսկեգօծ պրերիայի վրա: Լսելով, թե ինչպես է լճի ջուրը կայլակվում ափին, ես քնատություն զգացի: Ինչպես ոսկի արեւը, այնպես էլ կապույտ երկինքն ու ճերմակ ամպերն անհետացան տեսադաշտից, ես պինդ քնեցի: Երկիրը փոքր-ինչ ցնցվեց: Թնդյունը լցրեց ականջներս եւ ես վեր թռչելով արթնացա: Ես ելա մեջքիս եւ գլխիս խոտի դեզի ձեղերով: Յակերի հեծ զանգվածը, փոշի բարձրացնելով, մոտենում էր լճի արեւելքից: Մոտենալուն

## Ցերինգ Նորբու

պես երերումն ուժգնացավ: Սավառնող փոշու մեջ հայտնվեց մանուշակագույն ձիով ընթացող մի մարդ: Նետի պես նա նետվեց ինձ վրա: Այնուհետև տատանվող փոշու մեջ մի չորս թե հիկ մարդ հայտնվեց: Սուր սուլոցներով նրանք դուրս թռան երկու կողմից յակերի նախրի վրա: Նրանք թափահարեցին մտրակները, դանդաղեցնելով յակերի ընթացքը: Երբ յակերը դանդաղեցրին ընթացքը, սուլոցն ուժգնացավ: Հեռավորության վրա ինձ տեսնելով, մանուշակագույն ձին հեծած մարդը, նետվեց ինձ վրա: Երկիրը ցնցող ձայնն արթնացրեց, գայլը կանգնել էր իմ կողքին եւ սկսել էր լարվել, առանց ցնցվելու նայելով իր առջև: Մանուշակագույն նժույգը տանում էր մարդուն իմ առջևով: Մարդը նայեց ինձ, այնուհետև գայլին: Նա զարմացած ինձ հարցրեց. «Մարդ, դու եկել ես այստեղ, որպեսզի լճի մոտ երկրպագե՞ս: Ինչո՞ւ է գայլը քեզ հետ»: Դնելով ծղոտե գլխարկը, մարդը հանեց տիբեթական խալաթը, իր վերնամասը մերկ թողնելով, ցուցադրելով իր մկաններն ու իրանի շուրջ փաթաթած մանժետները: Ես անհամբերությամբ սպասում էի: Տատանվող փոշին հանդարտեց, եւ յակերը դանդաղ գալիս էին ինձ մոտ:

-Ես չեմ եկել լճի մոտ երկրպագելու,- պատասխանեցի ես: -Այդ գայլն իմ ուղեկիցն է: Մենք պատրաստվում ենք վերադառնալ Ռագոն ցեղի մոտ:

-Ես նախկինում քեզ հետ հանդիպելու հնարավորություն չեմ ունեցել: Դու պիտի պատմես Գեսար արքայի պատմությունը: Պրերիայում բոլոր մարդիկ խոսում են Գեսար արքայի մարգարեի մասին, ում ուղեկցում է գայլը:

Նա հմտորեն ցատկեց ձիու վրայից: Պողպատը /կայծքարի համար/ դիպավ նրա գոտկատեղից կախված թաղանթին, ինչը որ զնգոց արձակեց:

-Ես այս պատմությունը պատմողն եմ: Իմ անունը Յարջե է:

Ես մոտեցա նրան, ճակատս դիպցնելով նրան:

Նա շրջվեց, ձեռքերը թափահարեց ու բղավեց. «Եկ լճի մոտ հանդիպենք այսօր»:

Նա եւ բոլոր մարդիկ, որ գալիս էին նրա ետքից, միեւնույն տարիքի էին երեւում, ոնց որ թե, քսանն անց: Երիտասարդները վար ցատկեցին իրենց նժույգներից, չթողնելով որ յակերն առաջ շարժվեն: Մի ակն-

թարթում երեք կին եւ մի տղամարդ եկան ինձ մոտ, առանց շտապելու անցնելով յակերի մոտով:

-Արդյոք մենք պիտի տեղավորվե՞նք այսօր երեկոյան Աստվածային լճի մոտ,- հարցրեց հյուժված ծերունին, որ ձի հեծած գալիս էր:

-Այո, ծերուկ, եւ մենք կարող ենք լսել Գեսար արքայի պատմությունները,- պատասխանեց անվերնաշապիկ երիտասարդը:

-Դա ցնցող է: Դուք այն մարգարե՞ն եք, որի մասին այնքան հաճախ են խոսում պրերիայում:

Ծերունին վար ցատկեց ձիուց ու մոտ եկավ ինձ:

-Այո,- պատասխանեցի ես:

-Դա ճակատագիր է:

Ծերունին շրջվեց, որպեսզի գնա դեպ Աստվածային լիճը:

Նա գրպանից հանեց կիսթան եւ առաջարկեց այն մարնիի քարե բլրի վրա:

Նա ձևկի իջավ Աստվածային լճի առջեւ, այնուհետեւ մոտեցավ ինձ:

Ծերունին եւ ես նստել էինք քարե վառարանի կողքին: Մյուսները սկսեցին իրենց բռն իջեցնել յակերի վրայից եւ մի քանի վրան խփեցին: Երբ ես թեյ էի պատրաստում, երիտասարդներն արդեն սկսեցին իրենց գործն ավարտել: Նրանք նստել էին մեզ հետ քարե վառարանի մոտ եւ թեյ էին խմում:

-Դուք ընտանի՞ք եք,- հարցրի ես:

-Ոչ, մենք երեք ընտանիքներից ենք, բայց բոլորս էլ բարեկամներ ենք,- պատասխանեց ծերունին:

Երբ նա այդ ասում էր, մի ձեր կին մոտեցավ երկու գլուխներն ու դեմքերը ծածկած լաչակավոր աղջիկների հետ: Նրանք նստել էին ծերունու ետեւում: Երբ ես պառավին փոխանցեցի թեյնիկը, երկու աղջիկները երկչոտ գլուխները հակեցին: Աղջիկների վրայից խոտի բույր էր գալիս, դեմքս ամոթից կարմրել էր: Ես արագ շրջվեցի նրանցից, ձգտելով թաքցնել իմ զգացմունքները: Մեր թեյախմությունը երկար շարունակվեց: Մենք հետաքրքրվեցինք միմյանցով եւ իրար պատմեցինք զվարճալի բաներ, որ պատահել էին մեր ճանապարհին: Ես գիտեի, որ նրանք ճամփա էին ելել ամառվանից մինչեւ աշուն, մինչեւ Նիեն պրերիայի արոտատեղին: Երիտասարդը, որ գալիս էր մանուշակագույն ձի հեծած, եւ երկու աղջիկները ծերունու զարմից էին: Նիեն պրերիայի

## Ցերինգ Նորբու

հովիվները հետաքրքրվում էին ինձանով, հարցնելով, թե ես ինչպես մարգարե դարձա, ինչպես ես հանդիպեցի գայլին եւ որտեղ էինք մենք: Նրանք խնդրեցին ինձ գիշերը լճի մոտ մնալ եւ պատմել նրանց Պեսար արքայի պատմությունները: Ես չէի կարող չանսալ Պեսար արքայի պատմությունները լսելու նրանց թախանձանքին: Ինչ վերաբերում է ինձ, ինձ պարզապես պետք էր վերադառնալ Ռազոն ցեղի մոտ մինչեւ առաջին ծյունը, եւ այդ պատճառով ես պատրաստակամորեն համաձայնեցի նրանց խնդրանքին, ինչը որ նրանց իրոք երջանկացրեց: Ծերունին երիտասարդին խնդրեց պարանները խփել եւ յակերին կապել, իսկ պառավն ու երկու աղջիկներին փոքր-ինչ միս պատրաստել: Ես նույնպես ելա, որպեսզի օգնեմ երիտասարդին: Արեւը լճի դիմացի ծյունապատ լեռան զագաթին էր, իր վերջնաշողերը ծավալելով լճի եւ ոսկեգոծ պրերիայի վրա: Մենք մոտ չորս հարյուր յակ կապեցինք ցցերից: Ծնակաչոք նստելով բարձրուղեշ խոտի ստորոտին, գայլը հեռավորությունից նայում էր մեզ: Նա մնում էր անշարժ, օտարացած, հպարտ եւ արժանավայել: Նայելով իմ գրուցակցին, ես թեթեալի հոգոց հանեցի: Նիեն պրերիայի հովիվներն ինձ միս եւ վայթ-սպիրիտ հյուրասիրեցին: Ժամանակ առ ժամանակ քամին փչում էր մսի շուրջ, գրավելով գայլին: Ես վերցրի ոսկորները, որոնք երկայնքով կրծում էի եւ որոնց վրա փոքր-ինչ միս էր մնացել, եւ նետեցի դրանք գայլին: Գիշերը երկիրը պատել էր հոժ խավարով, աղոտացնելով շրջակա բնակարը: Մենք խարույկ վառեցինք: Կայծերի ճարճատյունն ու ցայտքերը լուսավորում էին շրջակայքը, եւ ես սկսեցի պատմել Պեսար արքայի պատմությունները: Լուսինը ելավ արեւելյան բարձունքից, իր հետ բերելով արճաթաճերմակ լույսի հանդարտությունը: Հոր թագավորի ճերմակ վրանը ճիշտ նույնպես ծավալվում է նույն հանդարտությամբ: Նիեն պրերիայի հովիվները հետեւում են Պեսար արքային ճնշելու Հոր արքայի Ճերմակ վրանը, եւ փրկելու նրա կին թագուհի Բրուզմոյին: Նրանք լսեցին սրերի բախումն ու զգացին մահը: Լսելով սմբակների դոփյունը, տեսնելով մարտի ծուխը, նրանք իմացան Պեսար արքայի կամքի ուժը: Երբ լուսինն ու աստղերն առկայծում էին լճի մակերեսին, Պեսար արքայի սխրանքները լողում էին գլխավերեւում: Հոր արքան պարտվեց, իսկ Պեսար արքան Բրուզմոյին վերադարձրեց Լինգ նահանգը: Խարույկը վաղուց արդեն մարել էր, երբ լուսնի արծաթափայլ



յուսը սվագեց: Շրջակա բնապատկերը կրկին կենդանացավ: Ես դա-  
դարեցի պատմել իմ պատմությունը, թույլատրելով Նիեն պրերիայի հո-  
վիվներին խուսափել արյունալի մարտից եւ վերադառնալ իրենց խա-  
դաղ եւ իրական կյանքին: Ի գարմանս ինձ, երկու աղջիկներից մեկը  
հիասքանչ էր, ինչպես թագուհի Բրումոն: Նրա նրբագեղ վարքագիծը  
ամոթապարտ կթողներ Հանի ուռենուն: Երբ նրա հայացքը դեմ առավ  
ինձ, նա կարմրեց, փութանակի շրջվելով, թողնելով ինձ լոկ իր մեջքի  
տեսքը:

-Դա գարմանալի է,- ասաց ծերունին: - Քանի դեռ արելը չի ելել,  
արագ թեյ պատրաստիր, որպեսզի զբաղեցնես մեր մարգարեին:

Նա խնդրեց իր աղջիկներին փոքր-ինչ ջուր բերել եւ վերցնել կովի  
թրիքը, եւ ասաց տղամարդկանց, որ բաց թողնեն յակերին եւ հավա-  
քեն պարաններն ու ցցերը:

-Նա քեզ դո՞ւր է գալիս,- հարցրեց ծերունին ինձ այն բանից հետո,  
երբ բոլորը հեռացան:

Ես ամոթխած գլուխս կախեցի, սրտումս ասելով.

-Նա ինձ դուր է գալիս:

-Նա քեզ դո՞ւր է գալիս,- կրկին հարցրեց ծերունին:

-Այո, այո,- պատասխանեցի ես, նայելով գետնին:

-Եկ այստեղ: Արի կրակ վառենք:

Դրանից հետո, ծերունին այլեւս ոչինչ չասաց: Մենք կրակ վառե-  
ցինք: Ծխի սյունը ելավ երկինք, եւ ես ծերունուց ուզածդ ակնարկ  
սպասում էի: Նույնիսկ ասենք մեկ կամ երկու խոսք, թե ամեն ինչ կար-  
գին է: Բայց ծերունին բերանը կիպ փակ էր պահում, բառ իսկ չարտա-  
բերելով: Դա ճնշում էր ինձ: Նախաճաշից հետո սկսեցին վրանները  
խփել եւ իրենց յակերի գավակների վրա ետ բերել իրենց ուտելիքները,  
պատրաստվելով այդ ամենը դասավորելու: Թեպետ ես օգնում էի  
նրանց, ես ինձ լքված էի զգում՝ դատարկ զգացողությամբ, մերթ ընդ  
մերթ հայացք նետելով այն աղջկա վրա: Նա վառ լաջակով ծածկել էր  
դեմքը, մերկացնելով գույգ ջինջ աչքերը: Հենց որ արելը ելավ արեւե-  
քից, Նիան պրերիայի հովիվները շարունակեցին իրենց գաղթը: Յակե-  
րի նախիրը ահագին կազմավորվել էր: Հեծյալ երիտասարդները վար-  
գեցին նախրի երկու կողմով: Ծերունին, նրա կինն ու երկու աղջիկնե-  
րը ուղեւորվեցին թիկունք:

## Ցերինգ Նորբու

-Սարգարե, եթե քեզ դուր է գալիս իմ աղջիկը, եկ Նիեն պրերիա մյուս գարնանը: Ես Թագյալն եմ: Դուստրս Տեմոթսոն է:

Ծերունին ձի հեծնեց:

-Տեմոթսոն,- գոչեցի ես:

Հեծած նա շրջվեց դեպ ինձ, արձակելով իր գլխաշորի վառ գույները, եւ ինձ ցուցադրելով իր գեղեցիկ դեմքը: Նա քնքուշ ժպտաց ինձ, իսկ այնուհետեւ դարձյալ դեմքը թաքցրեց լաչակի տակ: Համենայն դեպս դեմքը նրա դաջված մնաց իմ ուղեղում:

-Կտեսնվենք մյուս տարի:

Ծերունին ձիուն առաջ մղեց: Նրա կինն ու աղջիկները հետեւեցին նրան, թողնելով իրենց արծաթագոծ ծիծաղը: Յակերի վիթխարի նախիրն առաջ էր շարժվում, դեպի ոսկի պրերիան, ավելի ու ավելի առաջ: Ես նայում էի, թե ինչպես են նրանք հեռանում, բայց սիրտս մնաց Տեմոթսոյի հետ: Նրանք անհետացան պրերիայի հորիզոնի ետեւում, ես արտասովորով փլվեցի խոտերի վրա: Գայլը, անդադար ցատկոտելով, վազում էր իմ առջեւով: Նա լեզուն դուրս էր գցել, համոզելով ինձ արագ շարժվել: Դրանից նեղսրտած, ես դժկամորեն գնում էի ձիուս մոտ, հեծնելով, որպեսզի շարունակեի իմ ճամփորդությունը տուն: Տեմոթսոյի դեմքը դաջվել էր իմ ուղեղում: Ես չէի կարողանում հանգստանալ: Տունդարձի ճամփին ես խելքս թռցրել էի, անհաղորդ ձիուն տանելով Սենեյան անապատ: Ես ապրեցի առ Տեմոթսոն աշնանային եւ ձմռան կարոտը: Վաղ գարնանը, առանց հաշվելու այն տարածությունը, որ ես կտրեցի, մեկուկես ամսից ես հասա Նիեն պրերիա: Ես գտա Տեմոթսոնին: Մենք սիրահարվել էինք: Ես տասնյակ օրեր ելույթ է ունենում Նիեն պրերիայի հովիվների համար: Եւ այդ օրերին, Տեմոթսոն մշտապես ուղեկցում էր ինձ: Ես այնքան երջանիկ էի: Ինչպես էի ես պատրաստվում լքել Նիեն պրերիան, Տեմոթսոն բարձրացրել էր վարագույրի ծայրը վրանում, ընդունելով իմ սերն իր ողորկ եւ կատարյալ մարմնով: Մենք զրկախառնվեցինք: Լուսնի եւ աստղերի հետ, որպես մեր վկաներ մենք խոսում էինք մեր ամուսնության մասին: Լուսաբացին, անկախ այն բանից, թե որքան էր գայլը ոռնում, ես չէի ուզում լքել Տեմոթսոյի վրանը: Տեմոթսոյի ողջ ընտանիքը ծրագրում էր լքել Նիեն պրերիան ամառաաշնանային արոտավայրում: Մենք պարտավորվեցինք, որ հաջորդ գարնանը ես կվերադառնամ ու կամուսնանամ նրա հետ: Մենք բա-

ժանվեցինք Նիեն պրերիայում եւ ես շարունակում էի թափառել ու քարոզել: Ինչպես կփոխվի իմ ճակատագիրը հաջորդ ամռանը: Ամռանը շրջանը պատրաստվում էր ապրանքների տոնավաճառի: Մթնոլորտն աշխուժացնելու համար, շրջանը ուղարկեց ինձ Ջիվով Պեկին, այնտեղ պատմելու իմ պատմությունները: Ամեն անգամ, որ մենք ելնում էինք, մեզ շրջապատում էին Ռեզոն ցեղի հովիվները, խնդրելով մեքենա նստել: Իմանալով, որ ես պատրաստվում եմ պատմել Գեսար արքայի մասին, ամեն ոք գալիս էր լսելու ինձ: Մի քանի հովիվներ նույնիսկ վազում էին տուն ուտելիք պատրաստելու, կամենալով հետեւել ինձ ձիով դեպի շրջան: Առաջին անգամ ես մեքենա նստեցի: Ես նստած էի, մեքենայի մեջ: Այն սուրում էր հարթ պրերիայիով, ինչպես արծիվ, թողնելով հեծյալներին իր ետեւում: Ողջ ճանապարհին ես հուզված էի: Մեքենայի շարժիչի ձայնի ֆոնի վրա ես պատմում էի Գեսար արքայի պատմությունները այն մարդկանց համար, ովքեր ինձ վերցրել էին: Ծերունուն չէին հետաքրքրում իմ պատմությունները, այդ պատճառով նա ընդհատեց ինձ.

-Դու անգրագե՞տ ես:

-Այո,- ես ժպտացի:

-Դա ինչպե՞ս կարող է պատահել,- քմծիծաղով հարցրեց նա իր կողքի վարորդին:

-Ես լսել եմ այդ մասին,- պատասխանեց վարորդը,- դա բավական հանելուկային է:

-Դուք դպրոց չե՞ք հաճախել, կամ որեւէ մեկի մոտ չե՞ք սովորել,- նա շրջվեց, որպեսզի հարցնի ինձ:

-Ես որք եմ:

-Ես ուրիշների համար հոտ ու ոչխար էի արածեցնում: Ես դպրոց գնալու ի՞նչ շանս ունեի:

Ծերունին դեռեւս կասկածում էր ինձ: Ցեղի մոտից դեպի շրջան գնալիս, ինձ հետապնդում էին նրա հարցերը: Նա շարունակում էր հարցեր տալ, մինչեւ որ շրջանը հառնեց մեր առջեւ: Մեքենայի պոչը փոշոտվում էր, թռչելով շրջանի կոմիտեի բակով: Նրանք ինձ համար սենյակ էին պատրաստել, եւ նույնիսկ շրջանի ղեկավարները հյուր եկան ինձ: Դա ինձ ստիպեց անհարմարություն զգալ: Գիշերը լույսը վառվեց, նույնքան վառ, որքան արեւը: Այն լուսավորում էր իմ ննջա-

## Ցերինգ Նորբու

րանը, այն ասես ցերեկային լույսով էր լցված: Ես չափազանց հուզված էի, որպեսզի քնեի: Շրջանում ապրանքների տոնավաճառ անցկացվեց, որը ետևում մեծ տարածություն գրավեց: Հարյուրավոր անհամաչափ վրաններ էին կեցած: Բեռնատարները կայանված էին տարբեր կողմերում: Հովիվները անթիվ հոսքով ձիերով եկել էի տոնավաճառ: Երգերը ռադիոյով ծավալվում էին պրերիայով մեկ, մարդկանց մեջ ուրախության մթնոլորտ ստեղծելով: Կեսօրին, ապրանքների տոնավաճառի արեւելյան մասում ես պատրաստ էի պատմել Գեսար արքայի մասին: Ես նստել էի, ոտքերս խաչած, բարձի վրա: Իմ առջեւ ցածրիկ սեղան էր, որի վրա միկրոֆոն էր դրված: Ես քարոզում էի բարձրախոսով, որի ձայնը տարածվում էր ընդարձակ պրերիայով մեկ: Ես երբեք նախկինում նմանատիպ պահ չէի պատկերացնում: Վառ հազնված հովիվները ծաղիկների պես ծաղկել էին իմ առջեւ: Այդ առկայծող ծաղիկները լողում եւ տամկանում էին Գեսար արքայի արքայական մրցավազքերի պատմության մեջ: Այդ երեք օրվա ընթացքում, ինձ ձգվում էր ապրանքների տոնավաճառը, ես ուշադրության կենտրոնում էի: Օրվա ընթացքում մարդիկ լսում էին իմ պատմությունները՝ կեսօրին մոտ, լրագրողները լուսանկարում ինձ եւ հարցազրույցներ էին վերցնում, իսկ գիշերը ղեկավարներն ինձ ընթրիքի էին հրավիրում: Ողջ ժամանակ ես զբաղված էի: Երեք օրն աննկատ անցավ, իսկ այնուհետեւ մի քանիսն պեկինյան ջիփով ինձ ետ ուղարկեցին ցեղի մոտ: Կես ամիս անց, երբ մեքենան հասավ Ռազոն ցեղի մոտ, դրա շուրջ մի քանի երեխա հավաքվեց: Ես առանց շապիկի նստել էի իմ դռան կողքին, իմ երկար ներքնաշորի տակից հանելով ոջիլները: Լսելով երեխաների աղմուկը, ես դադարեցի աշխատել, որպեսզի վեր նայեմ, եւ տեսա երեք մարդու, քաղաքացիների պես հազնված, որ գալիս էին ինձ մոտ: Ես մտածեցի, որ նրանք երեւի թե շրջանից են: Ընդհանուր առմամբ, այդպիսի մարդիկ, որպես կանոն, հեռանում էին ցեղում շրջագայելուց հետո: Ես չպետք է նրանց վրա ուշադրություն դարձնեի: Այսպիսով, ես զուլիսս հակեցի եւ շարունակեցի հագուստս լվալ: Նրանք մոտեցան ինձ, իրենց լայն սովերները նետելով իմ երկար ներքնազգեստի վրա: Սրտնեղիչ սովերները կրկին ստիպեցին նայել նրանց վրա:

-Դուք քարոզի՞չ եք,- հարցրեց ակնոցավոր տղամարդը:

-Այո, ես Յարջեն եմ,- պատասխանեցի ես, կամենալով, որ նրանք այլևս չձածկեն իմ արեւը:

-Թերթում ձեր մասին կարդալուց հետո, այս երկու մարդիկ եկել են այստեղ, որպեսզի ձեր մասին ավելի իմանան,- ասաց Չհանթանգի առոգանությամբ մարդը:

-Շատ լավ:

Ես հագա իմ երկար գիշերանոցը, եւ ելա, որպեսզի նրանց ուղեկցեմ: Երբ ես պատրաստվում էի նրանց թեյ մատուցել, նրանք ինձ կանգնեցրին: Նրանք իրենց պայուսակներից հանեցին նոթատետրերն ու գրիչները: Ես, ոտքերս խաչած, նստել էի նրանց առջև: Նրանց հարցերը շատ պարզ էին, օրինակ ասենք. «Դու կարո՞ղ ես պատմել Գեսար արքայի պատմությունները, ինչպե՞ս ես դու յուրացրել նրա պատմությունները պատմելու վարպետությունը, դու քանի՞ տարեկան ես, ամուսնացա՞՞ծ ես», եւ այլն: Բացի այդ, նրանց նաեւ ինձ խնդրեցին վերապատմել Մոնղոլիայի Ձիու ամրոցի դրվագը:

-Արդյոք դուք պատրաստ եք աշխատել Լհասայում,- ասաց ինձ ակնոցավոր մարդը իմ պատմության եզրափակումից հետո:

-Հո, հո,- հռիռացի ես: Ես այդ մասին նախկինում չեմ մտածել:

Լսելով այդ հարցը՝ հանկարծ ես որոշակի շվարածության մեջ ընկա:

-Լհասան շատ մեծ է, եւ այնտեղ կյանքի շատ ավելի լավ պայմաններ են,- ասաց վտիտ մարդը, որն առաջ լռում էր:

Ես չգիտեի, թե ինչ պատասխանել: Դա գերազանցեց իմ բոլոր ակնկալիքները: Իմ բանականությունը հայտնվեց մրրկահողմի թակարդում:

-Դու ի՞նչ կարդ ես անել Լհասայում:

Հարցը, որ ես կարդ էի բարձրացնել իմ մտածելու կարողությունը վերականգնելուց հետո:

-Կրկին պատմեք Գեսար արքայի մասին պատմությունները,- ասաց ակնոցավոր տղամարդը,- կառավարությունը ձեզ ամեն ամիս կվարձատրի, իսկ դուք կարող եք ծառայել որպես պետական պաշտոնյա,- մեջ ընկավ կրկին վտիտ մարդը:

-Դա երեւի շատ հյուծիչ է ձեզ համար՝ ձեր ելույթները կատարելն անընդհատ պրեհայում,- խրախուսեց ինձ Չհանթանգի առոգանությամբ մարդը: - Բայց Լհասայում ձեզ պետք չի շտապել:

## Ցերինգ Նորբու

Ես փութում եմ փոխանցել նրանց խոսքերը, որ ծնվում են իմ երեւակայության մեջ շրջանի ապրանքների տոնավաճառի նման, Լիասայում ես կարող էի քարոզել Գեսար արքայի մասին շատ ու շատ մարդկանց առջեւ կանգնած: Ինչ զվարթ տեսարան դա կարող է լինել:

-Բավական է տատանվել,- ասաց հաստատակամորեն Չիանգթանգի առոգանությամբ մարդը: - Ամեն մեկին այդպիսի հնրավորություն չի տրված: Ձեզ երկնքից են դա շնորհել:

-Արդյոք ես կարող եմ վերադառնալ այստեղ,- ասացի ես, նայելով դատարկ տանը: Այլումինե թեյնիկից, ցամփայից եւ մսից բացի, իմ անունով որեւէ արժեքավոր բան չկար:

-Դուք կարող եք երկու տարին մեկ վերադառնալ այստեղ,- ասաց ակնոցավոր տղամարդը:

Ես չէի կարողանում որոշում ընդունել, ինքս իմ մեջ մարտնչելով՝ գնալ, թե չգնալ:

-Ի՞նչ եք կարծում,- ասաց ակնոցավոր տղամարդը: - Եկեք շրջան, եթե որոշեք: Մենք ձեզ այնտեղ երկու օր կսպասենք:

-Սա Դավան է, հետազոտական ինստիտուտի տնօրէնը: Եւ մյուսը՝ փոխտնօրէն Լաբան,- ասաց Չիանթանգի առոգանությամբ խոսողը, այսպէս հաճկատարությամբ ներկայացնելով այդ երկու մարդկանց:

-Նրանք եկել են քո ետեւից:

Ես լրիվ չհասկացա նրան, այդ պատճառով պարզապէս քմծիծաղեցի, մի քանի անգամ ափերս շփելով, որպէսզի արտահայտեմ իմ ցանկությունները: Նրանք դուրս եկան սենյակից, ծիծաղելով եւ հետեւելով երեխաներին, հողի բաց տարածքով, որպէսզի վերադառնային դեպի իրենց մեքենան: Այնուհետեւ մեքենան մտավ պրերիայի խոսքը եւ մի ակնթարթում անհետացավ կանաչ խոտի մեջ: Հանկարծ ես լուրջի բերկրանքի ու տրտմության սարսափելի հակասության մեջ: Լսելով այն, որ ես պատրաստվում էի Լիասա գնալ, Ռազոն ցեղի մարդիկ շատ հուզված էին: Նրանք բոլորն ինձ համոզում էին գնալ, ասելով, որ ժամանելուն պէս, ես երբեք անհանգստանալու կարիք չեմ ունենա կրկին հագուստի եւ ուտելիքի մասին հոգալու: Սակայն ես չէի կարող թողնել վիթխարի պրերիան, այն ցեղի քոչվորներին, որոնք սպասում էին իմ պատմություններին, ինչպէս եւ Տեմոթսոյին, ում ես միշտ կկարոտեմ, ինչպէս եւ գայլին: Աղմկոտ նրանք մնում էին իմ տանը մինչեւ կեսգի-

շեր: Երբ նավթավառը մարեց եւ պատրույզը սեւացավ, նրանց աղմուկը վերջապես դադարեց: Այն բանից հետո, երբ բոլորը գնացին, դեմքս դեպի այն կողմը դարձրա՞ծ, ուր ես արածեցնում էի հոտն ու ոչխարներին, ես ծնկի իջա եւ երկրպագեցի Գեսար արքային, որպեսզի նա ինձ ինչ-որ բան հուշի: Այդ գիշեր երազումս հայտնվեց գեներալ Թենման, Գեսար արքայի ենթական: Նա տրտմալից նայում էր ինձ: Այնուհետեւ նա վար դրեց ծղոտե գլխարկն ու բրոնզե հայելին, շրջվելով դռնից: Վաղ առավոտյան ես արթնացա: Ինչպես եւ սպասվում էր, իմ բարձի կողքին արծվի փետուրներով գլխարկն էր: Բրոնզե հայելին կոկած էր, լույսի շող արձակելով կտուրի վրա: Ես մտածում էի Թենմայի մարգարեության մասին, որ Թենման տվել էր ինձ: Նա հուսով էր, թե ես, թռչնի պես, պրերիան կլքեմ: Ես վճռականորեն վերադարձա Լհասայից: Ես ելա մահճակալի վրայից, ոտքս դրեցի, միսն ու շոկոլադը ղնելով պայուսակների մեջ, դրանք պարաններով կապեցի եւ ձիու երկու կողմից կախ տվեցի: Դրեցի նաեւ Թենմայի մասին իմ պատմածի ձայնագրությունը, եւ բրոնզե հայելին կախելով իմ կրծքից, ես բռնեցի երասաներն ու տնից ելա: Սկսեցի քայլել մի քանի տների մոտով, եւ հանկարծ վիշտ զգացի ու չկարողացա արցունքներս զսպել: Ռազոն ցեղը տանջում էր իմ սիրտը: Ես բարձր հեկեկալով, զլուխս սեղմեցի ձիուն: Այնուհետեւ, արցունքներս սրբելով, ես առաջ շարժվեցի: Երբ ես պատրաստվում էի լքել ցեղը, որոշ հովիվներ կանգնեցրին ինձ: Նրանք ինձ բերեցին կաթ, ցամփա եւ թեյ, որպեսզի ես կարողանամ ախորժանք ապրել դրանցից` որպես կարգին ճաշ: Ես նստել էի նրանց հետ գետնին թեյի բուրմունքի եւ նրանց օրհնանքի ներքո: Արելը բարձր ելել էր, ես հրաժեշտ տվեցի հովիվներին, իմ ձիով շրջան գնալով: Ես ճանապարհին միայնակ էի: Գայլը, որ տասնմեկ տարի ուղեկցում էր ինձ, հրաժեշտ չէր տալիս ինձ: Եւ ես նաեւ տրտում էի, որ Ջեմոթսոն ինձ հետ չէր: Ես չէի կարող նրան ասել, որ պատրաստվում եմ Լհասա գնալ: Ավաղ, ճակատագիրն անկանխատեսելի է:

2

Ես հետեւեցի երկու ղեկավարներին, որ տանում էին մեզ Լհասա: Մեքենայի պատուհանից ես տեսնում էի, ինչպես է մեքենան ետ թող-

## Ցերինգ Նորբու

Նում ծանոթ ցեղերին մեր ետքում ավելի ու ավելի հեռու: Անձկության զգացողությունը բռնկվեց իմ սրտում: Իմ մեջ կրկին արտասվելու հանկարծական մղում ծնվեց: Երբ մենք անցնում էինք Սինչիեն Թիագայի լեռների մոտով, ես պարզ լսում էի գայլի ոռնոցը: Լսելով այդ, ես մաշկիս վրա սարսռոց զգացի: Ես աղաչում էի վարորդին կանգնեցնել մեքենան: Քայլելով մայթի վրայով, ես ջանում էի գտնել գայլին, բայց Սինչիեն Թանգիայի գագաթը մշուշով եւ ամպերով էր պատված: Մարգագետիններն ընդարձակ ու անսահման էին: Մի քանի սեւ յակ դանդաղ առաջ էին ընթանում: Մայթի վրա իմ ետեւում մեկը մեկի ետքից անցնում էին ավտոմեքենաները, թողնելով միայն շարժիչների կտրուկ ձայնը: Արեւմուտքում արելը մայր էր մտնում: Աղոթադրոշները աղվկում էին քամու տակ:

-Մեքենա վերադառնալու ժամանակն է, Յարջե,- գոչում էր գառիվայրի վրա կանգնած վարորդը: Սինգչիեն Թանգիայի վրա ես անկեղծ աղոթում էի, արտահայտելով իմ երախտապարտությունը լեռների աստծուն, աղոթում էի, որպեսզի նա օրհներ գայլին, նրան հիվանդություն եւ դժբախտություն չբերելով: Երբ ես ելա, արցունքները տակացրել էին դեմքիս: Ես դարձյալ ետ նայեցի, հուսալով տեսնել գայլին, բայց հետք անգամ չկարողացա գտնել: Գլուխս հակելով, ես դանդաղ քալերով գնացի դեպի մեքենան:

Երբ մենք հասանք Լիասայի կենտրոն, ճանապարհի երկու կողմի լապտերները միացրած էին, լուսավորելով շրջակայքը: Մեքենան զիզգազածեւ շարժվում էր ճանապարհի վրա: Ես ապակոշմնորոշված էի, երբ նա կանգ առավ գիտահետազոտական ինստիտուտի համալիրի մոտ եւ կայանեց մեծ շինության առաջ: Այնտեղ ինչ-որ մեկը սպասում էր: Նրանք հանեցին իմ իրերը մեքենայից, դրանք վերեւ տանելով: Երկու տնօրեններն ինձ տարան վերեւի սենյակ: Սենյակը կահավորված էր զսպանակավոր մահճակալով, աթոռներով, սեղաններով եւ այլ կահույքով: Պարոն Դավան, տնօրենը, շրջվեց իմ կողմն ու ասաց, «Յարջե, սա քո սենյակն է: Դու երկար օր ես անցկացրել: Քեզ բարի գիշերային հանգիստ»: Պրերիայում իմ տան հետ համեմատած, այս տունը նման էր փոքրիկ պալատի, ընդարձակ եւ լուսավոր:

-Վաղը մենք հոգ կտանենք, որ երեւե մեկն ուղեկցի ձեզ, որպեսզի զնեք առաջին անհրաժեշտության իրերը,- ասաց պարոն Լաբան, տնօ-



րենի տեղակալը: Հետո ինձ ասացին, թե ես ինչպես պիտի գործածեմ սենյակի տեխնիկան, իսկ հետո դուռը փակեցին ու գնացին: Սենյակում մենակ կանգնելով, ես չէի կարողանում հավատալ, որ այդ ամենը իրական է: Նստած մահճակալի ծայրին, տեսնելով իմ սենյակում դրված կաշվե պայուսակը, եւ դրսից լսելով մեքենայի աղմուկը, ես վերջապես հավատացի, որ իրոք Լհասայում էի: Ելնելով, ես փնտրում էի Թենմայի ուղարկած գլխարկը, այնուհետեւ այն դրեցի պատուհանի մոտի սեղանի վրա եւ անկեղծ աղոթում էի, որ Գեսար արքան օրհներ ինձ Լհասայում: Ես նստել էի, ոտքերս խաչած, գարնանային մահճակալի վրա, բրոնզե հայելին ձեռքիս: Այն փայլում էր լամպի լույսի տակ: Լույսը չգիտես ինչու՝ ինձ ստիպեց տրտմել եւ ինձ մենավոր զգալ: Քաղաքում ես չէի լսում քամու սվսվոցը, որ ուղեկցում էր ինձ անապատում: Բացի այդ, չկար ոչ ջրի քչփչոց, որը կտրամադրեր ինձ ննջելու. ոչ էլ գայլի ոռնոց, որ կհանգստացներ իմ սիրտը: Լռությունն այստեղ ինչ-որ անհանգիստ աղմուկով էր լցված: Ես լույսն անջատեցի, փոխարինելով այն լուսնի լույսով, որ ներթափանցում էր պատուհանից: Նստած աթոռի վրա, ես կրկին նայում էի բրոնզե հայելուն: Շուտով հայելին ինձ ցույց տվեց ձյունապատ լեռները, պրերիաները, լճերը, հոտն ու ոչխարները, ինչպես նաեւ մենության մեջ դեգերող գայլին: Գայլն այնքան մենավոր ու անօգնական էր: Արցունքներն իրենց հետքն էին թողել դեմքիս վրա: Իմ ականջները գայլի ոռնոցով լի էին: Տնցված, ես վայր զցեցի բրոնզե հայելին: Լսելով ցեմենտե հատակի շայյունը, սիրտս կոտրված էր թվում, եւ ցավից նվաղած: Ես արագ հակվեցի, շոշափելով բրոնզե հայելին հարթ հատակի վրա: Երբ ես ճանկեցի հայելին, ես զգացի ջերմության վերադարձը: Ցավը հետհետեւ անհետացավ: Ես զարմացել էի, հայտնաբերելով բրոնզե հայելու ֆանտաստիկ ուժը: Կրկին այն դնելով լույսնի լույսի տակ, ես հուսով էի, որ նա պրերիայում ամեն ինչ ինձ ցույց կտա: Այդուհանդերձ, այն այդ պատկերները կրկին չէր արտացոլում: Սպասման մեջ ես սեղանի վրա ննջեցի: Առավոտյան ինչ-որ մարդիկ ինձ անվնաս բերեցին, փոխարենը խնդրելով ինձ թղթի կտորի վրա հետք թողնել: Նրանցից մեկն ինձ ուղեկցում էր գնումներ անելու, տեղաշոր եւ ներքնակ եւ առօրյա օգտագործման այլ իրեր գնելու: Մենք կանգնեցինք ամբոխի մեջ, բայց չկարողացանք խուսափել վիթխարի ամբոխից: Մարդկանց հոտից շնչահատվում էի: Գլուխս

## Ցերինգ Նորբու

պտտվում էր, եւ նույնիսկ քիթս արնահոսում էր: Ինձ ուղեկցող մարդը հուզված էր: Նա թղթով փակել էր քթանցքներս: Հետեւելով նրա առաջարկին, ես փաթաթեցի թուղթն եւ խցկեցի այն քթանցքներիս մեջ, պատրաստվելով խաչած ոտքերով նստել ճամփեզորին: Սակայն ինձ ուղեկցող մարդը չհամաձայնվեց: Նա ասաց, որ դա արոտատեղ չի, եւ այդ պատճառով ես չէի արող նստել ըստ ցանկության ճանապարհի մոտ: Վերջապես, նա ինձ ետ՝ գիտահետազոտական ինստիտուտ բերեց: Քաղաքը սաստիկ տարբերվում էր պրերիայից: Ճանապարհներն այստեղ այնքան լեցուն էին մարդկանցով, եւ նրանց շնչառությունից վատ հոտ էր գալիս: Կիպ դասավորված բարձր շինությունները կծկում էին նյարդերս: Ուղիղ ճանապարհները հողը կտորների են հատում: Դա կուրծքս մետեորիզմով լցրեց: Մասնավորապես, այն վազվող մեքենաներն ու մոտոցիկլետները նյարդայնանում էին: Բացի այդ, այնտեղ զանազան խանութներ եւ ռեստորաններ կային, մեջք մեջքի տված, որ չէին թույլատրում մարդկանց ելնել քաղաքային լաբիրինթոսից: Ելնելով վերջին անգամ, ես չէի ուզում կրկին վերադառնալ: Ես պարզապես ուզում էի խաղաղ մնալ տանը: Երբեմն ես նայում էի պատուհանից, բայց տեսնում էի միայն դիմացի շինությունը: Ես սովոր չէի այդպիսի նեղության եւ ծարավի էի վիթխարի եւ ընդարձակ պրերիայի, իր կապույտ երկնքով, որ կախված էր գլխավերելում: Լիսասայում մնալու երրորդ օրն ինձ բերեցին մի շենք: Բարձրանալով աստիճաններով, ես հասա երրորդ հարկում ինչ-որ գրասենյակ: Դավան եւ Լաբան այնտեղ էին: Փափուկ թախտի վրա նստած, նրանք ինձ խնդրեցին նստել դիմացի աթոռին: Սկզբում Դավան ինձ հարցրեց իմ բնակարանային պայմաններից: Այնուհետեւ սկսեց հարցուփորձել իմ աշխատանքից:

-Յարջե, ինչպես դու ասացիր, դու կարող ես վերապատմել Գեսար արքայի հիսունվեց հատորները: Վաղը մենք կսկսենք գրառել ձեր պատմածները, 9-ից մինչեւ ցերեկվա 12:30-ը, այնուհետեւ կրկին 3:30-ից մինչեւ հաջորդ օրվա 6:00-ն: Այլ կերպ ասած, դուք կքարոզեք ամեն օր մոտավորապես վեց ժամ: Ի բացառյալ կիրակի օրվա, դուք շաբաթը վեց աշխատանքային օր ունեք: Կհիշե՞ք:

Ծովում կորած, ես սեւեռվեցի երկու տնօրենների վրա:

-Շատ լավ,- ասաց վստահաբար Դավան:- Մենք ձեզ համար գործընկեր կգտնենք: Նա ձեզ կհիշեցնի այն մասին, որպեսզի դուք աշխա-

տանքի ելևեք: Եւ նա պատասխանատու կլինի գրառումների համար: Դուք հիանալի գործընկերներ կլինեք: Նա ելավ թախտից եւ մոտեցավ գրասեղանին, որպէսզի հեռախոսահամար հավաքի. «Վուզեր, արի իմ գրասենյակ»: Այնուհետեւ նա լսափողը վար դրեց: Շուտով դուրը բացվեց: Ներս մտավ խոպոպներով մի երիտասարդ.

-Սըր, ձեր հրամանով,- ասաց երիտասարդը: Նրա ձայնը կանացի ձայնից էլ նուրբ էր:

-Սա Յարջեն է, մարզարեն Ռազոն ցեղից,- ասաց Դավան: -Հիմա, երբ ես նրան ներկայացրի ձեզ, դուք արդէն գործընկերներ էք: Դուք վաղը կսկսեք գրառումները: Այժմ նրան ծանոթացրու գրասենյակի աշխատանքներին: Վուզերն ինձ տնօրենի գրասենյակից դուրս բերեց, դեպի այլ գրասենյակ տանող միջանցքով: Սեղանը գրասենյակում լցված էր գրքերով եւ թղթապանակներով: Եւ պատերի անկյուններում մի քանի մեծ պահարաններ էին: Գրասենյակը լեփլեցուն էր, կեղտոտ եւ վատ օդափոխվող:

-Մի՞թե ես այստեղ պիտի քարոզեմ,- մոայլամած ասացի ես:

-Ոչ,- ասաց Վուզերը:

Իմ կորսվածության զգացողությունը փոքր-ինչ նվազեց:

-Արդյոք մե՞ծ լսարան կլինի:

-Միայն դուք եւ ես,- պատասխանեց Վուզերը պոկեր խաղացողի դեմքով:

-Միայն ես եւ դո՞ւք,- զարմացած ասացի ես, եւ աչքերս լայնացան: Դուք ուզո՞ւմ եք ձայնագրել ձեր պատմությունները,- լրջորեն հարցրեց Վուզերը: - Այդժամ ձեր ձայնագրությունները կարող են պատրաստվել որպէս տեքստեր հրատարակելու համար: Բացի այդ, կրկնօրինակելուց եւ միավորելուց հետո այդ գրառումները կհեռարձակվեն ուղիղ եթերով: Շատ մարդիկ կարող են լսել Գեսար արքայի պատմությունները:

Ես մինչեւ վերջ չհասկացա:

-Ի՞նչ է ձայնարկիչի մեջ: Դե ինչպէս կարելի է հիշել Գեսար արքայի պատմությունները...

Ես կարծում եմ հիմարություն է այդպիսի բաների շուրջ խոսելը: Տեսնելով իմ տարակուսանքները, Վուզերն ինձ տարավ տուն եւ սովորեցրեց ինձ օգտվել ձայնագրող սարքից, ձայնագրել եւ վերարտադրել

## Ցերինգ Նորբու

ինձ: Ի զարմանս ինձ, այդպիսի անկենդան քառակուսի սարքն ի վիճակի էր պահպանել իմ ձայնը եւ ստիպել վերարտադրել այն: Դա ինձ զարմանալի էր թվում: Ես ելա իմ տեղից ու խոժոռված սեւեռվեցի Վուզերի վրա: Հասկանալով իմ դիտավորությունը, նա մազնիտոֆոնը հրեց իմ կողմը: Ես քնքշորեն շոյեցի մազնիտոֆոնը եւ վեր ու վար նայեցի, խոհաճելով, թե արդյոք ներսում փոքրիկ տղա կա: Ես մտածում էի, որ երբ վերադառնամ ցեղակիցներիս մոտ, ես նրանց կպատմեմ այս զարմանալի մեքենայի մասին: Նրանք կհիանան դրանով, ինչպես եւ ես: Ես բազմիցս խնդրեցի Վուզերին՝ վերարտադրել ձայնագրությունը: Եւ ես նույնիսկ կկոցեցի աչքերս, որպեսզի լսեմ վերարտադրվող ձայնը: Ֆանտաստիկ ձայնագրիչը հուզեց ինձ: Բազում հարցեր ծագեցին իմ մեջ: Ես անդադար տալիս էի այդ հարցերը Վուզերին, մինչեւ որ նա զգվանքով ասաց. «Դե հերիք է: Բավական է»: Ես ատում էի նրա կանացի ձայնը: Վուզերը մի ժապավեն էլ դրեց մազնիտոֆոնի վրա: Երբ նա սեղմեց կոճակը՝ մազնիտոֆոնը կրկին միացավ: Սակայն այս անգամ դա իմ ձայնը չէր՝ այլ խոպոտ եւ անապատային մի ձայն: Այն պատմում էր ծիավարգումների եւ Գեսար արքայի թագավորության մասին: Որոշ ժամանակ լսելով ես ճչացի. «Նա պիտի քարոզի հենց այդ պահից: Դրա մեղեդին պիտի ավելի նման լինի դրան»: Վուզերը փութանակի միացրեց ձայնագրիչը, բութ սեւեռվելով ինձ վրա: Ես բարձրածայն քարոզում էի: Վուզերն ինձ ձեռքով արեց, ես ի վերջո խուսափեցի պատմելու մրցակցությունից: Այնուհետեւ ես տեսա նրա զարմացած հայացքը:

-Դու խելագարի պես ջղակծկվեցիր: Դու կարգի՞ն ես,- հարցրեց Վուզերը:

-Ես հենց նոր Գեսար արքան էի: Ես նյարդայնանում էի:

-Դե ուրեմն դադարիր քարոզել: Մենք վաղը կշարունակենք:

-Ո՞վ էր հենց նոր ելույթ ունենում,- հարցրեցի ես:

-Դա Դիոնդուլն է, մեր հետազոտական ինստիտուտի ավագ գանձապահը: Դա նրա ձայնագրությունն է մի հինգ տարի առաջ:

-Նա դեռ մինչեւ հիմա ելո՞ւյթ է ունենում:

-Դիոնդուլը թույլ առողջություն ունի եւ նրան հաճախ հարկ էր հոսպիտալիզացնել:

Նա քսաներեք տուփ Գեսար արքայի ձայնագրություններն ուներ:

Ես այլևս ոչ մի խոսք չասացի: Քարոզիչ Դիոնոդուլն իմ գլխում էր: Լույսը բացվելուն պես Վուզերը թակեց դուռս, խնդրելով ինձ իր հետ գնալ ստուդիա: Ստուդիան ընդարձակ չէր: Պատերը սպիտակեցրած էին, պատուհանի դիմացի դռան մոտ, դրսի կողմից հետազոտական ինստիտուտի բակն էր: Սովորաբար պատուհանը փակում էին լայն վարագույրները: Ստուդիայում երեք աթոռ կար եւ մի սեղան, որի վրա դրված էին մագնիտոֆոնը, թերմոսը եւ մի քանի բաժակ: Սեղանի դարակը ժապավեններով էր լցված: Ես նստած էի Վուզերի դիմաց՝ գլխումս ձայնագրություններից հետո մնացած մտքերով: Նրա ղեկավարությամբ ես նստեցի աթոռի վրա, դրեցի ծղոտե գլխարկը, որ թենման էր ուղարկել, բրոնզե հայելիով, որ իմ հագուստի դիմաց էր դրված, եւ սկսեցի վերապատմել ձայնգրիչի վրա Գեսար արքայի պատմությունները: Գեսար արքան բերեց Կյու-Բթսանի ռազմիկներին, հսկայազանգված ահեղ մարդակեր-դելի դեմ: Դաժան մարտում, ի վերջո, նա վերացրեց դելին: Ողջ պատմությունը դեռ թարմ էր իմ գլխում: Պատմությունն առաջ էր ընթանում, իմ էմոցիաները տեղաշարժվում էին ընդմեջ անհամբերության, ցավի, հուզմունքի, ճիչի: Ես վերապատմում էի իմ պատմությունը, «ձիկ-թոք» պայթյունը ծավալվում էր իմ գլխում: Ես բացեցի աչքերս ու տեսա Վուզերին, որ գավաթը բարձրացնելով, պատրաստվում էր խփել սեղանին: Բերանը բացվել էր, ես հարցական նայեցի նրան, զարմանալով, թե ինչու նա այդ արեց: Վուզերը գավաթը դանդաղ իջեցրեց սեղանի վրա: Նրա դեմքը ժպիտով էր ծածկված: Նա ասաց, «Մի բան ուտելու ժամն է: Եկ տուն վերադառնանք»: Հետեւելով նրա կարգադրությանը, ես հանեցի ծղոտե գլխարկը եւ այն դրեցի սեղանի վրա: Այնուհետեւ, ես դժկամությամբ ելա, որպեսզի լքեմ ստուդիան: Կեսօրին ես շարունակեցի վերապատմել: Այդպես ես լիովին վերապատմեցի պատմությունը, մինչեւ որ նա կրկին գավաթը խփի սեղանին:

-Ինչո՞ւ դու ինձ թույլ չես տալիս շարունակել,- մռայլորեն հարցրի ես: Վերջալույսը հեռանում էր պատուհանից: Սենյակն աղոտեց:

-Գեսար արքայի պատմությունները չեն կարող մի օրում ավարտվել: Մեզ հարկ է դանդաղ ձայնագրել: Դա ծրագիր է, որը մի քանի տասնամյակ կզբաղեցնի: Վուզերն ամենեւին չէր բարկանում ինձ վրա: Դրա փոխարեն նա մի քանի ծխախոտ հանեց գրպանից: Այդուհանդերձ, դա

## Ցերինգ Նորբու

գրգռում էր ինձ` պատմություններս պատմելու կեսճամփին ընդհատված լինելը, հանելով ծղոտե գլխարկը, եւ բառ իսկ չասելով: Վուզերը դուրս վազեց, որպեսզի հասնի իմ ետքից: Միջանցքումս նա փակեց իմ ճանապարհը: Պատկառանքով նա ասաց. «Քո պատմածի մեղեդին, երբ շատ ես պատմում, ասես լինես Դոնդուփը»:

Նա վառեց լուցկին, կպցնելով ծխախոտը: Ծխախոտի ծխի մշուշում, ծանր ամպերը դեմքիս վրա անհետացան նրա գովասանքից: Ես կորցրի վրդովմունքս, դրա փոխարեն դեմքիս ժպիտ ծաղկեց: Մենք միասին երկրորդ հարկից իջանք: Գիշերը վրա հասավ, եւ ես լամպի լուսի ներքո ընթրիք պատրաստեցի: Այնուհետեւ ես լույսը մարեցի, թույլատրելով, որ խավարը լցնի սենյակը: Ոտքերս խաչած նստած, ես խոհածում էի Գեսար արքայի մասին, մշտապես աղոթելով նրան: Մարտական նժույգի վրա, Գեսար արքան արագ անցավ կողքովս: Այնուհետեւ, գայլը վազեց պրերիայի ծայրից դեպի ինձ: Նրա ուրվապատկերը հետզհետեւ ավելի պարզորոշ էր դառնում: Կարմրաշագանակագույն գայլը գրավել էր ուղեղս: Ես լսեցի նրա հոգոցները եւ զգացի նրա` ինձ տեսնելու ցանկությունը: Ավտոմեքենան ազդանշան տվեց: Կտրուկ ազդանշանը ներթափանցեց ամեն ինչի մեջ, կործանելով իմ մուսային: Ես բացեցի աչքերս եւ հայտնաբերեցի, որ փողոցային լապտերներն աղոտ լուսավորում են տունը: Հետո, մեքենան կրկին ազդանշան տվեց: Աններդաշնակությունը տարածվեց բոլոր ուղղություններով: Ես չկարողացա հանգիստ հասնել Գեսար արքայի մուսայի ետքից: Մեքենայի կողքին ինչ-որ մեկը բարձր խոսում էր, շարժման ձայնով ուղեկցվելով: Այդպիսի անհանգստություն թողնելով, մեքենան հեռացավ: Սակայն դրա փոխարեն իմ հարեանները սկսեցին երգել իրենց ճաշկերույթի երգերը, որոնք խափանեցին գիշերվա լուսությունը: Ելնելով, ես մոտեցա Գեսար արքայի դիմանկարին, որոշ ժամանակ անկեղծորեն երկրպագելով: Քրտնքի մեջ կորած` ես դադարեցրի խոնարհումս: Ես շատ էի ուզում պատմել Գեսար արքայի մասին, այդ պատճառով ես սկսեցի միայնակ իմ սենյակում ելույթ ունենալ: Լուսաբացին ազդանշանը բակում ընդհատեց իմ վերապատմությունը: Ինձ փոքր-ինչ հոգնած զգալով, ես պառկել էի մահճակալի վրա, առանց հանվելու, եւ շուտով ննջեցի: Թակոցների ձայներ արթնացրի ինձ: Ես բացեցի աչքերս, տեսնելով պատուհանս, լուսավորված կուրացուցիչ ոսկեգօծ լույսով:

Պատուհանի ետեում մի քանի գլուխ էին: Հետաքրքրասիրությունից ես բացեցի դուռը:

-Ինչո՞ւ էիր դու քնով անցել,- դռան մոտ կանգնած չորուկ ասաց Վուզերը կշտամբանքի երանգով,- ես մի ողջ հավերժություն դուռդ էի թակում:

-Ես մեռելի պես քնել էի,- պատասխանեցի ես:

-Դու այլեւս չես կարող այդ անել եւ դու պիտի ժամանակին աշխատանքի գնաս ու գաս,- ասաց Վուզերը: - Անցած գիշեր, դու ողջ գիշեր պատմում էիր քո պատմությունները, ամբողջ գիշեր խանգարելով քո հարեւաններին քնել: Դա սարսափելի է:

Պատուհանի մոտ կանգնած տղաները ինչ-որ բաներ շշջացին, եւ այնուհետեւ գլուխները տարուբերելով հեռացան: Ես Վուզերի հետ մտեցա շինությանը եւ մտա ստուդիա:

Իմ հաշվետվության կեսին, Վուզերը թակեց դուռս, քշելով հիշողությունը Գեսար արքայի մասին: Այնուհետեւ նա ասաց. «Ուտելու ժամն է»: Այդ բառերը լցրել էին ականջներս, եւ դժկամորեն հանեցի իմ ծղոտե գլխարկն ու ելա: Այդպիսով ես մեկ օր անցավ եւ ես ինձ ընկճված էի զգում դրանից եւ մտքերս նույնպես ճնշված էին: Մնալով սենյակում, ես հիշեցի իմ վերջին պատմությունները: Սիրտս լիովին ընկճված էր: Ես ծարավի էի պրերիայի ցեղերին եւ նրանց հովիվներին, որոնք զմայլված լսում էին իմ պատմությունները: Ելույթն այնտեղ նման էր զետերի հոսքին: Այդուհանդերձ, իմ ելույթներն այստեղ միշտ ընդհատ էին: Եւ ես պիտի մնայի սենյակում, պատերով, որոնք շրջապատում էին ինձ, եւ ընդունակ չէի տեսնել պրերիան, կապույտ երկինքը եւ ձյունածածկ լեռները: Ես պատկերացում իսկ չունեի, արդյոք ճի՞շտ էր քաղաք գալը: Զաղաքում ես միայն ընկճվածություն էի զգում: Այստեղ ես ընկերներ չունեի: Ես կարող էի լոկ թաղել իմ բոլոր տառապանքները իմ գլխում: Այդ էմոցիաները ցրելու համար, ես ելա սենյակից եւ դուրս եկա գիտահետազոտական ինստիտուտի դարպասներից, գնալով փողոց: Դեղին փողոցային լույսը շողշողաց ճանապարհին: Փողոցի վրայի պանդոկից ալկոհոլի հոտ էր փչում: Փարթամ կանանց խումբը շարժում էին ազդրերն ու կրծքերը: Շլացնող լապտերները, տաղտկալի շոցները եւ խանութի դիւնամիկներից հասնող ականջ ծակող ձայները ողջ քաղաքն ընկալում էի պատրանքային աղմուկի մեջ: Մտքումս Տե-

## Ցերինգ Նորբու

մոթսուն էր եւ Սեչիենյան պրերիան, Ռազոն ցեղն ու միայնակ գայլը, ես շատ տխուր էի: Միայն նրանք կարող են վերադարձնել իմ մտքի հանգստությունը եւ իրականության զգացողությունը, որ ինձ չէր բավում: Չնայած այն բանին, որ ես անցնում էի քաղաքի այդչափ աղմկոտ կենտրոնով, իմ սիրտը միայնակ էր մնացել: Նստած մայթի կողքի կանաչ մասում, հայացքս կարող էր հասնել լոկ ճանապարհի ծայրին: Առջեւում հառնած բարձր պատը, չէր թույլատրում ինձ տեսնել դրա ետեւում եղածը: Այն բախվեց ինձ, ինչպես ցլի եղջյուրը, եւ ինձ համար դժվար էր արտաշնչելը: Երկինքը գլխավերելու մասին պարզապես փոքրիկ կտոր էր, հազարավոր աստիճաններով անվերջորեն ծավալվող: Ես ճամփեգրյա խանութում մի շիշ վայթ-սփիրիթ գնեցի: Այնուհետեւ անցնելով այդ պատրանքային աղմուկի միջով՝ ես վերադարձա իմ ամայի, բայց լուսավոր սենյակը: Մի քանի ըմպելիքներից հետո, ես հանգստացա եւ ալկոհոլն ինձ նինջ բերեց: Երազումս կրկին հայտնվեց Թենման: Երբեմն նա նայում էր ինձ իր քնքուշ աչքերով, ձեռքը դնելով կրծքիս: Նա ինչ-որ բան քրթմնջաց, բայց ես ոչինչ չլսեցի, միայն տեսա, թե ինչպես նրա նրբին շուրթերը բացվում եւ փակվում են: Մի քանի ակնթարթ անց նա անհետացավ: Հենց ես զարթնեցի, արդեն կեսօր էր: Արեւի լույսն ընկել էր իմ ապակյա պատուհանի վրա, երբ Վուզերը սկսեց ինձ կանչել: Մենք միասին մտանք այդ ստուդիան, եւ ես նստել էի արձաթամոխրավուն ձայնագրիչի առաջ: Գլխիս դրած իմ ծղոտե գլխարկով, ես սկսեցի ելույթ ունենալ: Երբ ճաշելու ժամը եկավ, Վուզերը, սովորականի պես, թեյի բաժակով խփեց սեղանին: Արտաբերվող ձայնը միշտ անողորմորեն քայքայվում էր իմ գլխում: Ես ատում էի այդպիսի միջամտությունը, այդ լսելիս, գլուխս ճաք էր տալիս: Գիշերը, կրկին ես թունդ գինի էի գործածում, որպեսզի միտքս հանգստացնի եւ այրեի ներքին օրգաններս: Գինին ինձ ստիպում էր ավելի շատ կարոտել պրերիան եւ Տեմոթսոյին: Ես սրտնեղեցի, որ եկել եմ քաղաք: Բրոնզե հայելին լռիկ կեցած էր ձեռքիս: Արցունքներս ընկան դրա վրա, իսկ հետո ցրվեցին: Հայելու մեջ ես տեսա Սեչիենյան պրերիայիով վազող գայլին: Նրա թաթերի ձայնն արձագանքվեց իմ ականջներում: Աստվածային լիճը ներկայացավ բազմաբղետ գույներով: Ձյունապատ լեռան ստորոտին յակեր էին արածում: Դրանց կողքին Տեմոթսուն իր հայացքը կենտրոնացնում էր տարածության վրա... Հայելին կրկին ծածկեց պատկերը, թող-



նելով միայն շողացող մակերեսը: Հենց ես հրեցի, որպեսզի բացեմ  
 դեմքով դեպի արերիան պատուհանը, զովասուն հովը թափահարվող  
 թեւերով դիպավ դեմքիս: Զգալով գայլի հոտն ու խոտի բույրը, սիրտս  
 նվաղեց: Հանկարծ իմ մեջ արերիա վերադառնալու սուր ցանկություն  
 ծագեց: Կիրակի առավոտյան, լուսադեմին, ես, իմ կաշվե պայուսակով,  
 դուրս սողոսկեցի գիտահետազոտական ինստիտուտից: Ես ճանա-  
 պարհով առաջ էի ընթանում: Ճանապարհի վերջում ուղիները հատվե-  
 լով ճյուղավորվեցին իմ դիմաց: Ես գաղափար իսկ չունեի, թե որ ճամ-  
 փան ընտրեմ: Ճանապարհի վրա ընդամենը մի քանի մեքենա էր: Ես  
 ընտրեցի դեպի արեւմուտք տանող ուղին: Այն դեպի իմ հարազատ քա-  
 ղաք տանող ուղղությունն էր: Ես քայլելով առաջ էի ընթանում: Այնու-  
 հետեւ ես երեք ճանապարհ էր ճյուղավորվում: Դա ինձ շվարեցրեց:  
 Ես չգիտեի, թե որ ճանապարհն ընտրեմ: Ես հարցրի անցորդներին, թե  
 որ ճանապարհով գնամ: Աչքերը զարմացած լայնացնելով նրանք ձեռ-  
 քերը թափահարում ու հեռանում էին: Այդ պատճառով ես ստիպված  
 եղա ընտրել ճանապարհներից մեկը, որպեսզի առաջ գնամ: Հետզհե-  
 տե փողոցում ավելի շատ մարդիկ հայտնվեցին, եւ արեւելքում սկսեց  
 հայտնվել արեւը: Այդուհանդերձ, ես մոլորվեցի լաբիրինթանման քա-  
 ղաքում: Ես շարունակում էի քայլել: Մեջքիս գգած կաշվե պայուսակի  
 պատճառով ես քրտնել էի: Ես դեռեւս քաղաքի թակարդում էի: Ես  
 կորսված էի: Ես խիստ հյուսիսային տիբեթական առողանությամբ ճա-  
 նապարհ էի հարցնում: Նրանք իմ ասածներից ինչ-որ բան գլխի էին  
 ընկնում, բայց ես ոչինչ չէի կարողանում հասկանալ: Ես խճճվել էի:  
 Արեւն արդեն զլխավերելունս էր, արդեն կեսօր էր: Փողոցում անթիվ-  
 անհամար հետիոտներ կային: Նրանց զարշահոտությունը խեղդեց  
 ինձ: Ճառագայթները համարյա կուրացրել էին աչքերս, ստիպելով գլ-  
 խումս զգալ, որ ինչ-որ բան պայթում էր: Մայթի մեջտեղում նստած, ես  
 մեջքով դեպի կաշվե պայուսակը հանգստանում էի: Մի անգամ ես ան-  
 ցել էի անձայրածիր արերիայիով: Այն ժամանակ, թեւե մի քանի օրվա  
 ընթացքում ես չէի տեսել ոչ որեւէ հովվի եւ ոչ էլ ինչ-որ վրան, ես դեռեւս  
 լավ տրամադրության մեջ էի, եւ ոտքերս էլ չէին ցավում: Այդուհան-  
 դերձ, անցնելով քաղաքի փողոցներով, որ նեղ էին, ինչպես առնետաոր-  
 ջերը, երկու կողմից բարձրաբերձ շենքերով ճնշված, լոկ երկնքի փոք-  
 րիկ կտորով ես ինչպես մտովի, այնպես եւ ֆիզիկապես հոգևություն էի

## Ցերինգ Նորբու

զգում: Ավելի ուշ ես հայտնաբերեցի, որ անընդհատ միեւնույն ճանապարհով եմ գնում: Հուսահատ, ես գլուխս հակեցի, ափսոսելով, որ եկա քաղաք ու լքեցի Տեմոթոսին: Մեքենաների եւ ամբոխի աղմուկը, այդ եռուզեռը ուժգնացնում էր ցավն աչքերիս եւ գլխիս մեջ: Ես ձեռքերով դեմքս ծածկեցի, որոշ ժամանակ հատակին պառկելով: Շատ հետիոտներ շշնջալով կանգ էին առել, որպեսզի նայեին ինձ: Որոշ մարդիկ նույնիսկ կռացել էին ինձ վրա, մի քանի ցենթ էին առանձնացրել եւ փութով հեռանում էին: Երեւի թե, նրանք ինչ աղքատ էին համարում: Լսելով հյուսիսային տիբեթական բարբառով խոսող երկու երիտասարդի՝ հույսս վերականգնվել էր: Լսելով իմ դժվարությունների մասին, նրանք խոստացան ինձ կայարան ուղարկել: Երկու երիտասարդներն ինձ օգնեցին տանել կաշվե պայուսակը, եւ մենք անցանք թաղամասն ու միկրոավտոբուս նստեցինք: Որոշ ժամանակ անց մենք ավտոբուսից իջանք: Իմ տրամադրությունը շատ ավելի լավացավ, եւ իմ երեւակայության մեջ նույնիսկ հայտնվեց Սեչինյան պրերիան: Անցանք խանութների ու ռեստորանների կողքով, որոնք պատել էի փողոցները եւ որտեղ լիքն էին զանազան ավտոբուսներ: Նրանք խնդրեցին ինձ իրենց փող տալ, ասելով, որ իրենք ինձ համար տոմս կառնեն: Մեկը գնացել էր տոմս գնելու, իսկ մյուսն ուղեկցում էր ինձ, որպեսզի սպասեինք նրան: Շուտով մյուս երիտասարդն ինձ ասաց, թե նա կուզենար մի տուփ ծխախոտ գնել մոտակա խանութում եւ ինձ ասաց, որ չգնամ: Ես երկար սպասեցի, բայց այդ երկու տղամարդիկ չվերադարձան: Ես գլխի ընկա, որ ինձ խաբել են: Կաշվե պայուսակը մեջքիս եւ մտա կայարան, բայց չկարողացա նրանց գտել: Ես անկուպեկ մնացի: Եւ վերադառնալու մտադրությունը ցնդեց, եւ սիրտս լցված էր վիրավորվածությամբ եւ լարվածությամբ: Նստելով կայարանի բակում, ես վերադարձա գիտահետազոտական ինստիտուտ: Սակայն ես նույնիսկ չգիտեի ինստիտուտի անունը, էլ չասած այն մասին, թե ինչպես վերադառնամ այնտեղ: Սոված փորով անկյունում նստած, ես անօգ նայում էի, թե ինչպես է կեսօրն անցնում: Գիշերը ես կացարան գտա եւ, առանց հանվելու քնել էի: Հաջորդ օրը՝ երեկոյան գիտահետազոտական ինստիտուտի աշխատակիցն ինձ գտավ: Նրանք, առանց որեւէ կշտամբանքի, ուրախ էին ինձ տեսնելու համար: Դա ստիպեց ինձ բավական ամոթ ու զղջանք զգալ: Ես նրանց ետքից գնացի ինստիտուտ: Անկախ մթու-

թյունից պարոն Դավան իր տնից ինձ փոքր-ինչ բրինձ ու թեյ բերեց: Եւ նա մխիթարեց ինձ. որպեսզի չհուզվեմ, խոսելով այնպես, ինչպես ես էի խոսում Գեսար արքայի մասին: Նա երեւի թե թույլ կտա տարիներ անց վերադառնալ պրերիա: Ես հուզվել էի նրա խոսքերից: Երախտագիտություն հայտնելով, ես որոշեցի շարունակել պատմել հեիաթները Գեսար արքայի մասին: Դրանից հետո, Վուզերն այլեւս սեղանին չէր խփում: Ամեն անգամ, երբ գալիս էր աշխատանքից գնալու ժամանակը, նա ինչ-որ ժամանակ հապաղում էր: Եթե ես ի վիճակի լինեի թողվելու այդ պատմությունների մեջ, նա կարող էր ինձ ստիպել արթնանալ կամ սպասել, մինչեւ որ ես ժպիտը դեմքիս վերադառնամ իրական աշխարհ: Այդ ցիկլերում իմ ընկճախտը թուլացավ եւ ես սկսեցի վեցժամանոց պատմությունները: Եւ ես երբեմն մտածում էի, որ նախկինում ես կթափառեի պրերիայում եւ կարող էի փոքր-ինչ ուտելիք հայթայթել եւ հագուստ ապրելու համար, բայց հիմա ողջ օրն անցկացնում էի մի սենյակում, եւ դրա փոխարեն ես կարող էի բավական փող վաստակել: Իմ կյանքն անհոգ դարձավ: Երբեմն գիշերը, ես մտածում էի իմ տասնմեկամյա ասմունքի փորձերի մասին, պրերիայի դեպերումների եւ Տեմոթսոյի մասին, եւ կրկին հոգեկան ցավ կզգայի: Բայց այդ պահերին ես սկսում էի մտածել գլխումս ծագող պատկերների մասին: Դրա փոխարեն ես ինքս ինձ համոզեցի, որ ես դեռ պիտի մի երկու տարի էլ շարունակեմ, որպեսզի նշանակալից քանակությամբ փող տնտեսեմ: Այդ ընթացքում ես կկարողանամ Տեմոթսոյին Լհասա բերել: Գլխումս միտք ծագեց, եւ նրա կողքին ինձ այսքան տխուր չէի զգում: Այդ սպասումս նկատի ունենալով ես ննջեցի: Երագումս երբեմն բռնկվում էր Թենման եւ ինձ ինչ-որ երանավետ զգացողություն էր պարզեում: Այդ շրջանում բրոնզե հայելին կապող օղակ էր դարձել իմ եւ պրերիայի միջեւ: Նա ինձ ցույց տվեց գայլին, պրերիաները, ծյունապատ լեռները, լճերը, ինչպես նաեւ խոշոր եղջյուրավոր անտուններին եւ ոչխարներին: Ես հայելին կախել էի կրծքիցս եւ պարանով կապել էի վզիս վրա: Այդպիսով, պրերիան մնաց իմ սրտում: Մեկ տարի անց, երբ գա ուտելու ժամը, իմ փորը կարող է դռդռալ, եւ ես կանգ կառնեմ, կանջատեմ ձայնարկիչն ու աշխատանքից կհեռանամ: Ես նաեւ ընկերացա Վուզերի հետ: Աշխատանքից հետո նա ինձ հաճախ իր հետ ռեստորան էր տանում, ուր ես փոքր-ինչ բանջարեղեն էի ուտում: Մի անգամ կեսօրին,

## Ցերինգ Նորբու

երբ ես գիտահեզագոտական ինստիտուտի կողքի թեյարանում թեյ էի ըմպում ես հանդիպեցի Նիյեն պրերիայի հովիվներից մեկին: Ես նրան հարցրի Տեմոթսի մասին: Նա ասաց, որ Տեմոթսն կես տարի առաջ ամուսնացել է: Լսելով այդ, ես իմ ողջ ուժը կորցրի, ասես քարացա: Մինչևեւ նրա գնալը ես դառը լալիս էի, երդվում էի, որ այլեւս պրերիա չեմ վերադառնա: Ասես տառապելով լուրջ հիվանդությունից, ես մի չորս-հինգ օր չէի քարոզում: Այդ ընթացքում, Կուզերն ու ինստիտուտի դեկավարները հաճախ գալիս էին, որպեսզի ինձ մխիթարեն: Ամեն անգամ ես նրանց առջեւ արտասվում էի, բայց դա օգնեց, որ տրամադրությունս լավանա: Ես չէի կարողանում Տեմոթսին մոռանալ: Տրտմությունը երկար ժամանակ պատել էր սիրտս: Երբ ես արդեն չէի լալիս, Տեմոթսի մասին մտածելիս, ես մազերս կարճ կտրեցի եւ փոխեցի տիբեթական հագուստս, որը ես քսան տարուց ավելի հագնում էի, այն փոխարինելով սովորական հագուստով: Բացի այդ, եւ նաեւ վզիցս հանեցի բրոնզե հայելին, դրա փոխարեն այն կախելով սպիտակ պատից: Ես չէի ուզում տեսնել հայելին: Պատկերը, որ նա ցույց էր տալիս, միայն կխորացներ իմ ցավը: Հենց ես պատմեցի Սա-ՊամՖանգե թագավորի մասին փոքրիկ ստուդիայում, Սոնամը եւ մյուսները Ռազոն ցեղից` ինձ հյուր էին գալիս: Ես հասկացա, որ արդեն հինգ տարուց ավելի է լքել եմ պրերիան: Երբ մենք միմյանց ձեռք սեղմեցինք, զգալով նրանց կոպիտ ափերը, ես մեկեն կրկին հիշեցի ընդարձակ պրերիայի մասին, կանաչ խոտի բույրը, եւ սկսեցի լսել զայլի ոռնոցը: Պրերիայի մասին անհետացող հիշողությունը կրկին սկսվեց վերականգնվել իմ հիշողության մեջ: Նրանք ինձ ասացին, որ մայթը վերջապես հասել է Ռազոն ցեղին: Շատ հովիվներ մեքենա էին առնում եւ հաճախ գնում էին խոշոր եղջերավոր անասունների հոտի մոտ: Մեր խոսակցության ընթացքում, ես շարունակում էի նայել Սոնամի, Դորջեի եւ այլոց դեմքերին: Թեեւ նրանց դեմքերը խորշոմապատ էին, բաց նրանք ամենը լավ տրամադրությամբ լի էին: Նրանք ասացին, որ Ռազոն ցեղի մարդկանց կբերե Ադի լճի մոտ, որպեսզի սկսեն ադի փոխադրումը: Ես գիտեի, որ ադի փոխադրումը մոտ երկու ամիս կտեւեր: Ադի բեռնման եւ փոխադրման ժամանակ շատ դժվար է յակերին ուղղորդելը: Ես նրանց հազար յուան տվեցի որպեսզի հագուստ եւ ակնոցներ գնեին: Սոնամն ասաց. «Անհրաժեշտություն չկա: Մենք պետք է բեռնատարները

քշենք, եւ գնալ գալը ընդամենը մի քանի օր կտեսեի: Ես զարմացած էի, լսելով այդ, եւ ես ուրախ էի նրանց համար: Նրանք յակերի հետ ուղեւորվելիս փութանալու կարիք չունեին, նրանք երգեր էին երգում աղի փոխադրման համար, ուղիղ եթերում: Ամեն ինչ թեթեւ էր:

-Հովիվները Սեչինյան պրերիայում հիմա հարուստ են: Ամեն տանը ռադիո եւ հեռուստացոյց կա,- ասաց Դորջեն:

-Դե ինչ, պրերիաները խիստ փոխվել են,- անկեղծ նկատեցի ես:

-Յարջե, դա լավ ընտրություն էր Լհասա գնալու համար,- հավելեց Դորջեն:

-Հիմա պրերիայում միայն տարեց մարդիկ են պատրաստ լսելու Գեսար արքայի պատմությունները: Երիտասարդներն այլեւս չեն հետաքրքրվում: Նրանք ողջ օրը նստում են հեռուստացոյցի առաջ, կամ գնում են շրջանի պարասրահներն ու զարեջրատները:

Լսելով այդ, ես ինձ շատ ավելի լավ զգացի: Ես վախենում էի մտածել այն մասին, թե արդյոք կարող են քարոզիչներ գոյություն ունենալ, երբ հովիվները չկարողանան երկար լսել Գեսար արքայի պատմությունները: Հովիվները հուզվում էին ինձ համար, հայտնաբերելով, որ այժերս առաջվա պես պայծառ չէին:

-Հնարավոր է, ես չափազանց երկար մնում էի քաղաքում, եւ, չտեսնելով պրերիաները, ձյունապատ լեռները կամ լճերը, իմ այժերը կորցրել են իրենց պայծառությունը:

Լսելով այդ, նրանք կշտամբալի տարութերեցին զլուխները: Իմ ընկերները՝ հովիվները փոխվել էին: Գտնվելով իմ տանը, նրանց թեման միշտ կենտրոնացած էր փողի վրա: Օրինակ, ինչ-որ մեկը իր փողի մեծ մասը ծախսել էր նոր տան կառուցման վրա, որոշ տնտեսություններ հազարավոր յուաններ էին ծախսել մեքենաների վրա, իսկ ոմանք նույնիսկ տասնյակ հազար յուան էին ծախսում հարսանիքի վրա: Ես չեմ կարծում, թե նրանք ամենից շատ խոսում էին Ռազոն ցեղի մասին, բայց այդ ցեղից բացի, ես ոչինչ չգիտեի: Ես կամենում էի, որպեսզի նրանք խնդրեն ինձ պատմել Գեսար արքայի մասին, թույլատրելով ինձ ապրել քարոզչության մթնոլորտը եւ այն, որ ես մի ժամանակ ապրել էի պրերիայում: Սակայն, ոչ մեկը չհիշատակեց այդ մասին: Դա ինձ ավելի տխրեցրեց եւ ստիպեց ինձ կորսված զգալ: Գիշերը, ներսից եկող հովիվների հոտից, ես հիշեցի այն տարիները, երբ ելույթ էի ունենում

## Ցերինգ Նորբու

պրերիայում, իսկ իմ կողքին կարմրաշագանակագույն գայլն էր: Երբ վրա հասավ կեսգիշերը, ես պառկած էի իմ անկողնում: Քաղաքը շատ լուռ էր դարձել: Եւ այդ պահին գայլի ոռնոցները դուրս պրծան բազում զետերի ու լեռների միջից, հստակ արծազանքվելով իմ ականջներում: Ոռնոցն ինձ ստիպեց անհարմար զգալ: Ես չէի կարողանում արցունքներս զսպել, եւ ես ինձ խորապես մեղավոր ու անհանգիստ էի զգում: Ես գլուխս ափերիս մեջ առած նստեցի, եւ մինչեւ լուսաբաց մնացի այդ դիրքում: Սոնամն ու մյուս հովիվները պատրաստվում էին վերադառնալ Բուդդային երկրպագելուց հետո Լհասայի տաճարներում: Նրանք հրավիրեցին ինձ վերադառնալ պրերիա եւ տեսնել այնտեղի փոփոխությունները: Աշխատանքի պատրվակով ես սիրալիր հրաժարվեցի, խոստանալով, որ կվերադառնամ, երբ որ հնարավորություն լինի: Երբ նրանք բեռնատար էին նստում, Սոնամը հանկարծ ասաց.

-Դու հիշո՞ւմ ես այն գայլին:

-Հա,- պատասխանեցի ես:

-Նա վտիտ ու թույլ տեսք ունի: Ամեն գիշեր, նա ոռնում է Սեչենյան պրերիայում: Հնարավոր է՝ նա որեւէ տեղ չի կարողանում ուտելիք գտնել:

Սոնամը մեքենա նստեց: Ինչպես ծանր հարված, նրա խոսքերն արծազանքվեցին իմ ներսում, դժոխային ցավ պատճառելով:

-Նա Սեչենյան պրերիայի պահապան հրեշտակն է,- ասացի ես:

Մեքենայի պատուհանից դուրս նայելով, Սոնամն ասաց.

-Մենք գիտենք: Բայց հիմա նա չափազանց թույլ է, որպեսզի պրերիան պաշտպանի:

-Ի դեպ, դու արդեն երիտասարդ չես: Քեզ լավ կլինի, որ ամուսնանաս:

-Օ՛հ,- պատասխանեցի ես:

-Ի՞նչ կասես, եթե քեզ ծանոթացնենք Ռազոն ցեղի որեւէ կնոջ հետ:

-Ոչ,- վճռականորեն պատասխանեցի ես: Տեմոթոնն առկայծեց իմ գլխում:

Սոնամի աչքերում դժգոհության նշույլ հայտնվեց, եւ այնուհետեւ այն ակնթարթորեն անհետացավ:

Նա վարորդին ասաց.

-Գնացի՛նք:

-Բարի ճանապարհ,- ասացի ես:

Դուզֆենզ բեռնատարը հանգիստ ելավ ինստիտուտի դարպասներից, և հետզհետե տեսողաշտից կորավ:

Այդ գիշեր ես հանեցի բրոնզե հայելին պատից և սրբեցի փոշին: Լուսնալույսի տակ ես սեւեռվեցի բրոնզե հայելու վրա: Ես ուզում էի տեսնել Սեչինյան պրերիայի պատկերները, ինչպես նաև ծյունապատ լեռներն ու լճերը, որոնց կողքով ես անցել էի: Որոշ ժամանակ անց բրոնզե հայելին ինձ մի քանի պատկեր ցույց տվեց, բայց դրանք բոլորը մշուշապատ էին, ինչ-որ աղոտած: Ես մեղադրում էի ինձ, որ չեմ կարողանում տարիներ անց ընկալել բրոնզե հայելու պատկերները և պարզապես այն պահում էի պատի վրա: Հովիվների գևալուց հետո ես երկար հիշում էի Տեմոթսին և գայլին: Ամեն առավոտ ես իմ դռան մոտ խունկ էի ծխում: Ծխով պատված, ես ձևկի էի գալիս Գեսար արքայի դիմանկարի առաջ, աղոթում էի, որ նա օրհներ հավերժորեն պրերիայիում գայլին և Տեմոթսյին: Այդ տարի պարոն Լաբայի առաջնորդությամբ ես անուսնացա Բրուզմոյի հետ, սրանց ընտանիքի դայակի հետ: Իմ ամուսնությունը կարգավորվեց: Մեր ամուսնությունից հետո ինստիտուտը Բրուզմոյի համար ժամանակավոր աշխատանք գտավ և մեզ ընդարձակ տուն հատկացրեց: Ես թաղվել էի սիրո երջանկության մեջ: Բացի այն ժամանակից, որ ես անցկացնում էի ձայնագրության վրա, իմ կյանքի մնացած մասը կենտրոնացած էր Բրուզմոյի վրա: Ամուսնությունը հանգստացրել էր իմ սիրտը, և ես կամենում էի հանդարտվել: Ամեն օր ես ուղիղ գծով այստեղ-այնտեղ էի գնում՝ ստուդիա-տուն-ստուդիա: Այդ կրկնվող գծի վրա բազում օրեր անցան: Չայնագրությունից հետո Գրի Մարջանե ամրոցում, ձևվեց իմ դուստրը: Այդ պահին ես երկու ձայն լսեցի՝ իմ աղջկա բերկրանքի ձայնն ու գայլի հոգեպատառ ճիչը: Երկու ձայները ծածկվում են, թաղելով իմ ականջաթաղանթները: Ես փակեցի ականջներս, և հիվանդանոցի միջանցքում ձևկի եկա: Այնուհետև ես ձևկի իջա, որպեսզի երեսնիվայր փոքեմ: Արթնասալով, ես հայտնաբերեցի, որ պառկած եմ մահճակալի վրա, իսկ Բրուզմոն պառկած է մյուս մահճակալի վրա՝ իմ կողքին: Բժիշկներն ու բուժքույրերը նյարդային ինձ էին պահում: Այրող ցավն ականջներումս թուլացել էր: Ես կարողանում էի լսել սրանց շնչառությունը: Ես գիտեի, որ գայլի այդ սարսափելի ձայնը, որ մի ժամանակ ուղեկցում էր ինձ, հասել էր իր կյանքի վերջին: Ես լալիս էի, որ կորց-

## Ցերինգ Նորբու

րել եմ նրան: Արցունքներս թրջեցին բարձի երեսը: Տեսնելով իմ արցունքները, բժիշկներն ու Բրուզմոն կարծեցին, թե դա աղջկա ծննդյան ուրախությունից է: Նրանք հանգստացնելուց ասացին. «քո աղջկա հետ ամեն ինչ կարգին է»:

Ես հայացքս բերեցի դեպի պատուհանը, սենեկվելով պրերիայի կողմը, ուր հրաշքը մի անգամ այցելել էր ինձ: Ռազոնի ցեղը, գայլն ու հովիվները բռնկվեցին իմ հիշողության մեջ: Ավելի ուշ օրերին, գայլի վերջին ոռնոցը շարունակում էր հնչել իմ հիշողության մեջ, անհանգստացնելով ինձ, դրդելով ինձ տանջալից անքուն գիշերների: Նստած հիվանդասենյակում, ես անընդհատ ցնցվում էի, երբ աղջիկս լալիս էր: Այդժամ կրկին, գայլը բռնկվում էր իմ գլխում: Յոթ օրից Բրուզմոն հիվանդանոցից դուրս գրվեց, եւ ես նրանց տուն բերեցի: Այդ գիշեր, երբ նրանք քնեցին, ես պատի վրայից հանեցի հայելին եւ լուսնի լուսյի ներքո նայում էի դրան: Լուսնի լույսը շողում էր բրոնզե հայելու մակերեսին, եւ այն փոքր-ինչ տատանվում էր իմ ափի վրա: Ավելի ուշ, հայելու մեջտեղում մաքուր սպիտակ ժապավեն հայտնվեց: Դա հայելին երկու մասի էր բաժանել: Սկզբում ես զարմացած էի: Ես այդ ժամանակ խորունկ կանխագագացում ունեի: Վախն ու անհանգստությունը պատել էին ինձ, ինձ փակուղու մեջ դնելով: Ստուդիայում նստած, ես չէի կարողանում կենտրոնանալ իմ աշխատանքի վրա: Ես միշտ հուզվում էի, թե ինչ-որ բան կարող է պատահել: Երբեմն ես ողջ առավոտ չէի կարողանում ելույթ ունենալ: Վուզերը սկսեց անհագստանալ իմ էմոցիոնալ վիճակի համար: Նստելով դիմացի աթոռի վրա, շոյելով իր ալեծփվող մազերը, նա կամացուկ ասաց. «Եթե դու մի ժապավեն էլ ձայնագրես, դու կգերազանցես Դիոնիուսի ռեկորդը, եւ քո տունն ու պատիվը կպահպանվի»: Նա ինձ պարզեցեց իր ընկերական ժպիտը: Ես չէի կարող նրան ասել իմ անհագստությունը կամ գրգռվածությունը: Ես գիտահետազոտական ինստիտուտում արձակուրդ վերցրի, պատրաստվելով զնալ շրջակա բլուրները, որպեսզի նոճու ճյուղերով խունկ ծխեի: Ես աղոթում էի առ Գեսար արքան, որպեսզի նա ինձ ոգիների հետ շփվելու ուժ տա, աղոթում էի գայլի վերամարմնավորման համար, որքան հնարավոր է շուտ: Խոնարհաբար ծնկի էի իջել բլրի գագաթին: Խնկի անուշաբույրը դանդաղ բարձրանում էր ծխից: Ես լսում էի գայլի ոռնոցը: Ես զարմանքով աչքերս վեր բերեցի եւ տեսա, ինչպես են Թենման



Եւ գայլը ծխի մեջ գնում դեպ երկնքի խորքը: Ես փութանակի ափերս  
 ծալեցի, երկար գլուխս վար հակելով: Այդ պահին իմ ներքին վախն ու  
 տագնապը նվազեցին: Այդ գիշեր ես ախորժանք էի զգում աներազ  
 քնից: Քարոզելու իմ կենաց ուժը վերականգնվել էր: Եւ Գեսար արքա-  
 յի արշավը կրկին հստակորեն ծագել էր իմ գլխում: Ես ամեն ինչ ձայ-  
 նագրել էի ժապավենի վրա: Մի օր, գիտահետազոտական ինստիտու-  
 տի ղեկավարն ինձ իր մոտ կանչեց: Պարոն Դավան ինձ հանձնեց կար-  
 միր վկայականն ու բանալիների կապուկը: Եւ ասաց, «Յարջե, այժմ  
 դու ազգային փորձագետ ես: Ահա ձեր վկայականը Եւ ձեր Նոր տան  
 բանալիները»: Ես վերցրի դրանք, զգալով, որ դրանք ծանր են իմ ձեռ-  
 քերում: Այնուհետեւ Դավան հավելեց. «Դուք համարյա քսանինը հա-  
 տոր վերապատմեցիք Գեսար արքայի մասին: Դա Նոր ձայնագրություն  
 է: Քանի որ դու երիտասարդ ես, դու դեռ կարող ես շարունակել ապա-  
 գայում էլ ավելի շատ պատմություններ պատմել Գեսար արքայից»:  
 Լսելով այդ, ես ուրախացա, բայց թեթեւակի քարացածություն զգացի:  
 Այդ ժամանակից ի վեր, իմ կարգավիճակով ես գերազանցեցի Նույ-  
 նիսկ Դիոնդուփին: Ինստիտուտը հանդիպումներ կկազմակերպի հե-  
 տազոտողների հետ, ինչպես բնիկներից, այնպես Եւ արտասահմանից,  
 պատմելով նրանց, թե ես ինչպես այդպիսի շնորհ ստացա աստծուց,  
 թե ինչպես ինձ գտավ գիտահետազոտական ինստիտուտը Եւ թե ես  
 ինչպես էի աշխատում ձայնագրության վրա: Այնուհետեւ, ես պիտի  
 հաշվեմ Գեսար արքայի դրվագները: Արտասահմանցիները հաճախ  
 խնդրում էի իրենց հետ խմբակային լուսանկարվել: Ամեն անգամ երբ  
 ես մասնակցում էի այդպիսի հանդիպման, ես ստիպված էի լինում  
 փայտե արկղիկից հանել իմ հովվի հագուստը: Այդ հագուստը կրկին  
 հագնելով, ես ինձ առանձնակի անահարմար էի զգում: Բացի այդ, ինձ  
 Նույնիսկ իրենց խմբակի անդամ էին ընտրել: Բացի Գեսար արքայի  
 մասին քարոզներից, ես երբեմն ստիպված էի լինում մասնակցել զա-  
 նազան այլ հավաքների: Այդ ամենի վրա շատ ժամանակ էր վատնվում:  
 Երբ իմ ձայնագրությունները հասան երեսուն երկու հատորի, ինստի-  
 տուտն ինձ համար երախտագիտական կոնֆերանս անցկացրեց: Ես  
 ուրախ էի, որ կարող էի տարածել Գեսար արքայի ձեռքբերումները:  
 Գովաբանական կոնֆերանսից հետո ինստիտուտը տնից դուրս ինձ  
 համար սնունդ կազմակերպեց: Դա քառակուսի կերակուր է, ներառե-

յով ծովային ապրանքների եւ բարձրորակ լիկյորով սեղանը: Կյանքում առաջին անգամ, ես ուտում էի ծովային ապրանքները: Այդ գիշեր ողջ մարմնովս չորություն ու քոր զգացի: Արթնացնելով Բրուզմոյին, ես նրան խնդրեցի լույսը վառել: Լամպի լույսի տակ ես հասկացա, որ մարմինս պատված էր պզուկներով, եւ որ իմ աչքերն էլ սաստիկ ցավում են: Բրուզմոն աղաջրով շփեց իմ մարմինը, իսկ այնուհետեւ մարմինս քսուկով պատեց: Մինչեւ ուշ առավոտ քորս չէր դադարում: Լուսաբացից հետո, ես չէի կարողանում պարզ տեսնել, ասես ծխի մի շիթ մշտապես լողում էր աչքերիս առաջ: Ես մտածում էի, որ ամեն ինչ լավ կլինի, եւ դեմքս լվանալով ես գնացի ստուդիա՝ աշխատանքի: Մի քանի օր անց տեսողության հետ կապված խնդիրը սրվեց: Ես համարյա կույր էի: Գիտահետազոտական ինստիտուտը հանձնարարեց Վուզերին ինձ հիվանդանոց տանել: Բժիշկը ուժեղ լուսարձակով ստուգեց աչքերս: Լույսը ներթափանցում էր բիբերիս մեջ, այրելով բազում նյարդային հյուսվածքները՝ ներառելով նյարդը, որ միավորված էր ուղեղին: Բայց բժիշկն այրուհանդերձ չգիտեր: Եւ նա եկավ այն եզրակացության, որ ես ծանր կոնյուկտիվիտ ունեմ: Ես չհավատացի արդյունքին: Աչքերիս հետ կապված խնդիրը, երեւի թե, ինչ-որ կերպ կապ ունի ծովամթերքների հետ: Սակայն, եթե ես լույսիսկ ասեի ի մտածածը, բժիշկն ինձ չի հավատա: Նա ինձ ռեցեպտ տվեց: Խնդրեց ինձ աչքի համար նախատեսված կաթիլներ օգտագործել ամեն օր եւ ասաց, որ դա արտասահմանյան դեղ է: Ես տանը վեցօրյա հանգստի էի: Ամեն օր Բրուզմոն ինձ օգնում էր կաթիլները աչքերիս մեջ ներարկելիս: Երբ աչքի կաթիլների երկու սրվակները պարպվեցին, ես վերջապես կարողացա պարզ տեսնել իրերը: Բայց դա չանցկացրեց արյան բծերն իմ աչքերում: Վեց օրվա ընթացքում, իմ տրամադրությունն ավելի ու ավելի վատանում էր: Ես վախենում էի, որ այն բանից հետո, երբ աչքերս կորցել էին տեսողությունը, ես չէի կարողանա ձայնագրել պատմությունները Գեսար արքայի մասին, կամ ես ստիպված կլինեի, Դիոնդուփի պես, ողջ օրը թմրանյութեր օգտագործել: Երբեմն, ես լույսիսկ առանց որեւէ պատճառի բարկանում էի Բրուզմոյի վրա: Բայց նա միշտ դիմանում էր ինձ, եւ առաջվա պես զալիս էր ինձ մոտ: Ես փոքր-ինչ շաֆրան դրեցի սուրբ ջրի մեջ եւ մատուցեցի Գեսար արքային: Մայրամուտից առաջ ես սուրբ ջրով լվացի աչքերս եւ մի քանի օրից

արյան բծերն անցան: Բայց աչքերիս պարզությունն ու պայծառությունը նույնպես անհետացան, միայն թողնելով աղոտացումն ու պղտորությունը:

Վուզերն ուրախ էր իմ գործընկերը լինելու համար: Մեր համագործակցությունը հաջող զարգանում էր: Ես արդեն Գեսար արքայի ծայնագրությունների երեսունվեց ժապավեն ունեի: Սակայն ընթացքում ես զգացի, որ ճգնաժամը սարերի ետեւում չի: Գեներալ Թենման, արդեն մեկ տարուց ավելի, այլեւս չի հայտնվում իմ երազներում: Թեպետ ես շարունակում էի աղոթել նրան, բայց նա չէր հայտնվում: Ես փոքրինչ սարսափեցի: Երբեմն նույնիսկ որոշ պատկերներ անհետանում էին իմ հաշվարկումների ժամանակ: Ուղեղս պարպվել էր: Ես ստիպված եղա կանգ առնել, նայելով անկենդան պատին, բազմիցս ցանկանալով ետ բերել պատկերները, ես ուղեղիս մեջ ցավ էի զգում: Ես սկսեցի ատել փոքրիկ ստուդիան, որտեղ ես չէի կարողանում տեսնել պրերիան: Ես ձանձրացել էի պաղ ձայնագրիչի առաջ վերապատմելուց: Ավելին, ես տանել չէի կարողանում ստուդիայի կեղտոտ օդը: Լիսա գալուց հետո տասներեքերորդ տարում, իմ ստուդիան այն նեղլիկ սենյակից վերաձվեց իմ տան: Ամեն առավոտ, երբ ես զարթնում էի, իմ առաջին գործողությունը սուրբ ջրի ավելացումն էր Գեսար արքայի համար, ինչպես նաեւ նավթավառն ու խունկը վառելը: Այնուհետեւ ես երկրպագում եւ աղոթում էի նրան: Հենց առավոտյան լույսը շողում էր պատուհանիս վրա, ես սկսում էի ձայնագրել Մեյլինգի Ոսկե Ամրոցը: Ես գիտեի, որ եթե ես ավարտեմ իմ պատմությունները Գեսար արքայի մասին, դրանք մի տասն անգամ ավելի շատ կլինեն, քան Դիոնոսիինը: Գիտահետազոտական ինստիտուտում ես ամենաընդունակ քարոզիչն էի: Եւ ինստիտուտն այդ ակնկալում էր ինձանից: Ես Մեյլին Ոսկե ամրոցում էի զբաղված մոտ կես տարի: Ես իմ պրոցեսի առաջընթացում դանդաղ եւ ընդհատ էի: Մի աշնանային առավոտ ես սկսեցի ելույթ ունենալ ձայնագրիչի առաջ: Պտտվող ժապավենի ձայնը գրավեց իմ ուշադրությունը: Պատկերներն իմ գլխում աղոտացին, մինչեւ որ ի վերջո անհետացան: Վախի եւ վրդովմունքի ահագնացմանը համընթաց նախորդ օրերին ես ճանկեցի ձայնագրիչն ու նետեցի այն հատակին: Ձայնագրիչը ջարդվել էր, կափարիչը կողմ էր թռել եւ ամենուր դրա մասերն էին: Բայց ես դեռ չէի հանգստացել: Ես կանգնեցի դրա

## Ցերինգ Նորբու

վրա եւ շարունակեցի հայիոյել, մինչեւ որ հայտնաբերեցի, որ շնչահատվում եմ: Նստած հատակին, ես արցունքներն աչքերիս քաշեցի մազերիցս: «Աստված, դու ինչո՞ւ չօրհնեցիր ինձ հիմա: Ես միշտ տարածել եմ Գեսար արքայի ձեռքբերումները»: Սակայն, Աստված անտեսել է ինձ, թողնելով ինձ անօգ եւ միայնակ: Հաջորդ օրերին, ես շարունակում էի նստած մնալ մազնիտոֆոնի առաջ, ակնածալից կանչելով Գեսար արքային: Այդուհանդերձ, ես չէի կարողանում մտաբերել այդ պատկերները, չկարողանալով քարոզել Գեսար արքայի մասին, շփվելով աստվածների հետ: Աստվածները լքել էին ինձ: Ես տագնապած էի: Ամեն առավոտ ես ելնում էի կտուր, նոճիների ճյուղերով առ աստվածները խունկ վառելու՝ հուսալով, որ նրանք կարող են ինձ օժտել ուժով եւս մեկ անգամ: Ավելին, ես նաեւ ելա Լհասան բոլորած բոլոր լեռնային բարձունքները՝ աղոթադրոշներ կախելու եւ նոճու ճյուղերով խունկ վառելու, աղոթելու աստվածներին, որ ինձ չլքեն: Գիշերը, նստելով Գեսար արքայի դիմանկարի առաջ, ես բազմիցս ներհայում եւ ողջ գիշեր աղոթում էի: Բոլոր իմ ջանքերն անհաջողության մատնվեցին, եւ այդ ամենը հյուժում էր ինձ՝ ինչպես ֆիզիկապես, այնպես էլ հոգեպես: Լսելով իմ դժվարությունների մասին, գիտահետազոտական ինստիտուտը խնդրեց ինձ վերադառնալ Մեչիենյան պրերիա, որտեղ ես կարող էի ներշնչանք փնտրել եւ թույլ տալ ինձ թուլանալ: Սակայն, Բրուզմոն եւ իմ աղջիկը, այս եղանակին չէին ուզում պրերիա գալ: Նրանք ուզում էին մնալ տաք Լհասայում: Ես իմ բեռով նստեցի ինստիտուտի տրամադրած մեքենան: Պրերիա տանող ճանապարհն ասֆալտապատ է, ընդարձակ եւ հարթ: Դրա վրայով ընթանալիս, մեքենան ոչ մի անգամ չխփվեց: Կեսօրին մենք հասանք Նազկու քաղաքը: Ես հիանում էի այստեղի փոփոխություններով: Այս ու այն կողմ բարձրահարկ շինություններ եւ մեծ առանձնատներ էին՝ ուղիղ ցեմենտե ճանապարհներով, որ ձգվում էին բոլոր կողմերի վրա: Ժողովրդի ազմուկն ու երաժշտությունը խոտորվում էր քաղաքի վրա: Եւ տարատեսակ մաշկի գույներով մարդիկ կային: Մենք պարզուկ կերակուր ունեինք տիբեթական ռեստորանում, եւ փութացինք ճանապարհով դեպի Մեչիենյան պրերիա: Չորսժամյա ուղեւորությունից հետո մենք մինչեւ մայրամուտ հասանք շրջան: Շրջանն իմ հիշողության մեջ քամին տարել էր, այն ավելի աղմկոտ էր դարձել: Ավտոմեքենաներն ու մոտոցիկլետները դրդում

Էին ճանապարհի վրա՝ միմյանց հյուսված զարեջրասրահներով, ռեստորաններով, խանութներով ու վարսավիրանոցներով: Տեսելով այդ տեսարանը, ես հուզմունք զգացի, որ հասնելով Սեչինյան պրերիա, կտեսնեմ, որ այն նույնպես կարող էր փոխված լինել: Այնժամ, երբ ես կարող էի աստվածներից օգնություն ստանալ: Արդյոք ես կարո՞ղ եմ տարածել Գեսար արքայի ձեռքբերումները: Ես նյարդայնանում եմ ինձ անհարմար էի զգում: Մենք վարորդիս հետ գրանցվեցինք շրջանի լավագույն հյուրանոցում: Երբ ես պառկեցի, մեջքիս մեջ փոքր-ինչ ցավ էի զգում պինդ ծղոտե ներքևակի վրա եւ զգացի իմ վերմակի հոտը: Այնուհետեւ ես զգացի, որ շատ էի ինձ երես տվել: Փոքր-ինչ անց վարորդը քնեց եւ սկսեց բարձր խոնփացնել: Ես տանել չէի կարողանում խոնփոցի ձայնը: Տիտ էր հնչում: Հանկարծ հյուրանոցի մահճակալի մոտ զրնգաց հեռախոսը: Ես փութով պատասխանեցի զանգին: Կոտրատվող կանացի ձայն լսվեց. «Մերսում ուզո՞ւմ եք»: Ես լսափողը վայր դրեցի, եւ քունս լրիվ փախավ: Վարորդի խոնփոցով պատված, ես ելա սենյակից եւ քայլեցի շրջանի ճանապարհով: Բայց ես որեւէ հանգիստ տեղ չէի կարողանում գտնել: Ես ուզում էի այցելել այն վայրը, որտեղ անցկացվում էր ապրանքների տոնավաճառը, որպեսզի փորձեի միփարանք գտնել: Երբ ես քայլում էի դեպի շրջանի ծայրամասը, խավարի մեջ թաքնված պրերիան անհետացավ, դրա փոխարեն պարզապես մթին տներ էին: Ես շարունակեցի իմ ճանապարհը, շրջանը թողնելով հեռու՝ ետեւումս: Առջեւում մարգագետինների բաց տարածքն էր: Խաչած ոտքերով մարգագետնի վրա նստած, ես շարունակում էի կանչել Թենմային: Երկինքն աստղալի էր, բայց Թենմայի սպիտակ նժույզը ցած չէր թռչում: Ես պրերիայի գիշերային քամուց ցուրտ էի զգում: Դանդաղ ելնելով, ես սկսեցի ետ շրջան գնալ: Ես պառկեցի ծղոտե ներքևակի վրա: Ականջներս լցվել էին հարբեցողների թնոյունով եւ կանանց ճիչերով: Աջքերիցս անբացատրելի արցունքներ հոսեցին: Ոստիկանական մեքենաների ձայները մոտենում էին, փախստականի հետքերի ուղեկցությամբ: Ծչակների ձայները սուրացին ու գնացին շատ հեռու, դրսում ամեն ինչ լռեց: Առանց որեւէ քննատության, ես մեջքով հենվեցի մահճակալին, մինչեւ որ օրը բացվի: Իմ մեջ այնպիսի զգացողություն էր, թե դա անիմաստ գործողություն է: Հաջորդ օրը, ես խնդրեցի վարորդին, որ նա առաջինը վերադառնա: Բռն ուսերիս եւ

### Ցերինգ Նորբու

Կաշվե պայուսակը ձեռքիս, ես ուղեորվեցի Սեչենյան պրերիա: Ես գլխի ընկա, որ այդ արշավները կարող են ինչ-որ աստվածայնություն արթանցնել իմ գլխում: Միայնակ թափառելով ընդարձակ պրերիայում, ես անօգ էի, ինչպես մարմինն առանց հոգու: Ես չէի կարողանում զգալ ելևող արեւի ջերմությունը, եւ նրա ոսկեգույնը չէր ցրում իմ ներքին մշուշը: Շուտով ես քրտինքով պատվեցի, այդ պատճառով ես ստիպված էի նստել ճամփեզրին, ծանր շնչելով: Անֆալտապատ ճանապարհի վրա սուրալով անցնում էին մեքենաներն ու մոտոցիկլետները: Գլխարկով եւ կոստյումով երիտասարդը կազնեցրեց իր մոտոցիկլետն իմ կողքին եւ հարցրեց, «Դուք ո՞ր եք գնում»: Ես պատասխանեցի, «Ես գնում եմ Սեչենյան պրերիա»: Նա ասաց. «Գնացի՞նք: Ես էլ եմ էստեղ գնում»: Ես ուրախությամբ ընդունեցի նրա առաջարկը, նստելով մոտոցիկլետի ետնամասում: Մոտոցիկլետի ձայնը փռվեց պրերիայով մեկ: Ականջ ծակող ձայնը սարսափելի էր: Դա թողեց հովիվներին, մեկը մյուսի ետքից սուրալ դեպի Սեչենյան պրերիա, ինչպես Գեսար արքայի նետը:

### 3

Ես քեզ ճանաչում եմ: Դու Յարջեն ես, աստվածային մարգարեն: Նստած խոտածածկ գառիթափին, ես տեսա, որ դու կանգնած ես Մարնի քարե թմբի կողքին: Ետքի մատների վրա դու բազմաբղետ աղոթքի դրոշներ կախեցիր Մարնի քարե թմբի վրա: Այնուհետեւ դու հանեցիր գործած տոպրակից նոճու ճյուղերն ու դարսեցիր դրանք: Վերելից ցամփա եւ վայթ սփրիտ դրեցիր, եւ այրեցիր, որպեսզի երկրպագեիր աստվածներին: Խնկի ծուխը դանդաղ ելավ, նոճու բույրը հավեց օդում, լցվելով քթանցքներիս մեջ: Ես հաստատեցի այն համոզումը, որ աստվածները կգան: Դու առաքեցիր թղթիկներով աղոթքդ առ երկինք: Եւ փաթիլների պես պտտվում էին թղթիկները, դանդաղ իջնելով դեղին խոտերի վրա: Փետուրներով ծղոտե գլխարկ կրելով, դու հավատարիմ խոնարհվում եւ աղոթում էիր:

Յարջե, քեզ հետ միասին, ես նույնպես սպասում եմ աստվածների գալստյանը: Իմ տասներեքամյակի վերջին օրն է: Ես սպասում եմ, որպեսզի իշխանություն ստանամ, հուսալով, որ աստվածները կբանան իմ բանականությունը, որպեսզի ես կարողանամ քարոզել արքա Գե-

սարի մասին եւ լքեմ արերիան ծաղկող քաղաքի համար, այնպիսին ինչպիսին դու ես: Մենք երկուսս էլ սպասում ենք աստվածների գալստյանը: Ես տեսնում եմ էլեկտրոնային ժամացույցը դաստակիս վրա: Ժամը տասներկունս է: Արեւը հենց գլխավերելունս է: Նրա վրա թույլ արեւային պսակ է: Դա բարեհաճ նախանշան է: Հնարավոր է, դա քո պատճառով է: Ես գլխի ընկա որոշ ժամանակ անց, այդ գերբնական զինվորները կելնեն արեւապսակի միջից: Նրանք կհանեն փորոտիքս, այնուհետեւ կղնեն արքա Գեսարի գրքերն իմ փորի մեջ: Ես մտածում էի այդ մասին, ես շատ հուզված էի, հույսերով լի: Ես չէի համարձակվում հայացքս թեքել: Արեւի լույսը շատ ուժգին էր, ինչը որ կուրացնում էր աչքերս: Արցունքներս վար հոսեցնելով, ես հակեցի գլուխս: Դու շարունակում էիր ճչալ, մինչեւ որ, ի վերջո, չափազանց հոգնությունից փլվեցիր հողին: Շուտով դու կրկին ծնկի եկար, ափերդ միացնելով ու Չալհա լեռանն աղոթելով: Արեւապսակը մարեց: Խոտի վրա պառկած, ես փակ աչքերով կրում էի դիկտոֆոնի ականջակալները: «Տիբեթական տերոդորմյա»-ի երգը թնդած իմ ականջներում: Դա ինձ ստիպեց դողալ: Լսելով ողջ ժապավենը, ես դեռ չէի տեսնում աստվածների երբեմնի գալուստը: Ես բացեցի աչքերս, որպեսզի նայեմ երկնքին: Երկինքը ջինջ կապույտ էր: Սպիտակ ամպերը լողում էին երկնքով մեկ: Ես սարսափահար էի, վախենալով, որ աստվածներն ինձ չեն ընտրի: Եթե այդպես է, իմ սպասման ութ տարիներն ապարդյուն են: Մտածելով այդպիսի ավարտի մասին, ես տազնապ զգացի: Ես պիտի սպասեմ աստվածների գալստյանը: Կանգնելով սովորելով քեզանից, ես սկսեցի խոնարհվել Չիայիա լեռանը: Տապոտ արեւի լույսում ես անընդհատ քրտնում ու շնչահատվում էի: Այդ պատճառով ես դադարեցի խոնարհվել, դրա փոխարեն խոտի վրա նստելով:

Մարդիկ ցեղի մեջ ասացին. «Կյանքը քաղաքում, Յարջեի կյանքը, երեւի թե, հարմարավետ է եղել»:

Այսօր դու եկել ես այստեղ, որպեսզի երախտապարտ լինես աստվածներին: Թե՞ դու հեց նոր եկար այստեղ, որպեսզի վկայես, թե ինչպես է ինձ ուժ տրվելու:

Տեսնելով քո բարեպաշտությունը, ես փոքր-ինչ զգացված էի:

Այստեղ քեզ հետ, գերբնական զինվորները վաղ թե ուշ կելնեն: Այդ միտքը ինձ փոքր-ինչ մխիթարեց: Յարջե, դու կրկին Մանի բլրի կող-

## Ցերինգ Նորբու

քին էիր, եւ դու մշտապէս սրբում էիր քրտինքը ճակատիցդ: Մեր ուշա-  
ցած շարժումը ցույց տվեց, որ դու, երեւի թե, շատ հոգնել ես: Շրջապ-  
տույտը 110, 111, 112...

Դորգուին դուր չեկավ, որ ես ողջ օրը մնում եմ Սենչենյան պրերիա-  
յում:

Նա հաճախ բարկանում էր ինձ վրա. «Ինչո՞ւ դու փող չես աշխա-  
տում մեր ընտանիքի համար եւ ավելի լավ չես ապրում, քան մեծ եղ-  
բայրներդ»: Եղբայրներս Լույսպէս կշտամբում էին ինձ. «Դու խելագար  
ես: Դու միշտ մնում ես Սենչենյան պրերիայում, սեւեռվելով երկնքին:  
Համենայն դեպս, երկինքը քեզ ցամփա կամ միս չի տա»: Չհամոզվե-  
լով, ես պատասխանեցի. «Գերբնական զինվորները կիջնեն երկնքից,  
եւ ես մարգարե կդառնամ, եւ հետո, ես փող կաշխատեմ, ոչինչ չանե-  
լով, քանի դեռ ես բացում եմ բերանս»: Լսելով այդ, նրանք ծիծաղից  
ճչում էին եւ ինձ ապուշ էին համարում: Տեսնելով ինձ, ցեղի մարդիկ  
հաճախ կատակում էին, «Տես, գերբնական զինվորները գալիս են, որ-  
պէսզի քեզ իշխանություն տան»: Նրանք ձգեցին ձեռքերը, եւ մատնա-  
ցույց արեցին հորիզոնը: Ամեն անգամ ես ուրախությամբ նայում էի:  
Հոտաղների ճիչերի ուղեկցությամբ, ես նայում էի վիթխարի կապույտ  
երկնքին, և որից ընկնելով հիասթափության մեջ: Ես գիտեի, որ նրանք  
ինձ և որից խաղ էին խաղում: Հիմա, հոտաղն այստեղ չի հավատում, թե  
ես երբեւէ կարող եմ ստանալ այդ իշխանությունը: Տես, արեւը մայր է  
մտնում: Ամպերը վարդագունեցին: Այնպէս որ՝ աստվածները չեն գա:  
Դու դանդաղ ելար, ծնկներիցդ դանդաղ թափ տալով տրորված խոտը:  
Այնուհետեւ դու հանեցիր գլխարկդ եւ դրեցիր քո գործած պայուսակի  
մեջ՝ պատրաստվելով գնալ: Ես բավական անհանգստացած էի: Եթե  
դու գնայիր, ինձ մոտ ոչ մի հույս չէր լինի:

«Յարջե...»,- ես գոռացի եւ վազեցի քեզ մոտ:

Դու նայեցիր ինձ: Դու զարմացար, իսկ հետո ժպտացիր: Ես տես-  
նում էի, թե ինչպէս է կուրծքդ ուռչում:

«Դու աստվածների՞ն ես սպասում»: Վազելով քեզ մոտ, ես շնչաս-  
պառվեցի:

«Ո՞վ ես դու»,- վարդագույն դեմքով եւ արցունքներն աչքերիդ դու  
թեթեակի դողում էիր:

Ես արագ ասացի. «Ես Լույսպէս սպասում եմ աստվածներին: Ես



ուզում եմ նույնպիսի մարգարե լինել, ինչպիսին դու ես: Տես, ես ժողովում էի Մարնիի քարերը ութ տարվա ընթացքում: Հայրս ասաց, որ քո փորոտիքը թափել էին»:

Արցունքները հոսեցին քո աչքերից: Եւ աչքերդ կորցրել էին իրենց փայլը: Երբ ձեռքերդ վար ընկան, գործած պայուսակը քո ձեռքին անհունչ ընկավ խոտի վրա:

«Դու Դորգուի որդի՞ն ես: Ի՞նչ կասես, եթե մենք միասին սպասենք», - հարցրիր դու ինձ:

Ես ուրախ էի, որ դու հիշեցիր հորս, եւ ես հուզված էի, որ դու ինձ հետ ուզում էիր սպասել աստվածներին: Մենք մեջքով հենվեցինք միմյանց, սպասելով գերբնական ռազմիկներին: Դու շարունակում էիր երգել եւ աղոթել: Թնդյունն ինձ հանգստացրեց: Երբ արեւը մայր էր մտնում, բաց պրերիան շատ հանդարտ դարձավ: Քամին աղմկում էր աղոթադրոշներով: Այդժամ դու դադարեցիր երգել:

-Մենք կշարունակե՞նք սպասել,- հարցրեցիր դու:

-Հարկ է սպասել,- հաստատուն ասացի ես:

-Բայց այժմ, պրերիայի մարդիկ չէին ուզում լսել արքա Գեսարի պատմությունները,- ասացիր դու: - Նրանք սիրում են հեռուստացույց նայել:

-Դա իմ գործը չէ,- պատասխանեցի ես: - Ես շատ էի ուզում ստանալ այդ իշխանությունը:

Մենք միասին նստել էինք, եւ լսում էինք մեր իսկ սրտի զարկերը՝ բառ իսկ չասելով:

Ոսկեգույն պրերիան խավարով էր պատվել: Լեռները երկու կողմից ստվերված էին, մինչեւ որ, վերջապես, ներքաշվում էին լայնարձակ պրերիայի մեջ: Ճանապարհով հեռվում լուսարձակներով մեքենաները անցնում էին մեկը մյուսի ետքից, խախտելով գիշերվա լռությունը:

-Աստվածները չեն գա,- ասացիր դու: - Արի վերադառնանք:

Լսելով քո դողողացող ձայնը, ես գիտեի, որ դու լալիս ես:

Ես անօգ քեզ մեկնեցի ձեռքս: Քո մեծ ձեռքը բռնել էր իմ փոքրիկ ձեռքը: Քո Քոքն այնքան հարթ եւ քնքուշ էր: Ձեռք ձեռքի տված, մենք գնացինք Ռազոն ցեղի մոտ: Թարթող լուսարձակներով եւ մոլագար երաժշտությամբ մոտոցիկլետների խումբը Ռազոն ցեղից միտվեց առ մեզ: Նրանք եկել էին իմ ետեւից: Գլուխդ հակելով, դու մեղմորեն ասա-

## Ցերինգ Նորբու

ցիր. «Աստվածները լռության կարիք ունեն, եւ նրանք չեն հայտնվի այսպիսի աղմկոտ իրավիճակում»:

Լսելով այդ, եւ լրիվ հուսահատության մեջ էի: Ես լուռ լալիս էի: Դու, կորցրիր քո ձեռքը, ինչ-որ բան տնտղելով քո գործած պայուսակում: Այդժամ դու գլխարկը դրեցիր իմ գլխին: Ես դիպա դրան: Ծայրը լցված էր փետուրներով: Ես կրկին հաիցմունքի մեջ էի: Դա գլխարկ էր արքա Գեսարի մասին քարոզի համար: Դու դարձյալ բռնել էիր ձեռքս, գնալով այդ անհեթեթ մոտոցլկետների մոտ: Շլացուցիչ լույսը համարյա կուրացրել էր աչքերս: Մեզնից ոչ մեկը չէր կարող պարզ տեսնել առջեւի ճանապարհը: Քարե Մարնին հեռանում էր մեզանից: Նրա ուրվագիծը մեր ետեւում աղոտեց, ներգրավվելով անսահման խավարի մեջ:

Ես ասացի. «Հարվածիր ինձ»:

-Ինչո՞ւ:

Դու զարմացել էիր:

-Այդ մոտոցիկլիստներն իմ եղբայրներն են: Նրանք ասացին, որ ես խելագար եմ, եւ ոչ մեկը չէր լսում արքա Գեսարի պատմությունները: Ինձ այդ գրգռում էր, այդ պատճառով ես նրանցից մազնիստոֆոնը գողացա»:

Մոտոցիկլետները մոտենում էին: Խելահեղ աղմուկը լցվեց ողջ Սեչենյան պրերիան: Մոտոցիկլետների հանած աղմուկը բախվեց մեր սնդուկներին: Սիրտս սկսեց զովանալ եւ պաղել: Մոտոցիկլետները կանգնեցին մեզ մոտ: Երբ շարժիչներն անջատվեցին, ամեն ինչ խաղաղվեց: Ես կանգնեցի այդտեղ, մտածելով կանգ առնել եղբայրներս հարվածների տակ: Լսվեց խլացուցիչ ոռնոցը Սեչենյան պրերիայի երկնքով մեկ, հանդարտեցնելով իմ խճճված ուղեղը: Բոլորը նայում էին Մարնի բլրաթմբին: Մթության մեջ ոչինչ չէր երեւում: Բոլորը ցնցվեցին, ինչ-որ բան քրթմնջալով: Հանկարծ դու բռնեցիր ձեռքս եւ վազեցիր Մարնի բլրաթմբի մոտ: Իմ ետեւից եղբայրներս բարկացկոտ գոչում էին. «Խելագարներ, ի՞նչ առանձնահատուկ բան կա գայլի ոռնոցի մեջ»:

«Երեւի այդ տղան նախկինում գայլ չի տեսել»:

«Արի: Նրանց հանգիստ թող»:

Եղբայրներս շարժման մեջ դրեցին իրենց մոտոցիկլետները:

Շարժիչների աղմուկի մեջ նրանք ավելի ու ավելի էին հեռանում աստվածներից, մինչեւ որ անհետացան մթին քողի ետեւում: Երբ մենք

հասանք Մարնի բլրին, մենք հայտնաբերեցինք հողակիտվածքին սպասող ֆլուորոցենտային աչքերով ադոտող ուրվանկարը: Ուրվանկարը կրկին ոռնաց: Այն շամփրեց գիշերվա քողը, հնչելով երկնքում, եւ դա չափազանց մռայլ էր թվում: Ոռնոցը ցնցեց բոլոր իմ արյունատար անոթները: Ես թույլ ընկա խոտի վրա, ես չէի կարողանում շարժվել, եւ լեզուս լարվել էր: Ես տեսնում էի քեզ ծնկաչոք խոտերի վրա, ձեռքդ կրծքիդ դրած: Արքա Գեսարի քարոզի ձայնը թրթռաց Սեչենյան պրերիայի վրա: Բայց ես չէի կարողանում շարժվել: Ուրվապատկերը Մարնիի բլրից թեթեակի սահեց խոտերի վրա: Դու եւ ուրվապատկերը գնում էիք պրերիայի խորքը, անհետանալով իմ աչքերից: Ես ջանում էի ձայն տալ Յարջեին, բայց ձայն դուրս չէր գալիս: Ես սկսեցի անհանգստանալ: Խավարը պարուրել էր աչքերս, ես ստիպված եղա սպասել...

## ԱՆՁՐԵՎԱՅԻՆ ԵՂԱՆԱԿ

Առաջին օրը, երկրորդ օրը, երրորդ օրը, չորրորդ օրը...տասնութ-  
րորդ օրը, տասնիններորդ օրը, քսաներորդ օրը, քսանմեկերորդ օրը:  
Անձրեւը շարունակվում էր քսանմեկ օր: Անձրեւը կլլել էր Լորինգո գյու-  
ղը, ընդհատելով բոլոր հարաբերություններն արտաքին աշխարհի  
հետ: Քսանմեկերորդ օրը անձրեւի փրփրացող կաթիլները դեռեւս  
ծածկում էին փոքրիկ Լորինգո գյուղի երկինքը: Այն ամենը, ինչ տարա-  
ծության վրա էր, մշուշով ծածկված էր. այնժամ, երբ արտակարգ իրա-  
վիճակների համար նեղիկ ու աղտոտ լեռնային արահետով ինչ-որ մե-  
կը դժվարությամբ քայլում էր:

-Հայրիկ, խնդրում եմ սպասիր: Ես քեզ պիտի շրջանային հիվանդա-  
նոց տանեմ:

Վանգլայի խոսքերը շուտասելուկով արտաբերելու ժամանակ ան-  
միջապես չքացան: Նա քայլում էր իր հոր հետ իր մեջքի վրա ութ ժա-  
մից ավելի: Տեղատարափից թրջված նրանք շարունակում էին քայլել:  
Կաթ-կաթ, կաթ-կաթ: Անձրեւի կաթիլները հոսում էին նրանց վերար-  
կուների եւ տաբատների վրայով: Վանգլան նստեց ու առաջ նայեց,  
անձրեւի աղոտ վարագույրով պարուրված, եւ ասաց.

-Հայրիկ, բարձունքին հասնելով, մենք կտեսնենք մայրուղին:

Այդպիսի սրտից եկող խոսքերը չկարողացան հուզել Չամփա հայ-  
րիկին: Նա բուք հայացքով իր դեմքն իջեցրեց Վանգլայի ուսին: Ծանր  
անձրեւակաթիլները անհամար թափվում էին երկնքից, շաղվելով ջրի  
բազում վառ կաթիլների՝ հայր Չհամփայի կնճռոտ դեմքի վրա: Անձ-  
րեւի կաթիլն ընկավ հայր Չհամփայի աչքի մեջ, ասես ետ հրելով նրան  
մահվան սահմանից: Հայր Չհամփան նկատեց, որ անձրեւի ծանր կա-  
թիլներն ընկնում են դույլերի մեջ, բայց նա չէր կարողանում լսել ձայնն  
այն բանից հետո, որ դրանք ընկնում էին: Նա բարձրացրեց թաց ձախ  
ծեռքն ու դիպավ Վանգլայի աչքին, ասելով՝ «Ողջ մնա: Դու պիտի ապ-  
րես»: Մի քանի վայրկյան անց, նա արտաբերեց իր վերջին խոսքերը,  
ասես թե անձրեւը դրանք տարավ: Հայր Չհամփան փակեց իր աչքերը:  
Նրա ձեռքն անձայն ընկավ: «Հայրիկ, խնդրում եմ, մի հեռացիր»:

Վանգյան փութանակի հորը դրեց խոտածածկ զառիթափի վրա, ձեռքը ծալելով հոր վզի տակ: Նա, հեծկլտալով, դեմքը կիպ մոտեցրեց հայր Չհամփայի պաղող դեմքին, հայր Չհամփայի մարմնի ջերմաստիճանն արագ ընկնում էր, նրա մարմինը, սառցի պես, պաղ թողնելով: Վանգյան նրան դրեց խոտածածկ լանջի վրա:

«Օմ, մարգարիտ լոտոսի ծաղկի մեջ, օմ, մարգարիտ լոտոսի ծաղկի մեջ...»,- երգեց նա: Կյանքի եւ մահվան շրջապտույտը՝ իմ չար կարմայի հետեանքն է: Տվյալ պահին Դհարմադաթուրի իմաստության լույսը ելնում է մթին արահետով, միայն Վայրոցանան կարող է ուղղորդել, թող միայն Կուրկուլեն ուղեկցի ձեզ ետքից. միայն դուք կարող եք խաղաղ անցնել ապշեցուցիչ բարդոյի միջով, միայն դուք կարող եք հանգիստ հանգչել Բուդդայի կատարյալ վիճակում...

«Օմ, մարգարիտ լոտոսի ծաղկի մեջ, օմ, մարգարիտ լոտոսի ծաղկի մեջ...»,- երգեց նա:

-Հայրիկ, արի տուն վերադառնանք:

Սուտրան երգելով, Վանգյան կրկին տարավ հայր Չհամփային իր մեջքի վրա եւ նույն ճանապարհով վերադարձավ իր գյուղը: Ի բացառյալ որդու, որ հորն ուսած գնում էր, այլեւս ոչինչ չկար պաղ անձրեւի տակ:

-Հայրիկ, դու մահացած ես, բայց քեզ ոչնչից վախենալ պետք չի: Այդ ճանապարհը դու պիտի մենակ գնաս: Ես կշփվեմ քեզ հետ, որպեսզի դու քեզ այնքան էլ մենակ չզգաս: Վերջին շնչում դու ինձ ասացիր, որ ես շարունակեմ ապրել, ճի՞շտ է: Հայրիկ, ես կլինեմ: Ես կլինեմ: Ստածելով մեր ընտանիքի մասին, թեեւ մենք շատ եկք տառապել, ողջ մարդիկ դեռեւս շարունակում են շարժվել, երբեք աշխարհից չհոգնելով եւ ընկճախտի մեջ չընկնելով: Մեր վերամարմնավորումը՝ մեր կարմայական ընձան է հազարավոր տարիների բարի գործերի համար: Ինչպե՞ս մենք կարող էինք այսպես հեշտ բաժանվել քո կյանքից: Հայրիկ, ես ճի՞շտ եմ: Փույթ չէ, թե դու ինչքան տառապանքներ ես կրում, քանի դեռ դու կարողանում ես կենալ, դու կարող ես անջատվել քեզանից, այդպես չէ՞: Դու կարող ես քեզ անջատել ողջ ցավից: Արի սկսենք քո ամենասիրելի թոռնիկից, Գելայից:

Այդ օրը, Պանդոն ուղեւորվել էր բանջարանոցը ջրելու՝ ուռենուց հյուսած զամբյուղն ու բահն ուսին: Լողալով ոսկեգօծ առավոտյան լույ-

## Ցերինգ Նորբու

սի մեջ, նա շողում էր: Ուռած փորով, Պանդեն քայլում էր մանրիկ քայլերով դեպի լեռնալանջի վրայի գյուղական պարարտ հողերը: Քամին փչում էր լանջից, հողի եւ հացահատիկների բույրով: Նա թույլ հոգոց հանեց: Երբ նա անցնում էր ժայռի կամ թփի կողքով, երբեմն նապաստակները դուրս էին թռչում: Տեսելով, ինչպես են վախեցած նապաստակները զգայուն փախչում, նա անսահման կարեկցանք էր զգում: Նա շարունակում էր երգել՝ օմ, մարգարիտ լոտոսի ծաղկի մեջ՝ ճանապարհի վրա: Բուդդիստական մանտրան մշտապես խախտում էր հովտի լռությունը: Որոշ ժամանակ անց նա հասավ մեր ընտանիքի ֆերման: Նա բահը խրեց հողի մեջ եւ վար բերեց ուռենուց հյուսած զամբյուղը: Երբ նա նայում էր փքված ցորենին, նրա աչքերն արցունքներից շողում էին: Հարեան ջրանցքի ծայրին՝ լեռան բարձունքից, Պանդոն իր բահով անցք փորեց: Արձաթե ջուրը ցայտեց անդունդից, սուրալով դեպի մեր հողատարածքները, որպեսզի տամկացներ բերքն ու Պանդոյի սիրտը: Նա երկար կանգնել էր, մտածելով մեծ բերքահավաքի մասին եւ իր ողջ ընտանիքի ժպիտների մասին: Երբ նա անցավ հողատարածքներով եւ տեսավ դրանց ոռոգումը, նա անփույթ կրացավ, սայթաքեց ծայրին ու մեջքի վրա ընկավ: Բացելով իր աչքերը նա տեսավ կապույտ երկինքն ու այրող արեւը: Գիտակցելով շրջակա հանգստությունը, նրան չէր բավում ճիչը: Այնպես որ Պանդոն պարզապես իր տեղում պառկել էր: Առաջին անգամ նա պարզորոշ լսեց միջատների խշխշոցը, եւ տամկությունը կլլող պտղարմատների ոգետորիչ ձայնը: Նա լուռ լսում էր բարեհունչ ձայնը: Նրա գունագեղ սապոզները եւ տաբատը ջրով ներծծված էին: Հանկարծ նրա փորում սուր ցավ բարձրացավ: Քրտիկքով պատված նրա ճակատը շողում էր արեւի տակ: Մի քանի վայրկյանների ընթացքում տարված ցավերից հետո նոր ծննդաբերության ցավերը ցայտաղբյուրի պես բարձրանում էին, տարածվելով նրա ողջ մարմնով մեկ, ավելի ու ավելի ուժգին: Նրա ոտքերի միջեւ ինչ-որ տաք ու թաց մի բան անընդհատ հորդում էր: Նա գիտեր, որ դա իր արյունն էր: Նա ավելի ու ավելի ուժգին էր արնահոսում: Ատամներն ու բռունցքները սեղմելով, նա հրում էր կեղտը: Մի քանի կծկումներից հետո Գելայը Պանդոյից դուրս սպրդեց: Օ՛, ինչպես էր նրա սուր ճիչը խախտում հովտի լռությունը: Պանդոն փոքր-ինչ վեր ելավ եւ գոտկից դանակը հանելով, կտրեց պորտալարը: Նա իր թաշկինակով սրբեց Գե-

լայի վրայի արյունը եւ հանեց մորթե վերարկուն, որպեսզի փաթաթեր տղային: Բարձր ճիչերով ու արյունով, որ կաթում էր ճանապարհին, նա, հեւիհեւ, փութաց տուն:

«Գելայ, դա համապատասխանում է քո մտադրություններին: Հայրիկ, ես ճիշտ եմ: Չեմ ժխտում: Ես չեմ ասի, թե քեզ վատ են վերաբերվում Գանգզու: Հիմա նրանք բոլորը մահացած են: Նույնիսկ դու լքեցիր ինձ: Ոչ մեկը մեղավոր չի: Գելայի ծննդյան տարում լավ բերքահավաք եղավ: Դու հուզմունքով ասացիր. «Գելայը՝ մեր երջանիկ աստղն է, եւ նա մեր ընտանիքին երջանկություն կբերի»:

Երբ Գելայը երկու տարեկան էր, Լիոլինգի հովտում աճում էր անձրեաջրի քանակը: Ճանապարհներն ու ջրանցքները հաճախ ջրակույլ էին լինում:

Անձրեային եղանակից հետո, քաղաքը ճանապարհներն ու ջրանցքները վերականգնելու աշխատանքներ էր կազմակերպում: Ամեն տարի մեր ընտանիքը պիտի երկու հոգի տրամադրեր: Փոքր-ինչ ճամփա դնելով հյուսած գամբյուղի մեջ, Գանգզուն եւ ես հավաքվեցինք ու գնացինք, ձեզ երեքիդ տանը թողնելով: Երբ քեզ ու Պանդոյին հարկ էր տիրություն անել հանդավարները, մենք թոկ էինք կապում Գելայի իրանից եւ մյուս ծայրը կապում էինք դռան մոտի քոթուկին: Նա շան պես փոշու մեջ ետ ու առաջ էր անում: Երբ հոգնում էր, նա կարող էր պարզապես քնել: Կարիք ունենալու դեպքում նա կարող էր միզել կամ կեղտոտել իր տաբատի մեջ: Երբեմն նա ամբողջովին կեղտակույլ էր լինում: Բայց դու ինչպե՞ս կարող էիր դրանից զլուխ հանել: Ամեն օր, երբ Պանդոն վերադառնում էր կեսօրին, նա առաջին հերթին թրջում էր իր գոգնոցը, որպեսզի մաքրեր կեղտը Գելայի վրայից, այնուհետեւ նա կերակրում էր նրան ցամփայի պաստայով, հետո նա փութում էր քեզ օգնել: Այդպես էլ տղան մեծանում էր: Երբ նա չորս-հինգ տարեկան էր, ուռնուց հյուսած գամբյուղը մեջքին, նա կարդանում էր լեռան վրա թփեր կտրատել: Սովորաբար, նրան դուր էր գալիս ստտել քո կողքին, նայել, թե դու ինչպես ես վերցնում բուրդը եւ նորոգում գյուղատնտեսական գործիքները: Բացի այդ, նա պատրաստ էր, որ դու նրան ինչ-որ բան պատվիրեիր: Հայրիկ, դու հաճախ ասում էիր, որ այդ երեխաները դարոց գնալու կարիք չունեն, կամ, որ նրանք շատ փչացած կդառնան, որպեսզի ֆերմայում ինչ-որ գործ անեն: Այդպիսով, դու

դեմ էիր դպրոց հաճախող Գելային: Ի վերջո, գյուղակի անձնակազմն ասաց. «Պետական օրենսդրության համաձայն յուրաքանչյուր երեխա պիտի կրթություն ստանա, եւ եթե դուք չթույլատրեք երեխային դպրոց հաճախել, դուք կտուգանվեք»: Դա ասվում էր խիստ տոնայնությամբ, այնպես որ դու այլ ելք չունեիր: Տուգանված լինելու ահից, դու զուլփո կախեցիր եւ ասացիր. «Դա ճակատագիր է: Թող եւ գնա դպրոց»: Հայրիկ, դու դեռ հիշո՞ւմ ես առաջին օրը, երբ Գելայը դպրոց գնաց: Լուսադեմին, Պանդոյի կարած դպրոցական պայուսակով, որտեղ ինչ-որ ցամփա էր եւ փայտե մի թաս, եւ քայլում էր խորդուբորթ լեռնային ճանապարհով, եւ չորս ժամ քայլում էր մինչեւ Լհոլին քաղաքի տարրական դպրոց հասնելը: Գիշերը եւ ակնակոյր խավարի մեջ վերադառնում էր տուն: Ավելի ուշ դու փնթփնթում էիր. «Գելային նավթավառի յուղի մեծաքանակ ծախս է սպասվում»: Որպեսզի տնտեսեր լամպի յուղը, Պանդոն հաճախ վար էր իջնում, որպեսզի նրան սպասեր խաչմերուկում, մինչեւ մութն ընկնելը: Այնուհետեւ եւ նրան տուն էր տանում: Մի անգամ, ինչ-որ գյուղական խնդրի համար, դու ուղեւորվեցիր շրջան: Այնտեղ դուք հանդիպեցիք Շհարփայի ընտանիքի աղջկան, երկրորդ գյուղում: Եւ աշխատում էր շրջանային հիվանդանոցում: Եւ խնդրեց քեզ իր համար դեղերի դատարկ շիկներ վերցնել: Դու ճամփին շշերից մեկը գողացար՝ ասելով. «Նրանց այդքան շատ շիշ պետք չի: Ես մեկը կվերցնեմ»: Ամեն անգամ, երբ դու տեսնում էիր այդ շիշը, դու խոսում էիր Շհարփայի ընտանիքի երկրորդ աղջկա մասին: Դու բռնոթին լցրել էիր այդ շիշ մեջ: Այդ շիշ ձեւից գրավված, հաջորդ օրը Գելայն այն դրել էր դպրոցական պայուսակի մեջ ու տարել էր դպրոց: Արթնանալով, եւ տեսնելով, որ շիշը չկա, դու զայրույթից ոտքերդ գետնով տվեցիր: Ես քեզ տվեցի իմ պոզավոր ծխախոտատուփը, բայց դու դեռ քշեցիր, ասելով. «Տղան միշտ հոր հետքերով է գնում»: Ինչպես եւ քեզ, Գանգուին էլ դուր է գալիս ուրիշի իրերը գողանալը: Ես գիտեմ, որ դու Գանգուին էիր մեղադրում: Ես բացատրեցի քեզ, բայց դու ինձ չէիր լսում: Ձեռքերդ մեջքիդ ետեւում դրած, դու բարկացած հեռացար, անհետանալով խորդուբորդ ճանապարհին: Ես գիտեմ, որ դու ողջ օրը մոլեգնած էիր: Երեկոյան, հենց որ Գելայը քեզ վերադարձրեց շիշը, դու առույգ ասացիր. «Մանչուկ, ես ամբողջ օրը փնտրում էի: Եթե ես իմանայի, որ էդ շիշը քեզ դուր է եկել, ես մի քանիսը կվերցնեի քեզ հա-



մար»։ Դու ոչնչից չէիր բողոքում, որովհետև Գելայը քեզ դուր էր գալիս։ Բացի այդ, դու հաճախ խոսում էիր Շարփայի ընտանիքի երկրորդ աղջկա մասին, ասելով. «Նա ընդունվել էր Լիասայի համալսարան լավ սովորելով, իսկ դպրոցն ավարտելուց հետո աշխատում էր շրջանում։ Ինչ գարմանայի է։ Մեր Գելայն ավելի խելոք է, քան նա, և ապագայում ավելի հեռանկարային կլինի, քան նա»։ Դու թույլ տվեցիր Պանդոյին և ինձ երդվել ապահովել Գելայի համալսարանական կրթությունը, թեև մենք գիտեինք, որ դա անհնար է։ Քեզ գայրացնելու վախից, մենք մեր կամքից անկախ, խոստացանք քեզ։ Ուրախացած, դու երեք բաժին ցամփա կերար։ Արդյունքում կեղտոտեցիր պատի անկյունում, և փորացավ ունեցար։ Մենք գիտեինք, որ դու վախենում էիր, որ Գելայը ողջ կյանքում գյուղացի կմնա։ Գյուղացիների դժվարությունները վախեցրին քեզ։ Դու հուսով էիր, թե նա դուրս կգա Լիոլինգ Վալեից և պետական ծառայող կդառնա։ Ես հիշում եմ, դա վաղ աշնանն էր։ Որ, գուցե թե, ուշ աշուն էր։ Դու հիշո՞ւմ ես։ Հենց այդ օրը Գելայը սպանվեց ավտոմեքենայով՝ դպրոցի ճանապարհին։ Նա ընդամենը տասներկու տարեկան էր։ Վանգը կանգ առավ, որպեսզի Չիամփային փոքր-ինչ բարձրացներ մեջքի վրա։ Անձրեղը շարունակում էր տեղալ։ Նեղիկ լեռնային ճանապարհն անվերջորեն առաջ էր սուրում։ Հենց մենք եկանք Էստեղ, լուրը ստանալուց հետո, մի խումբ մարդ էր հավաքվել մեքենայի շուրջ։ Տեսնելով, թե ինչպես մենք շնչահատվելով վազում ենք այնտեղ, նրանք ցրվեցին։ Հետո ես տեսա, թե ինչպես էին մեքենայի անիվները տրորել Գելայի մարմինը, որ արյունով էր ներծծված։ Արյան սուր հոտը լցրել էր քթանցներս։ Ես ցնցված էի։ Գելայի մարմնի կողքին ձևիկ գալով, բացելով պայուսակը, քաշելով Գելայի արյամբ թաթախված հագուստները քո վտիտ ձեռքերով, դու դրանք դրեցիր այդ պայուսակի մեջ։ Երբ ես, ջուտե պայուսակն ուսիս, ուշքի եկա, դու մայթով վար օրորվեցիր։ Այն բանից հետո, որ դու գնացիր դեպի գետափ, դու ձևիկ իջար Գելայի մարմնի կողքին և երկար խոսում էիր։ Դու խոսում էիր քո կորսված հույսի մասին, ընտանիքի անդամի քո կորստյան մասին, և առ մահը քո հայացքի մասին։ Ի վերջո, դու Գելային ասացիր. «Թոռնիկս, բարի գործեր արա մահվանից հետո։ Ես քեզ կվերածեմ կտորների, կնետեմ գետն ու կկերակրեմ սոված ձկներին քո մարմնով։ Այդժամ նրանք քեզ երախտապարտ կլինեն»։ Դու թափահա-

րեցիր Գելայի մարմինը, նրան կտոր-կտոր անելով: Այնուհետև դու թոռանդ նետեցիր գետը: Գետը կարմրեց: Ինչպես մեծ բաց բերան, կարմիր ալիքները երջանիկ ընդունեցին բարեգործությունը: Բուրդը տարածության վրա զննում էին քեզ, շունչները պահած զննելով, թե դու ինչպես ես ավարտում ջրային թաղումը: Սակայն, քեզ տարածության վրա տեսնելով, ես ինձ դատարկված զգացի: Ի վերջո, ես տեսա, որ դու ինչպես նետեցիր մանրատաճ հագուստը գետի մեջ: Ձեռքերդ գետում լվանալուց հետո, դու նստել էիր գետափնյա քարի վրա, եւ հանելով շշով թուփումը, սկսեցիր ծխել: Հանկարծ ծուխը ներքաշելով, նետեցիր շիշը, որ սիրում էր Գելայը, գետի մեջ: Գելայը լքեց մեզ, եւ այդ պատճառով մեր ընտանեկան դժբախտությունների արկղը բացվել էր: Այդ օրը քաղաքի ղեկավարներն ու դպրոցական ուսուցիչները հարցրեցին մեզ, ինչպես օգտագործեն վարորդին: Դու ասացիր. «Գրողը տանի, արդյոք մենք կարո՞ղ ենք Գելային վերածնել, անելով այդ»: Դրանից հետո դու ձեռքերդ մեջքիդ ետեւը դրեցիր եւ այն ջուտե արնաշաղաղ պայուսակով վերադարձար տուն: Նրանք այնտեղ ինձ կանգնեցրին: Ես տեսա, թե ինչպես վարորդը սպիտակած դեմքով դողում է: Նա էլ, երեւի թե կին ու երեխաներ ուներ: Եթե նրան բանտ նստեցնեն, ինչպե՞ս կարող է նրա ընտանիքն ապրել: Ես նրան խղճացի, եւ այդու ասացի. «Գելայը մահվան էր դատապարտված: Մենք քեզ չենք մեղադրի: Դու կարող ես հիմա զնալ»: Վերադառնալով, ես քեզ ասացի այդ: Դու ոչինչ չասելով, գլուխդ կախեցիր: Տասը օրից ավելի, մենք լսում էինք, թե ինչպես էր Պանդոն հեծկլտում: Դու նրան չէիր մեղադրում եւ չէիր մխիթարում, պարզապես ասելով. «Ավաղ, նա կին է»: Մի քանի ամիս անց, վարորդը մեզ ֆերմայի ցուլ եւ երեք պարկ բրինձ ուղարկեց: Մենք մինչեւ ականջներս ժպտում էինք: Ցուլ զնելու համար հազար յուան էր պետք, այդպես մենք երբեւէ չէինք ենթադրում, թե մեկը կառնենք: Վարորդն ու նրա կինը երկու օր մնացին մեր տանը, ստիպելով մեզ վեր ու վար անել: Վարորդն ու նրա կինը երախտապարտ էին մեզ, քանի դեռ մենք հուզված էին այն բանից, որ նրանք մեզ հիշել էին: Այդ ժամանակ դու ասացիր. «Վարորդն ու նրա կինը լավ մարդիկ են: Նրանց բանտ չուղարկելը ճիշտ որոշում էր»: Այդ օրերին գյուղի բնակիչները հավաքվել էին մեր տան շուրջը փոշու հետ, նրանց քայլերից բարձրացած, օդում տարուբերվող: Նրանց աչքերում բռնկվեց նա-

խանձի հուրը, վառվելով մթին տան շուրջը: Այդ բնակիչները դժկամությամբ էին լքում մեր տունը, մինչեւ որ մարտեցին կովի թրիքի կրակը եռանկյունի վառարանում, բարձրլեռնային գարու լիկյորը պրծավ, և բուերը դադարեցին կռչալ: Գնալուց առաջ վարորդն ու նրա կինը կրկին շնորհակալություն հայտնեցին մեզ: Երբ նրանք արդեն պատրաստվում էին մեքենա նստել, վարորդն ինձ ասաց. «Քեռի, մի քանի օրից, ես քեզ Լհասա ճամփորդության կտանեմ, եւ այնտեղ դու կկարողանաս երկրպագել Բուդդա Շաքյամունիին»: Քո արցունքները թափվում էին դանդաղ, ասես սառույցը հալչեր: Դրանք թրջել էին քո հագուստը: Հուզմունքից շնչահատվում էիր, եւ բառ իսկ չէիր կարողանում ասել: Մեքենան հեռանալով դղրդում էր: Այն փոշին վեր էր հանում, որը փակել էր արեւի լույսը, ինչպես նաեւ առջեւի լեռներն ու գետերը: Տուն վերադառնալով, դու հպարտությամբ ասացիր. «Գելայի կյանքը փոխվեց ցլով: Այն արժեր դրան»: Ողջ մեր ընտանիքը համամիտ էր քեզ: Համենայն դեպս, այն պինդ ցուլ է: Հետեւաբար, ցուլը Գելայի փոխարեն քո սիրելին դարձավ: Դու հաճախ ասում էիր Պանդոյին եւ Գանգզուին, որ խոտ հնձեն ցլի համար եւ գետի մոտ խմելու տանեին: Գիշերը, երբ փողոցում ցուրտ էր կամ անձրեւ էր գալիս, դու միշտ գնում էիր նավթամպով, որպեսզի տեսնեիր նրան: Միայն այդ ժամանակ դու կարողանում էիր գոհ լնել: Ցուլը Գելայի կյանքի գնով, քեզ համար գանձ դարձավ, գյուղացիների առաջ պարծենալու համար:

«Չհամփա, քո ցուլը շատ փող արժի»:

«Գույնից եւ չափսերից դատելով, դա պիտի որ լավ ցուլ լինի»:

«Ինչ գարմանալի ցուլ է: Այդքան մեծ հողատարածքը նա հերկեց ընդամենը կես օրվա ընթացքում»:

...

Ժողովրդական հիացմունքը տարածվում էր քո կողքին: Հպարտությունից գլուխդ վեր ցցած, դու խորհուրդով գյուղական արահետով ետուառաջ էիր քայլում: Դա մեր ընտանիքի ամենափառավոր պահն է: Այդպիսի երջանկությամբ դու մոռացար նույնիսկ վարորդի հետ Լհասա գնալու խնդրանքը:

Մի անգամ Գանգզուն խնդրեց քեզ. «Երբ վարորդը գա, խնդրում եմ ինձ ձեզ հետ վերցնեք»:

## Ցերինգ Նորբու

Այնուհետև դու հիշեցիր վարորդի խնդրանքը: Դու ինձ ասացիր. «Վարորդը ե՞րբ դա ասեց»:

Ես զգուշորեն խոհաճեցի այդ մասին: Ավելի ուշ, ես, հոգոց հանելով, փոքր-ինչ բռնոթի լցրեցի բթամատիս վրա: Դու անհամբեր էիր թվում:

Ես ասացի. «Հնարավոր է, անցյալ վաղ զարնանը»: Դու մեկնեցիր հինգ մատներդ եւ ասելուց առաջ հաշվեցիր. «180 օրից ավելի անցավ: Հնարավոր է վարորդը զբաղված է, կամ էլ նա անպայման կգա»: Մենք բոլորս մտածում էինք, որ դու ճիշտ էիր, եւ մտածում էինք, որ վարորդը լավ մարդ էր: Հետեւաբար, երբ էլ որ ճանապարհին մեքենա էր հայտնվում, քեզ դուր էր գալիս հայացքդ դեպի դուռը տանելը, եւ դու շարունակում էիր սպասել, մինչեւ որ վիզդ ձգվում էր: Այնուհետև դու մենության մեջ հայացքդ հեռացնում էիր: Գյուղի բնակիչներն էլ հաճախ քեզ հարցնում էին. «Չհամփա, երբ է գալու վարորդը, որպեսզի քեզ Բուդդայի մոտ երկրպագության տանի»:

-Նա զբաղված է: Գուցե մոտ օրերս գա:

-Չհամփա, եթե Լհասա գնաս, մեզ համար յուր քեր եւ վառիր մեր նավթալամպը:

-Եւ ես կաղոթեմ գյուղի յուրաքանչյուր բնակչի համար,- պատասխանում էիր դու:

Անցավ երկու տարի, իսկ վարորդն այդպես էլ չեկավ: Այդուհետ մենք երբեք նրա մասին չէինք հիշատակում: Սակայն ամեն անգամ, երբ մեքենա էր անցնում, մենք չէինք կարողանում չլարվել, մտմտալով, թե արդյոք մեքենան ճանապարհի մոտ չի կանգնել: Ես հիշեցի անձրեւների երրորդ եղանակը, ինչ ցույր հայտնվել էր մեր տանը: Մի անգամ ուժեղ անձրեւ տեղաց: Նախ, կարկուտ եկավ: Կես ժամից այն վերածվեց անձրեւի շրխկացող կաթիլների: Ողջ հովիտը ծածկված էր դրանցով: Շուտով ջրանցքից ջրի սյուներ թափվեցին: Մեր կտուրը սկսեց կաթել: Դռան մոտ կեղտոտ ջրի ավազան էր գոյացել: Մենք նստել էինք եռանկյունի վառարանի շուրջ, սրտեղիչ ժամանակը վատնելով կովի թրիքից եկող տաքության վրա: Երբ մթնեց, վիթխարի եւ բարձր ձայնը բռնեց ողջ հովիտը: Մենք զարմանքից քարացանք: Լեռներն ու տները սկսեցին երերալ: Այդ տարօրինակ ձայնն ավելի մոտ ու բարձր էր հնչում:

-Փախեք: Տեղատարափ է:

Քո ճիչը մեզ վախից արթնացրեց: Մենք մտածում էինք փախչելու մասին: Քեզ քարշ տալով, ես փախա դեպի մեր տան ետեւի լանջը: Գանգզուն եւ Պանդոն հետեւեցին ինձ: Սակայն կեսճամփին, մի աղքատ կին մտածեց ցլի մասին. միակ գանձը, որ մենք կարող էինք ցույց տալ մյուսներին: Պանդոն վազեց դեպի գոմը. «Ես գնամ ցլին հանեմ»:

«Վերադարձիր»: Մենք բարձր գոռում էինք, բայց նա արագ հեռացավ մեր տեսողաշտից: Քամու հանկարծական հոսքը վրա հասավ մեզ: Հետո այիքը խփեց, մեզ ոտից գլուխ թրջելով: Այդ խլացուցիչ աղմուկը համարյա կործանեց լեռները: Այն կործանեց բոլոր կենդանի էակներին եւ հովտի հույսը: Կեսգիշերին ընտանիքի անդամների զրկագող ձայներն ամենուր լսելի էին:

-Պանդո, Պանդո:

-Մայրիկ:

-Տղաս:

-Մեր տունը ջնջվել է:

Խուլ եւ միջաթափանց ճիչերը պղպջակվում էին մթին հովտի վրա:

Հաջորդ օրը, այն ինչ մենք կարող էինք տեսնել, թաց կեղտն ու քարերն էին: Բերքը, տները, գյուտնտեսական իրերն ու անասուններն ու բույսերն անհետացել էին: Մերկ լեռները մշուշով էին պատված, ընկած էին մեռյալ լռության մեջ: Ծնկի եկած, ողջերը տնտղում էին աղբը, իրենց ձնողներին, եղբայրներին եւ քույրերին գտնելու հույսով: Սրանց մատները կաթիլ-կաթիլ արնահոսում էին: Մեր ընտանիքը կորցրեց Պանդոյին, մեր ցուլն ու տունը: Կանգնած ոսկեգույն արեալույսի տակ, գյուղի վերապրած բնակիչները ջերմացան, բայց նրանք բացի իրենց ստվերներից, ոչինչ չունեին: Գյուղի բնակիչները մնացին առան գրոշի:

«Հայրիկ, ինչպես Պանդոն ամուսնացավ մեր տանը, առաջին հայացքից, դու տեսնում էիր նրա առողջ մարմինը՝ նա ջրաղացքարի չափ հետույք ուներ, եւ նա ուժեղ էր, ինչպես վայրի յակը»: Այն օրը, երբ արեւը հենց սոր էր ելել, գյուղացիները շարվել էին երկար գծով հարսանեկան հանդիսության սկսվելու սպասման մեջ:

«Օ՛հ, եւ նրանք գնում են փութով խունկ ծխելու»: Հարսանեկան թափորը եկավ: Այժի պես ճարպիկ լինելով, բանբերը վազեց լեռան լանջից, ճանապարհին փոշի բարձրացնելով:

Այդ լսելով, դու սանդուղքով արագ կտուր ելար: Լուցկին վառելով,

## Ցերինգ Նորբու

դու ծխեցրիր խունկը, դրա վրա ցամփա ու լեռնային գարի դետլով, դու աղոթում էիր, որ աստվածները օրհնեին ամուսնությունը: Ծխի քուլան մեր կտուրից երկինք ելավ, թույլ լուծվելով կապույտի մեջ: Ճանապարհին երգելով, հետզհետե հարսանեկան թափորը մոտեցավ մեր դարպասներին: Մենք ներսից դուռը կողպեցինք, խնդրելով հարսնացուին ուղեկցող մարդկանց երգել: Հայրիկ, դու ինձ մի անգամ ասացիր, որ դա լավագույն հարսանեկան երգն է, որ երբեւէ լսել ես: Պարպասների աջ կողմում կանգնած տղամարդը բռնել էր կիաթան, իսկ մարդը ձախ կողմից բռնել էր լեռնային գարուց սարքած լիկյորը:

Նրանց միջեւ կին կար, որ բռնել էր հինգ հատիկներով արկղը. նա սկսեց երգել հարսանեկան երգը.

*Ծնողները բողբոջիտայով,  
դաստիարակում էին գեղեցիկ աղջկան,  
աշխատասեր, բարեսիրտ ու գեղեցիկ,  
նրան հարգում են մարդիկ մոտակայքում,  
Պանդո աղջիկը,  
Նրա ձեռքի հպումը գործվածքին,  
Եւ տնային տնտեսության մեջ փորձառու,  
Օգնում է ընտանիքին օգուտ քաղել տարեցտարի:*

...

Հարսնացուին գովերգելուց հետո, նրանք սկսեցին գովերգել նրա ծնողներին եւ մեր տունը: Ճանապարհի երկու կողմերում կանգնած, գյուղացիները, բերանները բաց, լսեցին գովերգությունները: Երբ դուռը բացվեց, որը բռնել էր հարսնացուի ընկերուհին, Պանդոն շեմից ներս մտավ: Նա, բամբակից կարած, գույնզգույն սապոգներով էր, տիբեթական մորթուց նրբաճաշակ սեւ կոստյումով եւ դրա տակ մետաքսե վերնաշապիկով, եւ շշմեցուցիչ գոգնոցով՝ իրանի շուրջ: Նրա մեջքի վրա գունագեղ աղեղ էր, զարդարված, փիրուզով եւ այլն: Հուզմունքից Պանդոյի աչքերը կարմրել ու արցունքոտվել էին: Իր լեռնային տեղանքից Պանդոն ամուսնացավ մեր մենավոր հովտում: Գյուղացիների համար ուրախալի էր ինձ կին առնելիս տեսնելը: Ալկոհոլի ազդեցության տակ, դուք շնչում էիք ինձ. «Քսիր կնոջդ հետ, այդժամ մենք չենք անհանգստանա մեր ընտանիքի ծաղկման համար»: Պանդոն ասաց, որ

իր ծնողների հողը պտղաբեր է, եւ այնտեղ կարելի է ընկուզենիներ եւ դեղձենիներ աճեցնել: Ես գիտեմ, թե ինչ էր նա ակնարկում: Նա նկատի ուներ, որ մեր հովիտը չափազանց անպտուղ է, որ այն չի կարելի համեմատել իր ծնողների տան հետ: Այդուհանդերձ, կյանքը պիտի շարունակվի: Պանդոն քո փոխարեն իր վրա վերցրեց բոլոր տնային գործերը: Դու սկսեցիր քեզ անգործության մատնել, ստիպելով քեզ անհարմար զգալ: Այդպիսով, դու սկսեցիր Պանդոյի եւ իմ մեջ թերություններ գտնել: Դու այնքան բարկացկոտ էիր: Պանդոյին խոսքի մեջ հաղթելն անկարելի է, դու ուժի դիմեցիր: Հենց որ դու նրա դեմքին խփեցիր, արյունը հոսեց: Ես նրա վերքը թաշկինակով փաթաթեցի: Անկյուն սողալով, նա ողջ գիշեր շարունակում էր հեծկտալ: Հաջորդ օրը, հարբեցողի պես թույլ, նա ուժասպառ աշխատում էր: Այն բանից հետո, որ դու նրան մի քանի անգամ ծեծեցիր, Պանդոն ընդունեց քո գերազանցությունը մեր տան մեջ: Նա ամեն ինչի համար խորհրդակցում էր քեզ հետ: Հետեւաբար, քո ծեր դեմքը վերջապես հիացմունքից շողում էր: Ճիշտն ասած, Պանդոն բանիմաց կին էր: Ի հավելումն ֆերմայի աշխատանքի, նա կարողանում էր նաեւ գործել, գինի եփել եւ հագուստ կարել: Չարմանալի չէ, որ քեռի Նիման ասում էր. «Ինչպե՞ս կարող էր այդպիսի իդեալական կինը բնակվել այդպիսի կիսաքանդ տանը»: Պանդոն վեց անգամ հղիացավ: Մեկը մեռած էր ծնվել: Երեքը կարմրուկից մահացան: Ողջ մնացին միայն Գելայն ու Գանգոլին: Դու հիշո՞ւմ ես, թե ինչ պատահեց, երբ Պանդոն ծնեց Գանգոլին: Լուսադեմին մենք լսեցինք, թե ինչպես էր Պանդոն ցավից գոռում: Դու մեկից ելար: Ամաչկոտությանը ուշք չդարձնելով, դու վազեցիր նավթալամպը վառելու, պախարակելով ինձ. «Կինդ քո երեխային է ծնում: Այդուհանդերձ, դու, մեռած խոզի պես, դեռ քնում ես: Ել ու ջուր տաքացրու»: Նավթավառի աղոտ լույսի ներքո, Ես տեսա, թե ինչպես է Պանդոն լացելիս քերծում իր կուրծքը: Արյունը հոսում էր, մի քանի մուգ գծեր թողնելով: «Ես մեռնում եմ: Դա տառապալի է: Դա լրիվ քո մեղքն է: Մայրիկ, օգնիր ինձ»: Գոչեց Պանդոն, քրտինքով պատվելով: Կծկումից հետո նա թույլ էր շնչում: Ես ուզում եմ ցոել», - ասաց Պանդոն: Ես օգնեցի նրան ելնել, փաթաթելով նրան հագուստի մեջ, պատրաստվելով նրան օգնել սենյակից դուրս գալ: «Ես ինչ կեղտ է սենյակում», ասացիր դու անվրդով դեմքով: «Հնարավոր է, նա ծննդաբերի»: Ես տեսա, որ դու արդեն

հազնված ես: Ինչպե՞ս եմ կարող եր կեղտոտել սենյակում», - հարցրեցի ես: Չպատասխանելով, դու գնացիր պղնձե թասի ետեւից: Հետո դու վառարանից մոխիրը թասի մեջ լցրեցիր: Դու դա դրեցիր սենյակի մեջտեղում, ասելով. «պարզապես կեղտ է»: Պանդոն փոքր-ինչ տատանվում էր, բայց ես դեռ նստած էր լողավազանի մոտ: Երբ դու վառեցիր կրակը վառարանում, սենյակում սկսեց տարածվել տոխպ ծուխը: «Ես չեմ կարող», - ասաց Պանդոն: «Դե, ուրեմն, պառկիր մահճակալի վրա»: Այդժամ ես օգնեցի մահճակալի մոտ: Պանդոն ասաց, որ դեռ ուզում է լուծել: Ես անհամբեր հարցրի. «Դու իրո՞ք ուզում ես լուծել»: Դու մոլեգնա՞ծ հայիոյեցի ինձ. «Դու հենց նոր քո կիրքը պարպեցիր: Բայց դու մոռանում ես քո կնոջ տառապանքները: Կնոջ համար երեխա ծնելը, մահվանը հավասար բան է»: Ես նորից օգնեցի Պանդոյին նստել թասի վրա: Ցավը տեղնուտեղը սկսվեց: Պանդոն ընկավ հատակին, ոտքերիս մոտ գունդուկձիկ լինելով: Դու կողմ տարար Պանդոյի հագուստի ներքնամասը, բացելով նրա սպիտակ ոտքերը: Այդժամ դու ասացիր. «Պանդո, զոռ տուր առաջ: Երեխայի ոտքերը ելել են: Ավելի ուժեղ զոռ տուր: Երեխան առաջ չի գալիս: Ես դուրս չի գալիս, զոռ տուր, նորից զոռ տուր»: Երեխան հայտնվեց: Տղա էր: Չոռ տալը օգնեց: Մենք քաշում ու ձգում էինք՝ նյարդայնանալով: Սակայն ես վերջապես Գանգզուին դուրս բերեցի Պանդոյի արգանդից: Քսանչորս տարվա ընթացքում այս տանն առաջին անգամ լսվեց երեխայի լացը: Ես մտածում էի, որ այդ երեխան վերջ կդնի մեր ընտանիքի մոայլ կյանքին, բանալով նոր բազմախոստում նոր գալիքը: Դու, արտասովորով, Գանգզային ձեռքերի վրա վերցրիր, մի քանի օր շարունակ դու ասում էիր. «Օ՛հ, այս երեխան զարմանալի է: Սկզբում ես ոտքերի վրա վար իջավ, երբ ծնվեց: Հետեւաբար, մեր ընտանիքը կծաղկի: Այդ պատճառով նրա անունը պիտի լինի Գանգզու /սկզբում ոտքերը/»: Ա՛խ, նայիր, Երկրորդ Գյուղը մոտ է: Այժմ այնտեղ լուռ է: Գեշ եղանակը ստիպեց գյուղի բնակիչներին տանը մնալ, բայց նրանք առաջվա պես անհանգստացած են բերքով: Տես, Երկրորդ Գյուղի բերքի մեծ մասը չորացել է ֆերմայում: Եթե անձրեւ գա, ցորենի հասկերը, անշուշտ փառով կպատվեն ու կնեխեն: Հայրիկ, դու թրջվե՞լ ես: Եթե ես քեզ գյուղ տանեմ, որպեսզի անձրեւից թաքցնեմ, գյուղի բնակիչները ջերմորեն կբացեն իրենց դռները: Նրանք քեզ տաք թեյ կլցնեն եւ քեզ մի թաս ցամփա կընծայեն: Նրանք երեւի թե



կշռապատեն քեզ եւ տխուր արցունք կթափեն, կաղոթեն, որ դու հաջորդ կյանքում ծնվես հարուստ եւ բարի ընտանիքում: Սակայն, այդպիսով, մենք կարող ենք նրանց շատ նեղություն պատճառել: Հայրիկ, մի նեղացիր ինձանից, որ ես քեզ գյուղ չբերեցի: Դու պարզապես կարող ես իմ մեջքի ետեւից նայել Երկրորդ Գյուղին: Այդժամ մենք կարող ենք շարունակել մեր ճամփորդությունը: Դեռ երկար ճանապարհ է սպասվում: Մինչ այդ որոշ հեռավորություն կա, այդու եկեք խոսենք Գանգզուի մասին: Սկզբում նա այնքան քեզ դուր եկավ: Դու հաճախ էիր նրան տանում զբոսանքի, բոլորին պատմելով՝ «Այս տղան շատ լավ զուխ կրերի ֆերմայի գործը»: Այդուհանդերձ, երբ Գանգզուն հինգ տարեկան էր, դու ցնցվեցիր հայտնաբերելով, որ նա ոչ միայն բուֆ էր, այլ նաեւ կակազ եւ քչախոս, ինչը քեզ շատ վշտացրեց: Նայելով հղի Պանդոյին, դու ողջ հույսդ դրեցիր չծված երեխայի վրա: Մի քանի երեխաների իրար հաջորդող մահերից հետո ձեր հույսը նորից նոր ոչնչի էր վերածվում: Ի վերջո, դու ողջ մեղքը զցեցիր Գանգզուի վրա: Քո վրդովմունքն այդպես էլ չմեղմեց, մինչեւ որ Գուլայը ծնվեց: Գանգզուն քո մեծ թոռն էր, եւ նա ամենից շատ էր տանջվել: Դու դա շատ լավ գիտեիր: Նրան ինչ-որ մեկը սպանեց, երբ նա ընդամենը քսանյոթ տարեկան էր: Նա իր ողջ կյանքի ընթացքում ոչ մի կնոջ չէր դիպել: Նա երբեք կնոջ հետ քնելու հաճույքը չէր ապրել: Ամեն անգամ, երբ քաղաքը կազմակերպում էր գյուղացիներին ջրանցքների ու ճանապարհների վերականգնման համար, մենք խնդրում էինք Գանգզուին այդ անել, ինչը որ իրականում վնասակար էր, անօգուտ եւ հոգևեցնող: Այս տարի վերականգնված ջրանցքներն ու ճանապարհները դեռեւս կարող են ջրասույզ լինել մյուս տարի: Աշխատանքն անվերջ էր: Սակայն, ոչինչ չասելով, Գանգզուն վերցրեց իր վերմակը, փոքր-ինչ ցամփա դրեց պայուսակի մեջ եւ ելավ: Երբ նա մի քանի ամիս անց վերադարձավ, նրա մաշկը թուխ էր, ինչպես սեւ ածխակտորը, ծնոտները դուրս ցցված էին, աչքերը՝ խորն ընկած: Առաջին անգամ նրա այդ վիճակը տեսնելով, Պանդոն կամացուկ հեծկտում էր անկյունում: Մի քանի անգամվանից հետո նա դադարեց այդ լուրջ ընդունել: Երբ Գանգզուն քսանչորս տարեկան էր, Պանդոն պնդեց, որ նա իր համար կին գտներ: Մենք դիմեցինք մի քանի տնտեսությունների, բայց բոլորը հրաժարվեցին: Ի վերջո, դու ելար Լուովին հովտից, ասելով Պանդոյի եղբորը, որ նրան կին գտնի:

## Ցերինգ Նորբու

Այդ տարի Պանդոն մահացավ: Մենք ամեն ինչ կորցրեցինք: Ինչպե՞ս մենք կարող ենք խնդրել նրան խնամախոս լինել: Այնպես որ հետաձգվեց: Դու ասացիր, որ Պանզգուն հիմար էր: Բայց ես հայտնաբերեցի, որ մերթընդմերթ նա շատ զգայուն էր: Հնարավոր է, դու մոռացել ես: Մի անգամ Գելայը ձեռքին գիրք էր բռնել, դիտավորյալ բարձրաձայն կարդալով: Նրա կողքին Պանզգուն տրտում արտասվում էր: Այդ տեսելով, ես ինձ մեղավոր զգացի: Կրկին մտորելով, ես հասկացա, որ մենք նույնիսկ սևվելու հետ կապված խնդիրներ ունեինք: Ինչպե՞ս մենք կարող էինք մեզ թույլ տալ զբաղվել մեր ավագ որդու կրթությամբ: Դա նրա պատասխանատվությունն ու պարտավորությունն էր: Ես գիտեի, որ դու համաձայն ես ինձ հետ: Դու, երեւի թե, կասեիր, որ ես ճիշտ եմ: Բայց այդ մասին այժմ մտածելով, ես ինձ մեղավոր եմ զգում: Վերջին տարիները հաճախակի հոսքերի ավերմունքների պատճառով, մե հերկահողերը հաճախակի վնասվում էին: Մեր հացահատիկը կարող էր միայն մեզ շատ քիչ ամիսներ պահել: Կառավարությունը մեզ հացահատիկ եւ փող էր առաջարկել, որպեսզի օգներ մեզ գործը գլուխ բերել: Սակայն զոհերն այնքան շատ էին, որ կառավարությունը չէր կարող բոլոր խնդիրները լուծել: Մեր տան վիճակը բարելավելու համար, Պանզգուն ամեն տարի գնում էր վանքապատկան հողատարածքները սևկի հումք պատրաստելու: Նա եւ մեր գյուղից մի քանի մարդիկ այնտեղ սովորական վրան էին խփել եւ ամենուր այդ հումքն էին փնտրում: Երկու ամիս անց, մեկ կամ երկու հազար յուանով, նա կվերադառնա մեր գյուղ: Փողը շատ կարելի էր մեր ընտանիքի համար: Դա մեզ ապրելու համարձակություն եւ գալիքի հույս էր պարգևում: Անցյալ տարի ես տեսա ցամփայի պայուսակով ու փայտե թասով Պանզգույին: Ճանապարհին նա շրջան գնացող տրակտոր նստեց: Ես մինչեւ հիմա հիշում եմ, թե ինչպես էր ընթանում տրակտորը իր ետեւից սեւ ծուխ թողնելով: Դրա ձայնը համարյա թե խլացրեց ականջերս: Դա իսկապես չարագուշակ էր: Տրակտորի վերնամասը լցված էր վերմակներով, հացահատիկով, թասերով եւ այլն: Մի դյուժին մարդ ժողվել էր տրակտորի վրա, ինչպես քամու տակ ընկած ծաղիկներ: Նրա վերադառնալուց մի քանի օր առաջ, սևկի հումքի համար բռնկված վեճի պատճառով, տասը յուանի պատճառով նա մի տղայի հետ վեճի մեջ մտավ: Նրանք կռվում էին իրար դեմ: Երբ կռիվը ձգձգվեց, ապա այն ավարտելու համար, հոգնած

մարդը գոտկատեղից հանեց դանակը: Դանակը շողաց արեւի տակ: Ցնցված, Գանգզուն կանգ առավ: Դանակը սահեց նրա կրծքի վրայով: Արյունը հոսում էր սայրի վրայով, ներծծվելով տրորված հագուստի մեջ: Օ՛հ գոչելով՝ Գանգզուն չռված ոտքերով փլվեց խոտերի վրա, այդպես ավարտվեց նրա քսանյութամյա կյանքը:

Ես տանում էի Գանգզուին՝ գնալով նեղլիկ արահետով, որպեսզի նա գյուղ վերադառնար: Այդ օրը երկինքը շատ կապույտ էր: Բամբակի պես ճերմակ ամպերը հետապնդում էին մեզ մեր ողջ ճանապարհին: Ես Գանգզուին շատ բան ունեի ասելու: Նա հանգիստ կառչել էր իմ մեջքից՝ լսելով տրտունջներս: Երբ Վանգլան Չհամփային տարավ Երրորդ գյուղ, երեկոյան ժամը հինգն էր: Գյուղի բոլոր բնակիչները թաքսվել էին իրենց սենյակներում: Ոչ մեկը չէր տեսնում նրանց: Դուռը բացելով, Վանգլան հանվեցրեց Չհամփային եւ գործվածքի կտորը դրեց պատի անկյունում, որպեսզի նա այնտեղ հարմարավետ պառկեր: Այնուհետեւ նա հանեց սպիտակ վերմակը, ծածկելով Չհամփայի մերկ մարմինը: Խեցե նավթալամպում կրակը բռնկվեց: Ծնկի գալով Չհամփայի կողքին, Վանգլան շարունակում էր երգել.

-Օմ, լուտոսի պայծառ ծաղիկ...

Ճնշող եւ բարձր ձայնի պայթյունն ինչպես որոտ կամ մոլեգնած առյուծի ոռնոց, ցնցեց երկիրը: Տունը ճոռաց: Վանգլան կանգնեց, հետևելով ձայնին, ելավ, նայելով լեռան բարձունքին: Մի պահ նա ցնցված էր: Լեռան բարձունքից, հաստ պատի պես իջնող ջուրը խփվեց մեծ ալիքով: Ալիքը գեղեցիկ եւ հափշտակիչ էր: Այն նույնքան թափանցիկ էր, որքան ձվի սպիտակուցը: Եւ այն ուղեկցվում էր մեղմ եւ անըմբռնելի լեզվով: Պաղ քամու հոսքը խոնավությամբ փչում էր նրա դեմքին եւ հասել էր հենց ուղեղին: Այնուհետեւ մեկ այլ ալիք բարձրացավ ուղիղ վեր, ինչպես, երկնքին ծուլվող, մշուշ կամ ամպ: Չարմացած, Վանգլան տեսավ, որ այնտեղ ոսկեգույն ծաղիկներ կային, հացահատիկի, ներհյուսված փնջերով, հասկեր: Դրանք արագ տեղերով փոխվում էին, զանազան գեղեցիկ նախշեր հյուսելով: Հանկարծ ոսկեգույն Ռափսայի ծաղիկները, հացահատիկի հասկերն ու թփերը բոլորը հակվել էին: Նա կարողանում էր միայն տեսնել իր վրա սեւեռված Բողոհսաթվային: Վանգլան Բողոհսաթվայի աչքերի մեջ արցունքներ էր տեսնում: Արցունքներն ընկան նրա սրտի վրա, եւ բոլոր տառապանքները մոռացվեցին:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՑՈՒՆ ԱՍԵՐԻԿԱՅԻՑ .....	5
ՍԱՀԱՅՈՒ ՕՂԱԿ .....	26
ԼԵԳԵՆԴ .....	48
ԴԵԴՈՒԲԸ .....	64
ԱԶԱՏՎԱԾ ՈՉԽԱՐՆԵՐԸ .....	74
ՊՈՈՆԿՈՐԴԻ .....	92
ՇՐՋԱՆԸ .....	104
ԻՆՉ-ՈՐ ՍԵԿԸ ՍՊԱՍՈՒՄ ԷՆՐԱՆ ԱՈՏԵՎՈՒՄ .....	177
ԱՇՆԱՆԱՅԻՆ ԳԻՇԵՐԸ .....	188
ՉՈԳՀՈՐ ԼԵՈՒՆ ԶՅՈՒՆԸ .....	206
ՄԱՐԴԱՍՊԱՆԸ .....	228
ԱՍՏՎԱԾԱՅԻՆԸ .....	239
ԱՆՁՐԵՎԱՅԻՆ ԵՂԱՆԱԿ .....	292

ՑԵՐԻՆԳ ՆՈՐԲՈՒ

## ՓՐԿՎԱԾ ԳԱՌԸ

Պատմվածքներ

Անգլերենից թարգմանեց՝  
Վարդան Ֆերեշեթյան

Հրատ. խմբագիր՝ Յ. Ալեքսանյան  
Սրբագրիչ՝ Ա. Գրիգորյան  
Էջադրումը՝ Թ. Հարությունյանի  
Կազմի ձեռավորումը՝ Ա. Խաչատրյանի

Թուղթը՝ օֆսեթ, չափսը՝ 60x84 1/16: Ծավալը՝ 19,5 տպ. մամուլ  
Տպաքանակը՝ 500:

Տպագրվել է «Դիզակ պլուս» հրատարակչության տպարանում  
ԼՂՀ, Ստեփանակերտ, Հ. Հակոբյան 25

**«ԳԵՂarm» հանդեսի մատենաշարով լույս են տեսել**

- «Թատերախաղեր Արեւմտյան գրականությունից» - 2010  
Իոսիֆ Բրոդսկի. «Տեղատարափի շաչյունը» - 2011  
Մ. Բախտին. «Դոստոեւսկու պոետիկայի խնդիրները» - 2012  
«Միրիուսի սրնգահարները»/Վ.Խլերնիկով, Ն.Գումիլյով,  
Վ.Խոդասեւիչ/ - 2012  
Սերգեյ Դովլաթով. «Միայնակների երթը» - 2012  
Յուրի Լոտման. «Միֆ.Անուն.Մշակույթ» - 2012  
Վառլամ Շալամով. «Կոլիմյան պատմվածքներ»- 2012  
Ժարկո Միլենիչ. «Լեոնը՝ հրաշագործի աշակերտը»- 2013  
Պավել Ֆլորենսկի. «Իկոնոստաս» - 2014  
Ռուս կոնցեպտուալ պոեզիա/ Դ.Պրիգով, Վ.Նեկրասով,  
Լ.Ռոբինշտեյն/ - 2014  
Հենրիխ Սապգիր. «Ձուգահեռ մարդը» - 2014  
Վասիլի Գրոսման. «Կյանք եւ ճակատագիր» - 2014  
«Կամուրջների խռովությունը.  
մետամետաֆորիստներ» - 2015  
Ալեքսանդր Սոլժենիցին. «Մատրյոնայի կավվածքը»- 2015  
Անդրեյ Պլատոնով. «Չեւենգուր. Գուրբ.  
Պատմվածքներ» - 2015  
Արդի ռուսական վերլիբո (անթոլոգիա) - 2015  
Չինաստանի մշակույթի քրեստոմատիա - 2015  
Ջիդի Մաջիա. «Հրեղեն խոսքեր» - 2015  
Մա Քայ. «Մրտի արձագանքներ» - 2015  
Եվգենի Վոդյազկին. «Լավր» - 2015  
Քայ Տյանսին. «Խաղաղ կյանքի երգը» - 2015  
Ռուս այլախոհական պոեզիա (անթոլոգիա) - 2015  
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական  
հասկացություններ (հատոր 1) - 2016

Յու Ջիան. «Անձրեից պատսպարվող թռչունը» - 2016  
Պավել Բասինսկի. «Լեւ Տոլստոյ.  
Փախուստ դրախտից» - 2016  
Չժան Յզի-յան. «Երազ ծովի մասին» - 2016  
Վան Ջենչկի. «Երիտասարդ վանականի սիրո  
պատմությունը» - 2016  
Լյուդմիլա Պետրուշենսկայա. «Մեր. երջանկություն.  
ոեքվիեմ» - 2016  
Անդրեյ Բելի. «Պետերբուրգ» - 2016  
«Դիկոռոսներ. Անհայտ պոետների ապաստան»  
(անթրոլոգիա) - 2016  
Ռուս մինիմալիստներ (անթրոլոգիա) - 2016  
Իձյե Թան. «Կոնֆուցիականությունը, ուղղալականությունը,  
դաոսիզմը, քրիստոնեությունը եւ չինական  
մշակույթը» - 2016  
Սյուն Շի-ի. «Երկնային կամուրջը» - 2016  
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական  
հասկացություններ (հատոր 2 եւ 3) - 2016  
Դոնգ Քիանգ. «Ամուսնություն» - 2017  
Դոնգ Քիանգ. «Կացարաններ» - 2017  
Ինգեբորգ Բախման. «30-րդ տարին» - 2017  
Ջիդի Մաջիա. «Ընձառյուծից մինչեւ Մայակովսկի» - 2017  
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական  
հասկացություններ (հատոր 4) - 2017  
Անդրեյ Վոլոս. «Վերադարձ Փանջիռուղ» - 2017  
Դոնգ Քիանգ. «Թաղում» - 2017  
Դոնգ Քիանգ. «Փառատոներ» - 2017  
Դոնգ Քիանգ. «Ուտեստներ» - 2017  
Սյաո Յյան. «Վիշապի սորոքներն ընդդեմ  
նախագծերի» - 2017

Ուան Յուլիան. «Մերձակցության աստիճաններ» - 2017  
Ֆյոդոր Սոլոգուբ. «Չնչադեղ» - 2018  
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական  
հասկացություններ (հատոր 5) - 2018  
Ու Չու. «Չինական մշակույթ. փիլիսոփայություն» -2018  
Մարտիրոս Ռբն. «Մոմերն իզուր են այրվել  
մեղքերիս համար» - 2018  
Ռեյսին Սյուրն, Սյուն Ճու. «Չինաստանի յուրահատկու-  
թյունները: Չինաստանի համաշխարհային  
ժառանգությունը»- 2018  
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական  
հասկացություններ (հատոր 6) - 2018  
Ադի ձայնը (20-րդ դարի հետադարձական թվականների  
սերնդի չին գրողների պատմվածքներ) -2019  
20-րդ դարի ռուսական պատմվածք (անթոլոգիա) - 2019  
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական  
հասկացություններ (հատոր 7) - 2019  
Գվինեթ Լյուիս. «Քառսի հրեշտակները» - 2020  
Պավել Բասինսկի. «Լեւ Տոլստոյ.  
Ազատ մարդը» - 2020



Էլ. հասցե՝ [vogli.nairi@mail.ru](mailto:vogli.nairi@mail.ru)  
հեռ.՝ +374 97252323